22611

331
S-72

302.5
Տ-69

Ա. Ի. ՏՅՈՒՄԵՆԵՎ

15 JAN 2010

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

[redacted]

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927 Թ

23 AUG 2013

331
S-72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ՄԻԱՑԵ՛Ք

5 FEB 2007

Ա. Ի. ՏՅՈՒՄԵՆԵՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

[redacted]

ՅԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1926 Թ.

10132

22611

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գրառեպվար № 826 (բ). Պատվեր № 100. Պետհրատ. № 444. Տիրաժ 5000

Պետհրատի IV տպարան Լենինականում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Աշխատանք անվանում ենք մարդու արտադրողական գործունեությունը, որի նպատակն ե գոյության միջոցներ հայթայթելը։ Որպեսզի մարդիկ գոյություն ունենան, որպեսզի իրենց ապահովեն ուտելիքի, հագուստի, բնակարանի կողմից, պետք ե սրանց հայթայթման ու պատրաստելու համար որոշ աշխատանք գործադրեն։ Այս պատճառով ել, ինչպես առանձին մարդկանց, այնպես ել սրանցից կազմվող հասարակական խմբերի ու միավորությունների գոյության առաջին ու անհրաժեշտագույն պայմանն աշխատանքն ե կազմում։ Ճիշտ ե, հաճախ պատահում ե, որ ամբողջ հասարակական խմբեր ու դասակարգեր ապրում են առանց աշխատելու, սակայն այս դեպքում նրանք օգտվում են ուրիշի աշխատանքից, իրենց աշխատանքը ձգում են ուրիշների վիզը։ Այսպիսով վերջիվերջո բնակչության չաշխատող, չարտադրող մասի գոյությունն ել ճիշտ նույն կերպով հիմնվում ե աշխատանքի վրա։

Բոլոր ժամանակներում ու ամեն պայմաններում մասնավոր ու հասարակական կյանքի հիմքը կազմել ե և կազմում ե աշխատանքը, այսինքն՝ արտադրողական գործունեությունը։ Սակայն ընդսմին ինքնըստինքյան հասկանալի յե, որ տարբեր ժամանակաշրջաններում աշխատանքի պայմաններն ել միակերպ չեն լինում։ Ժամանակի ընթացքում փոփոխվում են ամենից առաջ հենց ուտելիք հայթայթելու տեսակներն ու յեղանակները, բարեփոխվում և կատարելագործվում են արտադրության հնարներն (приемы) ու յեղանակները։ Մարդը յերկրագործ կամ արհեստավոր լինելուց առաջ որսորդ ե յեղել, գութանի գործածությանը խելամուտ լինելուց առաջ հողը փափկացրել ե քլունգի կամ բրչի օգնությամբ, շոգե ու ելեկտրական մեքենաներ ու շարժիչներ հնարելուց առաջ գործադրել ե արհեստավորի անկատար գործիքներ։

Արտադրության յեղանակների ու գործիքների փոփոխությանը զուգընթաց՝ պակաս եյական նշանակություն չունեն այն փոփոխությունները, որ կատարվում են աշխատանքի կազմակերպության մեջ, այսինքն՝ այն փոխադարձ հարաբերությունների մեջ, որոնցում գտնվում են առանձին արտադրողները։ Հասկանալի յե, որ աշխատանքի հետևանքը բոլորովին այլ կլինի, նայած թե յուրաքանչյուր մարդ իրեն

անհրաժեշտ ամեն բան հայթայթում կամ պատրաստում ե՞ ինքն իր կարողացածի պես, թե՞ առանձին արտադրողների միջև աշխատանքի վորոշ բաշխում ե սահմանվում, մի բաշխում, վորի ժամանակ յուրաքանչյուրը պատրաստում ե միայն այս կամ այն վորոշ արդյունքներն ու իրերը։ Աշխատանքի այսպիսի բաշխումը կամ, ինչպես սովորաբար ընդունված ե ասել, բաժանումը նշանավոր չափով բարձրացնում ե նրա արտադրողականությունը։ Պարզ բան ե, վոր այն մարդը, վոր գործունեյության վորոշ մասնագիտական տեսակի յե նվիրվել, թե ավելի լավ ու թե ավելի արագ կաշխատե, քան վոչ-մասնագետը։ Հետևաբար վորքան ավելի յե զարգացած աշխատանքի բաժանումը հասարակության մեջ, այնքան ավելի արտադրողական ու արդյունավետ ե իր հետևանքներով ամբողջ հասարակական արտադրությունը։ Ընդսմին աշխատանքի բաժանում կարող ե գոյություն ունենալ ինչպես յուրաքանչյուր առանձին տնտեսության ներսում, յուրաքանչյուր առանձին ձեռնարկության մեջ, այնպես էլ արտադրողների ամբողջ խմբերի ու դասակարգերի միջև, որինակ՝ յերկրագործների ու արհեստավորների միջև։

Այսպես, ուրեմն, արտադրողական գործունեյության զարգացման մեջ պետք ե տարբերենք ամենից առաջ յերկու կողմ. 1) արտադրության յեղանակների ու հնարների փոփոխությունը և 2) աշխատանքի կազմակերպության ձևերի մեջ կատարվող փոփոխությունները։ Սրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե նկատի ունենալ նաև հասարակական հարաբերությունները, վորոնք ծագում են արտադրության ու աշխատանքի այս կամ այն կազմակերպության հիման վրա։ Աշխատանքը կարող ե լինել ազատ կամ անազատ (ստրկական կամ ճորտային). Նրա նպատակը կարող ե լինել նույնինքն արտադրողի ու սրա ընտանիքի անմիջական սպառման առարկաներ պատրաստելը (այսպես կոչված բնատնտեսություն), պատվերով գործ կատարելը և կամ, վերջապես, վաճառքի համար արտադրելը (փոխանակային կամ ապրանքային տնտեսություն). մարդ կարող ե արտադրել սեփական գործիքների միջոցով, ինչպես ե, որինակ՝ արհեստավորի աշխատանքը, կամ այն գործիքների ու նյութերի ոգնությամբ, վոր ստանում ե ձեռնարկության տիրոջից, և այդ դեպքում այս կլինի վարձու բանվորի աշխատանք։

Այսպիսով, աշխատանքի պատմության առարկան հենց կազմում ե պատկերացումը 1) արտադրության յեղանակների ու հնարների զանազան ձևերի հաջորդական զարգացման, 2) աշխատանքի կազմակերպության զանազան ձևերի հաջորդական փոփոխությունների, վորոնք տեղի յեն ունենում արտադրության յեղանակների փոփոխության զուգընթաց ու 3) այս ձևերից բղխող այն հասարակական կամ, այլ խոսքով ասած՝ արտադրական հարաբերությունների, վորոնք գոյություն են ունենում հասարակության տարբեր դասակարգերի միջև։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ

1. *ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ։ — ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ։* Այն րոպեյին, յերբ մարդը հայտնվեց յերկրագնդիս յերեսին, շատ քիչ բանով եր տարբերվում իրան շրջապատող կենդանական աշխարհից։ Այն ժամանակ վորևե հատուկ արտադրողական գործունեյության մասին խոսք էլ չեր կարող լինել։ Մարդիկ կենդանիների նման բավականանում եյին բացառապես այն կենդանական ու բուսական ուտելիքով, վոր գտնվում եյին տվյալ վայրերում և վորն սպառում եյին հենց տեղն ու տեղը հում-հում։ Նրանք սնվում եյին պտուղներով, հատապտուղներով, փորում-հանում եյին տակիքներ ու արմատներ, բռնում եյին միջատներ, ժողովում եյին վորդեր ու խխունջներ, վորսում եյին այնպիսի մանր կենդանիներ ու թռչուններ, վոր կարելի յեր բռնել ձեռքերով։ Այս եր նրանց սովորական կերակուրը։ Մարդուն ավելի խոշոր կենդանիներ ձեռք բերել աջողվում եր յերկար հալածելուց հետո միայն կամ նրանց վրա վոչ թե մենակ հարձակվելով, այլ գիշատիչ կենդանիների վոհմակների նման ամբողջ խմբով միասին։ Առաջին մարդկանց սննդի տեսակն այսպիսով կախում ուներ բացառապես տեղի՝ այս կամ այն կերակրով հարուստ լինելուց, ինչպես և կերակուր վորոնելում ունեցած բախտից ու հաջողությունից։

Սնվելու, կերակրվելու ապահովություն չունենալով՝ մարդը պետք ե միշտ փոփոխեր իր բնակավայրը։ Նա չգիտեր դեռևս, թե ինչ բան ե նստակյացի մշտական բնակարանը, սովորաբար բավականանում եր վորևե տեսակի բնական ապաստաններով, վորոնք ավելի շուտ գազանների բույների ու վորջերի եյին նմանում, քան իսկական մարդկային կացարանների։ Այրերը, ծառերի ճյուղերը, լավագույն դեպքում վոստերից շաղապով պատրաստած տաղավարը պատսպարում եյին նրան գիշերը, պաշտպանում ցրտից ու վատ յեղանակից, թաքցնում վտանգի դեպքում։

Սեփական աշխատանքով վոչ մի բան չարտադրելով, ոգտվելով լոկ այն բանից, վոր իր շուրջը գտնվում եր պատրաստի, նախնադարյան

մարդը սրա հետ միաժամանակ լիակատար կախման մեջ էր լինում շրջապատող բնական պայմաններից։ Հետագա ամբողջ զարգացման նշանակությունն ամենից առաջ հենց այս կախումից ազատագրվելու մեջ էր ամփոփված։ Այս ուղղությամբ առաջին քայլն յեղավ թեկուզ ամենանախնական գործիքների կիրարկումը։ Սակայն այս առաջին քայլըն անգամ մեկ անգամից չկատարվեց ամենևին։ Այն փայտը կամ քարը, վորոնց բնազդաբար ձեռք էր մեկնում մարդը վորսի յետևից ընկնելիս կամ վտանգի րոպեյին, յերկար ժամանակ կազմում եյին նրա հարձակման ու պաշտպանության միակ զենքը։ Նույն քարն ու փայտը միաժամանակ ծառայում եյին նրան իբրև գործիք գետնից արմատներ, վորդեր ևայլն փորելու, հանելու համար։

Սակայն վորքան էլ հասարակ լինեյին այս գործիքները, այնուամենայնիվ նրանք էլ հսկայական դեր եյին խաղում նախնադարյան մարդու զարգացման մեջ։ Վորքան ավելի հաճախ էր պատահում, վոր մարդը հարկադրված դիմեր այս նախնական գործիքներին, այնքան ավելի նրա ձեռքն այդ հանգամանքի հետևանքով փոխակերպվում էր հատուկ բռնող որգանի և դադարում էր նրան իբրև մագլցելու ու շարժվելու, տեղափոխվելու որգան ծառայելուց, ինչպես ծառայում էր նրա կիսակապիկ նախնուն։ Քայլելու ժամանակ մարդու միակ հենարանը դարձան նրա հետին վերջավորությունները, վորոնց դաստակներն այս յերևույթի հետ միատեղ զարգանալով դարձան վոտքի թաթեր։ Այսպիսով մարդը չորքոտանի կամ, ավելի ճիշտը, չորսձեռանի կենդանուց դարձավ յերկոտանի, նրա իրանը հորիզոնականի փոխարեն ուղղահայաց դիրք ստացավ, մի բան, վոր իր հերթին հսկայական նշանակություն ունեցավ նրա ամբողջ հետագա զարգացման համար, մասնավորապես նրա գանգի և ուղեղի զարգացման համար։ Մարդու՝ քարով կամ փայտով զինված ձեռքը փոխարինում էր կենդանիների շատ ուրիշ որգաններին՝ ճանկերին, ժանիքներին, ուժեղ ծնոտներին ևայլն։ Քարը մեծացնում էր հարվածի ուժը, ծառայում էր իբրև միջոց հողը քանդելու, փորելով պարեն հանելու համար, փայտը մարդու ձեռքը յերկար էր դարձնում և այդպիսով հնարավորություն էր տալիս գործելու հեռու տարածությունից։ Բայց յեթե նախնական գործիքներից ոգտվելը նպաստեց այն բանին, վոր մարդու ձեռքերը կազմվեցին, ապա ձեռքերի զարգացումն էլ, ընդհակառակը՝ գործիքների հետագա զարգացումը հնարավոր դարձրեց։ Առաջ մարդը շրջապատող պայմաններին անհրաժեշտաբար հարմարվում էր ամբողջ մարմնով, իսկ այժմ շնորհիվ այն հանգամանքի, վոր մարմնի բոլոր դիրքերի ժամանակ ձեռքերն ազատ եյին, նա նույն պայմաններին հակազդում էր հատուկ հարմարեցումներով ու արհեստական գործիքներով, վորոնք մարմնական ծագում չունեյին, այլ առնվում եյին դրսի

աշխարհից։ Յերկար ժամանակ մարդու միակ գործիքը քարն ու փայտըն եյին։ Դանդաղորեն ու աստիճանաբար, մի շարք անվերջանալի առանձին դիտողություններից հետո միայն մարդը հասավ այն մըտքին, թե այս բնական տվյալները կարելի յե ոգտագործել ավելի մասնագիտական ու իրանց կոչմանը համապատասխանող գործիքներ պատրաստելու համար։

Տասնյակ հազարամյակներ անցան, մինչև վոր մարդը սովորեց քարը տաշել և հարվածի ուժը մեծացնելու նպատակով այն կապել փայտի ծայրից կամ խրել փայտի ծայրը և այս կերպով սարքած քարին տալ կացնի, նիզակի, դանակի, քերիչի. հող փորելու քլունգի կերպարանք (այսպես կոչված՝ հին քարի դար)։ Այս նախնական գործիքների հետագա կատարելագործության համար հիշածից միայն միքիչ պակաս ժամանակ հարկավոր յեղավ։ Այս կատարելագործություններից ամենակարևորը հղկելու արվեստն էր, յերբ մի ուրիշ քարի քըսելով, քարի մակերևույթը կոկում եյին։ Այսպիսի հղկած գործիք պատրաստելը շատ յերկարատև ժամանակ ու մեծ ջանքեր էր պահանջում, յերբեմն մի քանի սերունդներ եյին չարչարվում քարե մի վորևէ գործիք ավելի խնամքով պատրաստելու համար։ Սակայն այնուամենայնիվ այսպիսի դժվարությամբ շինած գործիքն էլ դեռ վատ ու թույլ էր գործում։ Քարե նիզակներն ու նետերը կենդանիներին միայն վերքեր եյին հասցնում, բայց չեյին սպանում նրանց։ Քարե գործիքների միջոցով կատարած գործերը պահանջում եյին, անհավատալի չափով շատ, աշխատանքի ու ժամանակի վատնում։ Այս բանը դեռ այժմ էլ կարելի յե դիտել՝ որինակ առնելով ժամանակակից մի քանի վայրենիների, վորոնք քարե գործիքներ են բանացնում։ Որինակ՝ հյուսիս-ամերիկական հնդկացիները միքանի տարի յեն վատնում այն բանի համար, վոր ծառը փորելով մակույկ պատրաստեն, ընդվորում յերբեմն մինչև այս գործն ավարտելը ծառն արդեն փթում, բանից պըրծնում է։

Ճիշտ նույն կերպ էլ մարդիկ վոչ թե միանգամից, այլ յերկար ժամանակվա ընթացքում միայն աջողեցին անել իրենց առաջին մեծ գյուտը, այն է՝ շփելու կամ կայծքար խփելու միջոցով կրակ ստանալու գյուտը։ Ներկայումս այլևս չկան այնպիսի ժողովուրդներ, վորոնց անծանոթ լիներ կրակի գործածությունը, սակայն այն միջոցները, վոր վայրենի ցեղերի մեծամասնությունը գործ է ածում կրակ ստանալու համար, դեռևս այնքան բարդ ու դժվար են, վոր որինակ՝ Ավստրալիայում շատ վայրենիներ գերադասում են իրանց հետ տեղափոխել հրավառ խանձողներ, քան ամեն մի կանգ առած վայրում կրակ անել։ Սակայն կրակ ստանալը սովորելով էլ մարդիկ միանգամից չգնահատեցին նրա ոգտակար հատկությունները և յերկար ժա-

մարդը սրա հետ միաժամանակ լիակատար կախման մեջ էր լինում շրջապատող բնական պայմաններից։ Հետագա ամբողջ զարգացման նշանակությունն ամենից առաջ հենց այս կախումից ազատագրվելու մեջ էր ամփոփված։ Այս ուղղությամբ առաջին քայլն յեղավ թեկուզ ամենանախնական գործիքների կիրարկումը։ Սակայն այս առաջին քայլըն անգամ մեկ անգամից չկատարվեց ամենևին։ Այն փայտը կամ քարը, վորոնց բնազդաբար ձեռք էր մեկնում մարդը վորսի յետևից ընկնելիս կամ վտանգի րոպեյին, յերկար ժամանակ կազմում եյին նրա հարձակման ու պաշտպանության միակ զենքը։ Նույն քարն ու փայտը միաժամանակ ծառայում եյին նրան իբրև գործիք գետնից արմատներ, վորդեր և այլն փորելու, հանելու համար։

Սակայն վորքան էլ հասարակ լինեյին այս գործիքները, այնուամենայնիվ նրանք էլ հսկայական դեր եյին խաղում նախնադարյան մարդու զարգացման մեջ։ Վորքան ավելի հաճախ էր պատահում, վոր մարդը հարկադրված դիմեր այս նախնական գործիքներին, այնքան ավելի նրա ձեռքն այդ հանգամանքի հետևանքով փոխակերպվում էր հատուկ բռնող որգանի և դադարում էր նրան իբրև մագլցելու ու շարժվելու, տեղափոխվելու որգան ծառայելուց, ինչպես ծառայում էր նրա կիսակապիկ նախնուն։ Քայլելու ժամանակ մարդու միակ հենարանը դարձան նրա հետին վերջավորությունները, վորոնց դաստակներն այս յերևույթի հետ միատեղ զարգանալով դարձան վոտքի թաթեր։ Այսպիսով մարդը չորքոտանի կամ, ավելի ճիշտը, չորսձեռանի կենդանուց դարձավ յերկոտանի, նրա իրանը հորիզոնականի փոխարեն ուղղահայաց դիրք ստացավ, մի բան, վոր իր հերթին հսկայական նշանակություն ունեցավ նրա ամբողջ հետագա զարգացման համար, մասնավորապես նրա գանգի և ուղեղի զարգացման համար։ Մարդու՝ քարով կամ փայտով զինված ձեռքը փոխարինում էր կենդանիների շատ սուր որգաններին՝ ճանկերին, ժանիքներին, ուժեղ ծնոտներին և այլն։ Քարը մեծացնում էր հարվածի ուժը, ծառայում էր իբրև միջոց հողը քանդելու, փորելով պարեն հանելու համար, փայտը մարդու ձեռքը յերկար էր դարձնում և այդպիսով հնարավորություն էր տալիս գործելու հեռու տարածությունից։ Բայց յեթե նախնական գործիքներից ոգտվելը նպաստեց այն բանին, վոր մարդու ձեռքերը կազմվեցին, ապա ձեռքերի զարգացումն էլ, ընդհակառակը՝ գործիքների հետագա զարգացումը հնարավոր դարձրեց։ Առաջ մարդը շրջապատող պայմաններին անհրաժեշտաբար հարմարվում էր ամբողջ մարմնով, իսկ այժմ շնորհիվ այն հանգամանքի, վոր մարմնի բոլոր դիրքերի ժամանակ ձեռքերն ազատ եյին, նա նույն պայմաններին հակազդում էր հատուկ հարմարեցումներով ու արհեստական գործիքներով, վորոնք մարմնական ծագում չունեյին, այլ առնվում եյին դրսի

աշխարհից։ Յերկար ժամանակ մարդու միակ գործիքը քարն ու փայտըն եյին։ Դանդաղորեն ու աստիճանաբար, մի շարք անվերջանալի առանձին դիտողություններից հետո միայն մարդը հասավ այն մըտքին, թե այս բնական տվյալները կարելի յե ոգտագործել ավելի մասնագիտական ու իրանց կոչմանը համապատասխանող գործիքներ պատրաստելու համար։

Տասնյակ հազարամյակներ անցան, մինչև վոր մարդը սովորեց քարը տաշել և հարվածի ուժը մեծացնելու նպատակով այն կապել փայտի ծայրից կամ խրել փայտի ծայրը և այս կերպով սրքած քարին տալ կացնի, նիզակի, դանակի, քերիչի. հող փորելու քլունգի կերպարանք (այսպես կոչված՝ հին քարե դար)։ Այս նախնական գործիքների հետագա կատարելագործության համար հիշածից միայն մի քիչ պակաս ժամանակ հարկավոր յեղավ։ Այս կատարելագործություններից ամենակարևորը հղկելու արվեստն էր, յերբ մի սուր քարի քըսելով, քարի մակերևույթը կոկում եյին։ Այսպիսի հղկած գործիք պատրաստելը շատ յերկարատև ժամանակ ու մեծ ջանքեր էր պահանջում, յերբեմն մի քանի սերունդներ եյին չարչարվում քարե մի վորևե գործիք ավելի խնամքով պատրաստելու համար։ Սակայն այնուամենայնիվ այսպիսի դժվարությամբ շինած գործիքն էլ դեռ վատ ու թույլ էր գործում։ Քարե նիզակներն ու նետերը կենդանիներին միայն վերքեր եյին հասցնում, բայց չեյին սպանում նրանց։ Քարե գործիքների միջոցով կատարած գործերը պահանջում եյին, անհավատալի չափով շատ, աշխատանքի ու ժամանակի վատնում։ Այս բանը դեռ այժմ էլ կարելի յե դիտել՝ որինակ առնելով ժամանակակից մի քանի վայրենիների, վորոնք քարե գործիքներ են բանացնում։ Որինակ՝ հյուսիս-ամերիկական հնդկացիները միքանի տարի յեն վատնում այն բանի համար, վոր ծառը փորելով մակույկ պատրաստեն, ընդվորում յերբեմն մինչև այս գործն ավարտելը ծառն արդեն փթում, բանից պըրծնում է։

Ճիշտ նույն կերպ էլ մարդիկ վոչ թե միանգամից, այլ յերկար ժամանակվա ընթացքում միայն աջողեցին անել իրենց առաջին մեծ գյուտը, այն է՝ շփելու կամ կայծքար խփելու միջոցով կրակ ստանալու գյուտը։ Ներկայումս այլևս չկան այնպիսի ժողովուրդներ, վորոնց անծանոթ լիներ կրակի գործածությունը, սակայն այն միջոցները, վոր վայրենի ցեղերի մեծամասնությունը գործ է ածում կրակ ստանալու համար, դեռևս այնքան բարդ ու դժվար են, վոր որինակ՝ Ավստրալիայում շատ վայրենիներ գերադասում են իրանց հետ տեղափոխել հրավառ խանձողներ, քան ամեն մի կանգ առած վայրում կըրակ անել։ Սակայն կրակ ստանալը սովորելով էլ մարդիկ միանգամից չգնահատեցին նրա ոգտակար հատկությունները և յերկար ժա-

մանակ այն օգտագործում էին բացառապես իբրև լույսի ու ջերմության աղբյուր ու իբրև միջոց վայրենի գազաններից պաշտպանվելու համար։

2. ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ։—ՀԱՎԵԼՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ։ Գոյության անապահովությունն ու շրջապատող վտանգների դեմ կռվելիս անօգնական լինելն առաջին մարդկանց հարկադրում էին միասին լինելու և ապրելու ավելի կամ պակաս մեծությամբ խմբակներով։ Այս առաջին հասարակական միավորությունները պայմանավորող կապերը բացառապես հիմնում էին արենակցության ու ծագման ընդհանրության վրա։ Մարդկանց միասին լինելու հարկադրող պատճառները նույնն էին, ինչ վոր այն պատճառները, վորոնք կենդանիներին միացնում էին իբրև հոտ, այն է միատեղ պաշտպանության անհրաժեշտությունը և ուտելիք հայթայթելու համար խմբովին գործելու անհրաժեշտությունը։ Մարդկային այսպիսի միավորությունների ծագումն ամենից առաջ շրջապատող արտաքին պայմաններից էր կախված։ Ահա թե ինչու առաջին մարդկային հասարակությունների թե մեծության չափերն ու թե կայունությունը ճիշտ նույն կերպով կախումն ունեին գլխավորապես տեղի բնույթից, հատկություններից, այն փորձանքների շատությունից, վորոնցով այն վայրն սպառնում էր մարդուն, սնվելու համար անհրաժեշտ միջոցների առատությունից կամ պակասությունից։ Յեթե տվյալ վայրը հարուստ էր զանազան տեսակ ուտելիքներով, հայթայթելու համար պահանջվում էր մարդկանց միատեղ գործունեություն, ապա այնտեղ միասին կենցաղավարող վորսորդների խմբերը թե՛ ավելի մեծ էին լինում, թե՛ ավելի հարատև ու թե ավելի կայուն։ Ընդհակառակն՝ անապատ ու կերակրով աղքատ վայրերը չէին նպաստում փոքրիշատե մեծ խմբեր կազմելուն, ընդվորում սնվելու պայմանների վատթարանալու դեպքում նույնիսկ այս փոքրիկ խմբերը հեշտությամբ բաժանվում էին առանձին ընտանիքների ու մինչև անգամ մենակյաց անհատների, վորոնք սեփական ույժերին ու բախտին վստահացած՝ ձեռք էին բերում իրենց սնունդը։ Այս յերևույթը կարող ենք դիտել դեռ միքանի ժամանակակից վայրենի ցեղերի կյանքում, վորոնք ապրում են աննպաստ պայմաններում։ Այսպես, բուշմենները, Հրո յերկրի բնակիչները, շատ ավստրալիական ցեղեր թափառում են մեծ մասամբ կամ փոքրիկ խմբերով կամ առանձին ընտանիքներով։

Այսպիսով մարդկանց առաջին միավորություններն աչքի յեին ընկնում իրենց սակավաթիվ ու անկայուն լինելով։ Սրանցից նույնիսկ ամենախոշորները չէին կարող առանձնապես բազմանդամ լինել։ Այն

ժամանակ, յերբ մարդիկ ապրում ու սնվում էին միայն նրանով, ինչ վոր գտնում էին իրենց շուրջը, յերբ նրանք չգիտեյին դեռևս վոչ յերկրագործություն, վոչ անասնապահություն, մինչև անգամ համեմատաբար փոքրիկ խմբի կերակրվելու համար շատ ընդարձակ տարածություն էր պահանջվում։ Խմբի փոքրությունը՝ նրա գրաված տարածության ընդարձակության հետ շաղկապված,—ահա այս է յուրաքանչյուր նախնադարյան հասարակության տարբերիչ գիծն ամենից առաջ։ Յուրաքանչյուր առանձին խումբ իրեն մյուսներից զատ ու միանգամայն առանձնացած է պահում։ Հարևան խմբերի միջև թշնամական հարաբերություններից բացի ուրիշ վոչ մի տեսակ հարաբերություն չկա։ Յեվ առանձին խմբերը վորքան ավելի բազմանդամ էին դառնում բնական աճեցողության հետևանքով, այնքան ավելի իրենց նեղված էին զգում իրենց գրաված յերկրամասում, սրա հետ միաժամանակ այնքան ավելի թշնամական էին դառնում նրանց ու հարևանների հարաբերությունները, և այնքան ավելի հաճախ պետք է ընդհարումներ ծագեյին։

Ընդարձակ տարածության անհրաժեշտության պատճառը վոչ միայն այն էր, վոր կերակուր հայթայթելու յեղանակները նախնական էին, այլ նույնպես և այն, վոր վորևէ պլանաչափ տնտեսական գործունեություն բացակայում էր։ Բուն, իսկական գործունեությունըն սկսվում է ապագան ապահովող պաշարներ հավաքելուց։ Սակայն զարգացման առաջին աստիճաններում այս իմաստով վորևէ տնտեսություն չկար և չէր կարող լինել էլ։ Սննդի վորոնումների ժամանակ մարդը բավականանում էր բնական պատրաստի արդյունքները պարզապես գործադրելով, սպառելով առանց այն արդյունքները վորևէ մշակման յենթարկելու։ Նախնական գործիքները հազիվ միայն թույլ էին տալիս մարդուն, վոր կերակրի իրեն ու վայրենի գազաններից պաշտպանվի։ Առաջին մարդու ամբողջ աշխատանքն, ամբողջ ժամանակը գնում էին գոյության այնպիսի միջոցներ հայթայթելու, վորոնք անհրաժեշտ էին տվյալ րոպեյին։ Այսպիսով աշխատանքը բացառապես անհրաժեշտ աշխատանք էր։ Բացակայում էր վորևէ տեսակի հավելյալ աշխատանք, այսինքն՝ այն աշխատանքը, վոր արտադըրում է ավելի, քան անհրաժեշտ է իրեն՝ աշխատողի կյանքը տվյալ րոպեյին պահպանելու համար։ Այսպիսի աշխատանքի մասին, ապագայի համար պաշարներ պատրաստելու մասին մտածմունքն անգամ դեռևս լիովին օտար ու անծանոթ էր նախնադարյան մարդուն։ Դեռևս ժամանակակից շատ վայրենիներ էլ աչքի յեն ընկնում նրանով, վոր լիովին անհոգ են ապագայի վերաբերմամբ։ Ավստրալիայի Նոր-Վալլեսի բնիկների մասին մի ճանապարհորդ ասում է «Սրանց նույնիսկ հոգացողությունն իրենց ապրուստի մասին յերբեք ներկա րոպեյից դենը չի

անցնում։ Նրանց համար եգուցվա որ ասածը գոյություն չունի։ Նրանք ուտում են և խմում, արթնանում և իրենց համար կերակուր են փնտրում»։ Այսպիսով վայրենին աշխատում է միայն այնքան, վորքան այդ անհրաժեշտ է քաղցից չմեռնելու համար։ Նա վոչ միայն վորևէ պաշար չի պատրաստում, այլ նույնիսկ այն ավելցուկները, վորոնք պատահաբար նրա տրամադրության տակ են լինում, յետ չի դնում պաշար պատրաստելու համար։ Յեթե նրան աջողվում է ընկնել ուտելիքով առատ տեղեր կամ հանդիպել խոշոր գազանի, ապա նա վոչ մի չափ չի ճանաչում և ուտում է կուշտ ու կուռ մինչև հագենալը։ Իսկ կշտանալուց հետո դեն է ձգում, թողնում է մնացորդները, թեև կարող է պատահել, վոր կարճ ժամանակ հետո ավելի պակաս աջող վորսի դեպքում, նրան վիճակվի ամբողջ որեր քաղցած մնալ։

3. ՊԱՐԶ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։—ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ։ Գործիքների պարզության ու արտադրողական գործունեյության սաղմային դրությանը համապատասխանում եր աշխատանքի հնագույն կազմակերպության հենց նույնքան նախնական ձևն էլ։ Խոսք անգամ չեր կարող լինել աշխատանքի վորևէ բաժանման մասին, վոր հիմնված լիներ առանձին արտադրողների մասնագիտացման վրա։ Ամեն մեկն ուներ միևնույն գործիքները (նախնապես քարն ու փայտը), ամեն մեկը կարող եր անել, պատրաստել նույնը, ինչ վոր մյուսները, յուրաքանչյուրն իրեն ուտելիք եր հայթայթում միևնույն յեղանակներով։ Այսպիսով մի խմբի մեջ միացած մարդկանց հարաբերությունները պարզ աշխատակցության (կոոպերացիա) կերպարանք ունեյին։ Այսպիսով աշխատակցության միակ նշանակությունն այն եր, վոր միահամուռ ույժերով ավելի հեշտ կարելի յեր հասնել այնպիսի հետևանքների, վորոնք մի մարդու ույժից վեր եյին, որինակ՝ ավելի խոշոր կենդանիների շուրջկալի կամ վորսի ժամանակ, ինչպես և խոշոր գիշատիչներից պաշտպանվելու միջոցին։

Այսպիսով առաջին մարդկանցն ավելի մեծ խմբերի մեջ միացնող պարզ աշխատակցության նպատակը վոչ թե բնական արդյունքների մշակումն եր, վոչ թե արտադրությունն եր բառի բուն մտքով առած, այլ, ճիշտ առանձին վորսորդների աշխատանքի ու գործունեյության նման, ամենից առաջ ուտելիք հայթայթելն եր։ Բոլորը միակերպ մասնակցություն եյին ունենում ընդհանուր վորսորդական ձեռնարկությունների մեջ, այս պատճառով էլ, բնական է, վոր վորսի արդյունքներն էլ ընդհանուր սեփականություն համարվեյին։ Վորսը բաժանվում է բոլոր վորսակիցների միջև և սովորաբար հենց տեղն ու տեղն էլ սպառվում է։ Այս դեպքում առանձին վորսորդների ավելի կամ պակաս բախտն ու աջողությունը նկատի չեյին առնում։ Դեռ մինչև

այժմ էլ բազմաթիվ վայրենի ժողովուրդների մեջ ընդունված է վորևէ վորս ու ավար գտնելիս ցեղի մնացած անդամներին կանչել՝ այն միասին վայելելու համար։ Այն հեռավոր ժամանակներում մասնավոր սեփականություն, առանձին անհատներին պատկանող սեփականություն դեռևս գոյություն չուներ։ Այսպիսի սեփականության մտապատկերն անգամ չեր կարող առաջանալ, քանի վոր մարդը բացառապես ներկա րոպեյով եր ապրում, առանց ապագայի մասին խորհելու։ Վայրենին հագենալով, ինչպես տեսանք, ուտելիքի մնացորդը ձգում եր բախտի քմահաճույքին։ Վոչ վոքի մտքով անգամ չեր անցնում իրենն անվանել սնվելու այն միջոցները, բնության այն պարգևները, վոր մարդիկ գտնում եյին իրենց շուրջը ճիշտ այնպես, ինչպես ներկայումս վոչ վոք արեգակի լույսի կամ ոդի նկատմամբ սեփականության իրավունք չի հայտաբերում։ Այսպիսի պայմաններում միակ սեփականություն կարող եյին լինել այն գործիքները միայն, վոր ինքը մարդն եր պատրաստում։ Յեվ իրոք, ամենից առաջ հենց գործիքները դարձան մասնավոր սեփականության առարկա։ Սակայն այդ բանն էլ միանգամից չկատարվեց. սկզբում գործիքներն էլ վորսորդների տվյալ խմբի բոլոր անդամների ընդհանուր ոգտագործման առարկա յեյին կազմում։ Այս պատճառով այն հարաբերությունները, վոր գոյություն ունեյին առաջին մարդկանց առանձին հասարակական միավորությունների ներսում, կարող են բնորոշվել իբրև «նախնադարյան կոմմունիզմի» հարաբերություններ։*)

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԱՂՄԵՐԸ։—Այն հասարակության մեջ, վորտեղ արտադրության կազմակերպության միակ հնարավոր ձևը պարզ աշխատակցությունն եր, վորտեղ աշխատանքի վոչ մի բաժանում չկար, բնական է, չեր էլ կարող գոյություն ունենալ վորևէ հասարակական ստորաբաժանում, վորևէ հասարակական դասակարգ։ Հասարակության հնագույն բաժանումն, ինչպես և նույն ինքը Նախնադարյան հասարակությունը, հիմնվում է բնական պատճառների վրա, այն է՝ հասակի ու սեռի տարբերության վրա։ Դեռ մինչև այժմ

*) Նախնադարյան կոմմունիզմի հետքեր ու մնացորդներ այժմ էլ դեռ նկատելի յեն բազմաթիվ վայրենի ժողովուրդների մեջ։ Ճանապարհորդների պատմելով, բուշմեններն ու Հրո յերկրի բնակիչները յերբ վորևէ իր նվեր են ստանում կամ փոխանակում են, իրենց խմբակի բոլոր անդամների հետ բաժանում են այն։ Նույնը պատմում են կալիֆորնիացիների մասին էլ։ Կարոլինյան կղզիների, Սամոա ու Բարեկամության կղզիների բնակիչների, ինչպես և հարավ-ամերիկյան հնդկացիների և ուրիշ բազմաթիվ վայրենի ցեղերի բնակարանների դռները լայն բաց են ամեն մեկի առաջ։ Վորևէ բանի կարիք զգացող յուրաքանչյուր ցեղակից, ամեն մի սովածացած ճանապարհորդ կարող է մտնել, վոր տունը կամենա, և ոգտվել այն բոլորից, ինչ վոր կըգտնի այնտեղ, առանց թույլտվություն խնդրելու ու նույնիսկ առանց տնատերե-

եվ ժամանակակից բազմաթիվ վայրենի ցեղերի մեջ տարիքային խըմբերը վորոշապես հանդես են գալիս: Յերեխաները մայրերի խնամքի տակ են գտնվում, նրանք հորը մեծ մասամբ չեն էլ ճանաչում: Յերիտասարդները, վորոնք դեռ չեն հասունացել և աստիճանաբար մարզըվում են մեծերի ղեկավարությամբ՝ հմտանալով ռազմական ու վորսորդական հնարներին, տարիքային յերկրորդ խումբն են կազմում: Սովորաբար յերիտասարդներին զատած են պահում՝ հաճախ դրանցից կազմելով յերիտասարդական հատուկ միություններ: Հայտնի տարիքի հասնելով ու վորոշ քննություններից հետո յերիտասարդներին թույլատրվում է տարիքավոր աշխատունակ տղամարդանց խմբի մեջ մտնել: Միայն ավելի ուշ, այն բանին զուգընթաց, յերբ արտադրողական գործունեյության զարգացման հետ ավելի ու մեծ դեր է սկսում խաղալ մեծերի փորձառությունն ու ղեկավարությունը, հրապարակ է գալիս ծերերի—ավագների ու պետերի տարիքային խումբը:

Ըստ տարիքի բաժանման կողքին գոյություն ունի նաև բաժանումն ըստ սեռի: Սովորաբար բոլոր տարիքային խմբերում էլ յերկու սեռերը զատ-զատ են մնում: Թեև արական ու իգական խմբերի այսպիսի առանձնացումն ամենից առաջ զուտ բնական սեռային տարբերությունից է բխում, սակայն միայն այս տարբերության վրա չի հիմնվում այն, այլև հիմնվում է դեռևս շատ վաղ հանդես յեկող այն տարբերության վրա, վոր ունենում են յերկու սեռի սնման յեղանակները:

Սկզբում այսպիսի տարբերություններ համարյա չկային: Միայն այն բանին զուգընթաց, յերբ գործիքների զարգացման հետ ուտելիքի հասարակ վորոնումները տեղի յեյին տալիս ավելի սիստեմատիկ վորսորդության ու վորսի կենդանիներին հետապնդելուն, ավելի վորոշ ասպարեզ եր գալիս այն տարբերությունը, վոր ունեյին յերկու սեռի ուտելիք հայթայթելու յեղանակները: Վորսորդությունն ույժ, լարումն, դիմացկանություն եր պահանջում և արդեն միայն այս պատճառով կնոջ ույժից վեր եր լինում: Սակայն բացի ույժերի զուտ ֆիզիքական այսպիսի տարբերությունից էլ՝ կյանքի վորսորդական յեղանակը, վոր տեղի մշտական փոփոխության հետ կապ ուներ, յերեխաներով ծանրաբեռնված կնոջն ավելի քիչ եր մատչելի, քան տղամարդուն, վոր այս կողմից ազատ եր: Այն հեռավոր ժամանակներում բառի բուն մտքով ասած՝ ընտանեկան կյանք դեռ չկար: Այս պատճառով յերեխաների հոգսը բացառապես մոր վրա յեր ընկած: Իսկ շարունակ յերեխան հետն ունենալով՝ կինը չեր կարող նույնչափ ազատ ընկնել վորսի կենդանու հետևից, ինչպես տղամարդ վորսորդը: Ահա թե ինչու այն ժամանակ, յերբ տղամարդիկ իրենց սպանած կենդանիների մսով եյին կերակրվում բացառապես, կանայք հարկադըրված եյին առաջվա նման բավականանալու ծառերից հավաքած կամ գետնից հանած բուսական ուտելիքով: Այս բանը բառի բուն մտքով ասած աշխատանքի բաժանումն չեր դեռևս, այլ, ավելի շուտ, սնվելու յեղանակների տարբերություն: Սովորաբար յուրաքանչյուրն սպառում եր իր վորսն ու ավարը տեղն ու տեղը, և վորսորդ տղամարդիկ դեռ սովորություն չունեյին իրենց ուտելիքը կանանց հետ բաժանելու:

Սնվելու յեղանակների այսպիսի տարբերության շնորհիվ տղամարդիկ ու կանայք սովորում եյին առանձին ու իրարից զատված մընալ: Սրա հետ միաժամանակ շնորհիվ այն հանգամանքի, վոր տղամարդիկ վորսորդության ժամանակ մշտական աշխատակցության ու միահամուռ գործունեյության մեջ եյին լինում, ինչպես և վորսը միասին եյին սպանում, նրանց մեջ համեմատաբար շատ ավելի ուժեղ եր զարգացած լինում հասարակական կյանքի ընտելությունն էլ (привычка): Բազմաթիվ ժամանակակից վայրենի ժողովուրդների մեջ կան տղամարդկանց հատուկ տներ, վորոնք ծառայում են իբրև տղամարդկանց ընդհանուր կերուխումի, գիշերելու ու վերջապես սովորական ժամանցի տեղեր: Տղամարդկանց այսպիսի տներ պատահում են Ավստրալիայում, Մելանեզիայում, մասամբ Հնդկական արշիպելագի կղզիներում, վերջապես Բրազիլիայի հնդկացի ցեղերի մեջ: Աֆրիկայում, վորտեղ նեգր ցեղերի մեծ մասն արդեն վորսորդությունից անցել է յերկրագործության ու անասնապահության, ներկայումս տղամարդկանց հատուկ տներ քիչ են պատահում, սակայն անցյալ բազմաթիվ մնացորդները վկայում են, վոր առաջ այստեղ էլ լայն տարածված են յեղել տղամարդկանց տները: Տղամարդկանց առանձնանալու հետքերի կարելի յե հանդիպել, նույնիսկ պատմական ազգերի միքանի սովորությունների մեջ էլ: Այսպես են, որինակ՝ սպարտացոց հանրահռչակ սիսսիտիաները: Կանանց միություններն ու կանանց հատուկ տները շատ ավելի հազվադեպ են լինում: Սովորաբար կանանցից յուրաքանչյուրն իր յերեխաների հետ ապրում [illegible] խրճիթում:

րին շնորհակալություն հայտնելու: Այսպիսի կարգեր գոյություն ունեյին նաև հին գերմանացոց ու սլավոնների մեջ: Այս սովորույթը, վոր դիտողների մեծ մասը նկարագրում է իբրև լայն տարածված հյուրասիրություն, իրոք նմանապես վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի արձագանք այն ժամանակվա, յերբ մասնավոր սեփականության մասին ընդհանրապես վորևե գաղափար գոյություն չուներ դեռևս, և բոլոր առարկաներն էլ ընդհանուր ոգտագործման յենթակա յեյին: Սրա փոխարեն վայրենիների մեծամասնությունն ուրիշի սեփականությանն էլ նույնքան ազատ է վերաբերվում: Ճանապարհորդները հաճախ գանգատվում են, վոր բազմաթիվ վայրենի ցեղեր գողության հակումն ունեն, թեև այս դեպքում էլ նույնքան քիչ կարելի յե խոսել գողության մասին, վորքան վերևում բերած որինակներում՝ հյուրասիրության մասին:

12979

Гос. Библиотека ... им. А. Мясникяна

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՏՈՀՄԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

1. ՆԱԽՆԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ։ ՄԱՅՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ։ Սնվելու յեղանակների տարբերությունն աշխատանքի իսկական բաժանման փոխվեց այն ժամանակվանից միայն, յերբ մարդիկ ուտելիքի պարզ հավաքումից ու տեղն ու տեղը սպառումից անցան ավելի պլանաչափ տնտեսական գործունեյության։ Այս ուղղությամբ առաջին քայլն անողները կանայք յեղան։ Սրանք դեռ շատ վաղ, վորովհետև յերեխաները կապում եյին նրանց ձեռն ու վոտն, սկսեցին կիսանստակյաց կյանք վարել, իրենց ու յերեխաների համար բնակարան շինելով ու այս բնակարանում մշտական կրակը վառ պահելով։ Միևնույն ժամանակ յերեխաների հոգսն ու հենց ուտելիքի տեսակը, վորը հասունանում եր տարվա վորոշ յեղանակին միայն, հարկադրում եյին մայր յեղող կնոջն ավելի հեռատես լինելու և հավաքած ավելցուկներն իբրև ապագայի պաշար յետ դնելու, պահելու։ Պարզապես պաշարներ հավաքելուց բնական եր արդեն իր հերթին անցնել սննդատու բույսերը հատկապես խնամելուն ու ցանելուն։

Դիտելով վոր պատահաբար թափթփած հատիկներից կամ դեն շպրտած տակուքներից նոր բույսեր են դուրս գալիս, կանայք սկսեցին հատկապես ու գիտակցաբար հատիկներ շաղ տալ ու այդպիսով ցանքս կատարել։ Հաջորդ դիտողությունը, վոր ցույց և տվել, թե փափկացրած հողում սերմերն ավելի լավ բերք են տալիս, բերեց այն մտքին, թե ցանքսի համար պետք և հողաշերտը պատրաստել։ Այսպիսի նախապատրաստումը, վոր սկզբում վոչ այլ ինչ եր, յեթե վոչ հողը պարզապես փորփրելը, բացառապես ձեռքերով եյին կատարում և այն ել նույն այն նախնական գործիքների ոգնությամբ, վորոնք ծառայում եյին իբրև միջոց հողից ճաշակելի արմատներ հանելու համար։ Ամբողջ Ներքին Աֆրիկայում ու Պոլինեզիայում, չնայած այն հանգամանքին, վոր այնտեղ յերկրագործությունը լայն տարածված և, բնակիչներն իրենց գործն անում են բացարձակապես առանց գութանի գործածության։ Սկզբում սկսում են մշակել այնպիսի բույսեր, վոր

աչքի չեն ընկնում աճելու արագությամբ ու առատ բերքատվությամբ։ Այսպիսի բույսերից են Ամերիկայում մայիսն ու յեգիպտացորենը, Աֆրիկայում՝ սորգո կոչվող մի հատուկ բույս, վոր հայտնի յե նաև նեգրական հաճար անունով, ու Ասիայում՝ բրինձը։ Մայիսը մի ամսվա մեջ մեծանում և մինչև ութ վոտնաչափ, բերք տալիս մեկին 180 ու 200։ Պակաս բերքատվություն չունի նաև սորգոն, վոր հասնում և մինչև 18 վոտնաչափ բարձրության։ Յեգիպտոսում առանձնապես տարածված և կորեկը։ Հյուսիսային յերկրներում մյուս հացահատիկներից առաջ սկսել են գարի ցանել։ Խաղաղ ովկիանոսի կղզիներում ու Հնդկական արշիպելագում շատ տարածված և նույնպես հացատու ծառի, բանանի, կոկոսի, արմավենու մշակույթը։

Յերկրագործությունն ել ավելի յեր կապում, կպցնում կանանց մի տեղի, այնինչ տղամարդիկ շարունակում եյին իրենց վորսորդական թափառաշրջիկ կյանքը։ Մինչև այժմ կյանքի պայմանների այսպիսի տարբերություն նկատվում և Բրազիլիայի ու Աֆրիկայի զանազան վայրերի շատ ցեղերի մեջ։ Սակայն ժամանակի ընթացքում վորսորդության աշխարհագրական շրջանը հետզհետե ավելի ու ավելի նեղանում եր, սրա հետ ել վորսորդության հետևանքներն ավելի պակաս աջող ու պակաս հուսալի յեյին դառնում։ Յեվ միևնույն ժամանակ նույնիսկ այն նախնական յերկրագործությունը, վորով պարապում եյին կանայք, ընձեռում եր մի սնունդ, վորը թեև աղքատիկ, բայց բավարար եր և միաժամանակ ապահովված։ Անաջողությունների դեպքում վորսորդներն ավելի ու ավելի հաճախ եյին հարկադրված լինում ոգտվելու այն բուսական ուտելիքից, վոր հավաքում եյին կանայք։ Իրենց հերթին նրանք՝ վորսորդ տղամարդիկ իրենք ել սկսում են տուն բերել իրենց վորսը, վորի մի մասը չորացրած կերպարանքով նույնպես յետ են դնում իբրև պաշար։ Այսպես առաջին անգամ պայմաններ են ստեղծվում միահամուռ տնտեսության համար, վորի մեջ աշխատանքի հսկայական բաժանում գոյություն ուներ։ Ներքին Աֆրիկայի բազմաթիվ վայրենի ժողովուրդների մեջ տղամարդիկ շարունակում են դեռևս առանձնացած մնալ, բայց ուտելիքն արդեն կանանցից են ստանում։ Նույնպիսի միատեղ տնտեսություն գոյություն ունի նաև հյուսիս-ամերիկական ցեղերի մեծ մասի մեջ, վորոնց շրջանում վորսորդությունը կազմում և տղամարդու զբաղմունքը, յերկրագործությունը՝ կանանց։

Պլանաչափ տնտեսական գործունեյությունը, վոր հիմնված և արդեն վոչ թե պարզ աշխատակցության, այլ աշխատանքի թեկուզ դեռ թույլ զարգացած բաժանման վրա, շատ ավելի մեծ չափով եր ապահովում մարդկանց գոյությունը և միևնույն ժամանակ յուրաքանչյուր առանձին խմբի անդամներին ավելի սերտ եր շաղկապում իրար,

քան պատահականություններով լի որսորդական կյանքը: Երբ գոյությունն ավելի ապահովվեց և ավելի ամուր կապեր հաստատվեցին, այն ժամանակ թե՛ ավելի ընդարձակ ու թե ավելի հաստատուն հասարակական միավորություններն էլ հնարավոր դարձան: Նախնադարյան հարափոփոխ ու գյուղալույծ հրոսակույտի (орда) փոխարեն առաջ են գալիս տոհմն ու տոհմային համայնքը, որի առանձին անդամները ոչ միայն ազգակցական հարաբերությունների մեջ են իրար նկատմամբ, այլև շաղկապված են տնտեսական շահերի ընդհանրությամբ: Միքանի մերձավոր տոհմեր կազմում են մի ցեղ: Հյուսիս-ամերիկական առանձին ցեղերի բազմանդամությունը հասնում է մինչև 10,000 մարդու, իսկ նրանց գյուղերը պարունակում են միքանի հարյուր բնակիչ: Տոհմային համայնքի մեջ տնտեսությունը դեռ կոմմունիստական սկզբունքներով են վարում: Միայն գործիքներն ու զարդերն են, որ մասնավոր սեփականության առարկա յեն, այն էլ ոչ միշտ:

Մի կողմից այն աչքի ընկնող նշանակությունը, որ ձեռք են բերում տնտեսության մեջ կանանց հայթայթած բուսական արդյունքները, մյուս կողմից՝ կանանց առաջնակարգ տնտեսական դերը բարձրացնում են կանանց խմբի նշանակությունը և հաճախ պայմաններ են ստեղծում կանանց գերիշխող դրության համար (այսպես կոչված մայրիշխանությունը, մատրիարխատ): Ամենուրեք, որտեղ գոյություն ունի կանանց նախնական յերկրագործություն—Հյուս. Ամերիկայում, Ներքին Աֆրիկայում, Պոլինեզիայում, կանայք մեծ պատիվ ու հարգանք են վայելում: Ազգակցությունը սովորաբար հաշվում են ոչ թե արական գծով, ինչպես հետագայում, այլ իգական: Առանձին դեպքում կանայք նաև փաստորեն անցնում են տոհմի ու նույնիսկ ցեղի գլուխ իբրև սրանց պետ, թեև ճշմարիտ է, որ այս հազվադեպ է լինում: Հաճախ պետի դերը կատարում է տոհմի մեջ ամենից ավագ կնոջ՝ «մոր» ամենամոտ ազգականը, յեղբայրը:

2. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ: Ինչպես յերկրագործությունը, որ ծագել էր բուսական ուտելիք հավաքելուց, սկզբում բացառապես կանանց խմբի զբաղմունքն էր, այնպես էլ անասնապահությունը, որ զարգացել, առաջ էր յեկել որսորդությունից, գլխավորապես տղամարդկանց զբաղմունքն էր կազմում: Պատահականություններով լի որսորդական կյանքից անասուններին ընտելացնելու ու սրանց հատուկ բուծմանն անցնելու դրդապատճառն ամենից առաջ բացարձակ գերբնակչությունն էր, այսինքն բնակչության աճումը, որը որսորդական խմբի յերկրամասի սահմանները նրա համար չափազանց նեղ էր դարձնում: Սակայն ինչպես նախնադարյան մարդու

զարգացման յուրաքանչյուր այլ առաջադիմական քայլ, այնպես և կենդանիներին ընտելացնելը որևէ նախամտածված գործողության հետևանք չէր, այլ ամբողջ շարք պատահական զուգադիպությունների ու դիտողությունների արդյունք:

Ամենայն հավանականությամբ առաջին ընտելացրած կենդանիները յեղել են այն ձագերը, որոնք հետևելիս են յեղել սպանված մորը, կամ որոնց մարդիկ վեր են առել զվարճության համար: Ընդհանրապես մարդն սկզբում իր մոտ կենդանիներ պահում էր ոչ այնքան օգտի, որքան զվարճության համար: Հաճախ այսպիսիները լինում էին միանգամայն անօգուտ կենդանիներ: Բրազիլիայի հնդկացու տաղավարում կարելի յե հանդիպել ձեռնասուն կապիկների, թութակների, նույնիսկ կրիաների: Առաջին օգտակար ընտանի կենդանին յեղել է շունը. շանից հետո հաջորդաբար ընտելացել են տնային թռչուններն ու մանր անասունները—այծը, ոչխարը, խոզը, էշը և վերջապես հետո նոր միայն խոշոր յեղջյուրավոր անասուններն ու ձին: Մեծ հոտերի ընտելացումը սովորաբար կատարվում էր այսպես. որսորդներն սկզբում լոկ հետևում են արածող հոտերին, հետո արոտատեղը շրջապատում ցանկապատով, այնպես որ կենդանիներն այլևս չեն կարող այնտեղից դուրս գալ: Յեվ սրանից հետո յե միայն, որ զարգանում է բառի բուն մտքով ասած՝ անասնապահությունն արոտատեղիների մշտական փոփոխությամբ ու անասունների սիստեմատիկ բուծումով հանդերձ:

Մեծ հոտեր պահելը հնարավոր է այնտեղ միայն, որտեղ բավարար քանակությամբ խոտեղեն բուսական ուտելիք կա: Ահա թե ինչն է պատճառը, որ թափառական կյանքի հետ կապված իսկական անասնապահությունը կարողացել է զարգանալ Ասիայի ու արևելյան Աֆրիկայի հարթ տափաստաններում միայն: Իսկ մեծ մասամբ անասնապահությունը միացած է լինում յերկրագործությանն ու որսորդությանը՝ սկզբում հանդես գալով իբրև վերջինիս սոսկ լրացում: Դեռ յերկար ժամանակ որսորդական բնազդն իր գոյությունն զգալի յե դարձնում հարևանների հոտերի վրա կատարվող ավարառու արշավանքներով: Արոտատեղերի համար մղվող վեճն էլ մի ուրիշ, ոչ հազվադեպ առիթ է, որից ծագում են արյունալի ընդհարումներ հարևանների միջև: Այսպիսով պատերազմը նույնքան անխուսափելի կապ ունի ինչպես անասնապահական, այնպես և որսորդական կենցաղավարության հետ: Պատերազմն անասնապահներին ընձեռում է նոր հոտեր, սրանց հետ նաև ռազմագերի ստրուկներ, որոնց աշխատանքն այժմ է միայն առաջին անգամ սկսում գնահատվել և գլխավորապես կիրարկվում է հոտերի վրա հսկելու համար:

**3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱ-
ՑՈՒՄԸ:—ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ:** Յերբ մարդիկ պատահական
ունելիքի պարզ վորոնումից պլանաչափ անտեսության և պատրաստի
արդյունքների պարզ սպառումից արտադրողական գործունեյության
ու պաշարներ պատրաստելուն եյին անցնում, այս յերևույթներին ու-
ղեկցում եր տեխնիկայի համապատասխան զարգացումը: Մարդը սո-
վորեց ավելի կատարելագործված ու իրեն կոչմանն ավելի համապա-
տասխան գործիքներ ու խնարումեններ պատրաստել իր համար,
զանազան տնտեսական կահ ու սարք ձեռք բերեց, գազանի մորթիների
փոխարեն սկսեց հատուկ հյուսած զգեստներ հագնել, իր համար ա-
վելի հարմար ու ամուր բնակարան շինեց:

Մետաղները հալելու միջոցը գտնելուց հետո սկսեցին գործիքնե-
րը վոչ թե քարից պատրաստել, այլ բրոնզից, այսինքն պղնձի ու ա-
նագի խառնուրդից. անագը խառնում եյին պղնձին ավելի ամրու-
թյուն տալու համար (այսպես կոչված բրոնզի դար): Յեվ վերջապես
յերկաթի հանքանյութի գյուտից հետո սկսեցին գործիքները յերկա-
թից էլ շինել (յերկաթե դար): Ըստ յերևույթին կահ ու սարքի առա-
ջին առարկան գործած զամբյուղներն եյին, վոր բանեցնում եյին ու-
տելիքի պաշարներ հավաքելու ու պահելու համար: Յեփելու արվես-
տի հետ յերևան է գալիս անկեզ (огнеупорный) ամանն էլ: Սկզբում
այս միևնույն ձեռնակողովն եր, վոր կավով ծեփած եր նրա համար,
վոր այն կարելի լինի կրակի վրա դնել. հետագայում սկսեցին պու-
տուկներ ու այլ ամաններն շինել ուղղակի կավից, իսկ էլ ավելի ուշ
սկսեցին կիրարկել դուրգն (բրուտի ճախարակը-гончарный круг): Ծառի
ճյուղերից հենց այս զամբյուղ գործելն իսկ որինակ ծառայեց նաև
կտորեղեն հյուսելու արվեստի համար այն բանից հետո, յերբ կա-
նայք ուշադրություն դարձրին կանեփի ու վշի թելավոր ծղոտների
վրա և սովորեցին սրանցից գզվածք հանել ու թելեր մանել: Սրա հետ
միաժամանակ կտավե հագուստը փոխարինեց առաջվա գազանի մոր-
թիներին: Միաժամանակ տղամարդիկ սկսեցին կաշիներ պատրաստել,
վորին զուգընթաց հանդես յեկավ կաշեղենի արտադրությունը:

Էլ արդեն չբավականանալով պատահական բնական ապաստա-
րաններով՝ մարդն սկսեց իր համար հատուկ բնակարաններ շինել: Այս
ուղղությամբ առաջին քայլն յեղան քամուց պաշտպանվելու համար
ճյուղերից հյուսած պատվարները: Հետագայում այսպիսի հյուսած փոք-
րիկ պատերն սկսեցին սվաղել ցեխով կամ յերեսը կեղև քաշել ու կա-
րել: Իսկական փայտե շինությունները, ինչպես և քարաշար շենքերն
էլ ավելի ուշ են ասպարեզ գալիս: Վայրենի գազաններից ապահով լի-
նելու համար մարդն իր այս առաջին բնակարանները ջրից վեր, յեր-
բեմն և ցամաքում շինում եր ցցերի վրա: Նման տեսակի այսպես

կոչված ցցավոր շինություններ գտնված են Յեվրոպայում (Շվեյցարի-
այում՝ Ցյուրիխի լճի վրա): Ճիշտ այսպիսի ցցավոր շինություններ
պատահում են նաև բազմաթիվ ժամանակակից վայրենի ժողովուրդնե-
րի մեջ, մանավանդ Մալայան արշիպելագի կղզիներում: Քոչվոր ա-
նասնապահների բնակարանները հարմարեցրած են նրանց կյանքի
շարժական յեղանակին և այնպես են կառուցվում, վոր հեշտությամբ
կարելի լինի նրանց մասերը քանդել ու հետները կրել, տանել:

Ուտելիք հայթայթելու յեղանակների ու արտադրողական գոր-
ծունեյության առաջադիմության հետևանքը յեղան աշխատանքի կազ-
մակերպության ձևերի հետագա փոփոխությունները: Տոհմային խումբն
ավելի ընդարձակ ու կուռ է դառնում: Աշխատանքի բաժանումը տղա-
մարդկանց ու կանանց միջև ասպարեզ է գալիս ավելի մեծ վորոշու-
թյամբ: Այժմ տղամարդիկ գլխավորապես վորսորդ ու անասնապահ են:
Հոտերի տեր հովիվը հպարտանում է իր հարստությամբ, նա կանանց
չի թույլ տալիս, վոր մոտենան անասուններին, ինքն է հոգ տանում
վերջինների մասին և կթում նրանց: Կանանց վրա յեն թողնում բա-
ցառապես տնային գործերը, տնտեսության խառը ձևերի ժամանակ
դարձյալ նրանց վզին է ընկնում բացի սրանից նաև յերկրագործական
բոլոր աշխատանքները:

Ինչպես նախնական համայնքում, այնպես էլ այժմ յուրաքան-
չյուր սեռ ինքն է անկախորեն պատրաստում իր տնտեսական գործու-
նեյության համար անհրաժեշտ գործիքներն ու խնարումենտները:
Մետաղները հալելը, զարբնության արհեստը, փայտից առարկաներ
շինելը, կաշիներ պատրաստելը, այս բոլորն ու սրանց նման գործերը
տղամարդիկ են կատարում: Տնային կահ ու սարք պատրաստելն ու
ամենից առաջ բրուտության արհեստն, ընդհակառակը, կանանց ձեռքի
գործն է: Աֆրիկայում, Ամերիկայում, Մելանեզիայում ու Պոլինեզիա-
յում բրուտի արհեստի առարկաները համարյա բացառապես կանայք են
արտադրում: Մանելն ու հյուսելը մեծ մասամբ նույնպես կանացի
գործեր են: Ճյուղերից բան գործելու արհեստով պարապում են յեր-
կու սեռն էլ: Մասամբ դեռևս պահպանվում է այն հին սովորությունն
էլ, վորի համաձայն կինը, վոր վարում է տնային բոլոր գործերը, հան-
ձըն է առնում հենց բնակարանի կառուցումն էլ: Աֆրիկայի շատ ցե-
ղերի մեջ կանայք պակաս կարևոր դեր չեն կատարում բնակարանների
կառուցման ու սրանց ներքին կարգավորման գործում: Ասիայի անաս-
նապահների մեջ կանայք ճիշտ նույնպես ամենամոտ մասնակցություն
են ունենում վրանները խփելում:

Աշխատանքի բաժանումն այլևս չի սահմանափակվում յերկու սե-
ռի գործունեյության տարբերությամբ: Վորքան ավելի բազմակողմա-
նի ու բազմազան եր դառնում համայնքի տնտեսական կյանքը, այն-

քան ավելի բարդանում էր աշխատանքի բաժանումն էլ։ Վորսորդների ու անասնապահների կողքին հանդես են գալիս զանազան տեսակ գործիքներ ու տնտեսական առարկաներ պատրաստող մասնագետներ, վորի հետ միասին առաջին անգամ ծնունդ է առնում արհեստը։ Սկզբում իբրև արհեստավոր հանդես են գալիս ավելի ընդունակ ու հմուտ վարպետներ։

Ընդմին առաջին տեղը բռնում է զենք պատրաստելն ու դարբնության արհեստը. այնուհետև դարձյալ իբրև հատուկ արհեստներ զատվում են մակույկներ, տներ կառուցելը, ցանցեր հյուսելը, քարի ու փայտի վրա քանդակելը, կաշիներ դաբաղելը, զանազան տեսակի տնային կահ ու սարք պատրաստելը։ Քիչ չի պատահում, վոր ամբողջ համայնքներ, ամբողջ գյուղեր, մեծ մասամբ տեղական պայմանների շնորհիվ նվիրվում են վորևե հատուկ արհեստի։ Այսպես, որինակ՝ մետաղահանքերով հարուստ վայրերում ծագում է դարբնության արհեստը, կավի լավ տեսակներով հարուստ տեղերում՝ բրուտությունը։ Առաջին դեպքում տվյալ համայնքի կամ նույնիսկ ցեղի բոլոր կամ համարյա բոլոր տղամարդիկ դարբին են դառնում, իսկ յերկրորդ դեպքում էլ բոլոր կանայք նվիրվում են բրուտության արհեստին։ Ուրիշ համայնքներում, դարձյալ տեղական պայմանների շնորհիվ, զարգանում է աղի արդյունահանությունը (добыча), արմավից գինի պատրաստելը (միքանի հարավ-աֆրիկական ժողովուրդների մեջ), մակույկներ, զենք շինելը, գործվածքներ պատրաստելը, ճոճացանցեր (гамак), խըսիրներ, զամբյուղներ հյուսելը և այլն։ Այսպիսի խմբական արհեստի զարգացման հետ միասին աշխատանքի բաժանումն արդեն դուրս է գալիս առանձին համայնքների սահմանների շրջանակից և միջհամայնականի փոխվելով, ինչպես կըտեսնենք, դառնում է մեկն այն պատճառներից, վորոնցից սկզբնապես ծագում են միջհամայնական փոխանակությունն ու միջհամայնական առևտուրը։

4. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ։—ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՆԱՀԱՊԵՏԸ։—ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԻԶԲԸ։ Յերբ մեծանում է համայնքը, յերբ զարգանում է նրա մեջ աշխատանքի բաժանումը, յերբ պաշարների պատրաստության ու պահպանման մասին հոգալու անհրաժեշտություն է առաջ գալիս, այն ժամանակ համայնքի ամբողջ տնտեսական գործունեության միացյալ ու պլանաչափ ղեկավարության կարիք է ստեղծվում։ Նախնական հրոսակույտի մեջ պարզ աշխատակցության ժամանակ այսպիսի ղեկավարություն պահանջվում էր միայն ժամանակավորապես խոշոր շուրջկալների կամ վորսի ու ռազմական արշավանքների միջոցին, և այս պատճառով էլ դարձյալ ժամանակավորապես այս գործը կատարում էին ցեղի ավելի ձեռներեց առանձին անդամները։ Տոհմային համայնքի բարդ տնտեսության մեջ, ընդհակառակը, ղեկավարության կարիքն ավելի մշտական ու ավելի համառ է դառնում։ Սրա հետևանքով տոհմի բոլոր անդամների կատարողական, այսինքն բուն արտադրողական աշխատանքից զատվում, առանձնացվում է համայնքի գլուխ կանգնած անհատի հատկապես կազմակերպչական գործունեությունը։ Համայնքի ամբողջ տնտեսական կյանքը ղեկավարելով՝ կազմակերպիչն այլևս անմիջական մասնակցություն չի ունենում արտադրողական աշխատանքի մեջ։

Վոր չափով վոր այսպիսի կազմակերպչական (организаторский) դերն անհրաժեշտ է լինում դեռևս զարգացման առաջին աստիճաններում մայր իշխանության գոյության միջոցին, այս դերը սովորաբար կատարում է քեռին, այսինքն տոհմի մեջ ամենից ավագ կնոջ մոտագույն ազգականը։ Յերբ զարգանում է անասնապահությունն, ու մարդիկ նախնական յերկրագործությունից անցնում են հողը գութանով (արորով) մշակելուն, առաջ է մղվում հոր, այսինքն հոտերի տիրոջ ու յերկրագործի, նշանակությունը։ Ընդմին ծագում է նահապետական տոհմային համայքը, յերբ նահապետ հայրն ավելի կամ պակաս բացարձակ իշխանություն ունի տոհմի մնացած անդամների վրա։ Նահապետը տոհմի գլուխ է կանգնում, կազմակերպում է ամբողջ տնտեսական գործունեությունը, բաշխում է տոհմի առանձին անդամների միջև ինչպես տնտեսական արդյունքներն, այնպես և աշխատանքն ու պարտականությունները։ Նահապետական տոհմն ընդգրկում է միքանի գերդաստաններ, վորոնք ընդհանուր ծագում ունեն և շարունակում են միասին ապրել ու միատեղ տնտեսություն վարել։

Հետագայում սկզբնապես մեկ ու միաձույլ տոհմը տրոհվում (բաժանվում) է միքանի ընտանիքների։ Մեզ հայտնի գրեթե բոլոր հովվական ժողովուրդների մեջ տոհմային համայնքն արդեն քայքայված է հանդես գալիս։ Սակայն այն առանձին ընտանիքներում, վորոնց տրոհվում է տոհմը, սովորաբար դեռ յերկար ժամանակ պահպանվում են հին տոհմային կարգերը։ Այս ընտանիքներից յուրաքանչյուրը մեծ մասամբ կազմված է լինում այնպիսի ազգականների միքանի սերունդներից, վորոնք կոմունիստական սկզբունքների հիման վրա միատեղ տնտեսություն են վարում։ Բազմաթիվ հովվական ժողովուրդների մեջ սկզբնական բուն տոհմային միաձուլությունից դեռ մնում, պահպանվում են ազգակից ընտանիքների՝ արոտավայրերի ընդհանուր սեփականությունն ու միքանի սովորույթներ, վորոնք վկայում են, թե մի ժամանակ նրանց մեջ գոյություն է ունեցել նաև անասունների ընդհանուր սեփականություն։ Բազմաթիվ քոչվոր ցեղերի մեջ արոտավայրերի ընտրությունն ու քոչելու ժամանակը վորոշելը կախված է ցեղի կամ տոհմի պետից։

Ուտելիքի պատահական հավաքումից յերկրագործության ու անասնապահության անցնելը մի կողմից, տեխնիկայի զարգացումն ու աշխատանքի բաժանումը մյուս կողմից այն հետևանքն ունեցան, վոր աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ նշանավոր աստիճանի։ Այժմ արդեն ամբողջ ժամանակը չեր գնում միայն տվյալ րոպեյի կարիքները բավարարելու վրա։ Այսպիսով անհրաժեշտ աշխատանքի կողքին հանդես ե գալիս հավելյալ աշխատանքը, վորը կարող ե գործադրվել տնտեսական պաշարներ կազմող վորոշ ավելցուկները պատրաստելու վրա, ավելի կատարյալ ու ավելի ուշադիր կերպով գործիքներ շինելու վրա ևայլն։

Հավելյալ աշխատանքի ծագելով առաջին անգամ ասպարեզ ե գալիս ուրիշի աշխատանքը շահագործելու հնարավորությունը։ Քանի վոր մարդու աշխատանքը միայն անհրաժեշտ աշխատանք եր, քանի նրա ամբողջ ժամանակը գնում եր իր գոյությունը պաշտպանելու ջանքերի վրա, բնականաբար ուրիշի աշխատանքից ոգտվելու տեղ չեր մնում։ Յերբ մարդն սկսեց արտադրել ավելի, քան անհրաժեշտ եր հենց իր համար, այն ժամանակ միայն հնարավոր յեղավ ուրիշի հավելյալ աշխատանքի արդյունքների յուրացումը։ Այսպիսի յուրացման տարբեր յեղանակներին համապատասխան՝ սկզբնական շահագործումն ել տարբեր ձևեր եր ընդունում։ Ուրիշի աշխատանքը շահագործելու ամենապարզ ու անմիջական ձևն ստրկությունն ե։ Ռազմագերիներին չեն կոտորում, բնաջնջում, ինչպես առաջ, այլ ստրուկ են դարձնում։ Ստրուկներն ու ստրկուհիք կանանց ոգնում են սրանց յերկրագործական և այլ տնտեսական գործերում, տավար են պահում, ծանրություններ են տեղափոխում, զանազան ավելի ծանր ու անհաճո աշխատանքներ են կատարում։ Շահագործման մի այլ յեղանակն ել այն ե, վոր մի ամբողջ պարտված ցեղ հպատակեցնում են՝ վորոշ տուրք վճարելու պարտականություն դնելով նրա վրա։ Այսպես տուրքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հավելյալ աշխատանքի մի մասի զիջում, վոր անում ե հպատակ ցեղը հաղթողի ոգտին։ Շահագործման յերրորդ ձևը զարգանում ե նույնինքը նահապետական համայնքի ներսում։ Վորոշ խոսքով ասած, յերբ կազմակերպիչ նահապետն ու նրա ընտանիքը հետզհետե ավելի ու ավելի փոքր չափով են անմիջական մասնակցություն հանդես բերում արտադրողական գործունեյության մեջ, սրան համապատասխան ու սրա հետ միասին համայնքի մյուս անդամների հավելյալ աշխատանքն ե դառնում նրանց ապրուստի աղբյուրը։ Ժամանակի ընթացքում, յերբ համայնքի սահմաններն ընդարձակվում են և նրա հասարակական կազմը բարդանում, նույն չափով ել նահապետի ընտանիքին կից հանդես են գալիս նրան մերձավոր ուրիշ իշխող ընտանիքներ, վորոնք գտնվում են նույնպիսի արտոնյալ դրության մեջ և վորոնք այսպիսով կազմում են տիրող դասակարգի սաղմը։

5. ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։—ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ։ Քանի վոր մարդն ոգտվում եր միայն այն բաներից, վոր շրջապատող բնությունն եր տալիս նրան, մասնավոր սեփականության գաղափարը չկար և չեր ել կարող լինել։ Բուն արտադրողական գործունեյության սկսվելու հետ և միայն, վոր հանդես ե գալիս մասնավոր սեփականությունը։ Սեփականության առաջին առարկաները գործիքներն ու զենքն եյին։ Բացի նրանից, վոր սրանք մարդու սեփական ձեռքերի շինածն եյին, նրանք միշտ կարող եյին նրան հարկավոր գալ, ուստի և մարդս այն գործիքներն ու զենքը շարունակ պետք ե իր մոտ պահեր։ Հետագայում, յերբ մարդիկ պլանաչափ տնտեսական գործունեյության անցան, բոլոր տնտեսական առարկաներն, ինչպես և ուտելիքի պաշարներն սկսեցին յուրաքանչյուր առանձին տնտեսության, յուրաքանչյուր առանձին տոհմային կամ ընտանեկան համայնքի պատկանելություն համարվել։ Ճիշտ նույն կերպ ել, ընտելացրած անասուններն այլևս առանձին բաղդավոր վորսորդի ավար չեյին համարվում, ինչպես յերբեմն վայրենի կենդանիները, այլ համայնական կամ (համայնքի քայքայումից հետո) ընտանեկան սեփականության առարկաներ եյին լինում և վերջիվերջո առանձին ընտանիքների պետերի մասնավոր սեփականություն եյին դառնում։ Ռազմագերիների՝ ստրուկ դառնալու հետ միասին յերևան ե գալիս մարդկանց վրա ունեցած սեփականությունը։

Ամենից ուշ զարգանում ե հողային սեփականությունը։ Հողի սեփականության գաղափարն ամենից ավելի քիչ կարող եր կազմվել նախնադարյան վորսորդի գլխում, վոր անընդհատ փոխում եր իր ապրելավայրերը։ Նա հողից անմիջապես չեր ոգտվում, ուստի և հողը նրա աչքում վոչ մի արժեք չուներ։ Սակայն վորքան ավելի եր աճում բնակչությունն, այնքան ել վորսորդների առանձին խմբակների համար նրանց գրաված վորսորդական յերկրամասի շրջանակը նեղ եր դառնում, այնքան ավելի դժվար եր լինում նրանց համար անհրաժեշտ ուտելիք ձեռք բերելը։ Այս պատճառով յուրաքանչյուր առանձին հրոսակույտ սկսում ե սեփականության իրավունք առաջադրել վորսորդական վորոշ ռայոնի վերաբերմամբ, վորտեղ աշխատում ե հարևանների մուտքն արգելել։ Իհարկե, հրոսակույտի՝ վորսորդության ռայոնի վերաբերմամբ ունեցած իրավունքը դեռևս հողային սեփականություն չե, այլ այդ ռայոնում ճարվող վորսի կենդանիների սեփականություն։ Ամբողջ տոհմային համայնքի՝ հենց նույնպիսի սեփականություն արոտավայրերի նկատմամբ գոյություն ունի անասնապահների մեջ ել։ Սակայն սրանք ել արոտահողերի (пастбищная земля) միայն տոհմային կամ ցեղային սեփականություն են ընդունում և վոչ մասնավոր։ Արոտավայրերն, ինչպես արդեն գիտենք, տոհ-

մի ընդհանուր սեփականություն են մնում դեռ այն բանից հետո յել, յերբ հոտերն արդեն առանձին ընտանեկան համայնքի սեփականություն են դարձել։ Նախնական յերկրագործությունը վորսորդությունից յել ավելի քիչ կարող եր մասնավոր հողային սեփականության ծագման հիմք ծառայել, վորովհետև նույնիսկ յերկրագործությունը դեռևս նստակյաց չեր։ Միքանի ցանքսից հետո հողն ուժասպառ եր լինում, այն ժամանակ այս տեղը թողնում եյին և փոխադրվում նոր վայր։ Ուստի և սեփականության իրավունքը սահմանափակվում եր միայն ցանքսերով, բայց չեր տարածվում իրեն, հողի վրա։ Այսպիսով զարգացման այն աստիճանի վրա, վոր նկարագրում ենք, հողի միայն հասարակական սեփականություն գոյություն ուներ և վոչ մասնավոր։

Մասնավոր սեփականության յերևան գալու հետ միասին ծագում ե գույքային անհավասարությունն ել։ Քանի սեփականությունը սահմանափակվում եր սպառողինության կամ զարդարանքի առարկաներով, գույքային անհավասարությունը չեր կարող դեռևս մեծ նշանակություն ունենալ։ Բոլորովին այլ ե անասնապահների բանը։ Վորտեղ մարդու ամբողջ բարեկեցությունը կախված ե նրան պատկանող անասունների թվից, այնտեղ գույքային անհավասարությունն ել բընականաբար բացառիկ նշանակություն ե ստանում։

Արտադրողական գործունեյության զարգացումը, վորի հետևանքն եր յեղել ինչպես յուրաքանչյուր առանձին խմբի մեջ գոյություն ունեցող աշխատանքի կազմակերպության ձևերի, այնպես և հասարակական պայմանների փոփոխությունը, վերջիվերջո ազդեց տարբեր հասարակական խմբերի փոխհարաբերությունների բնույթի վրա յել։ Անասնապահության ու յերկրագործության ծագման հետ, արտադրողական տեխնիկայի զարգացման հետ միասին վորսորդական ցեղերի կողքին հանդես են գալիս ցեղեր ու համայնքներ, վորոնք հասել են այս կամ այն գործիքներն ու իրերը պատրաստելու ավելի բարձր տեխնիկային։ Այսպիսով աշխատանքի բաժանումն այլևս չի սահմանափակվում առանձին համայնքների սահմաններով, այլ տարածվում ե միջհամայնական հարաբերությունների վրա յել։ Առանձին համայնքների տնտեսական արդյունքներն այժմ բոլորովին տարբեր են լինում։ Վորսորդական ցեղերը միս ու մորթիներ ունեն, անասնապահները բացի սրանցից նաև կաթ, կաթնեղեն արդյունքներ, բուրդ, մազեղեն և այլն, յերկրագործներն իրենց տնտեսությունից ստանում են հացահատիկ, ձավար, զանազան պտուղներ ու բանջարեղեն, մի քանի համայնքներ աչքի յեն ընկնում իրենց զենքեր պատրաստելու արվեստով, մյուսները՝ իրենց բրտական իրերով։ Միևնույն ժամանակ հավելյալ աշխատանքի ծագումը հնարավոր դարձրեց վոչ միայն պաշարներ պատրաստելը, այլև տնտեսական ավելցուկների գոյությունը։ Այսպիսով համայնական խմբերից միքանիսի մեջ այնպիսի արդյունքների ավելցուկ ե կազմվում, վորոնց պակասությունն ու կարիքն, ընդհակառակը, մյուսներն են զգում։

Շնորհիվ այն հանգամանքի, վոր համայնքներից միքանիսում ավելցուկներ կուտակված ե լինում, այնինչ ուրիշ համայնքներ համապատասխան արդյունքների պակասություն եյին զգում, անհրաժեշտություն եր ծագում այս արդյունքները բաշխելու ու վերաբաշխելու արդեն վոչ թե յուրաքանչյուր առանձին համայնքների անդամների միջև, այլև զանազան համայնքների միջև։ Սակայն այս բաշխումն այլևս չեր կարող կազմակերպված ձևով կատարվել, ինչպես առանձին համայնքների մեջ։ Տնտեսական արդյունքները համայքների միջև վերաբաշխելու միակ հնարավոր ձևն ավելցուկների փոխադարձ փոխանակությունն ե։ Յեթե զանազան տնտեսական արդյունքներ ունեցող ցեղերը հարևան եյին լինում, նրանց միջև կատարվելիք փոխանակության ծագումը վերջիվերջո անխուսափելի յեր դառնում։ Սրա հետ միասին նախկին թշնամական հարաբերությունների տեղն ել պետք ե բռնեն ավելի հաշտ ու մշտական հարաբերությունները։ Սակայն թշնամական հարաբերությունները միանգամից չեյին հաղթահարվում ամենևին։ Սկզբում յերկու կողմերն ել մեկը մյուսից վախենալու պատճառով խուսափում են անմիջապես հարաբերություններ ունենալուց։ Փոխանակությունը կատարվում ե այսպես կոչված համր առևտրի միջոցով։ Կողմերից մեկը պայմանավորված տեղում դարսում ե իր ապրանքներն և թողնում հեռանում ե, վորից հետո հայտնվում ե մյուս կողմն և դնում ե նրանց ապրանքների մոտ իր այն արդյունքները, վոր ինքն առաջարկում ե փոխանակելու։ Առաջին խումբը վերջինս տեսնելով ու զննելով, կամ առնում, տանում ե հետը՝ իր ապրանքները թողնելով և կամ նորից հեռանում ե. այս նշանակում ե, վոր նա պահանջում ե ելի մի բան ավելացնել։ Յերբեմն յերկու կողմերը գալիս են սակարկության տեղը մի քանի անգամ, մինչև վոր փոխանակությունը կատարվում ե։ Կուրիլյան կղզիներում, Սումատրայում, Ցեյլոնում, Ամերիկայի Անդերում, Աֆրիկայի զանազան ժողովուրդների մեջ մասամբ մինչև հիմա յել պահպանվել ե այսպիսի համր առևտուրը։ Այլ վայրերում, որինակ՝ Պոլինեզիայի կղզիներում, այս տեսակ առևտուր գոյություն ե ունեցել 100—150 տարի առաջ։ Համր առևտրի մասին հիշատակում են հին դարի միքանի մատենագիրներ, ինչպես և ռուսաց տարեգիրները։ Ուրիշ դեպքերում փոխանակող կողմերն իրարուց վորոշ հեռավորությամբ զատ կանգնած շարվում են սպառազինված, իսկ բուն փոխանակությունը կատարվում ե նրանց արանքում գտնված չեզոք հողաշերտում։

Ժամանակի ընթացքում առանձին ցեղերի սահմանների ծայրին

ու սրանց արանքում շուկայի հատուկ տեղեր են սահմանվում առևտուր անելու համար։ Այստեղ, յերբեմն նույնիսկ մահվան պատժի սպառնալիքով, արգելված են ամեն կարգի զինված ընդհարումներ։ Այս բոլոր դեպքերում փոխանակությունը կատարվում է բացառապես ապրանքի դեմ ապրանք տալով։ Ընդսմին սկզբում իրար հետ փոխանակություն են անում վոչ թե համայնքի առանձին անհատներն ու անդամները, այլ համայնական խմբերն իրենք ամբողջությամբ առած։ Մասնավոր անհատների միջև առևտուրը հնարավոր է դառնում այն ժամանակ միայն, յերբ ծագում է մասնավոր սեփականությունը, և յերբ հարևան խմբակների միջև խաղաղ հարաբերություններն ամրապընդվում են։ Հետագայում վորչափ զարգանում է սեփականությունը, նույնչափ էլ մասնավոր փոխանակությունն սկսում է դուրս մղել միջցեղային ու միջհամայնական փոխանակությունը, մինչև վոր վերջապես ինքը, մասնավոր փոխանակությունը դառնում է փոխանակության գերիշխող ու նույնիսկ միակ ձևը։

Մասնավոր առևտրի աճման հետ միասին՝ արդյունքներն անմիջորեն արդյունքներով փոխանակելը հետզհետե ավելի ու ավելի անհարմար է դառնում։ Վորպեսզի յուրաքանչյուր առանձին դեպքում այսպիսի փոխանակություն տեղի ունենալ կարողանա, ապա պետք է վոր փոխանակությանը մասնակցող յերկու անհատն էլ առաջարկվող արդյունքների կամ առաջարկների կարիքն զգան։ Թե առևտրի այդպիսի ձևն ինչպիսի անհարմարությունների առաջ է կանգնեցնում մարդու, վկայում է ճանապարհորդ Կամերոնին պատահած դեպքը, վոր կատարել է Աֆրիկայում Տանգանայկա լճի ափին։ Կամերոնին մի մակույկ էր հարկավոր։ Մակույկ վաճառողը սրա փոխարեն կամենում էր փղոսկր ստանալ, այնինչ Կամերոնը նրան միայն մետաղալար կարող էր առաջարկել։ Հարկ յեղավ հաջորդաբար միքանի մարդկանց հետ գործ ունենալ, իհարկե վոչ առանց նեղությունների ու գլխացավանքի, և փոխանակել մետաղալարը մահուդի հետ, մահուդը՝ փղոսկրի, վորից հետո միայն հնարավոր յեղավ վճարել մակույկի գինը։

Այսպիսի դժվարություններից դուրս գալու հնարը գտնվեց նրանով, վոր միքանի վորոշ առարկաներ իբրև արժեչափեր ճանաչվեցին։ Այս առարկաները բոլորի կողմից ընդունելի յեն լինում և փոխարինում են փողերին։ Ինքնըստինքյան հասկանալի յե, առարկաները պետք է ամենից ավելի վարուն (ХОДКИЙ) ապրանքներ լինեն։ Անասնապահների մեջ իբրև այսպիսի արժեչափ ամենից առաջ հանդես են գալիս անասուններն, այլ ժողովուրդների մեջ նույն դերը կատարում են ամենաբազմազան առարկաներ՝ չորացրած ձուկը, խխունջների՝ իբրև զարդարանքի առարկա ծառայող խեցիներն (Աֆրիկայում), վերմակները, կղբենիները (Ջրի շան մորթիները. Ամերիկայում), կզաքիսի մորթիները (հին Ռուսաստանում), ուտելու աղի սալակտորները, թեյի աղյուսաձև տապակները (կենտրոնական Ասիայում), և վերջապես կտորները թանկագին մետաղների, վորոնցից հետագայում շատ ավելի ուշ իսկական դրամանիշներ*) սկսեցին պատրաստել։

---

*) Ճիշտ կլիներ ասել՝ դրամներ և կամ ստակներ։ Ծ. Թ.

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ։—ՀԱՐԵՎԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

1. ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—ՆՍՏԱԿՅԱՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ։ Աշխատանքի պատմության մեջ հետևյալ քայլը նախնական յերկրագործությունից բուն հողագործության, հացահատիկների մշակմանն ու հողը գութանով վարելուն անցնելն է։ Այս քայլը կատարվեց այն բանից հետո միայն, յերբ յերկրագործությունը կանացի զբաղմունք լինելուց դադարեց և դարձավ գլխավորապես տղամարդու զբաղմունք։ Բոլորովին հնարավոր չէ անասունների բուծումն ամեն տեղ հասցնել գոնե այնպիսի լայն ծավալի, վոր բավարար չափով ապահովե մարդկանց գոյությունը։ Անտառապատ, ճահճոտ ու ընդհանրապես ընդարձակ ու հարմար արոտավայրերից զուրկ տեղերում, վերջապես նաև ազգաբնակության վորոշ խտության դեպքում հենց անասնապահությունն ինքն էլ կամ անհնարին է լինում և կամ համենայն դեպս, անբավարար։ Ընդսմին անտեսության մեջ յերկրագործական աշխատանքն առաջնակարգ տեղ է գրավում։ Յերկրագործական աշխատանքների մեջ այժմ արդեն տոհմային կամ ցեղային խմբի վոչ միայն կանացի կեսն է մասնակցություն ունենում, այլև արական։ Աֆրիկայի ու Հարավային Ամերիկայի միքանի ժողովուրդների մեջ տղամարդկանց յերկրագործական աշխատանքներին մասնակցելն արտահայտվում է ամենից առաջ նրանով, վոր նրանք ցանքսի տեղն են մաքրում, պատրաստում. Նրանք կտրում և այրում են անտառներն և մնացած աշխատանքները թողնում կանանց։ Բազմաթիվ ուրիշ ցեղերի մեջ նույնիսկ հողի մշակությունն ու ցանքսերը կատարում են յերկու սեռերի միահամուռ աշխատանքով։ Վերջինիս մասնակցում են ամեն անգամ մի քանի տասնյակ ու նույնիսկ հարյուրից ավելի մարդիկ։ Տղամարդիկ սովորաբար առաջից են գնում և յերկաթե կամ հաճախ փայտե բրիչներով փորփորում, փափկացնում են հողը, կանայք նրանց հետևելով շաղ են տալիս հատիկներն ու ծածկում հողով։ Միատեղ մշակման այսպիսի յեղանակի յենք հանդիպում յերկրագնդի բոլոր մասերում հավասարա-

պես՝ Ամերիկայում, Աֆրիկայում, Հնդկական արշիպելագի ու Խաղաղ օվկիանոսի կղզիներում, Նոր-Գվինեայում, Նոր-Զելանդիայում։ Նույն կերպ կոմունիստորեն, ընդհանուր աշխատանքով էին մշակում դաշտերը նաև հին գերմանացիք Կեսարի ու Տակիտոսի ժամանակ, ինչպես և հին սլավոնները։

Ընդամենը մշակման հնարներն ամենանախնականն էին մնում։ Նախնադարյան փայտե բրիչի օգնությամբ հողը փորփրվում, պատրաստվում էր լոկ մակերեսորեն, վոչ մի պարարտացում չէր կիրառվում։ Միակ պատրաստությունը կազմում էր այրած անտառների մոխիրը։ Այս հանգամանքի շնորհիվ հողն արագորեն ուժասպառ է լինում և բերք տալուց դադարում։ Այն ժամանակ հարկ է լինում ուժասպառ հողամասը թողնելու և նոր տեղեր փոխադրվելու։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այսպիսի պարզացրած «կոտորովի» (подсечное) ու «այրովի» (огневое) յերկրագործությունը հնարավոր է միայն այնտեղ, վորտեղ սրա համար դեռ բավարար քանակով ազատ հող կա։ Յեվ օրինակ՝ Ռուսաստանի հյուսիսային նահանգներում, վորոնք ընդարձակ անտառային տարածություն ու նոսր ազգաբնակություն ունեն, այսպիսի յերկրագործություն լայն չափերով դեռ կիրառվում էր գործնականապես վոչ ավելի վաղ, քան անցյալ դարում։

Յերբ ազգաբնակությունն աճում էր և վարած հողերը շատանում էին, վորի հետևանքով ազատ տարածությունը շարունակ ավելի ու ավելի քչանում էր, նոր տեղեր գրավելն ավելի էր դժվարանում։ Սրա շնորհիվ անհրաժեշտ էր լինում հողի ավելի ուշադիր մշակմանն անցնել։ Հողն սկսում են ավելի պարարտացնել, ուժասպառ հողամասերը միքանի տարի ցել (վարած, չցանած) են թողնում։ Փոխվում են մշակման գործիքներն ու յեղանակներն էլ։ Նախնադարյան բրիչի միջոցով փոսիկներ անելու փոխարեն սկսեցին ակոսներ անցկացնել՝ գետնի յերեսով մի ճյուղավոր փայտ քարշ տալով։ Այս ճյուղի գլխին յերբեմն մի քարե ծայր էին անցկացնում։ Մի ճյուղանի փայտը փայտե արորի նախատիպարն յեղավ։ Յերբ յերկաթ մշակելու արվեստն յերևան յեկավ, արորի փայտե ծայրը փոխարինվեց յերկաթե ծայրով։ Այսպիսով առաջ յեկավ գութանը։ Ընդամենը հողի մշակումն սկսվեց կատարվել արդեն վոչ թե ձեռքերով, այլ լծկան անասունների, ըսկզբում յեզների ու ցլերի, հետո նաև ձիերի օգնությամբ։ Յերկրագործությունը դառնում է տղամարդկանց պարապմունք։ Հենց արորի ու գութանի գյուտն ու պատրաստելը վոչ թե կնոջ գործ էր, այլ վապետ տղամարդկանց, վորոնք փորձված էին զանազան տեսակ զենքեր ու գործիքներ շինելում։ Հողը մշակելու յեղանակների լավանալու հետ կատարելագործվում են նաև ստացած հատիկները վերամշակելու յեղանակները և ամենից առաջ կալսելու ու աղալու յեղանակները։ Հացահատիկը պարզապես տորոել-մանրացնելուն փոխարինում են սկըզբում ձեռի յերկանքները, հետագայում՝ ջրաղացներն ու հողմաղացները, զարգանում է հաց թխելու արվեստը։ Սրա հետ միասին առանձին արհեստ են դառնում աղացպանի ու հացթուխի զբաղմունքները։

Հացահատիկների մշակման սկզբնավորության հետ նոր դարաշրջան է բացվում մարդկության կյանքում։ Կյանքի քոչվորային ու թափառական յեղանակին հաջորդում է մշտական նստակեցությունը։ Հողն արդեն չեն լքում այլևս, այլ՝ ընդհակառակը, հանձնում են զավակներին ու թոռներին։ Նախնադարյան թափառական ու քոչվոր հրոսակույտի տեղն է գալիս յերկրագործական համայնքը։

Մի տեղում նստակյաց դառնալն սկզբում կատարվում էր տոհմային խմբերով, և հացի մշակումն էլ ճիշտ նույն կերպով կատարում էին տոհմի անդամները միասին։ Հողի այսպիսի միատեղ մշակումը գոյություն ուներ հին գերմանացիների մեջ. Անգլիայում, ինչպես այս մասին վկայում են օրենսդրական հնագույն հիշատակարանները, նույնպես ամբողջ գյուղեր միասին էին կատարում հերկելը։ Ռուսաց հին տարեգիրը պոլյանինների մասին հաղորդում է, վոր նրանք ապրում էին միասին տոհմերով և միատեղ էլ տիրում էին հողին։

2. ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՀՄԱՅԻՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ։ Քանի դեռ նախնադարյան թանձրախիտ անտառները նախապես մաքրելու, այրելու կամ արմատահան անելու կարիքը կար, քանի դեռ բուն իսկ յերկրագործական աշխատանքները կատարվում էին նախնական յեղանակով՝ ձեռքերով, հողի հասարակական մշակումն անհրաժեշտություն էր։ Նստակյաց յերկրագործության անցնելու հետ կորդը (новина) մաքրելը դադարում է, իսկ գութանի հերկը մի-յերկու գործավորից ավելի չի պահանջում։ Միատեղ, ընդհանուր աշխատանքն այսպիսով ավելորդ է դառնում. ընդհանուր տոհմային տնտեսությունն սկսվում է տրոհվել առանձին ընտանեկան տնտեսությունների։ Միաձույլ տոհմի տեղը կազմում են ընդարձակ անբաժան ընտանեկան համայնքներ, վորոնք ընդգրկում են ազգականների մի քանի սերունդներ մինչև ցեղապետի և ցեղի գլխի, այսինքն «հոր», թոռներն ու ծոռները։ Զարգացման վորոշ աստիճանի ժամանակ անբաժան ընտանեկան համայնքներ գոյություն ունեն բոլոր ժողովուրդների մեջ, Արևելքի ժողովուրդների մեջ, Հունաստանում, Սպարտայում, ինչպես և Աթենքում, Հռոմում, կելտերի, գերմանացիների ու սլավոնների մեջ։ Շոտլանդիայում, Իրլանդիայում, անգլիական Ուելսում ընտանեկան-համայնական կազմակերպությունը յերկար ժամանակ կանգուն էր մինչև 17-րդ դարն ու մասամբ նույնիսկ մինչև 18-ը։ Հարավ-սլավոնական ընտանեկան համայնքը, այսպես կոչված задруга-ն

պահպանել է իր գոյությունը մասամբ նույնիսկ մինչև մեր օրերը։ Ռուսական հյուսիսում 16 ու 17-րդ դարերում ընտանեկան համայնքը յերկրագործական շենանոցների (поселение) տիպն եր։ Միքանի տասնյակ անդամներից կազմված խոշոր գերդաստաններ Ռուսաստանում պատահում եյին հաճախ մինչև ամենամոտիկ ժամանակներս ել։

Ընտանեկան յերկրագործական համայնքում, ինչպես արդեն ասել ենք, հողի մշակումն ու ցանքսը գլխավորապես տղամարդու զբաղմունք են։ Այս ժամանակներից սկսած կնոջ վզին է ընկնում բացառապես տնային տնտեսություն վարելը։ Այսպիսով տղամարդկանց և վոչ թե կանանց աշխատանքն է կազմում ընտանիքը կերակրելու գըլխավոր աղբյուրը, սրա հետ միաժամանակ համայնքի ամբողջ կազմակերպությունն ել նահապետական բնույթ է ստանում։ «Ամեն մի հայր ընդոծինների (челядь) տերն է։ Երիկները վարում են, կնանիքը շորեր են կարում։ Իսկ յերբ մեռնում է տան մեծը, տան գլխավորը, զավակներն սկսում են միասին կառավարել և իրենց վրա պետ են կարգում»,— այսպես է պատկերացնում ընտանեկան կարգերը մի հին չեխական յերգ։ Սպարտական ընտանեկան համայնքի գլուխ կանգնված եր հայրը կամ ավագ յեղբայրը—«ընտանեկան օճաղի սյունը»։ Հին հռոմեական familia-ն (ընտանիքը) տիպիկ նահապետական ընտանիք եր հոր անսահմանափակ իշխանությամբ (pater familias)։ Սլավոնական «զադրուգա»-յում տնտեսությունը կառավարում եր «домачин»-ը, այսինքն տարիքով ավագ կամ ընտրովի «տան գլխավորը»։ Ռուս ընտանիքում միևնույն դերը կատարում է «хозяин»-ը, «старшой»-ը, «большак»-ը, (տնատերը, ափուն, ջոջ պապը)։

Հողը վոչ միայն ամբողջ ընտանեկան համայնքի ընդհանուր սեփականությունն է կազմում, այլև միասին է մշակվում. գործիքներն ու տնտեսական մյուս առարկաները նույնպես ամբողջ համայնքին են պատկանում։ Տղամարդիկ կառուցելու և տնից դուրս մյուս աշխատանքներն են կատարում՝ վարում են և ցանում, կանայք ամբողջ տնային տնտեսությունն են վարում՝ մանում են, հյուսում են, շոր են պատրաստում ընտանիքի բոլոր անդամների համար, հարավ-սլավոնական ընտանիքներում սապոն, մոմեր ու նույնիսկ միքանի բուժիչ դարմաններ են շինում։ Ինչպես աշխատանքն, այնպես ել սպառումն ընդհանուր է։ Ընտանիքի յուրաքանչյուր անդամ մյուսներին հավասար իրավունք ունի բնակարանի, պարենի ու հագուստի նկատմամբ։

3. ՀԱՐԵՎԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ։ Միաձույլ տոհմն սկզբնապես տրոհվում է առանձին ընտանեկան համայնքների։ Սրանց միջև յեղած կապը միանգամից չի կտրվում։ Մեծ մասամբ այս տոհմակից ընտանիքները շարունակում են ապրել կողք-

կողքի իբրև ամենամոտիկ հարևաններ, պահպանվում է նաև ընդհանուր հողատիրությունն ել։ Սակայն հողի մշակությունը կատարվում է զատ-զատ. վարելահողերն ել վորոշ ժամանակամիջոցից հետո վերաբաժանում են՝ առանձին ընտանիքի անդամների թվի փոփոխվելուն համապատասխան։ Տոհմակից ընտանիքների միջև յերևան են գալիս յեկվոր վերաբնակիչներ։ Ընդսմին տոհմական կապը կորցնում է ամեն տեսակ նշանակություն և յուրաքանչյուր նոր սերնդի հետ թուլանում և մոռացվում է։ Տոհմակցական կապը վերածվում է հարևանային կապի, տոհմային յերկրագործական համայնքը դառնում է հարևանային գյուղական համայնք, («общество»-ն, «мир»-ը Ռուսաստանում, «մարկա»-ն Արևմուտքում)։

Հողի ընդհանուր սեփականությունը պարբերական վերաբաժանումով հանդերձ սկզբում (յերբեմն նաև յերկար ժամանակ) պահպանվում է հարևանային համայնքում ել։ Բոլոր անհերկելի հողերը, անտառները, խոտհարքներն, արոտները, պարապուտները (пустоши) վոչ միայն ընդհանուր տիրապետության առակա յեն, այլև յենթակա յեն ընդհանուր օգտագործման։ Անքաղաքակիրթ ժողովուրդների մեջ համայնական կարգեր համարյա չեն պատահում։ Համայնքը Յեվրոպայի և Ասիայի պատմական ժողովուրդների մեջ է միայն, վոր լիակատար զարգացման է հասել։ Ռուսաստանում և Հնդկաստանում յերկրագործական համայնքը պարբերական վերաբաժանումով հանդերձ գոյություն ուներ մինչև մոտ ժամանակներս, իսկ տեղ-տեղ այն պահպանվել է մինչև մեր օրերն ել։ Շոտլանդիայում, Իտալիայում, անգլիական Ուելսում, վորտեղ հին կարգերն առանձնապես յերկար են պահպանվել, հողը վերաբաժանում եյին դեռ 17-րդ ու 18-րդ դարերում, և մասամբ մինչև անցյալ դարի կեսն ել։ Իսկ Յեվրոպայի ցամաքի յերկրներում համայնական կարգերն ընդհանրապես շատ կարճ ժամանակներ են տևել և վաղուց արդեն չքացել են։

Վորքան ավելի յե զատվում, մեկուսանում առանձին տնտեսությունը, վորքան ավելի շատ աշխատանք ու ծախսումներ (затрата) է դնում իր մշակած հողամասի մեջ յուրաքանչյուր առանձին յերկրագործ, այնքան ավելի մեծ հիմունքով նա սկսում է այն հողամասն իրենը համարել։ Ընդսմին հողի համայնական տիրապետությունը կորցնում է ամեն մի ույժ ու նշանակություն։ Վարելահողերի վերաբաժանումները ավելի ու ավելի հազվադեպ են կատարվում և բոլորովին դադարում են։ Հողի սկզբնական համայնական տիրապետությունից դեռես մի առժամանակ, յերբեմն և բավական յերկար ժամանակ իբրև հետք մնում է անհերկելի հողերի սեփականությունը միայն։ Հողի համայնական սեփականությունից մասնավոր սեփականության անցնելն այնքան ավելի վաղ ու արագ եր կատարվում, վորքան ավելի վաղ ու

արագ էր վերջանում տվյալ վայրի բնակչության նստակյաց դառնալու պրոցեսը։ Ահա թե ինչու Արևմտյան Յեվրոպայում հողային մասնավոր սեփականության զարգացումն ավելի վաղ է տեղի ունենում, քան Ռուսաստանում, և հարավային Ռուսաստանում ավելի վաղ, քան հյուսիսայինում։

Յուրաքանչյուր տոհմային կամ ընտանեկան համայնք իր ընդարձակ ծավալի շնորհիվ հեշտությամբ կարող էր բավարարել իր բոլոր տնտեսական կարիքները, և նրա տնտեսությունն այդպիսով փակ ու ինքնաբավ (самодовлеющий) բնատնտեսության մի մաքուր տիպ էր։ Գյուղական համայնքում տոհմային միաձույլ տնտեսությունը բաժանվում է սկզբում առանձին խոշոր ընտանեկան տնտեսությունների, իսկ հետագայում խոշոր ընտանեկան համայնքներն էլ բաժանության միջոցով տրոհվում են սահմանափակ անդամներ ունեցող փոքրիկ ընտանիքների։ Ընդսմին յուրաքանչյուր առանձին ընտանիքի ույժերը կըրճատվում են, և աշխատանքի բաժանումն արդեն այնպես սպառիչ լրիվությամբ չի կարող կիրառվել նրա մեջ, ինչպես տոհմային ու ընտանեկան միություններում։ Մյուս կողմից, յերկրագործությանն ու նստակեցությանն անցնելուց հետո զանազան տնտեսական արդյունքների արտադրության տեխնիկան էլ շատ ավելի բարդ է դառնում։ Հենց այս պատճառով էլ բազմաթիվ առարկաներ, վորոնք անհրաժեշտ են տնտեսության մեջ, ու ամենից առաջ հողը մշակելու շատ գործիքներ, այլևս չի կարելի տնային միջոցներով պատրաստել։ Սրա հետեվանքով գյուղական համայնքի մեջ յերևան են գալիս մասնագետ արհեստավորներ՝ դարբիններ, կոշկակարներ, բրուտներ, հյուսներ, աղացպաններ։ Սկզբում սրանք միևնույն յերկրագործներն են, վորոնք պարապ ժամերին արհեստով են զբաղվում։ Սակայն ժամանակի ընթացքում նրանք թողնում են յերկրագործությամբ պարապելը և բացառապես արհեստավորի զբաղմունքին են նվիրվում։ Այսպիսի թափառող արհեստավորները կամ շրջում են գյուղից գյուղ և կամ մի վայրում բացառապես իրենց համայնքի ազգաբնակության պետքերն են հոգում։

Յերկրագործական համայնքի տնտեսական ու արտադրողական գործունեյությունը զարգացման նախընթաց աստիճանի տնտեսական ձեվերի հետ համեմատելով՝ նկատելի առաջադիմություն ենք տեսնում ինչպես արտադրության յեղանակների, այնպես և աշխատանքի կազմակերպության ձևերի մեջ։ Ուտելիքի պարզ հավաքումն ու անասնապահությունը տեղի յեն տալիս, ընկրկում են յերկրագործության առաջ, վորում աչքի ընկնող տեղ են գրավում մարդու բուն արտադրողական գործունեյությունը։ Նույնինքն յերկրագործական մշակույթի յեղանակների մեջ խոշոր առաջադիմություններ են արված մի կողմից յեռադաշտային սիստեմը կիրառելով ու մյուս կողմից հողը գութանով

մշակելուն անցնելով։ Սակայն վորքան ավելի մեծ դեր է սկսում խաղալ մարդկային աշխատանքն արտադրողական գործունեյության մեջ, վորքան ավելի անկախ է զգում իրեն մարդը շրջապատող բնության պայմաններից, տեխնիկայի առաջադիմության հետ միասին վորքան ավելի արտադրողական է դառնում բուն իսկ աշխատանքն, այնքան ընդսմին ավելի ու ավելի ավելորդ էր դառնում շարունակ պարզ աշխատակցությունը, վոր իմաստ ուներ միայն այն ժամանակ, յերբ առանձին մարդու ույժերը գոյության կռվում դեռևս բավական թույլ ու անբավարար եյին։ Նույն ուղղությամբ, այսինքն՝ հասարակական արտադրությունից միանձնյա արտադրության դիմելու ուղղությամբ է զարգանում յերկրագործական տնտեսության տեխնիկան էլ։ Յեվ ահա այս բոլորի հետևանքով ընդարձակ տոհմային խմբերը տրոհվում են առանձին ընտանիքների։ Սակայն այս առանձին ընտանիքների տընտեսության միջև յեղած կապը չի ընդհատվում, այլ հիմնվում է արդեն վոչ թե արենակցության վրա, այլ յերկրամասերին մոտիկ լինելու ու մի քանի տնտեսական շահերի ընդհանրության վրա։ Յեվ յերբ հասարակական խմբերի միացման բնական, այն է՝ ամենից առաջ արենակցությունից բղխող պատճառներին փոխարինում են այն պատճառները, վորոնց արմատները բուն արտադրողական գործունեյության պայմանների մեջ են խարսխված, ապա անկարելի յե այս անցումն էլ ճիշտ նմանապես խոշոր առաջադիմական քայլ չհամարել։ Աշխատանքի բաժանման տեսակետից էլ նկատելի յեն միքանի առաջադիմություններ։ Թեև ամբողջ արտադրողական գործունեյությունն առաջվա պես ամփոփվում է տնային բնատնտեսության շրջանակի մեջ, թեև այս տնային տնտեսության մեջ աշխատանքի բաժանումն ամենից առաջ սեռի տարբերության վրա յե հիմնվում դեռևս, սակայն և այնպես բուն իսկ տնտեսական գործունեյությունն անհամեմատ ավելի բազմազան է դառնում։ Արհեստավոր դասակարգի զարգացումն էլ մի նկատելի առաջադիմական քայլ է ինչպես արտադրության զարգացման, այնպես և աշխատանքի հասարակական բաշխման զարգացման մեջ։ Մասնագետ արհեստավորները հաճախ միքանի հարևան յերկրագործական համայնքների պետքերին են ծառայում և այս դեպքում նրանց շաղկապող ողակ են դառնում՝ նախապես կատարելով ապագա քաղաքային արհեստավորների դերը։ Յերբ յերկրագործական համայնքում մասնավոր հողային սեփականություն է սահմանվում, սրանով լրանում է արդեն մասնավոր սեփականության զարգացման պրոցեսն ընդհանրապես։ Հանձինս հողային սեփականատերերի աճում, զորանում է մի դասակարգ, վոր վերջիվերջո յերկրագործական համայնքն իրեն է յենթարկում և յուրացնում է նրա տնտեսական կյանքը կազմակերպողի դերը։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱԼՎԱԾՔՆ ՈՒ ԿԱԼՎԱԾԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. *ՀՈՂԱՏԵՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄԸ:* Յերկրագործական հասա-
րակության մեջ արհեստավոր դասակարգի անջատվելու հետ միասին
մնացած յերկրագործ մասսայից մի նոր հասարակական բաժանում է
առաջ գալիս. համայնքը բաժանվում է տիրող ու հպատակ դասակար-
գերի, շահագործողների ու շահագործվողների: Շահագործման սկիզբը
հասնում է մինչև հնագույն նահապետական-տոհմային համայնքի ժա-
մանակներն անգամ, յերբ համայնքում կազմակերպիչ նահապետի ըն-
տանիքը սրան շրջապատող ուրիշ իշխող ընտանիքների հետ միասին
կազմում էին մի խումբ, վորը համարյա չէր մասնակցում կամ բոլո-
րովին չէր մասնակցում անմիջական արտադրողական գործունեյու-
թյանը և ապրում էր համայնքի մնացած անդամների հավելյալ աշխա-
տանքի հաշվին: Վորքան ավելի յեր ընդարձակվում, մեծանում տոհ-
մային համայնքն, այնքան ավելի յեր բարդանում տնտեսական գոր-
ծունեյությունն, ընդսմին այնքան ավելի աչքի ընկնող էր դառնում
ղեկավար ընտանիքների խումբն էլ: Տոհմային կազմակերպության
քայքայվելով առանձին տոհմերի ղեկավար խմբերն էլ կորցնում էին
իրենց համայնքների անդամության հետ ունեցած անմիջական կապը
և զատվելով կազմում էին հատուկ կառավարող դասակարգ: Խաղաղ
վարչական գործունեյության հետ միասին կառավարող դասակարգի
վրա բացի սրանից դրվում են յերկրագործական ազգաբնակությունն
արտաքին հարձակումներից պաշտպանելու պարտականություններն էլ:
Այսպիսով վարչական ու կառավարող դասակարգը հատուկ զինվորա-
կան դասակարգի նշանակություն է ձեռք բերում:

Վորսորդների ու անասնապահների կյանքը մշտական արյունա-
հեղ ընդհարումների մեջ է անց կենում: Այս պատճառով բոլոր տղա-
մարդիկ հավասարապես վարժվում են զենք գործածելու, բոլորը միա-
կերպ ռազմիկ են լինում: Յերկրագործն, ընդհակառակն, առիթ է ու-
նենում ամենից առաջ խաղաղ աշխատանքի գործիքների հետ գործ
ունենալու: Վորքան ավելի ամրապես էր նստակյաց դառնում յերկրա-
գործը մի վայրում, այնքան ավելի յեր ընտելանում խաղաղ աշխա-

տանքին, այնքան ավելի դժկամությամբ էր պոկվում այս աշխատան-
քից ռազմական նպատակների համար: Նրան կարող էին զենքի դի-
մելու հարկադրել միայն թշնամու ներխուժումը կամ հողի կարիքն ու
հողային նեղվածությունը, ինչպես այս յեղավ, օրինակ, Հռոմում:
Յերբ յերկրագործ ազգաբնակության մասն այս կերպով խաղաղ կյան-
քի սովորություններ է յուրացնում, սրա մոտագույն հետևանքը լի-
նում է հատուկ զինվորական դասակարգի ջոկվելն ու առանձնացումը:
Զինվորական պետերի շուրջն այժմ արդեն խմբվում է վոչ թե ամ-
բողջ չափահաս արական բնակչությունն, այլ միայն այնպիսի մար-
դիկ, վորոնք հատկապես նվիրվել են զինվորական գործին: Իր հատ-
կություններով կամ իր դիրքով աչքի ընկնող յուրաքանչյուր պետ
կողքին ունի իր նման արկածախնդիրներից կազմված մարտախումբ
(дружина): Այսպես է ծագում կորիզը զինվորական դասակարգի, վոր
հետագայում դառնում է ասպետություն ու ազնվականություն: Կա-
ռավարող շրջաններին հարելով՝ այս դասակարգը կազմում է զին-
վորական արիստոկրատիան: Բացի նրանից, նույն զինվորական կա-
ռավարող դասակարգն ազգաբնակության մնացած մասսայից ջոկվում
էր իր գույքային դրությամբ էլ: Ամենից առաջ հենց գույքերով մե-
ծապես ապահովված լինելն այս դասակարգի ներկայացուցիչներին ա-
զատում էր անմիջական յերկրագործական աշխատանքից և նրանց հնա-
րավորություն էր տալիս զինվորական գործունեյության նվիրվելու:
Մյուս կողմից բուն իսկ այն արտոնյալ դրությունը, վոր ունեյին նը-
րանք, սրանց ձեռքին ծառայում էր միջոց նրանց գույքերն էլ ավելի
շատացնելու:

Ռազմական ավարը, վոր առաջ ցեղի բոլոր անդամների միջև էր
բաշխվում, այժմ բացառապես, կամ համարյա բացառապես, ընկնում
է զինվորական դասակարգի ձեռքը: Վորտեղ առիթ ու հարմարություն
է լինում, այնտեղ ավարը վաճառքի յե հանվում և փոխանակվում է
ավելի պիտանի կամ հատկապես թանգարժեք առարկաներով: Հաճախ,
մանավանդ ծովափնյա վայրերում, հատուկ արշավանքներ են ձեռ-
նարկվում, ընդվորում մի տեղ թալանած ավարը, ծախվում է մի այլ
վայրում: Այսպիսով առևտրային փոխանակությունն սկզբում սերտ
կապ ունի ազնվականության ծովահենական ու սոսկ հենական արշա-
վանքների հետ: Կառավարող զինվորական շրջաններից ծագած մար-
դիկ առաջին առևտրականներն էին: Հին ժամանակ փյունիկեցիք
Արևելքում, էտրուսկներն Արևմուտքում միաժամանակ թե վաճառա-
կան էին ու թե ծովահեն: Յեգիպտոսի ու Բաբելոնի արիստոկրատի-
ան նույնպես պարապում էր առևտրական գործերով: Իլիականի ու
Վոդիսականի թագավորներն ու հերոսները պարծենում են իրենց ծո-
վահենական արշավանքներով և հպարտությամբ պատմում նրանց մա-

սին։ Միջնադարյան Յեվրոպայում նորմանները սարսափ եյին տարածում Հյուսիսային ու Միջերկրական ծովերի բոլոր ափերին։ Կիևի իշխաններն իրենց մարտախմբերով արշավանք եյին գործում Բյուզանդիա և միևնույն ժամանակ նաև մշտական առևտրային հաղորդակցություն եյին պահպանում նրա հետ։ Յեվրոպական ցամաքի վրա, վորտեղ արիստոկրատները հարմար ջրային ճանապարհների բացակայության պատճառով զրկված եյին առևտրային փոխանակության մեջ անմիջական մասնակցություն ունենալու հնարավորությունից, ոգտըվում եյին հատուկ միջնորդների ծառայություններից։ Մեծ մասամբ իբրև այսպիսի միջնորդներ հանդես եյին գալիս առևտրային գործին սովոր հրեաները։ Կարոլինյան շրջանում բոլոր ազնվականներից ու աշխարհիկ հզորներից յուրաքանչյուրն «իր» հրեան ուներ։

Պատերազմն ու առևտրային փոխանակությունը, վորոնք հարըստացնում եյին զինվորական դասակարգի անդամներին, միաժամանակ սրանց անհրաժեշտ բանվորական ուժեր ել եյին մատակարարում՝ նըրանց համար բազմաթիվ ռազմագերիներ ու ստրուկներ հայթայթելով։ Մեծաքանակ նյութական միջոցներ ու բազմաթիվ բանվորական ույժեր ունենալն կառավարող դասակարգին իր հերթին հնարավորություն եր տալիս ընդարձակ հողային տիրապետություններ կենտրոնացնելու իր ձեռքում։ Յերկրագործական կուլտուրայի զարգացման սկզբնական աստիճանի ժամանակ, յերբ ազատ հողերի ու պարապուտների մշակումը դեռ նոր-նոր եր սկսվում, յուրաքանչյուր մարդ կարող եր իր ոգտագործման համար գրավել, բռնել այնքան տարածություն, վորքան մշակելու ույժ ուներ։ Յեվ բնական ե, վոր մեծաքանակ ստրուկներ ունեցողը կարող եր ավելի ընդարձակ ծավալով յերկրագործական տնտեսություն վարել և հետևաբար ավելի ընդարձակ հողային տարածություն գրավել։

Խոշոր հողային սեփականության մյուս աղբյուրը հողային շընորհումների սիստեմն եր։ Յեթե դեռևս հին տոհմային համայնքի շրջանակում կառավարող ընտանիքներն իրենք չեյին աշխատում և ապրում եյին համայնքի մյուս անդամների հավելյալ աշխատանքով, ապա այժմ, յերբ կառավարող դասակարգի ձեռքումն եյին գտնվում թե ույժն ու թե հարստությունը, ստորադրյալ ազգաբնակության հաշվին ապրելն իսկական սիստեմի վերածվեց։ Վորոշ ռազմական ու վարչական ծառայություն անող անհատներին ապահովելու նպատակով՝ սըրանց հատկացնում եյին նրանց դիրքին համապատասխան վորոշ մեծությամբ հողամաս այն պայմանով, վոր նա տեղական ազգաբնակությունից իր ոգտին հասույթներ ստանալու իրավունք ունենա։ Թեև այսպիսի շնորհումները հենց պայմանաբար ել կատարվում եյին և ծառայության հարաբերությունների դադարի հետ պետք ե յետ վերադարձվեյին, սակայն այն անհատները, վորոնք հող եյին ստացած լինում պայմանական տիրապետության համար, վերջիվերջո այս հողային շնորհումները դարձնում եյին իրենց լիակատար ու ժառանգական սեփականությունը։

Պակաս ընդարձակ հողային տիրապետություններ չեյին կենտրոնանում նաև քրմական հոգևոր դասակարգի ձեռքերում։ Այս դասակարգի ներկայացուցիչները շնորհիվ այն հանգամանքի, վոր տնտեսական փորձառություն ու մեծ չափով մտավոր զարգացում ունեյին, տնտեսական կյանքի զարգացման ու կազմակերպության մեջ ել ավելի եյական դեր եյին կատարում, քան աշխարհիկ կառավարող շրջանները։ Մեծաքանակ բանվորական ույժեր ունենալով՝ հարուստ ու ազդեցիկ տաճարներն ու վանքերն ընդարձակ չափերով կիրարկում եյին ազատ հողերի գրավումը։ Աշխարհիկ իշխանության առատաձեռն շնորհումներն ու մասնավոր մարդկանց նվիրատվություններն ու նըպաստները հոգևոր հողատիրության աճման մյուս աղբյուրն եյին կազմում։

Ինչպես հայտնի յե, խոշոր հողատիրության տիրապետությունը, վոր զարգանալով լրացած սիստեմ դարձավ, այսպես կոչված ֆեոդալական կարգերի հիմունք յեղավ։ Իր ամենալրիվ զարգացման ու կատարելագործության հասավ ֆեոդալիզմը միջնադարյան Յեվրոպայում, սակայն այսպիսի ֆեոդալական կարգեր գոյություն են ունեցել և ունեն յերկրագործական ժողովուրդների մեջ՝ Չինաստանում, Հնդկաստանում, հին Յեգիպտոսում, Միջագետքում, նույնիսկ ժամանակակից կիսաքաղաքակիրթ ժողովուրդների մեջ՝ Հաբեշստանում, Պոլինեզիայի պետությունների մեջ, վորտեղ կարելի յե պատահել հողով պայմանաբար պարգևատրելուն, վոր հիշեցնում ե Արևմտյան Յեվրոպայի լենի սիստեմը (ленная система)։

2. ՀՈՂԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։

Մի կողմից՝ ազատ հողերի գրավման ու մյուս կողմից հողային շնորհումների հետևանքով, այն ժամանակներում, յերբ տոհմական հողային համայնքի քայքայման ու սրա՝ հարևանային տերրիտորիալ համայնք դառնալու պրոցեսը վերջանում եր, հողային ազատ տարածության մեծ մասն արդեն կենտրոնացած եր կառավարող արիստոկրատ դասակարգի ձեռքում։ Բացի սրանից, ավելի ուժեղ հողատերերը սրանով չսահմանափակվելով՝ սկսեցին իրենց բացառիկ ոգտման համար հափըշտակել համայնական հողերն ու հանդակները (угодия)։ Խոշոր հողատիրության հետ միասին ծայրահեղ զարգացման ե հասնում գույքային անհավասարությունը, վոր հազիվ նկատելի յեր վորսորդական համայնքներում, իսկ հովվական ժողովուրդների մեջ ավելի աչքի յեր

ընկնում։ Մի կողմից կազմվում է խոշոր սեփականատերերի դասակարգը, վոր տեր եր հողի ընդարձակ տարածությունների, անասունների, բազմաթիվ ստրուկների, զանազան շարժական գույքի, մյուս կողմից յերկրագործական համայնքի ներսում, վոր այժմ հարկադրված է իր սկզբնական սահմաններում փակված մնալ, աճում է մի ավելացած ազգաբնակություն, վոր կերակրվելու համար մի փոքրիկ կտոր հող անգամ չունի։

Այսպիսով ունենք դասակարգի դեմ, վոր արտադրության ամեն միջոցների, սրանց թվում նաև սրանցից ամենակարևորի—հողի տերն եր, կանգնած եր ընչասակավ ու անհող յերկրագործների դասակարգը։ Սրա շնորհիվ նոր բարենպաստ պայմաններ եյին ստեղծվում շահագործման հետագա զարգացման և չքավոր մասսան զուտ տնտեսապես սեփականատերերի դասակարգին ստորադրելու համար։ Համայնքի ընչասակավ ու չքավոր անդամներն այժմ ինչպես հող, այնպես և մշակման գործիքներ, բանող անասուններ, ցանքսերի սերմեր կարող եյին ստանալ միայն հողատերերից։ Վերջիններս այս բոլորը տալիս եյին, սակայն տալիս եյին վոչ թե ձրի, այլ փոխատվությամբ, այն պայմանով, վոր վորոշ «տոկոս» վճարեն բերքի մի մասը տալով կամ թե հանձն առնելով տոկոսի փոխարեն աշխատելու—«зарост служити», ինչպես գրում եյին 16-րդ դարում մոսկովյան պարտաթղթերում («порядные»)։ Փոխատվությունը տոկոսներով վերադարձնելով յերկրագործը կարող եր նորից ազատ համարել իրեն։ Բայց վորովհետև այս կերպով վճարահատույց լինելու հույս չեր լինում մեծ մասամբ, ուստի և փոխատվություն ստացած գյուղացին այս փոխատվությունն անող հողատիրոջ նկատմամբ կախյալ հարաբերության մեջ եր դրվում սովորաբար։

Պարտքերի փոխարեն ստրուկ դարձնելու սովորույթը լայն տարածված եր ամբողջ հին Արևելքում։ Հունաստանում Սոլոնի բարենորոգումների ժամանակ համարյա ամբողջ յերկրագործ ազգաբնակությունը կախման մեջ եր սակավաթիվ հողատեր դասակարգից։ Կլիենտելիայի, այսինքն կախյալ հարաբերությունների նույնպիսի զարգացում տեղի ուներ նաև հին Հռոմում։ Միջնադարյան Յեվրոպայում նույն ճանապարհով կազմվեց կիսազատ շինականների—«վիլլաների» դասակարգը, հին Ռուսաստանում «զակուպ»-ների (закуп) դասակարգը։

Յերբ գյուղական համայնքների ներսում հողային նեղվածությունն աճում եր, և առանձին հողամասերն ավելի ու ավելի եյին տրոհվում մանր կտորների, սրան զուգընթաց աճում եր չքավոր ու ընչասակավ յերկրագործների թիվն էլ։ Արևմտյան Յեվրոպայում 8-րդ դարից, Ռուսաստանում 15—16-րդ դարից սկսված յեռադաշտային մշակման անցնելն էլ ավելի յեր մեծացնում հողի կարիքը, վորովհետև յեռա-

դաշտային սիստեմը համապատասխան չափով էլ ավելի ընդարձակ հողային տարածություն եր պահանջում։

Յեթե վոչ հողի կարիքը, ապա ազնվականության կողմից հասած բռնությունները հարկադրում եյին բազմաթիվ մանր յերկրագործներին՝ փնտրելու հզոր մարդկանց հովանավորությունը՝ իրանց հողաբաժիններով հանդերձ հզորների «կոմմենդացիային» յենթարկվելով (հանձնըվելով, «բախտն ընկնելով») կամ նրանց մոտ «գրավադրվելով» (закладывая себя)։ Այստեղից առաջանում է այն յերևույթը, վոր Արևմտյան Յեվրոպայում կոչվում եր կոմմենդացիա, իսկ Ռուսաստանում զակլադնիչեստվո։ Հազվադեպ չեյին այն դեպքերը, յերբ այսպիսով հարուստ հողատերերի հովանավորությանն եյին հանձնվում ամբողջ համայնքներ։

Յեթե կարիքը յերկրագործ-համայնիկներին (общинник) հարկադրում եր խոշոր հողատերերի նկատմամբ կախյալ հարաբերությունների մեջ լինելու, ապա խոշոր հողատերերն էլ իրենց հերթին պատճառներ ունեյին, վորոնց շնորհիվ նրանք գերադասում եյին իրենց հողը բաժանել իրենցից կախում ունեցող յերկրագործներին, քան իրենց դաշտերն ստրուկների աշխատանքով անմիջորեն մշակել։ Հողատիրության սահմանների ընդարձակումով ստրուկների աշխատանքով հողը մշակելն ավելի ու ավելի դժվարանում եր։ Բացի սրանից, վորովհետև հացահատիկային արդյունքները վաճառելու համար շուկա չկար ամենևին, այս պատճառով կալվածատիրական ընդարձակ վարուցանքը հարկավոր էլ չեր։ Իսկ հողատիրոջ սեփական կարիքները գոհացնելու համար լիովին բավարար եյին բնատուրքի այն գանձումները, վոր ստանում եր նա իրանից կախում ունեցող յերկրագործներից։ Այս պատճառով հողատերերն իրենց արտավարերը (запашки), վոր մշակում եյին ստրուկների ձեռքով, ընդարձակելու փոխարեն գերադասում են ստրուկներին նստեցնել հողի վրա՝ սրանց հողամասեր տալով և պարտավորելով, վոր տուրք (оброк—մյուլք) վճարեն զանազան տնտեսական արդյունքներով ու առարկաներով։ Այն դեպքերում, յերբ ըստրուկների թիվը այս բանի համար անբավարար եր լինում, հողատերն աշխատում եր դեպի իր հողերը գրավելու ազատ մարդկանց՝ սրանց կախման մեջ դնելով իրենից։

Ընդամին հողի վրա բնակեցրած ստրուկների ու կախյալ վարձակալների տարբերությունը հետևյալն եր. նախ՝ ընդունում եյին, վոր վարձակալներն իրենց առած փոխատվությունները վերադարձնելուց հետո իրավունք ունեյին ազատորեն մի այլ վայր անցնելու, և յերկրորդ՝ ստրուկների հողամասերի վրա ավելի մեծ չափերով պարտույթներ (повинности) ու տուրքեր եյին ծանրանում։ Սակայն ժամանակի ընթացքում այս տարբերությունն էլ չքացավ. մի կողմից՝ թե առա-

չինների և թե վերջինների պարտույթներն ու տուրքերը հավասարվում էին, մյուս կողմից՝ մեծ մասամբ փոխատվությունը վերադարձնելու անհնարինությունը կաշկանդում, կապում էր նաև սկզբնապես ազատ յերկրագործին վոչ միայն հողատիրոջ անձնավորությունից, այլև տեղից, և ընդսմին այնքան ավելի ամուր էր կապում, վորքան ավելի յերկար էր մնացել ստացած հողամասում։ Վերջիվերջո յերկրագործը զրկվում էր իր հողամասից հեռանալու իրավունքից, մեխվում էր հողին և հողատիրոջ ճորտը դառնում։ Այսպիսով յերկու դասակարգերն էլ, թե՛ ստրուկներինն ու թե սկզբնապես ազատ յերկրագործներինը, ձուլվում, դառնում էին մի ընդհանուր ճորտային մասսա, վոր կախում ուներ հողատիրոջից և սրա նկատմամբ պարտական էր զանազան աշխատանքներ կատարելու (կոռ, բեգար, барщина) ու տուրք վճարելու սկզբում բնեղենով (натурой), հետագայում փողով։ Արևելքում անազատ ու կիսազատ տարրերի այս ձուլումը կատարվել էր դեռևս 9—10-րդ դարերում, իսկ Ռուսաստանում շնորհիվ սրա հողերի ընդարձակության, առատության, այլև այն հանգամանքի, վոր այստեղ յերկար ժամանակ տիրում էր նախնական կտորովի յերկրագործությունն, այս ձուլումը կատարվեց 16—17-րդ դարերում միայն։ Այժմ արդեն իրարուց տարբերվում էին վոչ թե ստրուկներն ու հողամասերի ազատ իրակալները (держатели) այլ «անձնական» ճորտերը միայն, վորոնց բանեցնում էին անձնական ծառայությունների (услуга) համար կամ վորոնք հողատիրոջ տնտեսության մեջ զանազան մանր գործեր էին կատարում, ու ժառանգական ճորտ յերկրագործները, կամ մեզանում, Ռուսաստանում գարբասի մարդիկ (дворовые люди—«խանըղի» մարդիկ) ու իսկական ճորտերը, մյուլքատու կամ կոռվոր գյուղացիք (оброчные или барщинные крестьяне)։ Անձնական ճորտերի թվին պատկանում էին վոչ միայն ձիապանները, խոհարարները, անձնական ծառաներն ու վստահունակ անհատներ, վորոնք տնտեսությունը կառավարելում զանազան պաշտոններ էին գըրավում, այլև մասնագետ արհեստավորներն, ընդվորում առանձին կալվածներում այսպիսի ճորտ արհեստավորների թիվը հաճախ շատ մեծ էր լինում։ Սկզբում սրանք բացառապես կալվածատիրոջ գործն էին բանում, ստանալով բնակարան և ուտելիք միայն, իսկ հետագայում վորոշ տուրք վճարելու պատճառով նրանց սկսեցին թույլ տալ, վոր ազատ ժամանակ մասնավոր պատվերներ կատարեն։

3. ԿԱԼՎԱԾՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ։—ԿԱԼՎԱԾԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Միջնադարյան ժամանակաշրջանի կիսի մոտերքն Արևմտյան Յեվրոպայում ազատ յերկրագործական ազգաբնակությունը համարյա լիովին չքացել էր։ Դեռևս 9-րդ դարի սկզբին Ս. Ժերմեն

դը՝ Պրեյի (Ֆրանսիա աբբայությանը պատկանած 2,859 գյուղացական տնտեսություններից միայն 8-ն էր ազատ հաշվվում, մնացած բոլորն ըստըրկային կամ ճորտային տնտեսություններ էին։ Անգլիայում 11-րդ դարի յերկրորդ կեսի վիճակագրության համաձայն (վոր քաղում եմ հայտնի Dome daybook-ից—Ահեղ դատաստանի գրքից) ազատ իրակալ վարձակալները (держатели-арендаторы) կազմում էին ամբողջ գյուղացական ազգաբնակության հազիվ 5%-ն, այսինքն մեկ քսաներորդ մասը։ Ռուսաստանում գլխավորապես կենտրոնական ու հարավային մարզերն (область) էին ճորտային հարաբերությունների տիրապետության վայր, այնինչ հյուսիսում, ընդհակառակն, ազատ յերկրագործական աշխատանքն էր պահպանվում։

Ազատ գյուղացության չքանալու հետ միաժամանակ ազատ գյուղացական համայնքն էլ էր չքանում։ Այնտեղ, վորտեղ համայնքը պահպանվում էր, այն ընկնում էր հարևան հողատիրոջից կախում ունեցող վիճակի մեջ։ Այսպիսի կախյալ համայնքի գլխավոր կողմն այն էր, վոր համայնքի անդամները խմբովին պատասխանատու յեյին դառնում զանազան տուրքերի կանոնավոր վճարման ու կոռը քաշելու համար։ Համայնքի բոլոր գործերն այժմ արդեն վոչ թե ազատ համայնիկների միությունն էր կարգադրում, այլ կալվածատիրոջ նշանակած կառավարիչը։

Այսպիսով համայնքն ու համայնական տնտեսությունը դուրս են մղվում շնորհիվ կալվածքի ու կալվածային տնտեսության։ Կալվածքը դառնում է գյուղի ամբողջ տնտեսական կյանքի կենտրոնը։ Կալվածքում էին գտնվում այն տնտեսական հիմնարկները, վորոնք ծառայում էին գյուղի ամբողջ ազգաբնակության պետքերին (աղացները, փռերը, խաղող մզելու մամուլները ևայլն), ձեռնապակաս յերկրագործներն այստեղից էին ստանում սերմերով ու գործիքներով փոխատվություն, և վերջապես այստեղ էր գտնվում այն կենտրոնական կետը, վորտեղ պաշտպանվում էին թշնամու ներխուժման դեպքում, վոր այն ժամանակները հաճախ էր պատահում։ Սակայն կալվածային տնտեսությունը, վոր յեկել էր համայնականին փոխարինելու, վոչ գյուղատնտեսական աշխատանքի կազմակերպության ու վոչ էլ հողոգտման կարգի մեջ նկատելի փոփոխություններ չմտցրեց։ Անխախտ պահպանվում էր ինչպես վարելահողերի առաջվա զատ-զատ ոգտումը պարբերական վերաբաժանումով հանդերձ, այնպես և արոտատեղերի ու անտառային հանդակների (лесные угодья) համայնական տիրապետությունը։ Կանգնած լինելով համայնքի տնտեսական կյանքի կենտրոնում՝ հողատիրոջ դաստակերտը (усадьба) բուն իսկ շենում կենտրոնական տեղ էր գրավում։ Դաստակերտի շենքերին սովորաբար կից եյին լինում կալվածատիրոջ աննշան արտավայրերը, վորոնք սկզբում

մշակվում եյին ստրուկների աշխատանքով, իսկ հետագայում ճորտերի կոռային աշխատանքով, հետո գալիս եյին գյուղական շենքերը, գյուղացիների արտերն ու վերջապես խոտհարքի մարգագետիններն, արոտավայրերն ու անտառները։

Խոշոր սեփականատերերը, թագավորները, աբբայությունները, վանքերն, ավելի նշանավոր սենյորները (իշխանները) յուրաքանչյուրը միքանի, նույնիսկ բազմաթիվ կալվածքներ ունեյին։ Կարլ Մեծի կայսերական վիլլաները (գյուղերը) սփռված եյին նրա լայնածավալ թագավորության ամբողջ տարածության յերեսին։ Բազմաթիվ հարուստ աբբայություններ ու վանքեր նույնիսկ միքանի տասնյակ կալվածքներ ունեյին։ Այսպիսի խոշոր սեփականատերերի կալվածքներում տնտեսությունը վարում եյին հատուկ կառավարիչների կամ վերակացուների միջոցով։ Խոշոր կալվածքներում կառավարիչների ձեռքի տակ զանազան պաշտոնյաների մի ամբողջ շտատ եր լինում, վորոնցից հետագայում կազմվեց մինիստերիալների հատուկ դասակարգն Արևմուտքում, իսկ մեզանում, Ռուսաստանում այսպես կոչված դարբասի կառավարչին յենթակա ծառաների դասակարգը (слуги под дворским—խանլըղ նոքարներ)։ Կարլ Մեծի հայտնի կապիտուլյարիի մեջ, վորը վերաբերում եր կալվածքները կառավարելուն և հրատարակված ե 812 թվին, հիշատակվում են կառավարիչներ, անտառապահներ, մառանապետներ, հարկահավաքներ և ուրիշ ծառայողներ։

Իր տրամադրության տակ բազմաթիվ բանվորական ույժեր ու մասնագետ արհեստավորներ ունենալով, յուրաքանչյուր կալվածք հեշտությամբ եր բավարարում իր բոլոր անհրաժեշտ պահանջները և այս պատճառով փոխանակության կարիք չեր զգում։ Այսպիսով կալվածային տնտեսությունը փակ, բնական տնտեսության զուտ տիպն եր ներկայացնում սկզբնապես։ Նույն կապիտուլյարին կալվածքի կազմակերպության ու կյանքի լրիվ պատկերն ե տալիս։ Յուրաքանչյուր կալվածք պետք ե ունենար մատակ ձիեր ու քուռակներ, կովեր, խոզեր, վոչխարներ, զանազան ընտանի թռչուններ՝ հավեր, բադեր, նույնպես և իբրև ունևորության նշան՝ կարապներ, սիրամարգներ, փասիաններ, աղավնիներ, տատրակներ, վերջապես վորսորդական թռչուններ—շահեններ ու բազեներ։ Յուրաքանչյուր կալվածքում պետք ե պահվեյին ձկնարաններ։ Պատվիրվում եր այգիներում ու բանջարանոցներում խնամել ամենաբազմազան տեսակի ծաղիկներ ու բանջարեղեն, ընդամենը մինչև 74 տեսակ բույսեր ու մինչև 16 տեսակ պտղատու ծառեր։ Խաղողի ընդարձակ այգիները տալիս են զանազան տեսակի գինիներ։ Ամբարներում ու մառաններում պահած եյին ունենում տնտեսական ու տնային բոլոր անհրաժեշտ առարկաներն ու արդյունքները։ Յուրաքանչյուր կալվածքի տնտեսության մեջ պատ-

րաստվում եյին չորացրած միս, աղը դրած միս, ապուխտ, գինի, քացախ, ոշարակներ, մրգի խմիչքներ, ձկան յուղ, մանանեխ, պանիր, յուղ, ածիկի ալյուր (солод), մեղր, գարեջուր, մեղրի խորիսխներ, մոմ, ալյուր։ Կալվածքի կանանոցում կանայք շարունակ զբաղված եյին մանելով ու այլ կանացի գործերով։

Զանազան տնտեսական հանձնարարությունների համար «յուրաքանչյուր կառավարիչ իր տնտեսության մեջ պետք ե ունենար լավ արհեստավորներ, այն ե՝ դարբիններ, վոսկերիչներ, արծաթագործներ, մուշտակագործներ, հյուսներ, տաղձագործներ, գինեգործներ, ձկնորսներ, թռչնորսներ, ոճառագործներ, գարեջուր շինողներ, մրգագինի (сидр) ու ամեն տեսակ այլ համեղ խմիչքներ պատրաստել իմացող մարդիկ, հացթուխներ, վորոնք կարողանային մեզ համար շարմաղ հաց թխել, վարպետներ, վորոնք իմանային ինչպես վորսորդական, այնպես և ձկնորսության ցանցեր հյուսել, ու այլ ամեն տեսակի վարպետներ, վորոնց անունները թվել յերկար կըքաշեր»։ Կարլի կապիտուլյարիի մեջ հիշատակված արհեստավորների ցանկը դեռևս լրիվ չե։ Այսպես, Ս. Գալենի վանքի կալվածքներում մոտավորապես նույն ժամանակներում հիշվում են շաքարահաց շինողներ, աղացպաններ, կոշկակարներ, դերձակներ, մահուդ գործողներ, ապակեգործներ։ Այն ժամանակվա ուրիշ կալվածքերում պատահում եյին նաև ջուլհակներ, ճոներ, տակառագործներ, ներկարարներ։

Սովորաբար կալվածքին կից պահում եյին հասարակական աղացը, պտուղներն ու բանջարեղենը չորացնելու հիմնարկը, փչացող արդյունքները պահելու սառցարանները, փուռը, գարեջրի գործարանը, խաղողի մամուլը ևայլն։ Այս հիմնարկներից ոգտվում եր վոչ միայն ինքը կալվածատերն, այլև կալվածքի ամբողջ ճորտ ազգաբնակությունը։ Սկզբում բացառապես տնտեսական դեր կատարելով՝ նրանք հետագայում կալվածատիրոջ համար հասույթի աղբյուր դարձան։ Գյուղացիներին արգելում եյին վորևե այլ տեղում աղուն աղալ ու հաց թխել, գարեջուր պատրաստել, խաղող տրորել, ընդվորում այս բոլորի համար վորոշ վճար եյին առնում հողատիրոջ ոգտին։ Հողատիրոջ իրավունքներից մեկն եր այդ, այսպես կոչված բանալիտետի իրավունքը։

Տնտեսական արդյունքների ու առարկաների նշանավոր մասը ճորտ ազգաբնակությունն եր մատակարարում, իբրև տուրք։ Սովորաբար տուրքը վճարում եյին բնեղենով (натурой). տալիս եյին հացահատիկ, վարսակ, խոտ, վառելափայտ, տավար, զանազան կենդանիներ ու թռչուններ, ձվեր, յուղ, մեղր, մոմ, գինի, կտավ, բրդե կոպիտ գործվածքներ ու գյուղացական տնտեսության այլ առարկաներ։ Յերկրագործական ու դաշտային գործերն էլ գլուխ եյին բերում նույնպես

ճորտերի կոռային աշխատանքով։ Կոռը շաբաթվա մեջ որերի վորոշ թիվ եր կազմում, սովորաբար յերեք որ, չհաշված այն ավելադիր (добавочный) որերը, վոր աշխատում եյին վարուցանքսի և հնձի տաքացած միջոցին։ Մասնավորապես նույնպիսի պատկեր եր ներկայացնում նաև ռուսական բարինի դաստակերտը 17—18-րդ դարերում։

Առատորեն մատակարարված, լցված ամեն արդյունքներով, վոր անհրաժեշտ եյին իրեն, կալվածային տնտեսությունը, մանավանդ իր գոյության առաջին շրջաններում, ինչպես արդեն ասել ենք, բնատնտեսության զուտ տիպն եր ներկայացնում։ Թեև այս տնտեսությունը հիմնվում ել եր կախյալ ազգաբնակության աշխատանքի շահագործման վրա, սակայն քանի նրա նպատակը հողատիրոջ տնտեսական կարիքները բավարարելն եր, քանի բուն իսկ այս կարիքներն աչքի յեյին ընկնում պարզությամբ ու անպահանջկոտությամբ, շահագործման աստիճանն ել առանձնապես բարձր չեր։ Նրա սահմանները վորոշվում եյին ամենից առաջ կալվածատիրոջ պահանջների ծավալով։ Յերբ առևտրի զարգացման հետ կալվածային տնտեսությունն ավելի ու ավելի յեր խրվում առևտրային հորձանքի մեջ և սրա հետ միաժամանակ սկսում եր իր արդյունքները պատրաստել վոչ թե սեփական պահանջների բավարարման, այլ շուկայում վաճառելու համար, միայն այս յերևույթների զարգացման համապատասխան չափով ե, վոր աճում եր նաև շահագործման աստիճանը, մինչև վոր վերջիվերջո յերևաց, թե կախյալ անազատ աշխատանքն ել անբավարար ե այս նպատակի, այն ե՝ շուկայի պահանջների համեմատ արտադրելու համար։ Այս րոպեյից սկսվում ե նույնինքն կալվածային տնտեսության քայքայումն ու սրա անցումը դեպի նոր տնտեսական ձևեր։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՃԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՈՒ ԱՐՀԵՍՏԻ ԾԱԳՈՒՄԸ

1. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ։ Գյուղական համայնքի տնտեսական կյանքի կազմակերպության մեջ նշանավոր փոփոխություններ չմտցնելով հանդերձ՝ կալվածային տնտեսությունն ավելի ամուր ու կայուն կերպով եր կապում իրարուց առանձին գյուղացական տնտեսությունները։ Միաժամանակ ճորտ ազգաբնակության հավելյալ աշխատանքի արդյունքների յուրացման շնորհիվ կալվածատերերի ձեռքում կենտրոնանում և կուտակվում եյին մեծ չափով ավելցուկներ, վորոնք հետագայում առևտրի զարգացման կարևորագույն աղբյուրներից մեկն եյին դառնում։ Վորքան ավելի յեր զարգանում գյուղատնտեսական արտադրության տեխնիկան, վորքան ավելի յեր աճում ճորտ արհեստավորների թիվը և զարգանում սրանց միջև աշխատանքի մասնագիտացումն, այնքան ավելի մեծաքանակ արդյունքներ եյին պատրաստվում առանձին տնտեսություններում և ընդմին այնքան ավելի յել շատանում եյին տնտեսական ավելցուկները, վորոնք կուտակվում եյին կալվածատեր սենյորի ձեռքում։ Նույնիսկ միջակ մեծությամբ կալվածքներում գոյանում եյին ավելցուկներ, վորոնք կազմված եյին լինում հազարավոր չափերի հասնող հաճարից ու վարսակից, տասնյակ հազարավոր ձվերից, բազմաթիվ թռչուններից, բրդից, կտավից ևայլն (Լամպրեխտ)։ Միքանի առանձին կալվածքներում տեղական պայմանների շնորհիվ առատորեն ստացվում եր բացի վերոհիշյալներից նաև գինի, ձուկ, աղ։ Տնտեսական մնացորդների այսպիսի կուտակման հետևանքը պետք ե լիներ փոխանակության ծագումն, ինչպես վոր այս տեղի յեր ունեցել ավելի վաղ հարևանա-տոհմային ու ցեղական համայնքների միջև յեղած փոխադարձ հարաբերությունների միջոցին։

Ընդմին ինքըստինքյան հասկանալի յե, վոր նույն կամ համարյա նույն տնտեսական արդյունքներն ունեցող հարևան սենյորների միջև փոխանակության ծագման համար ավելի քիչ պատճառներ ու առիթներ կային, քան այն սենյորների միջև կատարվող փոխանակության համար, վորոնք միմյանցից հեռու վայրերում եյին գտնվում և զանա-

զան տեղական արդյունքներ ունեյին։ Ահա թե ինչն է պատճառը, վոր, ինչպես արդեն գիտենք, առևտրային փոխանակությունը ծագում է ամենից առաջ ծովափնյա վայրերում, վորտեղ իշխող դասակարգերի ձեռներեց ներկայացուցիչների առաջ բացվող ծովային ճանապարհները հնարավորություն եյին տալիս նրանց ծանոթանալու ու հաղորդակցություն ունենալու ավելի հեռավոր յերկրների հետ։ Յեգիպտոսի փարավոններն արշավախումբ են կազմում դեպի Պունտ կոչված յերկիրը, վոր գտնվում եր հեռավոր հարավում և հարուստ եր զանազան անուշահոտություններով, փղոսկրով ու այլ արտադրանքներով (произведение)։ Սողոմոնն ուղարկում է իր նավերը հեռավոր կիսահեքյաթային Ոփիր աշխարհը։ Հին Հունաստանի ու Հռոմի արիստոկրատներին նույնպես ամենից առաջ հարուստ Արևելքի յերկիրներն եյին գրավում։ Միջնադարյան առևտրի մեջ էլ բացառիկ տեղը պատկանում եր նույն Արևելքի կամ, ինչպես այն ժամանակ եյին կոչում, Լևանտի առևտրին (Լեվանտ—Արևելք)։ Սրա հետ միասին, սակայն, շատ ավելի շուտ զարգացավ հյուսիսի առևտուրը, վորի գլխավոր առարկան կազմում եյին ռուսական մուշտակները։

Լևանտի առևտուրը գոյություն ուներ դեռ 10-րդ, մասամբ նույնիսկ 9-րդ դարում։ Պերճանքի առարկաններն Արևելքից բերվում եյին Իտալիայի նավահանգիստ քաղաքները և այնտեղից տեղական վաճառականների միջոցով, վորոնք սկզբում գլխավորապես հրեաներ եյին, տարածվում եյին միջին ու հյուսիսային Յեվրոպայում։ Ամեն մի քիչ թե շատ նշանավոր սենյոր ուներ իր վաճառականը—հրեան, այնպես, ինչպես ուներ իր ջուլհակը կամ դարբինը։ Խոշոր սենյորների ամրոցները, վորտեղ բերվում եյին Արևելքի արդյունքները, առևտրային փոխանակության կենտրոններ եյին դառնում հարևան ավելի մանրկալվածատերերի համար էլ։ Դեռևս Կարլ Մեծը թույլ եր տալիս առանձին ֆեոդալների իրենց տիրապետությունների մեջ վաճառանոց սարքել՝ նրանց վերապահելով իրավունք առևտրին հսկելու, շուկայի սահմաններում դատ անելու և յեկվոր վաճառականներից մաքս հավաքելու։ Ժամանակի ընթացքում այսպիսի շուկաներից միքանիսը մեծացան և դարձան տոնավաճառային առևտրի խոշոր կենտրոններ, վորոնք գնորդներ եյին գրավում ամենահեռավոր վայրերից։ Առանձին հռչակ ստացան այն տոնավաճառները, վորոնք տեղի յեյին ունենում Շամպան կոմսության մեջ, Սենա գետի վերին հոսանքում։ Այստեղ չորս տոնավաճառներ զանազան քաղաքում հաջորդում եյին իրար, այնպես վոր ամբողջ տարվա ընթացքում առևտուրը չեր ընդհատվում։ Տասներկույերորդ դարի կեսից մինչև տասն և չորսերորդ դարը Շամպանի տոնավաճառներն ամբողջ Արևմտյան Յեվրոպայի համար Արևելքի արդյունքների վաճառքի գլխավոր կենտրոններն եյին։

Ավելի համեստ չափերով նույնպես տոնավաճառային առևտուր զարգանում է հարևան գյուղական համայնքների միջև էլ։ Այստեղ առևտրի գլխավոր առարկաները գյուղացական առօրյա գործածության առարկաներն եյին։ Գյուղացի յերկրագործի տնտեսությունը հենց ամենասկզբից, ինչպես արդեն տեսել ենք, բնատնտեսության այնպիսի զուտ տիպ էլ չեր, ինչպիսին եր նախնական տոհմային համայնքի տնտեսությունը։ Վոչ մի հարևանային յերկրագործական համայնք չեր կարող կառավարել առանց հատուկ արհեստավորների բանելու, այնինչ ամեն գյուղում չկային բոլոր անհրաժեշտ արհեստները։ Մի համայնքում զարգանում եյին միքանի արհեստներ, մյուսներում՝ ուրիշ արհեստներ։ Այսպիսով անհրաժեշտ տնտեսական առարկաներ պատվիրելը կամ ձեռք բերելը հնարավոր եր լինում կամ այն ժամանակ, յերբ գյուղն եյին այցելում շրջիկ արհեստավորները և կամ այն ժամանակ, յերբ իրենք գյուղացիք գնում եյին տեղական տոնավաճառները, վորոնք սարքվում եյին վորոշ վայրերում ու վորոշ ժամանակամիջոցներում։ Տոնավաճառ եյին գալիս իրանց արդյունքներով ու առարկաներով ինչպես գյուղացիք, վորոնք արհեստային արդյունքների կարիք ունեյին, այնպես և արհեստավորները, վորոնք զանազան գյուղատնտեսական մթերքների կարիք ունեյին։ Հաղորդակցության ճանապարհների անզարգացածության շնորհիվ այսպիսի պարբերական գյուղական տոնավաճառները փոքրաթիվ հարևան շեների պետքերին միայն ծառայել կարող եյին։

Հին Ռուսաստանում, վորտեղ ազգաբնակությունը նոսր եր, և գյուղերն էլ ցրված մեծ հեռավորությունների վրա, տոնավաճառները քիչ եյին տարածված, և գյուղական ազգաբնակության կարիքները հոգում եյին գլխավորապես շրջիկ արհեստավորները։ Տոնավաճառային առևտուրը վորոշ չափով զարգացել եր Նովգորոդի մարզում միայն, սակայն այստեղ էլ այսպես կոչված «պոգոստ»-ներն ու «րյադոկ»-ները (չարսու բազար), վորոնք այսպիսի առևտրի տեղ եյին հանդիսանում, մեծ մասամբ խոշոր նշանակություն չունեյին։ Ընդհակառակն, Արևմուտքում տոնավաճառները դեռևս միջնադարի առաջին կիսում ամենուրեք տարածված յերևույթ եյին։ Ամեն տեղ, առանձնապես հարգված աբբայությունների ու վանքերի մոտ, սրանց պատերի պաշտպանության ներքո և սրանցում պահպանվող «աստվածային խաղաղության» հովանու տակ, այն փոքրիկ շեներում, վորոնք ընկած եյին լինում խիտ բնակված վայրերի կենտրոններում, յերկու գետերի միացման կետում, ծագում են պարբերական տոնավաճառներ*)։

*) Այսպիսի պարբերական տոնավաճառներ գոյություն ունեյին նաև հնում, ինչպես Արևելքի յերկրներում՝ Միջագետքում, Ասորիքում, Պալեստինում, Արաբիայում ու Յեգիպտոսում, այնպես և Հունաստանում ու հռոմեական Լացիումում։ Ամենից ավելի հայտնի ու հաճախելի տոնավաճառները, միջին դարերի նման, ձգում եյին տոներին և հատկապես հարգի տաճարների ու սրբավայրերի մոտ եյին սարքում։

2. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱԶՄՎԵԼԸ։—ԲԵՐԴԱՔԱՂԱՔՆ ՈՒ ՇԱՀԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԸ։ Վաճառականներն ու արհեստավորները, փոխանակ իրենց ապրանքներն ու արդյունքներն այսպիսի տոնավաճառային տեղեր հասցնելու, կամաց-կամաց սկսում են իրենք բնակություն հաստատել այնտեղ՝ վաճառանոցային վորոշ որերում փոխանակություն կատարելով շրջակա գյուղերի շինականների հետ։ Առևտրական ու արհեստավոր ազգաբնակությունն իրենց կողմն ավելի սաստիկ ձգում էյին մանավանդ հարուստ ամրոցներն ու վանքերը, վորտեղ միշտ բազմազան ու բազմաթիվ մարդիկ էյին խմբվում, և վաճառականներն ու արհեստավորներն այս պատճառով ավելի շուտ ու ավելի հեշտ կարող էյին գնորդներ գտնել։ Դեռևս 9-րդ դարի առաջին կիսում Ֆրանսիայի Ս.-Ռիկյե վանքի պատերի մոտ մի ընդարձակ շենանոց գոյացավ, վոր կազմված էր ազատ ու կիսազատ արհեստավորներից։ Այս շենի մեջ առանձին-առանձին փողոցներում ու թաղերում տեղավորվել էյին դարբինները, թամբագործները, զինագործները, հացթուխները, կաշեգործները, ջուլհակները, մուշտակագործները, մահուդագործներն ու վաճառականներն, ընդվորում արհեստավորների այս ամբողջ մասսան վոչ այնքան վանքի միաբանության բանն էր բանում, վորքան աշխատում էր կողմնակի վաճառքի համար։ Այսպես, խոշոր ֆեոդալների ամրոցներից վոչ հեռու, վանքերի պատերի մոտ, տոնավաճառային խոշոր կենտրոններում, ինչպես և գյուղական տոնավաճառային առևտրի վայրերում, աստիճանաբար կազմվում են նոր, քաղաքային տիպի շենանոցներ, վորոնցում վոչ թե յերկրագործ ազգաբնակությունն է գերակշռում, այլ արհեստավորն ու առևտրականը։

Քաղաքն, ինչպես ցույց է տալիս բառի բուն իսկ նշանակությունն էլ, սկզբում պարսպափակ տեղ էր, բերդ էր (համմ. գերմ. Burg, վորից Bürger bourgevis)։ Առաջին քաղաքային շենանոցները (городские поселения) մեծ մասամբ ծագում էյին ամրոցների ու վանքերի պարիսպների պաշտպանության ներքո։ Ճիշտ նմանապես նորակազմ առևտրային շենանոցներն էլ ամեն բանից առաջ իրենց շրջապատում էյին պարիսպներով։ Ժամանակի ընթացքում բերդաքաղաքի նշանակությունը յետին շարքն է մղվում։ Բերդաքաղաքը փոխակերպվում է շահաստան քաղաքի, և մեծ մասամբ ճորտ բնակչությունից կազմված շենանոցը, վոր սենյորից կախումն ուներ, դառնում է ազատ քաղաքային կոմմունա։

Քաղաքի առևտրական ու արհեստավոր ազգաբնակությունն այժմ արդեն վոչ թե կալվածքի հատուկ կարիքներին է ծառայում, այլ գոհացնում է շրջակա ամբողջ ազգաբնակության պետքերը։ Սրա հետ միաժամանակ առևտրական ու արհեստավոր ազգաբնակությունն ավելի ու ավելի յե առանձնանում, ջոկվում գյուղական յերկրագործ ազգաբնակությունից։ Քաղաքը վոչ միայն անկախ տնտեսական նշանակություն է ձեռք բերում, այլև իր շրջանի ամբողջ տնտեսական կյանքի կենտրոնն է դառնում՝ այս դերում աստիճանաբար փոխարինելով կալվածային ֆեոդալական տնտեսությանը։ Ընդսմին քաղաքի տեղական սենյորից կախումն ունենալն ամեն իմաստ էլ կորցնում էր, և վորքան ավելի հարուստ ու բազմանդամ էր դառնում քաղաքային բնակչությունն, այնքան ավելի բնական էր լինում, վոր նա ձգտեր թոթափելու իր վրայից այն կախումը։ 11—13-րդ դարերի ընթացքում քաղաքները Յեվրոպայում ամենուրեք լիակատար անկախություն ու ինքնավորության իրավունք են նվաճում և կամ ձեռք են բերում փողով գնելով։ Քաղաքը դառնում է ազատության ապաստարան, և յուրաքանչյուր ճորտ, վոր քաղաքում ապրում էր մեկ տարի ու մեկ օր, դրանով հենց ազատվում էր ճորտությունից։ Մինչև այն ժամանակ իշխող այն կանոնին, թե «չկա հող, վոր տեր չունենա» (nulle terre sans seigneur), այժմ հակադրվում է նոր սկզբունք, այն է՝ «քաղաքի օդը մարդուն ազատ է դարձնում»։

3. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԻ ՈՒ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ։—ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՃԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ։ Քանի քաղաքը շրջակա յերկրագործ ազգաբնակության համար տնտեսական կենտրոնի նշանակությունն էր ձեռք բերում, այնքան էլ պարբերական տոնավաճառային առևտուրը վեր էր ածվում ընդսին մշտական վաճառանոցային առևտրի։ Ամեն շաբաթ վորոշ վաճառանոցային որերում բոլոր կողմերից դեպի քաղաք էյին ուղղվում գյուղացիների սայլերն ամեն տեսակ պարենով բեռնավորված։ Առևտուրը կատարվում էր շուկայի հրապարակում, վոր ընկած էր լինում քաղաքի կենտրոնական մասում։ «Միջին դարերում ով կամենում էր վորևե բան ցուցադրել վաճառքի համար, այս անում էր բաց շուկայում։ Անթիվ ու անհամար ծածկված կամ անծածկ վաճառասեղաններ (стойка), սեղաններ ու խանութներ յերկար ձգված էյին լինում հրապարակի վրա. կողքերից շրջապատում էյին սրանց խանութների ծածկված շարքերը, տաղավարներն ու յերկար սրահները։ Այստեղ առևտուր էյին անում մահուդ գործողները, դրամափոխները, մանրունք վաճառողներն, ամեն տեսակի արհեստավորներ, ուտելեղեն ծախողները» (Բելով)։

Քաղաքային վաճառանոցային առևտուրը վորքան էլ սահմանափակ ու աննշան լիներ իր չափերով, այնուամենայնիվ մինչև այն ժամանակ տիրող տնտեսական պայմանների մեջ կատարյալ հեղաշրջում առաջ բերեց։ Արհեստի ու քաղաքային վաճառանոցային առևտրի զարգացման հետ միասին զարգանում է նաև հատուկ արտադրությունը վոչ սեփական սպառման, այլ վաճառքի համար։ Առևտուրը, վոր

սկզբնապես տնտեսական ավելցուկների փոխանակությամբ եր սահմանափակվում և կատարվում եր դեպքից դեպք, ընդսմին դառնում ե մշտական ու կանոնավոր։ Ինչպես վոր քաղաքային արհեստավորն իր արդյունքներն արտադրում ե վոչ թե իր, այլ պատվիրողի համար կամ թե նկատի ունենալով, վոր արտադրածը շուկայում կըվաճառի, այնպես էլ գյուղացին ե այժմ սկսում պատրաստել արդյունքներ ավելի մեծ քանակությամբ, քան պահանջ ե զգացվում նրա տնտեսության մեջ, այն նպատակով, վոր քաղաքում փոխանակի իրեն անհրաժեշտ քաղաքային արդյունքների հետ։ Ընդսմին տնտեսության արդյունքները դառնում են ապրանք, այսինքն աշխատանքի այնպիսի արդյունք, վոր արտադրվում ե վոչ թե սեփական սպառման համար, այլ ուրիշ արդյունքների հետ փոխանակելու նպատակով։

Յերբ աշխատանքի արդյունքներն ապրանք են դառնում և բնատընտեսությունն էլ՝ առևտրային կամ փոխանակային տնտեսություն, սրանով ավարտվում ե առևտրային փոխանակության զարգացման սկզբնական շրջանը։ Սկսվելով այսպիսի փոխանակության հատ-հատ դեպքերից, վորն, օրինակ, կատարվում եր քարե տապարներ ու նետեր ունեցող վայրենիների միջև (փոխանակության պատահական ձևը), առևտուրը տնտեսության- զանազան ու տնտեսական ավելցուկների ծագման հետ սկսում ե այս ավելցուկների փոխանակման նպատակներին ծառայել և ընդսմին ընդունում ե թե՛ ավելի հարատև ու թե ավելի ընդարձակածավալ, այսպես կոչված ընդլայնված ձև։ Փոխանակություն անող տնտեսությունների առջև ընտրության ընդարձակ տարածություն ե սփռվում. կացնի տեղ, օրինակ, կարելի յե ստանալ վոչ միայն վորևե ուրիշ զենք, այլև արհեստային ուրիշ արդյունքներ՝ հացահատիկ, վոչխար և այլն։ Առևտրի այս ձևի անհարմարությունն ամենից առաջ այն ե, վոր փոխանակություն անող կողմերի շահերը մշտապես իրար համապատասխան չեն լինում, և այն արդյունքը, վոր կողմերից մեկն առաջարկում ե իրեն ցանկալի ուրիշ առարկայի հետ փոխանակելու համար, հակառակ կողմին նույն ժամանակ հարկավոր չի լինում։ Ինչպես արդեն մատնանշել ենք վերևում, այս հարմարությունը վերացվում ե նրանով, վոր գործածության մեջ են մտցնում իբրև միջնորդ ողակ մի վորևե ամենից ավելի վարուն (ХОДКИЙ) ապրանք, վոր բոլորն ընդունում են հոժարակամ, թեև նրա անմիջական կարիքը չեն զգում, իմանալով, վոր հիշյալ վարուն ապրանքը տալով միշտ կարելի յե անհրաժեշտ առարկան ստանալ։ Փոխանակության միջոցին իբրև այսպիսին միջնորդ ողակ ծառայում ե ամենից հաճախ տավարը կամ արդուզարդի այս կամ այն առարկաները։ Այս ե փոխանակության յերրորդ զարգացած կամ ընդհանրական ձևը։ Սակայն փոխանակության այսպիսի ձևի ժամանակ այն հանգամանքը, վոր ա-

ռանձին ցեղերի ու ժողովուրդների միջև կատարվող փոխանակության պայմանական միջոցները տարբեր են, և սրանցից միքանիսն էլ բարդ ու խառնիխուռն, դեռևս ելի դժվարին ե դարձնում փոխանակություն կատարելը։ Ուստի և առևտրային զարգացման պրոցեսի ավարտումն հանդես ե գալիս ծագումով մետաղե դրամների, վորոնք իբրև փոխանակության միջոց են ծառայում այն բոլոր ժողովուրդների մեջ, վորոնք ավելի կամ պակաս չափով կենդանի առևտուր են անում (փոխանուկության դրամակ ձև)։ Փոխանակության այս բարձրագույն ձևը միայն քաղաքային առևտրի պայմաններում ե զարգանում, թեև քաղաքային շուկայում դեռևս յերկար ժամանակ սրան կից շարունակում ե գոյություն ունենալ արդյունքների անմիջական փոխանակությունը, վոր կատարվում ե քաղաքի արհեստավոր ու գյուղի յերկրագործ ազգաբնակության միջև։

Քաղաքային շուկայում փոխանակությունը կատարվում եր արտադրողների միջև անմիջապես, մի կողմից գյուղական տնտեսության տեր շինականի ու մյուս կողմից՝ քաղաքի արհեստավորի միջև, այս պատճառով էլ, գոնե սկիզբներում, ապրանքն ապրանքով փոխանակելու գործողություն միայն կարող եր լինել։ Առանց դրամանիշների միջնորդության գլուխ գալով՝ քաղաքային վաճառանոցային փոխանակությունը միաժամանակ կատարվում եր նաև առանց առևտրային հատուկ միջնորդների—առանց վաճառականների։ Ինչպես մեկ, այնպես և մյուս կողմի համար փոխանակության նպատակը վոչ թե առևտրական վաստակ (прибыль) ստանալն եր, այլ անհրաժեշտ պահանջների բավարարումը։ Ամեն մի միջնորդություն գիտակցաբար վտարվում եր։ Թույլատրվում եր շուկայում շրջանառության հանած ապրանքների մեծ մասը ձեռք բերել լոկ սեփական սպառման նպատակով։ Յեթե առևտրականներն իրենց համար չեյին գնում, այլ վերավաճառքի նպատակով միայն, այս դեպքում նրանց շուկա չեյին թողնում վաճառանոցային վորոշված ժամերի անցնելուց հետո, և այսպիսով նրանք կարող եյին գնել այնպիսի ապրանքներ ու պարեն միայն, վորոնք մնացել եյին չվաճառված, ուստի և միջնադարյան քաղաքների մեծամասնության մեջ առևտրականների քանակն աննշան եր։ Աչքի ընկնող մեծությամբ առևտրական դասակարգը կարողացավ կազմվել ներմուծվող ապրանքների առևտրի խոշոր կենտրոններում միայն, ամենից առաջ Իտալիայի ծովափնյա հանրապետություններում ու Հանզայի դաշնակցության քաղաքներում, վորի ձեռքում եր կենտրոնացած հյուսիսային առևտուրն ամբողջ։ Նույն այս քաղաքներում եր գլխավորապես, վոր առանձնապես զարգացավ թե՛ փոխանակության դրամական ձևն ու թե բուն իսկ դրամի առևտուրը։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՌԱՅՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. *ՔԱՂԱՔԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։* Քաղաքն իբրև տնտեսական կյանքի կենտրոն յեթե բոլորովին չփոխարինեց եւ կալվածքին, գոնե յետ մղեց յերկրորդ տեղը։ Թեև կալվածային կազմակերպությունը պահպանվեց եւ, բայց այն կորցրեց վոչ միայն իր բացառիկ նշանակությունն, այլև իր սկզբնական զուտ բնատնտեսական բնույթը։ Կալվածային տնտեսությունն արդեն չէր բավարարում այլևս հողատիրոջ ու սրանից կախումն ունեցող ազգաբնակության բոլոր կարիքները։ Գյուղացիներն ավելի ու ավելի հաճախ են հանդես գալիս քաղաքային շուկաներում իրենց արդյունքների առաջարկով. կալվածքն ինքն իսկ սերտ է կապվում քաղաքին և սկսում է ձգտել դեպի վերջինս՝ բոլոր անհրաժեշտ տնտեսական առարկաները քաղաքի շուկայում ձեռք բերելով։ Ընդսմին կալվածային արհեստը կորցնում է իր նշանակությունը և կամաց-կամաց չքանում է. կալվածատիրոջ համար ավելի ձեռնտու յէ գնելով այս կամ այն տնտեսական առարկաները ձեռք բերելը, քան այս նպատակով հատուկ արհեստավորներ պահելը, վորոնց զբաղմունքի գործադրությանը դիմելու կարիք է լինում համեմատաբար սակավաթիվ դեպքերում։

Քաղաքի ու գյուղի միջև ծագող փոխանակության նշանակությունն ամենից առաջ հենց այն բանի մեջ է կայանում, վոր արհեստավորների խումբը ջոկվելով, գլխավորապես իբրև քաղաքային ազգաբնակություն է հանդես գալիս և իբրև այսպիսի խումբ հակադրվում է յերկրագործական աշխատանքով պարապող գյուղական ազգաբնակությանը։ Վորքան ավելի բարձր է գյուղատնտեսական տեխնիկայի զարգացումն, այս զարգացման շնորհիվ վորքան ավելի մեծաքանակ հավելյալ արդյունք է առաջ գալիս, վոր կարող եր իբրև փոխանակության առարկա ծառայել, այնքան ավելի մեծ նշանակություն է ստանում արհեստը, և այնքան ավելի սուր յերևան է գալիս քաղաքային արհեստավոր ազգաբնակության առանձնացումը գյուղական յերկրագործ ազգաբնակությունից։ Այսպիսով աշխատանքի բաժանումը կատարվում է արդեն վոչ թե միաձույլ տնտեսական ամբողջության մեջ, լինի այս տոհմային գյուղա-

կան համայնք, թե փակ տնտեսությամբ կալվածք, այլ հասցնում է մի վիճակի, յերբ զատ ու առանձնացած տնտեսական խմբեր են կազմըվում։ Սրա համապատասխան եւ այս տնտեսական խմբերի պատրաստած արդյունքների բաշխումն արդեն չի կարող այլևս անմիջորեն կատարվել, այլ պետք է լինի բացառապես առևտրական փոխանակության միջոցով։

Այս ժամանակից սկսած՝ բնատնտեսությունը, վոր զարգացման նախընթաց աստիճանների ամբողջ տնտեսական կյանքի հիմքն եր կազմում, սկսում է քայքայվել և տեղի յե տալիս փոխանակային, դըրամական տնտեսությանը, վորն անհրաժեշտ արդյունքների մեծ մասը ձեռք է բերում շուկայում փոխանակության միջոցով։ Այսպիսի փոխանակային տնտեսության զուտ տիպն սկզբում կազմվում է քաղաքում, իսկ այնուհետև, քանի գյուղը ձգվում, մտնում է առևտրական շրջանառության մեջ, այն չափով եւ գյուղական կյանքն ևս շարունակ ավելի ու ավելի յենթարկվում է փոխանակային տնտեսության ազդեցությանը։

Յեթե հիմա գյուղն ու քաղաքը դեռ միաձույլ տնտեսական ամբողջություն չեն եւ կազմում, այնուամենայնիվ նրանք սերտ կապված են իրարուց փոխադարձ փոխանակության անհրաժեշտությամբ։ Ընդսմին մեծապես ընդարձակվում են չափերն այն տնտեսական յերկրամասի, վոր շահերի ընդհանրությամբ միացած ազգաբնակություն ուներ։ Փակ կալվածային տնտեսությունը, վոր ամփոփում եր մի կալվածք ու մեծ մասամբ սրան կից մեկ գյուղական համայնք ու վոչ ավելի, յետ է մղվում, և նրա տեղն այժմս գրավում է քաղաքային ռայոնական տնտեսությունը, վոր ընդգրկում է քաղաքն ու սրան հարամերձ բոլոր գյուղական համայնքները։ Թեև քաղաքն իրան հարող գյուղական բնակչության հետ միասին մեկ միաձույլ տնտեսական ամբողջություն չեր, սակայն և այնպես հարևան նույնպիսի ռայոնական քաղաքային տնտեսություններից զատված մի փակ խումբ եր կազմում։ Հաղորդակցության հարմար ճանապարհների բացակայության, այլև գյուղացու սակավ շարժունության շնորհիվ մեծ չեյին կարող լինել չափերն այն յերկրաշրջանի (округ), վորի պետքերին գոհացում եր տալիս յուրաքանչյուր առանձին քաղաք։ Ամբողջ միջնադարյան Յեվրոպայի տարածության վրա հավասարաչափ սփռված եյին արհեստավորական փոքրիկ քաղաքներ։ Հարավային ու արևմտյան Յեվրոպայում նրանց միջև ընկած տարածությունը 4—5 ժամվա ճանապարհից ավելի չեր լինում, իսկ Հյուսիսում ու Արևելքում վոչ ավելի 6—8 ժամվանից։ Այսպիսով տվյալ քաղաքի ռայոնին պատկանող ամենահեռավոր գյուղից կարելի յեր քաղաք գալ ու վերադառնալ մի օրվա ընթացքում։ Ինչպես արդեն ասել ենք, Ռուսաստանում գերակշռում

էր շրջիկ արհեստը։ Քաղաքային արհեստն, ընդհակառակն, այնպիսի զարգացման չհասավ, ինչպես Արևելքում, այս պատճառով էլ ռայոնական տնտեսությունն միայն բացառիկ դեպքերում էր առաջանում և շատ ավելի թույլ չափով էր արտահայտված։

2. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ։—ՊԱՏՐԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՆ։ Քաղաքներն առաջացել են գյուղի բնույթ ունեցող շենանոցներից։ Ահա այս էր պատճառը, որ նրանց սկզբնական ներքին կազմակերպությունն էլ կաղապարվում էր գյուղական համայնքի տիպի համաձայն։ Համայնական կարգերի մնացորդները պահպանվում էին դեռևս երկար ժամանակ նաև հետագայում։ Քաղաքային ազգաբնակության նշանավոր մասն զբաղվում էր երկրագործական աշխատանքով։ Բազմաթիվ քաղաքացիներ իրենց հողամասերն ունեին քաղաքի մոտիկ շրջակայքում, և հաճախ նույնիսկ քաղաքի կենտրոնական մասերում լսելի էին կալսելու ձայները կալերից։ Քաղաքամերձ անտառներն ու արոտները (ВЫГОН) մնում էին հասարակության տիրապետության ներքո, ինչպես բուն իսկ երկրագործական համայնքումն էր։ Այս պատճառով հողային սեփականությունը քաղաքում էլ էր կազմում սկզբնապես սեփականության հիմնական տեսակը։ Քաղաքի հողատերերն ու սկզբնական բնիկները, գոնե քաղաքների գոյության առաջին շրջանում, սրանց բնակչության հիմնական կորիզն էին կազմում։ Հողամասերի տերը լինելով՝ բնիկները բոլոր նոր անհող վերաբնակիչների վրա նայում էին ինչպես իրավապակաս (неполноправный) անդամների վրա, վորոնք համայնքից դուրս էին գտնվում և զանազան հասարակական խնդիրներ վճռելու ժամանակ ձայնի իրավունք չունեին։ Այսպիսով հողատերերը կազմում էին քաղաքային պատրիկությունը*)։ Քաղաքային պատրիկության այս հիմնական կորիզին հարում էին մինիստերիալները (տեղական սենյորից կախումն ունեցող ու զանազան պաշտոններ կատարող անհատները), վորոնք քաղաքի հողերից հողեր էին ստանում տիրապետելու։

*) Հենց այս անիրավահավասարությունը գլխավոր պատճառն էր այն կռվի, վոր տեղի յեր ունենում քաղաքային պատրիկությունը կազմող հին բնիկների ու նորեկների միջև։ Այսպիսի կռիվ նկատում ենք նմանապես նաև հնում, Հունաստանում ու գլխավորապես՝ Հռոմում. սակայն մինչդեռ հնում այս կռիվը վոչ այնքան մի պայքար էր, վոր մղում էր արհեստավոր ազգաբնակությունն իր իրավունքների համար (անտիկ քաղաքներում արհեստավորներն ընդհանրապես սակավաթիվ էին, նրանց փոխարինում էին ստրուկները), վորքան ընդհարումներ հասարակական հողերի բաժանման խնդրի առթիվ (ager publicus). միջնադարյան քաղաքներում հին ու նոր քաղաքացիների կռիվը միաժամանակ մի կռիվ էր հասարակական տարբեր դասակարգերի միջև, կռիվ, վոր մղում էին մի կողմից հողատեր արիստոկրատիան ու քաղաքային պատրիկությունն ու մյուս կողմից յեկվոր, վոչ յերկրագործ, գլխավորապես արհեստավոր ազգաբնակությունը։

Սակայն հողային սեփականությունը քաղաքում բոլորովին այլ նշանակություն էր ստանում, քան գյուղական վայրերում։ Այստեղ հողային սեփականությունը խոշոր հողատերերի ձեռքում ծառայում էր իբրև միջոց յերկրագործ ճորտ ազգաբնակությունը շահագործելու և սրա հավելյալ աշխատանքի արդյունքները յուրացնելու համար։ Իսկ քաղաքում հողային սեփականության տիրապետությունը պատրիկներին հնարավորություն էր տալիս յեկվոր արհեստավոր ազգաբնակության արդյունքի մի մասը յուրացնելու այն բանի փոխարեն, վոր վերջիններս օգտվում էին քաղաքի բնակաշեն (застроенный) հողամասերից, և այս վճարը, քանի աճում էր քաղաքային բնակչությունն, այնքան ավելի բարձր ու մեծաքանակ էր դառնում։ Յեթե գյուղական սենյորների ձեռքում հավաքված հավելյալ արդյունքը նրանք գործադրում էին գլխավորապես պերճանքի առարկա կազմող ու ներմուծվող ապրանք ձեռք բերելու համար, ապա այն ռենտան (ամեն մի անաշխատ հասույթ կոչվում է ռենտա), վոր ստանում էին անմիջորեն առևտրական կենտրոններում ապրող քաղաքային պատրիկները, սրանց ձեռքում ամենից առաջ առևտրային ու վաշխառուական կապիտալ էր դառնում։ Նրանց աչքում հողը ռենտա ստանալու միակ աղբյուրն էր, իսկ ռենտան իր հերթին՝ մի յելակետ էր առևտրային ու վաշխառուական գործողությունների միջոցով հարստությունն էլ ավելի մեծացնելու համար*)։ Յեթե գյուղական սենյորներն առևտրային փոխանակության միջոցին գլխավորապես գնորդների դերում են հանդես գալիս, ապա քաղաքային առևտրի զարգացման հետ քաղաքային պատրիկները փոխակերպվում էին գլխավորապես առևտրականների։ Հենց նրանք էլ կազմում էին սկզբնական հիմնական կորիզն առևտրային դասակարգի, վորին հետագայում միայն միացան բնակչության մյուս դասակարգերից ու խավերից յելած առանձին պրոֆեսիոնալ առևտրականները։ Ամենուրեք, վորտեղ միայն զարգացել է առևտուրը, նկատելի յե քաղաքային հողատերերի քաղաքային պատ-

*) Սակայն հողային ռենտան կապիտալների սկզբնական կազմության միակ յեղանակը չեր։ Ինչպես արդեն գիտենք, առևտուրն իր ծագման շրջանում մեծ մասամբ սերտ կապ ուներ ակնհայտ ծովահենության ու ավազակության հետ։ Հետագայում էլ Յեվրոպայի առևտրականները հեռավոր շուկաներ այցելելիս ամեն մի հարմար դեպքում բռնի յեղանակների էին դիմում իրենց հասույթները մեծացնելու համար, լինեն այս զրաված յերկիրների հարստությունների անմիջորեն հափշտակելու միջոցով (Արևելքում ու Բյուզանդիայում խաչակրաց առաջին ու չորրորդ արշավանքների ժամանակ), կամ թե տեղական ազգաբնակությունը կազմակերպված ու շատ կամ քիչ ակնհայտ շահագործելու միջոցով։

րիկության՝ առևտրական դասակարգ դառնալու այսպիսի փոխակերպությունը։ Հին Հունաստանում արիստոկրատ ընտանիքների անդամներն առաջին առևտրականներն եյին։ Հռոմում միևնույն դերում հանդես եյին գալիս սկզբնապես հին պատրիկ տոհմերը, իսկ Իտալիայի առևտրային հանրապետություններում, ինչպես և միջնադարյան Յեվրոպայի մյուս վաճառաշահ քաղաքներում՝ քաղաքային ազնվականության ներկայացուցիչները—նոբիլները։ Հին Կիևում առաջին վաճառականներն իշխաններն եյին, սրանց մերձավոր սեպուհներն եյին ու համամարտիկներն եյին (бояре и дружинники)։ Նովգորոդում առևտրական դասակարգը կազմում եյին ամենից առաջ բոյարինները և միայն յերկրորդ տեղը բռնում եր վոչ հողատեր, բուն իսկ վաճառական՝ ունևոր մարդկանց դասակարգը։

Յերբ քաղաքային բնիկ ազգաբնակությունը փոխակերպվում եր և քաղաքային պատրիկությանը պատկանած հողերը նոր նշանակություն եյին ստանում, սրանց հետ կապ ունենալով, բնականաբար, հին համայնական կարգերն էլ կորցնում եյին իրենց նշանակությունը։ Նախկին համայնքի կողքին կազմված ե մի նոր կազմակերպություն, վոր աստիճանաբար բոլորովին դուրս ե մղում այն. այս նոր կազմակերպությունն այսպես կոչված վաճառականների գիլդիան եր կամ միությունը։ Սկզբում գիլդիան ընդգրկում եր բոլոր պատրիկ տոհմերը, վորոնց հետ նրա մեջ մտնել թույլատրում եյին նմանապես ավելի ունևոր այն արհեստավորներին էլ, վորոնք քաղաքային սեփական հողամասերի տեր եյին։ Միայն հետագայում, յերբ մի կողմից առևտուրն ե զարգանում և մյուս կողմից արհեստավորներն էլ ջոկվելով հատուկ միություններ են կազմում, գիլդիան վերջնականապես դառնում ե քաղաքային ազգաբնակության առևտրական տարրերի հատուկ միություն, վաճառականների գիլդիա, բառի բուն իմաստով։ Յեթե սկզբբում գիլդիան ամենից առաջ փոխադարձ ոգնության մի ընկերություն եր, վոր ոժանդակում եր անդամներին անբախտության կամ տնանկության դեպքում այն գումարներից, վորոնք կազմում եյին անդամավճարներից, ապա հետագայում գիլդիայի ամենագլխավոր նպատակը կազմում ե այն, վոր իր անդամների համար ապահովի առևտրի մենաշնորհը (բացառիկ իրավունքը)։ Միայն տեղական գիլդիայի անդամները կարող եյին քաղաքում կամ նրա շրջակայքում առևտուր անել։ Հարևան կալվածատերերն, ինչպես և օտարաքաղաքացի վաճառականները, վորպեսզի տվյալ քաղաքի առևտրին մասնակցելու իրավունք ստանային, պետք ե տեղական գիլդիայի անդամ դառնային։ Դեպի մենաշնորհը յեղած այս ձգտումը լիովին հասկանալի յե թվում, յեթե նկատի ունենք առևտրի դեռևս թույլ զարգացումն ու սահմանափակ չափերը։ Առևտուրը սահմանափակվում եր գլխավորապես արևելյան

ներմուծվող ապրանքներով (արհեստավորներն իրենց արդյունքներն իրենք եյին ծախում)։

3. ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Վաճառականների գիլդիան պատրիկ տոհմերի հետ միատեղ կազմում են քաղաքային արիստոկրատիան։ Քաղաքի մնացած արհեստավոր ազգաբնակությունը խմբվում, շաղկապվում ե իր միություններում—համքարությունների մեջ։ Իտալիայում համքարությունները ծագում են արդեն 10-11-րդ դարում, Ֆրանսիայում՝ 11-12, Անգլիայում՝ 12-13, Գերմանիայում՝ 12-14-րդ դարերում։ Յերբ զարգանում եր արհեստը, և քաղաքային կյանքում աճում եր նրա նշանակությունը, սրա հետ միասին աճում եր նաև համքարությունների նշանակությունը։ Համքարությունները սկսում են ձգտել քաղաքային ինքնավարության մեջ մասնակցություն ունենալուն, և քաղաքային պատրիկ արիստոկրատիան վերջիվերջո հարկադրված ե լինում զիջելու։ Շարունակ նորանոր համքարություններ նրա հետ իշխանության գլուխ են անցնում հանձինս իրենց ավագների կամ ընտրովի ներկայացուցիչների։

Ինչ վոր եր գյուղացի յերկրագործների համար համայնքը կամ քաղաքի առևտրական ազգաբնակության համար՝ գիլդիան, նույնն եյին արհեստավորների համար իրենց միությունները—համքարությունները, այսինքն այն հասարակական միջավայրը, վորից դուրս այն ժամանակ չեր կարող դեռ մարդ գոյություն ունենալ։ Ուստի և համքարային հիմնարկներն ու կարգադրությունները ընդգրկում եյին արհեստավորի ամբողջ կյանքը և վոչ թե նրա արտադրողական գործունեյությունը միայն։ Յուրաքանչյուր համքարություն վորևե սրբի համարում եր իր հատուկ հովանավորը, հաճախ իր տաճարներն ու տոներն ուներ։ Յեկեղեցական ու այլ ամեն յերթերի ու թափորների ժամանակ համքարության անդամներն առանձին խմբեր եյին կազմում։ Պաշտոնատար անձիք հետևում եյին համքարությունների անդամների ամբողջ վարք ու բարքին ընդհանրապես և քննում ու դատում եյին նրանց միջև ծագած վեճերն ու ընդհարումները։ Համքարությունների անդամների ամբողջ կյանքն անցնում եր մշտական փոխադարձ հաղորդակցության ու շփման մեջ։ Մեկ մասնագիտության պատկանող արհեստավորները բնակություն եյին հաստատում կից փողոցի վրա շարքով, հաճախ հավաքվում եյին ընդհանուր ժողովների ու խնջույքների, մասնակցում եյին մեռած ընկերների թաղմանը։ Ռազմական գործողությունների ժամանակ համքարությունները քաղաքային յերկրապահ բանակի առանձին զորախմբերն եյին կազմում։ Վերջապես համքարությունները նաև քաղաքական կազմակերպություններ եյին, վորոնք քաղաքային խորհուրդներն եյին առաքում իրենց ներկայացուցիչներին։

Ջնայած համքարությունների այսպիսի ընդարձակ նշանակու-
թյանը, սրանց կյանքում էլ, ինչպես և մեր գննված բոլոր հասարա-
կական կազմակերպությունների մեջ, առաջին տեղը, սակայն, բռնում
էին նյութական շահերը։ Ջուր չէր, որ նրանք բացառապես արհես-
տավորներին էին միացնում, և յուրաքանչյուր առանձին համքարու-
թյուն շաղկապում էր վորևե մեկ մասնագիտության արհեստավորնե-
րի։ Արհեստն ամենից առաջ մի մանր արտադրություն է, վորի ընթաց-
քում ձեռնարկության տերը միաժամանակ նաև բուն իսկ արտադրողն
է։ Արհեստավորն ինքն ունի արտադրության համար անհրաժեշտ սե-
փական միջոցներ, ինքն անմիջորեն մասնակցում է արտադրությանն
ու պատրաստի արդյունքների վաճառքին։ Նրա համար արհեստը վոչ
թե հասույթ կորզելու միջոց է, այլ ամենից առաջ ամենօրյա պահանջ-
ները գոհացնելու միջոց։ Նա միայն այնքան է աշխատում, վորքան
այս անհրաժեշտ է մի կարգին, վայելուչ ապրուստ ապահովելու հա-
մար։ Նրա աշխատանքն ամենից առաջ մի աշխատանք է, վոր ապա-
հովում է նրա գոյությունն, այսինքն անհրաժեշտ աշխատանք է։ Նրա
արտադրողական գործունեության մեջ հավելյալ աշխատանքը կամ
լիովին բացակայում է, կամ թե նշանավոր տեղ չի գրավում։ Արհեստի
այս բնույթով ու նրա՝ արհեստավորի կյանքում ունեցած այս նշա-
նակությամբ էին վորոշվում թե այն խնդիրներն ու թե այն նպա-
տակները, վոր իրենց առաջադրում էին արհեստավորական համքա-
րային կազմակերպությունները։

Յուրաքանչյուր առանձին արհեստավոր նյութապես դեռևս չա-
փազանց քիչ էր ապահովված, չափազանց թույլ էր, այնպես վոր չէր
կարող հույս դնել ու հենվել սեփական ույժերի վրա։ Ամեն մի ան-
նըպաստ պատահականություն, ամեն մի չնչին անբախտություն կարող
էր նրան գծից դուրս ձգել ու ամեն ինչից զրկել։ Համքարությունը
նրան ազատություն ու անկախություն էր տալիս, անկախ վարպետի
վիճակ էր ապահովում, զանազան անհրաժեշտ պնումների ժամանակ
օգնության էր գալիս։ Այսպես, համքարությունը կազմակերպում էր
հում նյութի միատեղ, խմբական գնումն, պահում էր ընդհանուր համ-
քարային գործատներ, վորոնց կազմակերպումն առանձին վարպետների
ույժից վեր էր լինում, օրինակ, ներկարարանոցներ։ Սակայն համքա-
րությունների ամենակարևոր խնդիրներից մեկն իրենց անդամների
պատրաստած արդյունքների վաճառքն ապահովելու հոգսն է։ Սկզ-
բում, յերբ արհեստավորների թիվը մեծ չէր, նրանք հեշտությամբ
էին գլուխ բերում իրենց արդյունքների վաճառքը։ Բայց վորքան
ավելի յեր ընդարձակվում քաղաքային վաճառանոցային փոխանա-
կությունը, վորքան ավելի յեր մեծանում արհեստավորների թիվը,
հաղորդակցության ճանապարհների զարգանալով վորքան ավելի ուժ-

գին էր զգալի դառնում այլաքաղաքային արհեստի մրցումն, այնքան
ավելի էական նշանակություն էր ստանում առանձին արհեստավոր-
ների համար արդյունքների վաճառքի խնդիրը։ Իրենց աշխատանքով
ապրող արհեստավորների համար արդյունքների վաճառքը լոկ տնտե-
սական ավելցուկների վաճառք չէր արդեն, ինչպես էր ընտանեկան
համայնքի կամ կալվածքի տնտեսության մեջ, այլ ապրուստի անհրա-
ժեշտագույն պայմանն էր, և համքարությունների առաջին հիմնական
խնդիրը հենց այս էր,—իրենց անդամների համար վաճառքի հնարա-
վորությունն ապահովել։ Միջնադարի վերջում գրված մի հիշատակա-
րանի մեջ ասված է. «Մեր նախահայրերը հիմար չեյին, նրանք ար-
հեստները հնարել են, վոր ամեն մարդ կարողանա հանապազորդ հացը
հայթայթել, և վոչ վոք չպետք է միջամտի ուրիշի արհեստին։ Այս
կերպ յուրաքանչյուր մարդ իր սնունդը կըգտնի և իր կարիքները կը-
բավարի»։

«Վոչ վոք չպետք է միջամտի ուրիշի արհեստին»,—այս միքանի
բառերի իմաստն է կազմում համարյա բոլոր համքարային կանոնա-
դրությունների ու կարգադրությունների բովանդակությունը. սրանց
մեջ է ամփոփված ամբողջ համքարային կարգերի իմաստն ու նշանա-
կությունը։ Մի քաղաքի արհեստավորը չպետք է իր արդյունքները
վաճառի ուրիշ քաղաքի սահմաններում։ Մի համքարության արհես-
տավորը չպետք է պատրաստի այն արդյունքներից, վորոնք մի ուրիշ
համքարության մասնագիտությունն են կազմում։ Վերջապես յուրա-
քանչյուր առանձին համքարության մեջ նրա անդամները պետք է հա-
վասար պայմաններում դրված լինեն, և վոչ վոք ուրիշների նկատմամբ
վորևե առավելություն չպետք է ունենա։ Ամենից առաջ հենց այս նը-
պատակներն էր հետապնդում ամբողջ համքարային օրենսդրությունը,
վորն այս պատճառով արգելող ու սահմանափակող միջոցների մի շարքի
յեր վերածվում։ Քաղաքային խորհուրդների վճիռներում, համքարու-
թյունների ստատուտներում, կանոնադրությունների ու կարգադրու-
թյունների մեջ սիստեմատիկ կերպով շեշտվում է, առաջ է մղվում այ-
լաքաղաքային արդյունքների ներմուծման արգելումը։ Առևտրային
միջնորդությունը նույնպես արգելվում էր. բոլոր իրերն ու արդյունք-
ները պետք է հայթայթեյին առաջին ձեռքերից, այսինքն բուն իսկ
արտադրողներից։

Սակայն քաղաքային արհեստավորը միայն դրսից յեկող ամեն
տեսակի մրցակցությունից (соперничество) ու մրցումից (конкур-
ренция) չէր ուզում ապահովել իրեն։ Քաղաքում էլ վոչ վոք չպետք է
պարապեր մի արհեստով, յեթե չէր պատկանում վորևե համքարու-
թյան և չէր յենթարկվում նրա կարգադրություններին։ Բոլոր համ-
քարային կանոնադրությունների ընդհանուր պահանջն է՝ համքարու-

թյունների պարտադիր անդամագրություն (Zunftzwang), և յեթե այս կետը նրանց մեջ հատկապես չի շեշտվում, ապա լոկ այն պատճառով, վոր ինքնըստինքյան հասկանալի յեր իբրև սահմանված սովորույթի համաձայն մի բան։ «Վոչ վոքի կողմից ուրիշի արհեստին չմիջամտելու» հոգսն ամենից առաջ պատճառ եր լինում այն բանի, վոր արհեստը ծայրահեղ մասնագիտացման եր յենթարկվում, ստորաբաժանվում եր մանր ճյուղերի, և համքարությունների միջև էլ մշտական ընդհարումներ եյին պատահում։ Վորտեղ վոր մի մասնագիտության բազմաթիվ արհեստավորներ եյին կուտակվում մի վայրում, այնտեղ սկզբում միաձույլ արհեստը բաժանվում եր միքանի հատուկ ճյուղերի, ընդվորում նորածագ համքարություններից յուրաքանչյուրը յեռանդագին առանձնանում ու անջատվում եր մյուսներից։ Այսպես, Պարիզում կային սղկարների, կոշկակարների, մաշակարների, այլ և սպանական կաշուց կոշիկներ պատրաստողների առանձին-առանձին համքարություններ։ Նյուրնբերգում դեռևս 13-րդ դարում իրարուց տարբերվում եյին դանակներ, ածելիներ, գերանդիներ, յեղաններ, շղթաներ շինող վարպետները. զինագործ դարբիններն իրենց հերթին բաժանվում եյին զրահագործների, ողազրահ պատրաստողների, սաղավարտներ, սրերի շեղբեր շինող վարպետների ու պատրաստի թրեր սարքողների և այլն։ Նույնպիսի մասնագիտացում գոյություն ուներ նաև Անգլիայում։ Աղեղ շինող արհեստավորները չպետք է նետեր պատրաստեյին, մի բան, վոր ուրիշ համքարության մասնագիտությունն եր կազմում։ Մի հատուկ համքարություն աղեղների լարեր եր շինում։ Յերբ արհեստներն այսպես մանր ճյուղերի յեյին բաժանվում, զարմանալի չե այլևս, վոր համքարությունների թիվն առանձին քաղաքներում հասնում եր տասնյակների ու նույնիսկ հարյուրյակների. Պարիզում 350 համքարություն կար, Մայնի Ֆրանկֆուրտում՝ մինչև 100, Վիեննայում՝ մինչև 80, Լոնդոնում՝ 60, Նյուրնբերգում ու Լյուբեկում՝ 50-ական։

Իրար հետ մոտիկ կապ ունեցող համքարություններն, ինչպես արդեն ասացինք, ձգտում եյին արտադրության ասպարեզը բաժանել, առանձին սահմաններ վորոշելով։ Այս հողի վրա նրանց միջև մշտական ընդհարումներ եյին պատահում։ Յերկաթագործների համքարությունը ձգտում եր արգելել տալու, վոր լծասարք շինողներն ու թամբագործները գանգանավանդներ (լգամ, удила), սանձեր, ձիախթաններ, ասպանդակներ չշինեն կամ չնորոգեն։ Ներկարարների համքարությունը պնդում է, վոր մահուդագործներն իրավունք չունեն մահուդ ներկելու։ Մահուդագործները, վորոնք կտորին վերջնականապես մահուդի տեսք եյին տալիս, իրենց հերթին պաշտպանում են իրենց իրավունքները ջուլհակների հանդեպ։ Առանձնապես հաճախադեպ եյին ընդհարումներն այն արհեստավորների, վորոնք հագուստեղենի զանազան

պարագաներ եյին արտադրում, ու լաթավաճառների միջև, վորոնք հագած ու մաշած իրերին նոր կերպարանք եյին տալիս և ծախում նորերի տեղ։ Լոնդոնում կար կոշիկ կարկատողների առանձին համքարություն, վորը կոշիկ կարելու իր բացառիկ իրավունքը պաշտպանում եր կոշկակարների համքարության ամեն վոտնձգություններից։

Իր անդամների շահերն արտաքին ամեն վտանգներից ու փորձերից պաշտպանելով՝ համքարությունը միաժամանակ ձգտում եր միանման պայմանների մեջ դնելու նրանց՝ ապահովելով բոլորին արդյունքների համահավասար վաճառք։ Ճշտորեն սահմանում եյին հում նյութը գնելու ժամանակն ու տեղն, այլև այն քանակը, վորից շատ չեր կարող ձեռք բերել առանձին վարպետը. մի քանի համքարություններում հում նյութի գնումը կատարվում եր խմբովին։ Արգելվում եր համքարակից ընկերոջ աշխատանքը, գործը խլելը։ Առանձին վարպետների արտադրության չափերը հավասարեցնելու նույն այս նպատակով վորոշում եյին բանվորական որվա տևողությունը (սովորաբար արևածագից մինչև արևմուտը), սահմանափակում եյին թիվը ձեռքի տակ յեղած բանվորների, աշկերտների ու վարպետացուների (подмастерье), վոր կարող եր պահել յուրաքանչյուր վարպետ, արգելում եյին ամեն մի աշխատանք կիրակի ու տոն որերին։ Չեր թույլատրվում բուն իսկ արդյունքների մեջ վոչ մի յուրահատկություն, վոչ մի շեղում նախորոշված կանոններից ու նմուշներից. մի վարպետի ձեռքի գործը պետք է լիովին նման լիներ մյուսի գործին։ Հատկապես ընտրված վերակացուները շրջում եյին արհեստանոցներն ու զննում եյին պատրաստած գործին, ընդվորում այն արդյունքները, վոր չեյին համապատասխանում նախորոշումներին, վոչնչացնում եյին։ Նույն ինքը գործը պետք է կատարվեր բոլորի աչքի առաջ։ Կոշկակարն իր կոշիկները կարում եր հենց այնտեղ, տեղնուտեղը, դազգյահի առաջ, դերձակը կարում եր սեղանի վրա, լուսամուտի մոտ նստած, վոսկերչի հալոցն ու դարբնի հնոցը զետեղված եյին լինում բուն իսկ խանութում։

Գործերի ընդհանուր ղեկավարությունն ու արտադրության վերահսկումը հանձնարարում եյին անդամների միջից ընտրված պաշտոնյաների—ավագներին, յերդվյալներին և այլն։ Սրանք եյին կառավարում համքարության գույքն ու գանձարկղը, համքար վարպետների ընդհանուր ժողովներ հրավիրում ու ղեկավարում, համքարության անդամներին դատելու իրավունք ունեյին, սրանց ներկայացուցիչներն եյին քաղաքային ինքնավարության մեջ և ռազմական գործողությունների ժամանակ առաջնորդում եյին համքարական զորախմբերը։ Արհեստանոցները շրջելու և արդյունքների լավորակության վրա հսկելու համար համքարությունների մեծամասնության մեջ հատուկ տեսուչներ ու գնահատողներ եյին ընտրվում (gardes, prud hommes)։

4. ԱՇԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ.—ԱՇԿԵՐՏԸ, ՎԱՐՊԵՏԱՑՈՒՆ, ՎԱՐՊԵՏԸ։ Գյուղացական տնտեսության մեջ կատարվող մանր-մունր գործերից տարբերվելով՝ արհեստավորի աշխատանքն ամենից առաջ աշխատանք է մի մասնագետի, վոր իր ամբողջ կյանքը նվիրել է մի վորոշ արհեստի։ Արհեստավորը հարմարվում է աշխատանքի իր հատուկ տեսակին, մշակում, ստեղծում է արտադրության իր հատուկ գործիքներն ու հնարները (приемы), ձեռք է բերում հմտություն, վորի շնորհիվ թե գործն է մեծ արագությամբ կատարվում և թե արդյունքների վորակը համեմատաբար ավելի բարձր է լինում։ Միևնույն ժամանակ հետին շրջանի մեքենային արդյունաբերությունից տարբերվելով՝ արհեստավորի աշխատանքը բացառապես ձեռքի աշխատանք է մնում։ Նրա գործադրած հնարները վոչ թե գիտական ճիշտ տվյալների վրա չեն հիմնվում, այլ մշակվում են բացառապես գործնականի միջոցով, վոչ թե գիտակցորեն, այլ շոշափելով, խարխափելով պատահական դիտողությունների ու փորձի միջոցով։ Այսպիսի պայմաններում նրա գործադրած հնարները չեն կարող աչքի ընկնել վոչ ճշտությամբ, վոչ կանոնավորությամբ, և գործի հաջողականությունն էլ կախված է լինում ամենից առաջ արհեստավորի անձնական ուշիմությունից, վարժությունից, աչքաչափի ուղիղ լինելուց։ Այսպիսով նախորոք սովորելը ու յերկարատև փորձն արհեստով պարապելու անհրաժեշտ նախորյա (предварительный) պայմանն են դառնում։ Յուրաքանչյուր արհեստավոր անխուսափելիորեն պետք է անցնի աշկերտության աստիճանով։ Բայց արհեստը սովորելուց հետո յել նա միշտ հնարավորություն չուներ միանգամից սեփական արհեստանոց բանալու և պետք է իբրև բանվոր կամ վարպետացու աշխատեր իր նախկին վարպետի կամ վորևէ այլ վարպետի արհեստանոցում։ Սեփական արհեստանոց սարքելուց հետո միայն նա վերջապես դառնում էր անկախ վարպետ և համքարության իրավազոր անդամ։ Այսպես հենց իրենք-իրենց ջոկվում ու առաջ եյին գալիս աշկերտի, վարպետացուի ու վարպետի աստիճանները։

Այս բաժանումը, վոր սկզբում լիովին բնական էր, հետագայում նոր ճնշումների ու սահմանափակումների աղբյուր դարձավ։ Համքարության մեջ իբրև անդամ մտնելն սկզբում ազատ էր. ընդունվում եյին բոլորը, վորոնք արհեստը սովորել եյին, տղամարդիկ ու կանայք անխտիր։ Միքանի համքարությունների մեջ կանայք նույնիսկ զանազան համքարային պաշտոնների եյին կոչվում ընտրությամբ։ Քանի դեռ արհեստավորների թիվը մեծ չէր, վորևէ սահմանափակում իմաստ չուներ։ Ժամանակի ընթացքում, յերբ մեծանում էր արհեստավորների թիվը, նույն չափով նրանց միջև աճում էր մրցումն էլ, այն ժամանակ այն արհեստավորները, վորոնք վարպետի կոչման եյին հասել, նոր մրցակիցներից վախենալու պատճառով սկսում եյին ձգտել այն բանին, վոր համքարության մեջ նոր անդամների ընդունելությունը դժվարացնեն։ Առանձնապես հետևում եյին, վոր համքարության մեջ չմտնեն անազատ մարդիկ, այսինքն քաղաքում ապաստան վորոնող ճորտերը։ Այնուհետև համքարության մեջ մտնել արգելվում եյին կանանց ապորինի զավակներին, ինչպես և այնպիսի ծնողներից ծագածներին, վորոնց զբաղմունքը վորև պատճառով անարգական էր համարվում։ Այս տեսակ պարապմունք հաշվում եյին դահճի, գերեզմանափորի, փողոց մաքրողի, աղացպանի, բաղնիսպանի, սափրիչի, հարկահավաքի, փողոցային նվագածուի, վշեգործվածքներ հյուսող ջուլհակի զբաղմունքները և այլն։

Միևնույն ժամանակ թե աշկերտությունը և թե վարպետացուի դրությունը դադարում եյին վարպետի կոչմանը հասնելու անհրաժեշտ լինելուց և դառնում նորանոր արգելքների առիթներ։ Աշկերտության ժամանակամիջոցը յերկարացնում եյին։ Գերմանիայում այն հավասար էր 4 տարվա, Իտալիայում՝ 5—7 տարվա, Անգլիայում՝ 7, Ֆրանսիայում՝ 6—8 տարվա, միքանի համքարությունների մեջ՝ նույնիսկ 12 տարվա։ Այնինչ սովորելու ժամանակամիջոցի այսպես յերկարատև լինելն ամենևին չէր բխում անհրաժեշտությունից։ Մետաղալարերի համքարության կանոնադրությունը պահանջում էր, վոր աշկերտները սովորեն 10 տարի, թեև մետաղալարային արհեստը համարվում էր ամենահեշտ արհեստներից մեկը։ Սովորելու ժամանակամիջոցը կրճատվում էր, յեթե աշկերտը կարողանում էր վարպետին վորոշ դրամական գումար վճարել։ Սովորելու ժամանակամիջոցը յերկարացնելուն զուգընթաց վատանում էր աշկերտի դրությունն էլ։ Աշկերտը չէր կարող թողնել, հեռանալ վարպետից, յեթե նույնիսկ ամենահարգելի պատճառներ էլ լինեյին։ Յեթե փախչում էր, նրան փնտրում, գտնում ու յետ եյին բերում։ Սկզբում աշկերտը սովորելը վերջացնելուց հետո կարող էր անմիջապես վարպետ դառնալ, այժմ նա պարտական էր տարիների վորոշ նվազագույն քանակի ընթացքում բանել իբրև վարպետացու, այս ժամանակամիջոցի վորոշ մասում աշխատելով իր նախկին սովորեցնողի մոտ։ 14-րդ դարից սկսած, մանավանդ Գերմանիայում, մի սովորույթ տարածվեց, վոր վարպետացուները արհեստում կատարելագործվելու նպատակով շրջում եյին յերկրի մեջ։ Սկզբում վարպետացուի դրությունը լոկ մի աստիճան էր վարպետի կոչմանն անցնելու համար և շատ քիչ բանով էր տարբերվում վարպետի դրությունից։ Նրա աշխատածը հաճախ կազմում էր վարպետի հասույթների կեսն ու նույնիսկ ավելին։ Ժամանակի ընթացքում վարպետի կոչման հասնելը շարունակ ավելի ու ավելի դժվարացնում եյին, և սրա հետ միաժամանակ վարպետացուի դրությունը դեպի վատն էր փոխվում։ Ամենից առաջ միքանի համքարություններում դեռ շատ վաղ պահանջում են, վոր վարպետացուն այսպես կոչված մի «փորձնական աշխա-

տանք» կատարև (chef-doeuvre)։ Վարպետ դառնալու համար վարպետացուն պետք է ապացուցեր իր արհեստին հմտացած լինելը վորոշ աշխատանք գլուխ բերելով։ Ընդմին առաջադրած պահանջներն ավելի ու ավելի դժվարին եյին դառնում։ Դարբինը պետք է պայտ շիներ առանց վոտի չափսն առնելու՝ ձիու վրա մի հայացք ձգելով միայն։ Հաճախ փորձնական աշխատանքի կատարումը կապված եր լինում խոշոր ծախսերի հետ։ Այսպես՝ Դանցիգ քաղաքի դերձակները պետքե պատրաստեյին քահանայական զգեստավորման պարագաները լրիվ, աբեղայի փարաջա, ասպետի ճանապարհորդական քղամիդ ու նրա ձիու համար ծածկոց (ջուլ), վերջապես տղամարդու և կանանց ամեն տեսակի հագուստ այն ժամանակվա քաղաքային տարազի համաձայն, և այս բոլորն իր հաշվին։ Հաջող քննություն տվողը բացի վերոհիշյալից պարտավորվում եր բարձր անդամավճար տալու համքարության մեջ մտնելու համար և թանկ նստող հյուրասիրություն սարքելու վարպետների համար։ Արդեն այս բոլոր ծախսերը յենթադրում եյին, վոր թեկնածուն դրամական խոշոր միջոցներ ունի, բայց բազմաթիվ համքարային կանոնադրություններ, մանավանդ վերջին ժամանակներում յեղածները, սրանով էլ չգոհանալով՝ հատուկ պահանջ եյին մտցնում, թե վարպետի կոչում ստանալու համար պետք է վորոշ գույք ունենալ։ Մեծ մասամբ արգելքներ հարուցում եյին նրանց դեմ, վորոնք համքարության նկատմամբ կողմնակի անձ եյին։ Վարպետների վորդիներն իրենք վարպետ եյին դառնում առաջվա նման աշկերտությունը վերջացնելուց անմիջապես հետո, ընդվորում նրանց վերաբերմամբ վոչ մի պահանջ չեյին առաջադրում և կամ այս պահանջներն իրապես անկատար եյին մնում։

Վորքան աճում եյին վարպետի կոչման հասնելու ճանապարհին հարուցված դժվարությունները, նույն չափով էլ համքարային կազմակերպություններն ավելի ու ավելի եյին վերածվում մենաշնորհված փակ հիմնարկների, վորոնք մատչելի եյին սահմանափակ թվով մարդկանց միայն։ Սակայն վորքան ավելի յեր դժվարանում վարպետի կոչման հասնելը, այնքան ավելի յեր մեծանում թիվը վարպետացուների, վորոնք կորցրել եյին յերբևիցե վարպետ դառնալու հույսը։ Սրա հետ միաժամանակ նրանց մեծամասնությունն իսկապես վարձու բանվոր եր դառնում։ Շատ քաղաքներում հատկապես սահմանված հավաքատեղիներ կային, վորտեղ այսպիսի վարձու բանվորներն սպասում եյին վարձողներին։ Միաժամանակ մեծ չափով վատանում եյին վարպետացուների աշխատանքի պայմաններն էլ։ Սրանք պարտական եյին հաճախ օրական 14-ական ու նույնիսկ ավելի ժամ աշխատելու և միևնույն ժամանակ սահմանված վարձից ավելի ստանալ չեյին կարող։ Այն վարպետները, վորոնք ավելի եյին վճարում, պատասխանատվության եյին յենթարկվում։

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ

1. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՁԵՎԸ։—ՄԵՏԱՂԵ ԴՐԱՄՆԵՐԸ։ Ճորտ արհեստավորները զանազան մանր գործեր կատարում եյին հողատիրոջ պահանջով, գյուղական համայնքի արհեստավորներն՝ իրենց համայնքի համայնակիցների պատվերի համաձայն։ Թե առաջիններն ու թե վերջիններն արհեստով զբաղվելը հաճախ միացնում եյին յերկրագործությանը։ Իսկ քաղաքային արհեստավորը վոչ միայն պատվերով է աշխատում, այլև բանում է՝ արդյունքները քաղաքային շուկայում վաճառելու նպատակով. միաժամանակ նա բացառապես իր արհեստով է պարապում։ Այսպիսով նրա տնտեսությունը կորցնում է բնատնտեսության բնույթը և բացառապես փոխանակային տնտեսություն է դառնում։ Արհեստավորը պետք է իր արդյունքները ծախե նախապես, վորպեսզի վաճառքից ստացածով կարողանա անհրաժեշտ տնտեսական առարկաներն ու արդյունքները ձեռք բերել։ Այժմ արդեն շուկայում իբրև ապրանք հանդես են գալիս վոչ թե միայն պատահական տնտեսական ավելցուկները կամ պերճանքի առարկաներն, այլև ամենաբազմազան արդյունքներ ու իրեր։ Փոխանակությունն աստիճանաբար ընդգրկում է բոլոր տնտեսական առարկաները։ Բայց վորքան ավելի բազմազան են դառնում փոխանակվող արդյունքներն, այնքան ավելի անբավարար է լինում անմիջական փոխանակային առևտուրը, վորն սկզբում կիրարկվում է քաղաքային շուկաներում, այնքան ավելի համառ կերպով է զգացվում պահանջն այնպիսի պայմանական փոխանակային նիշերի, վորոնցով կարելի լիներ ձեռք բերել ուզած վորևե առարկան։

Ինչպես արդեն գիտենք, դեռևս բազմաթիվ վայրենի ժողովուրդների մեջ անմիջական փոխանակության անհարմարությունները պատճառ դարձան, վոր փոխանակային պայմանական նիշերն առաջացան։ Մեծ մասամբ այսպիսի նիշերի դեր կատարում եյին ամենագնահատելի առարկաները, խխունջների խեցիները, արդուզարդի առարկաները մուշտակները, տավարները, վերջապես թանկագին մետաղները։ Վեր-

ջիվերջո փոխանակության ընդհանրական միջոցի, ընդհանրական էկվիվալենտի (համարժեքի) բացառիկ նշանակություն ստացան թանկագին մետաղները—վոսկին, արծաթը, պղինձը։ Այս բանին նպաստում եր այն հանգամանքը, վոր նրանք դիմացկուն եյին յերկար պահելու համար (նրանք չեն փչանում և չեն ժանգոտվում), վոր նրանց կարելի յե ուզածդ մասերի բաժանել, վոր նրանք հեշտ կրելի յեն, և սրա հետևանքով մարդ կարող է նրանցից մոտը, վրան պահել, ինչ քանակությամբ վոր ուզենա։ Դեռևս հին Արևելքի ժողովուրդների մեջ թանկագին մետաղները զանազան մեծության ու ձևի ձուլերի կերպարանքով դրամանիշների դեր եյին կատարում։ Կտրած ստակն (монета) առաջին անգամ յերևան է գալիս 7-րդ դարում Քրիստոսից առաջ Լյուդիայում և ապա Հունաստանում՝ հին հունական առևտրի ընդարձակ զարգացման հետ կապ ունենալով։

2. ՓՈՂՆ ԻԲՐԵՎ ԱՐԺԵՉԱՓ, ԻԲՐԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՈՒ ԻԲՐԵՎ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԻՋՈՑ։ Դրամները զանազան կոչում ու գործածություն ունեն։ Ամենից առաջ նրանք միացած բոլոր ապրանքների համար արժեչափ են։ Ապրանքի գինը դրամական միավորներով, ռուբլիներով, ֆրանկներով, մարկերով և այլն արտահայտելը արժեքի փողային ձևը կամ գինն է։ Իբրև արժեչափ ծառայելով՝ դրամները միևնույն ժամանակ ծառայում են իբրև գների մասշտաբ էլ, ըստվորում վոսկու մի վորոշ կշռային քանակ իբրև չափի միավոր է ընդունվում։ Փողերի իբրև գների մասշտաբ հանդես գալը հնարավորություն է տալիս զանազան արժեք ունեցող ապրանքներն առադրելու և համեմատելու իրար հետ։

Տարբերվելով մյուս ապրանքներից, վորոնք շուկայում ձեռք են բերվում սպառելու նպատակով, փողերը հանդես են գալիս առավելապես իբրև շրջանառության միջոցներ։ Նրանք անմիջական սպառման առարկաներ չեն և այսպիսով սեփական սպառողական արժեք չունեն. Նրանց կոչումն ամենից առաջ այն է, վոր փոխանակության միջոցի դեր կատարեն։ (Փողի հենց այս հատկությունը—սպառողական արժեք չունենալն է ու բացառապես փոխանակային նշանակություն ունենալն է, վոր հնարավորություն է տալիս հետագայում վոսկե ու արծաթե դրամները պետության բաց թողած թղթադրամներով փոխարինելու)։ Մինչդեռ մյուս ապրանքները, յերբ արդեն փոխանակված են, կիրարկվում, բանեցվում են գործի մեջ և ընդմիշտ դուրս են գալիս շրջանառության ասպարեզից, փողերը շարունակ շրջանառության մեջ են գտնվում՝ մեկ տիրոջից մի ուրիշին անցնելով։ Վաճառողը, վոր հենց նոր է իր ապրանքի փոխարեն դրամ ստացել, անմիջապես տեղըն ու տեղը, շուկայում հանդես է գալիս գնորդի դերում՝ իրեն անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելով։ Այսպիսով միևնույն դրամանիշ-

ները մի օրվա ընթացքում կարողանում են վոչ թե մեկ, այլ ավելի պտույտ (оборот) կատարել ու մի քանի տիրոջ ձեռք անցնել։ Այս պատճառով էլ յերկրում գոյություն ունեցող դրամների ընդհանուր քանակը միշտ ավելի քիչ է լինում, քան նույն յերկրում շրջանառության մեջ յեղող ապրանքների ընդհանուր արժեքը, և դրամի քանակի ու ապրանքների ընդհանուր արժեքի տարբերությունն այնքան ավելի մեծ է լինում, վորքան ավելի յե զարգացած առևտուրը յերկրում, և վորքան ավելի արագ է կատարվում ապրանքապտույտը (товарооборот) նրանում։

Բացի սրանից, փողերը մի ուրիշ կոչում էլ ունեն, այն է՝ ծառայել իբրև հատուցելու միջոց, վճարման միջոց։ Գնորդը միշտ ի վիճակի չի լինում ապրանքի փոխարեն կանխիկ դրամ վճարելու, և այս դեպքում վճարումը հետաձգվում է՝ իր անունով ստացական, անդորրագիր տալով (մուրհակ)։ Այսպես, վաճառականը հում նյութի փողը վճարում է նույն նյութը բանեցնելուց ու իբրև պատրաստի արդյունք վաճառելուց հետո։ Վաճառականը, վոր գնել է ապրանքներ, պարտքը վճարում է այն ժամանակ, յերբ արդեն ապրանքները վաճառել-պրծել է ոգտով։ Այս դեպքում ապրանքի փոխարեն անմիջապես դրամ չեն վճարում, և դրամներն այսպիսով հանդես են գալիս արդեն վոչ իբրև շրջանառության միջոց, այլ վճարման միջոց, յերբ ապրանքն արդեն գնորդի կողմից գործադրության է յենթարկված և, հետևաբար, դուրս է յեկել շուկայում կատարվող շրջանառությունից։ Պարտապանը վճարելու նույնպիսի ստորագրություն է տալիս պարտատիրոջը, վարկատուին նաև հասարակ փոխառության դեպքում։ Պարտատերը՝ վարկատուն կարող է այս մուրհակները սրանցով պարտք վերցրած գումարն ստանալու իրավունքով միասին հանձնել ուրիշ անհատների։ Այսպես են ծագում վարկադրամները (մուրհակները, չեկերը), վորոնք շուկայում շրջանառության մեջ են լինում այլ դրամանիշներին զուգընթաց։ Այսպիսի վարկադրամները չպետք է շփոթել պետության բաց թողած թղթադրամների հետ։

Բոլոր փողերը միաժամանակ չեն լինում շրջանառության մեջ։ Յեթե մի տնտեսություն, վոր իր ավելցուկները վեր է ածել դրամի, տվյալ րոպեյում վոչ մի բանի կարիք չունի, ապա ստացած գումարը յետ է դնում, պահում է այն նպատակով, վոր գործադրի դրամն այն ժամանակ, յերբ հարկ ու առիթ կլինի։ Տնտեսական ավելցուկներն սկսում են հավաքվել, կուտվել միասին դրամական արժեքների կերպարանքով։ Տվյալ դեպքում փողը հանդես է գալիս մի նոր դերում, այն է՝ իբրև կուտակման միջոց։ Կուտակված դրամները, յեթե պարապ ու անշարժ ընկած են լինում, արդեն վոչ այլ ինչ են, յեթե վոչ մեռած գանձ։ Իսկ յեթե նրանք մտնում են շրջանառության մեջ կամ

դրվում են վորև ձեռնարկության մեջ վաստակ ստանալու նպատակով և ընդմին անընդհատ ինքնաճման ձգտում են յերևան հանում, ապա նրանք կապիտալ են կազմում։ Նայած կապիտալին տրվող կոչմանը, այն կարող է ընդունել առևտրային, վաշխառուական կամ արդյունաբերական կապիտալի ձև։ Սկզբում կապիտալը ծագում է առևտրային ու վաշխառուական կապիտալի ձևով։ Կապիտալն այս սկզբնական ձևերով հանդես է գալիս առաջին անգամ արդեն քաղաքային ռայոնական տնտեսության մեջ։ Իսկ արդյունաբերական կապիտալը՝ փոխանակային ու դրամական տնտեսության զարգացման յեզրափակող վերջին աստիճանը լինելով, զարգանում է շատ ավելի ուշ։

3. ԿԱԼՎԱԾԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ։ Ավելի մեծ քանակությամբ դրամական միջոցների կուտակումն ամենից առաջ ըսկսվեց այն հասարակական դասակարգի ձեռքերում, վորն առատ տըտեսական ավելցուկների տեր լինելով, միևնույն ժամանակ ուրիշներից ավելի յեր փողի կարիք զգում։ Խոշոր հողատերերի դասակարգն եր այս, վորի ձեռքին եյին ընդարձակ կալվածքների միջոցները։ Ամենից առաջ այս դասակարգի մեջ ծագեց առևտրային փոխանակության պահանջը, նախապես հենց այս դասակարգիցել դուրս յեկավ հատուկ առևտրական դասակարգը, վորի համար դրամական միջոցների կուտակումը կոչում, զբաղմունք դարձավ։ Սակայն հողատեր դասակարգի առավելապես գյուղական մասն էլ, վորն առևտրի մեջ անմիջական մասնակցություն չուներ, այնուամենայնիվ, յերբ բազմանում եյին իր տնտեսական պահանջներն և նրա միջավայրում տարածվում եյին պերճանքի ու շռայլության սովորությունները, ճիշտ նմանապես շարունակ ավելի ու ավելի յեր սկսում փողի կարիք զգալ։ Ինչպես վոր քաղաքային արհեստի արդյունքները ձեռք բերելու համար փող եր հարկավոր, այնպես և ավելի ևս հարկավոր եր դրամը, յերբ պետք եր Արևելքից ներմուծած պերճանքի առարկաներ ձեռք բերել։ Խաչակրաց արշավանքները, վորոնք արևմտյան յերկիրներն ամիջորեն մոտեցրել եյին հարուստ Արևելքին և սրանով նպաստել արևմտյան առևտրի կենդանանալուն, հողատեր դասակարգի միջավայրում միանգամից շատացրին արևելյան արդյունքների պահանջը, վոր միաժամանակ փողի մեծ կարիք եր առաջ բերում։ Բուն իսկ մասնակցությունը խաչակրաց արշավանքներին, վոր Արևելքի հարուստ յերկիրներում անձամբ լինելու առիթ եր ներկայացնում, նույնպես դրամական նշանավոր ծախսերի հետ եր կապված։

Յերբ աճում է հողատեր դասակարգի զգացած փողի կարիքը, սրա հետ միաժամանակ ու սրա հետ կապ ունենալով, բնապարտությներն (натуральные повинности) ու գյուղացիներից գանձվող բնատուրքերը փոխարինվում են դրամատուրքերով։ Իրենց տնտեսության

արդյունքները հարևան քաղաքային շուկայում վաճառելով՝ գյուղացիք հնարավորություն եյին ստանում իրենցից պահանջվող դրամական գումարները վճարելու։ Միաժամանակ յերբ բնատուրքը դրամական ձևի յե վերածվում, մեծանում են նաև նրա չափերը։ Գյուղացիք հարկադրված են լինում հողատիրոջը տալու իրենց արդյունքների ավելի ու ավելի մեծ մասը շարունակ, յեթե վոչ իրենց հավելյալ արդյունքն ամբողջովին։

Այսպիսով կալվածքը, վորի վերջնական ու միակ նպատակը մինչև այդ իր սեփական պահանջների բավարարումն եր, դառնում է հասույթի մի աղբյուր, վոր հնարավորություն է տալիս հողատիրոջն իր պահանջները բավարարելու։ Այժմ գյուղական, ինչպես և քաղաքային հողատիրության նպատակը դառնում է անաշխատ հասույթ—հողային ռենտա ստանալն, ընդվորում ինքն հողատերն արդեն այլևս կալվածքում չի յել ապրում։ Կալվածային տնտեսությունն ավելի ու ավելի կորցնում է իր բացառապես բնատնտեսական բնույթը և հետզհետե ավելի ու ավելի զուտ փոխանակային տնտեսություն է դառնում։ Սրա հետ միաժամանակ սկսվում է նրա քայքայվելն ու նոր տնտեսական ձևերով փոխարինվելը, ձևեր՝ վորոնք տարբեր են լինում առանձին յերկիրներում, նայած սրանց ընդհանուր տնտեսական զարգացման աստիճանին ու պայմաններին։

4. ՃՈՐՏԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՎԻՃԱԿԻ ԹՈՒԼԱՆԱԼԸ։ Թեև կոռն ու բընապարտությները դրամատուրքերով փոխարինելուն մեծ մասամբ ուղեկից եր աճումն այն հարկերի ծանրության, վորոնք ընկած եյին գյուղացիների վրա, այնուամենայնիվ այս փոխարինումը միաժամանակ թուլացնում եր նրանց կախումը հողատերերից՝ գյուղացիներին ճորտությունից կիսազատ վարձակալ (арендатор) դարձնելով։ Սակայն ճորտային տնտեսության քայքայումն այս բանի վրա կանգ չեր առնում։ Շարունակ ավելի ու ավելի դրամի կարիք զգալով՝ հողատերերը հաճախ ազատ եյին արձակում ճորտերին ամբողջ գյուղերով. այսպիսի ազատագրումն կատարում եյին մեծ փրկանք ստանալու գնով, մի յերևույթ, վոր հաճախ վոչ այլ ինչ եր լինում, բայց յեթե վճարումների, հարկերի դիմակավորված բարձրացումն։ 1315 թվականին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկ X-ն արքայական կալվածների (դոմեն) բոլոր ճորտերին ազատեց՝ սրա համար պահանջելով փրկանքի մի գումար, վորը պետք է ծառայեր «իբրև բավարար վարձատրություն այն ոգուտների փոխարեն, վոր այս սորկական վիճակի մարդիկ կարող եյին մատակարարել մեզ ու մեր հաջորդներին», և ավելի փոքր չափերով միևնույն բանն անում եյին մյուս սենյորներն իրենց հողերում։ Ընդսմին ազատագրությունը միշտ իրենց—ազատագրվողների ցանկությամբ ու նախաձեռնությամբ չեր կատարվում ամենևին։

Մի կողմից ազատագրումն յերբեք լիակատար չէր. գյուղացիք ազատվում էին կոռից ու պարտույթներից (повинности), բայց հողովին կախյալ (земельно-зависимые) էին մնում, այսինքն պետք է կրեին զանազան վճարումների ծանրությունն այն հողերի համար, վորոնցից ոգտվում էին։ Մյուս կողմից բոլոր հնարավորությունները չէին ունենում նրանցից պահանջված բավարար վարձատրությունը «վճարելու»։ Նույն Լյուդովիկ X-րդ թագավորը գրում է կոմիսարներին, վորոնք փրկանքի գումարներ էին հավաքում. «Կարող է պատահել, վոր վատ խորհրդի շնորհիվ կամ բարեմտություն չունենալու հետևանքով վոմանք մեր այս արածը մեծ բարերարություն ու վողորմածություն չհամարեն, այնպես վոր ավելի շուտ կամենան սորկական վիճակի թշվառության մեջ մնալ, քան ազատագրվել»։ Այսպիսիներից կարգադրվում էր «առնել վորքան վոր կարելի յե, առանց վշտացնելու, և վորքան պիտո յե մեր կարիքների համար»։

Բացի փրկանք ստանալուց ուրիշ դիտումներ էլ կային, վորոնք դրդում էին սենյորներին՝ իրենց ճորտերին ազատ կամ կիսազատ վարձակալների վիճակին հասցնելու։ Ճորտերի պարտույթններն ու տուրքերը սահմանում էր սովորույթը, ուստի և ավելի դժվար էր այս պարտույթներն ու տուրքերը մեծացնել, քան կալութավարձը (арендная плата). բացի սրանից, անճշտապահ վարձակալին միշտ կարելի յեր ուրիշով փոխարինել, այնինչ նույնը չէր կարելի անել ճորտի նրկատմամբ։ Վերջապես բազմաթիվ առանձին սենյորներ արդեն գլխի էին ընկել, վոր ազատ աշխատանքը մեծ առավելություններ ունի անազատի հետ համեմատած։ Մի արձակաթուղթ (отпускная), օրինակ, ասում է. «Ճորտերը ծույլ են աշխատում, վորովհետև այս աշխատանքը կատարում են ուրիշների համար էլ. այս պատճառով նրանք անխղճորեն ուժասպառ են անում հողը և չեն հոգում այն մասին, թե ինչ կլինի իրենց մահից հետո։ Սակայն նրանք ճիգ ու ջանք յերեվան կըհանեն, յեթե հավաստիանան, վոր իրենց գույքն իրենց մերձավոր ազգականներին կանցնի»։ Նույն նկատառումները կրկնվում են նաև այլ արձակաթղթերի մեջ։ Բազմաթիվ արձակաթղթեր ավելի պակաս վորոշությամբ ցուցմունք են պարունակում այն մասին, թե ճորտերին ազատություն տրվում է ամենից առաջ հենց տերերի շահերը նկատի ունենալով։

Կալվածային տնտեսության քայքայումն ամենից առաջ կապ ուներ քաղաքային վաճառանոցային առևտրի զարգացման հետ։ Հողատերը քաղաքային շուկայում գնումներ անելու համար փողի կարիք ուներ։ Գյուղացին դրամատուրքն ու դրամական փրկանքը վճարելու հնարավորություն էր ձեռք բերում նրանով, վոր իր արդյունքները ծախում էր քաղաքային շուկայում։ Այս պատճառով էլ գյուղացիների

ազատագրությունն այնքան ավելի վաղ ու այնքան ավելի լրիվ էր կատարվում, վորքան ավելի վաղ էին ծագումն առնում քաղաքները, և վորքան ավելի ընդարձակ չափերով էր զարգանում քաղաքային կյանքը տվյալ յերկրում։ Իտալիայում ճորտերը համարյա լիակատար ազատություն ձեռք էին բերել ու դարձել ազատ վարձակալներ դեռ XIII դարում։ Այստեղ հիշյալ ազատագրությունն իբրև ընդհանուր միջոց իրականացնում էին առանձին քաղաքային հանրապետությունները հատուկ վորոշումներով։ Այստեղ հենց իրենց—սենյորների մեծամասնությունը տեղափոխվում էր քաղաք՝ կալվածքներից ստացած ռենտայով ապրելով։ Ֆրանսիայում XIV դարի վերջերին ճորտերի մոտ յերկու յերրորդ մասը դարձել էր ազատ վարձակալ կամ հողային կախումն ունեցող վիլլան (գյուղացի)։ Ճորտային դրությունն իր նախկին ձևով պահպանվում էր գլխավորապես արևելյան ու կենտրոնական Ֆրանսիայում միայն։ Անգլիայում գյուղացիների մեծ մասն այդ ժամանակ նույն կերպ ազատ էր անձնապես, և սենյորների փորձերը, վորով նրանք աշխատում էին 1348 թվականի սև մահի արած ավերածություններից հետո կոռի սիստեմին վերադառնալ, ընդհանրապես հաջողություն չունեցան։ Բնատուրքերը դրամականով փոխարինելը միքիչ ավելի ուշ սկսվեց Գերմանիայում։ Այստեղ գյուղացիների ազատագրությունն ընդհանրապես այնքան ընդարձակ չափերով չէր զարգանում, ինչպես յեվրոպական մյուս յերկիրներում, և, ինչպես կըտեսնենք, XIV դարի վերջերից ազատագրությանը հաջորդում է մի հակընթաց շարժում, վոր նպատակ ուներ գյուղացիներին նորից ճորտացընելու և կոռային աշխատանքին վերադարձնելու։ Ռուսաստանում վորոշ քաղաքներն ու քաղաքային վաճառանոցային առևտուրը համարյա բացակայում էին, բնապարտույթներն ու բնատուրքը դրամատուրքերով փոխարինելու պրոցեսն էլ ավելի ուշ սկսեց և շատ ավելի դանդաղ էր կատարվում։ Այստեղ բնատուրքերը դրամատուրքերի հետ կողք կողքի հարատևում էին մինչև XIX դարը։

Գյուղացիների ազատագրության հետ գյուղական տնտեսությունն սկսում է կառուցվել նոր հիմունքներով։ Հարկադրական կախյալ հարաբերությունները, վորոնց վրա հիմնված էր կալվածային տնտեսությունը, տեղի յեն տալիս ավելի ազատ ու պայմանագրային հարաբերությունների հանդեպ։ Սրա հետ միասին այն ներքին կապերը, վորոնք միացնում էին կալվածքի ամբողջ բնակչությունը, դարձնելով այն մի տնտեսական խումբ, հետզհետե թուլանում են։ Այն փոխհարաբերությունները, վորոնք գոյություն ունեն մի կողմից՝ հողատիրոջ ու վարձակալի միջև, և մյուս կողմից՝ հողատիրոջ կամ վարձակալի ու բանվորների միջև, բնատնտեսականից զուտ դրամականի յեն վերածվում, այնինչ առաջ թե կալվածատիրոջ ոգտին հավաքած տուր-

քերն ու թե այն ոժանդակությունը, վոր սա ցույց եր տալիս կախյալ բնակչությանը կարիքի դեպքում, վճարվում եյին բացառապես բնեղենով (натурой)։ Այժմ հողատերը վարձակալից ստանում ե դրամական ռենտա, և նրա հողում աշխատող մշակն ստանում ե դրամական վարձ։

Կալվածատիրական հողի գյուղացիական կախյալ «իրակալություններին» (держание) հաջորդում ե ազատ կամ կիսազատ վարձակալությունը։ Ճորտային, կոռային աշխատանքի փոխարեն առաջին անգամ ասպարեզ ե գալիս ազատավարձու (вольнонаемный) աշխատանքը։ Գյուղացիք գնում եյին մշակություն անելու, վորովհետև զրկված եյին իրենց հողամասերից շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանց փոխարինել եյին ազատ վարձակալները կամ թե իրենք քայքայվել եյին իրենց ույժերից վեր յեղող հարկերից։ Բացի սրանից, առանձին աշխատանքներ կատարելու համար վարձվում եյին ավելի պակաս ապահովված սակավահող գյուղացիները։ XIV դարի կեսերին վարձու աշխատանքը համեմատաբար լայն չափերով տարածված եր ինչպես Իտալիայում, այնպես և Ֆրանսիայում ու Անգլիայում։ Հրատարակվում են հատուկ կարգադրություններ, վորոնք վորոշում են գյուղատնտեսական բանվորների վարձման պայմաններն ու բարձրագույն աշխատավարձը, վոր կարող եյին նրանք ստանալ։ Նման կարգադրությունները ավելի հաճախադեպ դարձան 1348 թվականի «սև մահ» կոչվող սոսկալի համաճարակից հետո, վորը բռնել եր ամբողջ Յեվրոպան և վոչնչացրել ազգաբնակության մոտ մեկ յերրորդ մասը։ Սրա շնորհիվ աշխատանքի գները բարձրացան, և ահա ամենից առաջ հենց աշխատավարձի այս բարձրացման դեմ եյին ուղղված բոլոր կառավարական միջոցները։ 1350 թվականին Ֆրանսիայում այս նպատակով հրատարակված որդոնանսն (հրաման, հրովարտակ) իբրև վարձու բանվոր թվում ե խաղողի այգի մշակող ու այգեկութի գործավորներին, վար անողներին, հնձվորներին, քաղվորներին, կալսողներին, սայլվորներին, տավարածներին, խոզարածներին, հովիվներին։ Կանոնները վերաբերում են ինչպես որավարձով ու հատավարձով, այսինքն վորոշ աշխատանքի համար վարձելուն, այնպես և բանվորների տարով վարձվելու պայմաններին։ Այդ ժամանակ Անգլիայում էլ որամշակներն (поденщики) ու տարով վարձվող բանվորները համեմատաբար հաճախադեպ յերևույթ եյին։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԻՋԿՈՄՄՈՒՆԱԼ ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1. ՄԻՋԿՈՄՄՈՒՆԱԼ (ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ) ԱՌԵՎՏՈՒՐԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ՈՒ ՀՆՈՒՄ։ Այն դրամական գումարները, վոր իբրև տուրք հավաքում եյին հողատերերը, նրանց ձեռքում դեռևս կուտակման միջոց չեյին, վորովհետև պերճանքի առարկաներ ձեռք բերելու և ուրիշ պահանջների համար եյին գործադրվում։ Կուտակելու ձգտումը զուտ կերպարանքով հանդես ե գալիս այն ժամանակ միայն, յերբ ինքը փողն սկսում ե փող ծնել, յերբ դրամը շրջանառության մեջ են մտցնում այն նպատակով, վոր տիրոջ մոտ վերադառնա վաստակով։ Վաստակ ձեռք բերելու սկզբնական յեղանակներն առևտուրն ու վաշխառությունն են, ընդսմին կապիտալի յել սկզբնական ձևերն, ինչպես արդեն ասել ենք, առևտրային ու վաշխառուական կապիտալն ե։ Արդյունաբերության մեջ, վորտեղ ամբողջովին տիրապետում եր համքարային կանոնադրություններով ու հիմնարկություններով ցանկապատված մանր արհեստավորական աշխատանքը, վաստակ կորզելը տեղ չեր գտնում։

Մինչդեռ վերջին ժամանակների արդյունաբերական կապիտալն անմիջապես կազմակերպում ե արդյունաբերությունը, առևտրային կապիտալը նրանից տարբերվելով՝ ամենևին չի մասնակցում արդյունաբերությանը։ Առևտրային կապիտալի դերն այն ե լինում, վոր բացառապես միջնորդ ե հանդիսանում առանձին արտադրողների միջև, վորոնք մյուս բոլոր տեսակետներից պահպանում են իրենց անկախությունը։ Այն վաստակը, վոր ստանում են առևտրային կապիտալի համար, այդ ժամանակ դեռ ևս հետևանք չե կապիտալիստի կողմից հավելյալ արժեքի այն մասը յուրացնելու, վոր ստեղծում ե բանվորը։ Վաստակի մեծությունը վորոշվում ե մի կողմից՝ առաջարկված ապրանքների նըկատմամբ գնորդի ունեցած կարիքներով, հետևաբար նաև այն գնով, վոր նա համաձայն ե վճարելու, մյուս կողմից՝ վաճառականի շուկայում ունեցած բացառիկ մենաշնորհյալ դիրքով, վորի շնորհիվ գնորդը, բացի վաճառականի մոտից, ուրիշ վոչ մի տեղ հնարավորություն չու-

նի ցանկացած արդյունքն ստանալու։ Քանի որ կալվածատեր սենյորը փոխանակում էր իր տնտեսության ավելցուկները, որոնք նրա վրա ոչինչ չեյին նստել և ոչ այլ ինչ եյին, յեթե ոչ ուրիշի հավելյալ աշխատանքի սոսկ յուրացումն, ապա նա պատրաստ էր իրեն հարկավոր կամ իր խելքը տանող ապրանքի փոխարեն վճարելու, ինչ գին որ ուզեյին։ Միևնույն ժամանակ վաճառականն էլ հնարավորություն ուներ քմածին գներ նշանակելու, քանի որ այլաքաղաքացի մրցակիցները չեզոքացված եյին, և տեղական շուկայում լիակատար մենաշնորհ էր սահմանված։ Ինչպես արդեն գիտենք, տեղական վաճառականների համար այսպիսի մենաշնորհ ձեռք ձգելը քաղաքային վաճառականների գիլդիաների գլխավոր նպատակն էր։

Դեպի մենաշնորհն ունեցած ձգտումը, որ ամենից առաջ բնորոշ է քաղաքային տնտեսության շրջանի ամբողջ առևտրի համար, յերկու պատճառ ունի. մի կողմից այն պայմանավորված էր բուն իսկ առևտրի դեռևս թույլ զարգացումով, մյուս կողմից՝ այն ընդհանուր անբարենպաստ հանգամանքներով, որոնք ծայրահեղ չափերով դժվարացնում եյին առևտրային հաղորդակցությունը։ Ամենից առաջ քաղաքային վաճառանոցային առևտուրն ինքնըստինքյան սակավ բարենպաստ ասպարեզ էր առևտրային վաստակ կորզելու համար։ Քաղաքային շուկայում միմյանց հանդիպում եյին անմիջական արտադրողները, արհեստավորներն ու գյուղացիները։ Նրանք իրենց միջև փոխանակում եյին անհրաժեշտ տնտեսական արդյունքներն ու իրերը, որոնց գները որոշվում եյին նրանց վրա գործադրված աշխատանքով։ Ամեն մի առևտրական միջնորդություն, այսինքն ապրանքների գնումն ու ոգտով վերավաճառք, արգելվում էր և դիտավորյալ կերպով դուրս էր մղվում համքարային կարգերի կողմից։ Վաճառականային միջնորդությունը, որ վտարված էր քաղաքային շուկայից, ընդհակառակն, անհրաժեշտություն էր դառնում միջկոմմունալ առևտրի մեջ, այսինքն ներմուծվող արդյունքների առևտրի մեջ, նմանապես և այն առևտրային հաղորդակցությունների ժամանակ, որոնք տեղի յեյին ունենում առանձին քաղաքների միջև և պահանջում եյին ավելի կամ պակաս հեռավոր տարածություններից ապրանքների փոխադրություն։ Սակայն այսպիսի առևտուրը դեռ չափազանց աննշան էր և, բացի սրանից, իր զարգացման ճանապարհին բազմաթիվ արգելքների յեր հանդիպում։

Յուրաքանչյուր առանձին քաղաք պարփակված էր իր շրջանի սահմաններում և համարյա ոչինչ չէր արտահանում՝ միաժամանակ արգելելով այլաքաղաքային արդյունքների ներմուծումն էլ։ Այս պատճառով գրեթե բացառապես Արևելքի հարուստ յերկիրների արտադրանքներն եյին առևտրի առարկաները — զանազան անուշահոտություն-

ներ, քաղցրեղեններ, թանկագին իրեր, մասամբ արդյունաբերական արդյունքներ, մետաքսե գործվածքներ, ապակե իրեր այլն։ Հեռվից ներմուծվող ու թանկ նստող արևելյան ապրանքները պերճանքի առարկաներ եյին, որոնք մատչելի յեյին միայն բարձր դասակարգերին։ Ինչպես արդեն մատնանշել ենք վերևում, այն ժամանակներում վաճառականն ամենից առաջ միջնորդ էր այն ավելցուկների փոխանակության միջոցին, որոնք կուտակվում եյին հեռավոր յերկրների ու վայրերի խոշոր հողատիրական տնտեսությունների մեջ։ Արևելյան յերկիրներից ներմուծած ամբողջ ապրանքի յերեք քառորդից ավելի առնում եյին հողատիրությունից հասույթ ստացող անհատներն ու հիմնարկները — իշխանները, ասպետները, հոգևոր բարձր աստիճանավորները, յեկեղեցիները, վանքերը, կղերական ուխտերի պաշտոնատըները, իսկ մնացած մասն սպառվում էր քաղաքային ազգաբնակության ավելի հարուստ և ունևոր շրջանների մեջ։

Ցամաքային հարմար ուղիների բացակայության պատճառով հաղորդակցությունը բացառապես ջրային ճանապարհներով էր կատարվում։ Այս պատճառով էլ ներմուծվող ապրանքների ավելի աչքի ընկնող առևտուր կարող էր զարգանալ այն քաղաքներում միայն, որոնք ընկած եյին այսպիսի ջրային ճանապարհների յերկայնքով՝ ծովերի ու գետերի ափերին։ Գլխավոր ու յերկար ժամանակ նաև միակ ճանապարհը, որով յեվրոպական ժողովուրդներին հասցնում եյին արևելյան յերկիրների — Աֆրիկայի, Փոքր-Ասիայի, Արաբիայի ու Հնդկաստանի արտադրանքները, Միջերկրական ծովն էր։ Այս հանգամանքի հետևանքով թե հնում ու թե միջին դարերում ամենից աշխույժ միջկոմմունալ առևտրի վայրը հենց այս ծովի շրջանն էր։ Այստեղ էր, որ առաջ յեկան մի շարք խոշոր առևտրային քաղաքներ։ Հնում այսպիսի քաղաքներ եյին փյունիկեցոց քաղաքները՝ Տյուրոսը, Սիդոնը, Կարթագենը, հունացը՝ Միլետը, Աթենքը, Կորընթոսը, Տարենտոնը, Սիրակուզան, ավելի հետո Ալեքսանդրիան. միջին դարերում՝ իտալական առևտրային քաղաքներն և ամենից առաջ Վենետիկն ու Ջենովան, որոնց ձեռքին էր գտնվում ամբողջ Արևելքի — Լեվանտի առևտուրը։ Միջնադարի յերկրորդ կեսին, սկսած 12—13-րդ դարերից, բավական աչքի ընկնող առևտուր զարգացավ նաև հյուսիսային ծովերում — Բալտիկում ու Գերմանականում։ Այստեղի առևտրի առարկաներն եյին մուշտակներն ու զանազան հում նյութերը, կաշին, մոմը, շինության փայտը, որոնք ներմուծվում եյին Ռուսաստանից ու Սկանդինավյան յերկիրներից։ Հյուսիսային առևտուրն իրենց ձեռքն առան գերմանական մերձբալտյան քաղաքները (Բրեմենը, Համբուրգը, Լյուբեկն ու այլք)։ Հիշյալ յերկու ծովերը — Բալտիկն ու Գերմանականը — միացնող ջրային ճանապարհներից մեկն այն ճանապարհն էր, որ գնում էր

Հռենոսի ընթացքով (Քյոլն քաղաքն ու Հռենոսի գետաբերանից վոչ հեռու ընկած ֆլանդրական Անտվերպեն ու Բրյուգգե քաղաքները). յերկրորդն այն եր, վոր առաջնից ճյուղավորվելով գնում եր Սենա գետով և Նորմանդիայի ու Լամանշի վրայով տանում եր Անգլիա (Փարիզ, Ռուան քաղաքները)։ Այս յերկու ճանապարհների ճյուղավորման վայրում կենտրոնական Յեվրոպայում տեղի յեյին ունենում Շամպանի հռչակավոր տոնավաճառները, վորտեղ միաժամանակ թե հարուստ Արևելքի ու թե հեռավոր Հյուսիսի արդյունքների առևտուր եր լինում։

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Այսպիսով առևտրային յերթևեկությունը կատարվում եր սակավաթիվ ջրային ու ցամաքային ճանապարհներով, սակայն այս ուղիներով անց ու դարձ անելն ամենևին ապահով չեր։ Ճանապարհին առևտրականներին սպասում եյին անհարմար տուրքերն ու վտանգները։ Ամբողջ Յեվրոպան մանր-մանր բաժանված եր բազմաթիվ ֆեոդալական տիրապետությունների։ Յուրաքանչյուր նույնիսկ մանր հողատեր, յերբ նրա տիրապետությունների միջով ներմուծվող ապրանքներ եյին անցկացնում, իր ոգտին պահանջում եր բարձր մաքս։ 14-րդ դարում Հռենոսի վրա 60 մաքսատնից ավելի յեյին հաշվում։ Ճանապարհին պատահող յուրաքանչյուր ամրոցից սպասելի յեր հարձակում ու կողոպուտ։ Ծովում նույնպես վխտում եյին ծովահեններն ու առևտրային թշնամի հանրապետությունների նավերը։ Այս բոլոր վտանգները հարկադրում եյին վաճառականներին միատեղ լինելու։

Վոչ միայն տեղական քաղաքային վաճառականներն եյին միանում ու գիլդիաներ կազմում, այլև զանազան քաղաքների վաճառականների միջև միություններ եյին կնքվում միատեղ առևտուր անելու նպատակով։ Այսպիսիք եյին որինակ, իտալական ու պրովանսական քաղաքների միությունները, վորոնք այցելում եյին Շամպանի տոնավաճառները։ Գերմանական մերձբալտյան քաղաքները կազմում եյին գերմանական հանզան (միությունը), ստորին Հռենոսի ու Ֆլանդրիայի քաղաքները, Լոնդոնի հանզան՝ Անգլիայի հետ առևտուր անելու համար։ Դաշնակից քաղաքների վաճառականները միանում եյին և քարավաններ ու նավատորմիղներ կազմում հեռավոր շուկաները միասին անցնելու համար։ Յեվ այն քաղաքում, վորոնց հետ նրանք ավելի կենդանի առևտրային հաղորդակցություն եյին պահպանում, ունեյին իրենց հատուկ իջևաններն ոթևելու և ապրանքների պահեստանոցի համար։ Այսպես՝ հանզայիններն ունեյին չորս գլխավոր գրասենյակ Նովգորոդում, Լոնդոնում, Բրյուգգեյում ու Բերգենում։ Հարավ-գերմանական վաճառականներն իրենց «ֆոնդակոն» ունեյին Վենետիկում։ Իտալական քաղաքները հիմնում եյին այսպիսի իջևաններ (լոջեր) Արևելքի գլխավոր առևտրային կենտրոններում։ Այսպիսի առևտրային շինանոցների գլուխ եյին կանգնում ընտրովի պաշտոնատար անձինք— ոլդերմենները հանզայինների մեջ, կոնսուլներն՝ իտալացիների մեջ։ Ամուր պարիսպները, վորոնցով շրջապատված եյին լինում այլաքաղաքացի վաճառականների իջևանները, ցույց եյին տալիս, վոր նույնիսկ առևտուր անելու վայրերում առևտրականներն իրենց լիովին անվտանգ չեյին համարում և պետք ե մշտապես յերկյուղ կրեյին տեղական ազգաբնակության թշնամական գործողություններից։

Առևտրային այս միությունները, վոր քաղաքները կնքում եյին հարկադրված, չեյին վերացնում թշնամական հարաբերությունների հնարավորությունն առանձին քաղաքների վաճառականների միջև։ Ընդհակառակը՝ մշտական թշնամական հարաբերություններն ամենասովորական յերևույթներն եյին, իսկ սրա պատճառն ամենից առաջ մենաշնորհի այն ձգտումներն եյին, վոր ունեյին միությունների մեջ մտած քաղաքները։ Ոտարության մեջ յերևան հանած համերաշխությունը չեր ժխտում, վոր այլաքաղաքային շուկաներում իրենց շահերը սուր տարբերություն ու նույնիսկ հակադրություն ունենային։

3. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Առևտուրը բացառապես առանձին քաղաքների միջև եր կատարվում և այսպիսով միջկոմմունալ եր։ Միջազգային առևտուր այս բառի ժամանակակից իմաստով գոյություն չուներ, վորովհետև քիչ կամ շատ ամուր ազգային միություններ ել չկային։ Ամեն մի քաղաք իր ինքնուրույն առևտրային քաղաքականությունն եր վարում՝ աշխատելով ամբողջ տեղական առևտուրն իր ձեռքը ձգել և միևնույն ժամանակ այլաքաղաքային շուկաներում ըստ կարելվույն լայն իրավունքների ու արտոնությունների տիրանալ։

Հնում Աթենքը տիրում եր Միջերկրական ծովի ամբողջ արևելյան կիսին, ինչպես և Կորնթոսը՝ արևմուտքում։ Այս յերկու առաջնակարգ վաճառաշահ քաղաքների առևտրային մրցակցությունն եր Պելոպոնեսյան պատերազմի գլխավոր պատճառը, վոր Աթենքի համար ճակատագրական յեղավ։ Արևելյան շուկաներում տիրելու համար նույնպիսի մրցակցություններ կային նաև իտալական առևտրային հանրապետությունների միջև։ Ամբողջ միջնադարյան ժամանակաշրջանի ընթացքում Ջենովայի ու Վենետիկի միջև յեղած թշնամական հարաբերությունները չեյին դադարում։ Մենաշնորհացման (монополизация) նույն ձգտումն են բնորոշում ամենից առաջ այն արտոնությունները, վոր ստանում եյին Ֆրանսիայի ու Անգլիայի քաղաքների գիլդիաները։ Այսպիսի արտոնագրում սովորաբար ասվում ե. «Վոչ վոք չպետք ե իր ապրանքները վաճառքի համար ցուցադրե վոչ քաղաքում, վոչ ել սրա արվարձաններում, յեթե քաղաքային գիլդիայի անդամ չե»։

Այն քաղաքները, վորոնք ընկած եյին նավարկելի գետերի ափերին, բացի սրանից ձգտում եյին քաղաքային յերկրամասի սահմաններում գետային ուղիներով ապրանք փոխադրելու բացառիկ իրավունքը յուրացնելու: Այս բանի շնորհիվ այլաքաղաքացի ու օտարերկրացի վաճառականների առաջ ճանապարհը փակ եր լինում, և սրանց ուրիշ բան չեր մնում, բայց յեթե իրենց բոլոր ապրանքները ծախել տեղական վաճառականներին կամ թե չէ իրենց ապրանքներն անցկացնելու համար նրանց հետ հատուկ համաձայնությունների մեջ մըտնել: Այսպիսի բացառիկ իրավունք, վոր հայտնի չեր ստապելային (стапельное—նավարանի) իրավունք անունով, ունեյին «Ջրի վրա առևտուր անողների» (marchands de l'eau) գիլդիան Պարզում, Ռուանի հանզան, բազմաթիվ գերմանական հանզայան քաղաքներ: Հասկանալի յե, վոր այսպիսի բացառիկ իրավունքներ ձեռք բերելն առանց մյուսի շահագրգռված քաղաքների վաճառականության կռվի ու դիմադրության չեր լինում: Պարիզի ու Ռուանի միջև յեղած կռիվը շարունակվեց յերկու հարյուր տարուց ավելի, մինչև վոր վերջապես ավարտվեց Պարիզի գիլդիայի հաղթանակով: Գերմանական հանզայան քաղաքները, վորոնք ուրիշ յերկրներում միացած եյին հանդես գալիս, իրենց տանը, հայրենիքում մեծ մասամբ թշնամանում եյին իրար, ընդվորում այստեղ էլ ընդհարումների առիթն ամենից առաջ լինում եր ստապելային իրավունքը, վոր հափշտակած ու իրենց եյին վերապահած լինում առանձին քաղաքներ:

4. ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ.—ԲԱՆԿԵՐՆ ՈՒ ՓՈԴԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ: Առևտրի հետ միասին կապիտալների կուտակման մյուս սկզբնական յեղանակը վաշխառությունն է, այսինքն դրամ փոխ տալը տոկոսով կամ իրերն ու հասույթները գրավ դնելով, վորոնք անցնում են փոխատուի տրամադրության ներքո մինչև փոխ վերցրած գումարի վճարումը: Հաճախ խոշոր ֆեոդալներին ու թագավորներին դրամ փոխ տալիս վաշխառուներն իրավունք եյին դուրս կորզում նրանց հասույթների այս կամ այն մասը հավաքելու՝ այսպիսով հանդես գալով իբրև կապալառու:

Յերբ դրամական շրջանառության ծավալման հետ սկսում է փողի կարիք զգացվել, ապա սրա հետ միաժամանակ ծագում է վաշխառությունն ու սրա ավելի զարգացած ձևը—վարկը: Սկզբում առևտրային ու վարկային գործառնությունները խիստ չեն տարբերվում: Դրամական միջոցներ ունեցող մարդիկ այս միջոցները միակերպ գործադրում են ինչպես առևտրային, այնպես և փոխադրական գործառնությունների մեջ: Հրեաները միջին դարերի ամբողջ առաջին կեսում միաժամանակ թե վաճառական եյին ու թե վաշխառու: Ճիշտ նույն կերպ էլ ավելի ուշ ժամանակներում իտալացի վաճառականները թա-

փառում եյին Ալպերից դենն և այնտեղ հայտնի եյին լոմբարդացի ընդհանուր անունով, դրամ եյին փոխ տալիս թագավորներին, իշխաններին և այլ խոշոր ֆեոդալներին: Թե տեղական պատրիկությունն ու թե վաճառականությունը ճիշտ նմանապես, հրյաների ու լոմբարդացոց հետ կողքի կողքի, ամենուրեք, վորտեղ միայն առիթ եր ներկայանում, զբաղվում եյին վաշխառուական գործառնություններով: Վաշխառուական գործառնություններն առևտրից պակաս չեյին նպաստում կապիտալների կենտրոնացմանն ու մասնավորապես այն բանին, վոր խոշոր կալվածքներում կուտակված հավելյալ արդյունքը փոխադրվի առևտրական դասակարգի ձեռքը:

Վարկն ու դրամական այլ գործառնություններն անմիջապես կապ ունեյին առևտրի զարգացման հետ: Առևտրի աճմանն ուղեկից եր դրամական շրջանառության զարգացումը, հետևաբար և զանազան տեսակի դրամական գործառնությունների, դրամներ մանրելու ու փոխելու, փոխառությունների, դրամական փոխադրությունների և այլոց զարգացումը: Այս պատճառով վարկը զարգանում է ամենից առաջ խոշոր առևտրային կենտրոններում, հին ժամանակ՝ Աթենքում, միջին դարերում՝ Ջենովայի, Վենետիկի ու այլ իտալական քաղաքների մեջ: Հենց այստեղ էլ, այս քաղաքներում առաջին անգամ ծագեցին նաև բանկերը, այն հիմնարկությունները, վորոնք հատկապես պարապում են վարկային ու դրամական գործառնություններով: Առաջին բանկիրները լումայափոխներն են (меняла), վորոնց սեղանները տեղավորված եյին բոլոր քաղաքային շուկաներում: Ստակի (монета) արտասովոր խայտաբղետության և բազմազանության միջոցին, յերբ ամեն մի քաղաք, յուրաքանչյուր ֆեոդալական տիրապետություն իր հատուկ ըստակային սիստեմ (монетная система) ուներ, լումայափոխների գործունեյությունն անխուսափելի կերպով անհրաժեշտ եր: Խոշոր առևտրային կենտրոններում լումայափոխները դրամ փոխելով ու մանրելով միայն չեյին զբաղվում. Նրանք դրամ եյին փոխ տալիս, փող եյին պահ վերցնում և այլ զանազան դրամական գործառնություններ եյին կատարում, որինակ՝ իրենց հավատարմատուների (доверитель) փոխարեն դրամական վճարումներ եյին անում:

Բանկը վոչ այլ ինչ է, յեթե վոչ լումայափոխի ուռճացած ձեռնարկությունը: Առևտրի հետ ծագումն առնելով՝ բանկերը նշանավոր դեր են խաղացել նրա զարգացման մեջ, մանավանդ Իտալիայում: Սրանց գործունեյությունն, ինչպես և լումայափոխների գործունեյությունն, սկզբում ամենից առաջ դրամ պահ ընդունելը, վճարումներ կատարելը և բանկերում փող դնող հավատարմատուների անունից ու հավատարմությամբ դրամական գումարներ փոխադրելն եր: Վաճառականներից փող պահ վերցնելով, բանկերը գրում եյին ստացած գումար-

ներն ավանդատուների (вкладчик) անունով, սրանց անունից վճարումներ եյին կատարում՝ վճարելի գումարը վճարողի անունից ստացողի անվանը գրելով։ Նրանք նաև փողի փոխադրություններ եյին կատարում, այսինքն փոխադրելի գումարն ընդունելով՝ գումարատիրոջը տալիս եյին այսպես կոչված փոխանակագիր մուրհակ, վորով նույնչափ մի գումար վճարվում եր վորևե այլ քաղաքում, վորտեղ կային բանկի հավատարմատարներ կամ բաժանմունքներ։ Բոլոր այս գործառնությունները վաճառականին ազատում եյին մշտապես իր մոտ փող պահելու անհրաժեշտությունից, իսկ այս խիստ եյական նշանակություն ուներ, յեթե նկատի առնենք այն վտանգները, վորոնց հետ կապված եյին առևտրային յերթևեկությունները միջին դարերում։

Ծառայելով ամենից առաջ առևտրի կարիքներին ու պահանջներին բանկերը պարապում եյին միևնույն ժամանակ նաև վարկային ու փոխատու-գրավային գործառնություններով՝ մասամբ սեփական գումարների, մասամբ էլ ավանդագրած (доверительный) գումարների հաշվին։ Ներդրած (вложенный) դրամների այսպիսի ոգտագործումը, մեր ժամանակվա հակառակ, ավելի շուտ չարաշահություն (злоупотребление) եր բանկերի կողմից, քան ընդհանուր կանոն, և սովորաբար վոչ միայն չեր կանխատեսվում, այլ նույնիսկ ուղղակի արգելվում եր հատուկ կարգադրություններով։ Թագավորները, աշխարհիկ ու հոգևոր իշխաններն, ինչպես և ավելի պակաս նշանավոր հողատերերն իրենց անհրաժեշտ դրամական գումարները պարտք եյին վերցնում իտալական բանկիրներից՝ սրանց փոխարեն նրանց թողնելով այս կամ այն պետական հասույթների, մաքսային տուրքերի, հողային ռենտայի գանձումը։ Միջնադարյան ժամանակաշրջանի վերջերին Վենետիկում ու Ջենովայում առաջ յեկան բաժնետիրական բանկային ձեռնարկություններ, այսինքն այնպիսիք, վորոնց կապիտալները միքանի հոգու ավանդներից (вклад) են կազմում։ Առանձին հռչակ ուներ Ջենովայի սուրբ Գեորգի բանկը։ Այս բանկը գործեր ուներ համարյա բոլոր յեվրոպական պետությունների մեջ։ Նրա կապիտալը 50 տարվա ընթացքում՝ 1417-ից մինչև 1470 թիվը չորս անգամից ավելի մեծացավ (2,7 միլիոնից հասավ 12 միլիոն լիրայի)։

5. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆ ԸՍՏ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՄԻՋԿՈՄՄՈՒՆԱԼ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ Ամբողջ միջնադարյան ժամանակաշրջանի ընթացքում միջկոմմունալ առևտուրը, բացի Իտալիայից, մնացյալ վայրերում համեմատաբար թույլ եր զարգացած և սահմանափակվում եր սակավաթիվ ավելի նշանավոր առևտրային քաղաքներով։ Առևտրի գերիշխող տիպը քաղաքային վաճառանոցային առևտուրն եր մնում։ Քաղաքային կյանքն իր փակ բնույթն սկսում ե կորցնել այն բանից հետո միայն, յերբ միջկոմմունալ առևտրի առարկա դարձան ներմուծվող ապրանքների հետ միասին տեղական արդյունաբերության ապրանքներն ել։ Վոչ թե առևտուրն, այլ ամենից առաջ զարգացումն արդյունաբերության, վոր աճել և քաղաքային ռայոնական տնտեսության նեղ շրջանակից դուրս եր յեկել, վերջիվերջո հաղթահարեց քաղաքային փակվածությունը և ճեղքեց այն ամբարտակները, վորոնցով համքարային արհեստավորները ձգտում եյին իրենց անջատել արտաքին աշխարհից։

Ժամանակի ընթացքում առանձին քաղաքների մեջ արդյունաբերության այս կամ այն ճյուղն այնքան եր զարգանում, վոր տեղական քաղաքային շուկայի պահանջներից գերազանցում եր և սկսում եր աշխատել ավելի ընդարձակ շուկայի համար, ուրիշ քաղաքներ արտահանելու նպատակով։ Այսպիսիք եյին, ամենից առաջ, արհեստի այն տեսակները, վորոնք առանձին արվեստ եյին պահանջում, որինակ՝ նուրբ մահուդ կամ թե այնպիսի հում նյութեր պատրաստելը, վորոնք ստացվում եյին արտադրության միքանի վորոշ կենտրոններում, ինչպես որինակ, մետաքսե գործվածքներ պատրաստելը։ Առանձին քաղաքներում հատուկ արտադրությունների զարգացմանը կարող եյին նպաստել նաև ուրիշ հանքամանքներ,—տվյալ վայրում այս արտադրությունների համար անհրաժեշտ հում նյութի—յերկաթե հանքանյութի (руда), անագի, սաթի արդյունահանությունը (добывание), քաղաքում մի մասնագիտության արհեստավորների կուտակումը, վերջապես բազմաթիվ արհեստավորներ հրապուրող ու քաշող քաղաքի առևտրական նշանակությունը։

Արդյունաբերական արդյունքների միջից ամենից վաղ միջկոմմունալ առևտրի առարկա յեն դառնում նուրբ մահուդները. առանձնապես հռչակված եյին Ֆլամանդական ու Բրաբանդի մահուդները, վորոնք պատրաստվում եյին Ֆլանդրիայի, այլև Ֆրանսիայի հյուսիսային մասի քաղաքներում։ Յուրաքանչյուր քաղաք կամ յուրաքանչյուր վայր ապրանքների առանձին տեսակների արտադրության մեջ մասնագիտանում եյին. Բրյուգգեն ու Վալանսենը զոլավոր կտորներ եյին արտադրում։ Գենտն ու Իպրը՝ ալ-կարմիր, Բուրգունդիան ու Շամպանը՝ կանաչ։ Ընդարձակ շուկա հանելու համար նշանակված մահուդի արտադրությունը զարգացել եր նմանապես Իտալիայի միքանի քաղաքներում, մանավանդ Ֆլորենցիայում, ինչպես և Միլանում ու Վենետիկում։ Միջին դարերում կտավեղենների արտադրության կենտրոնն եր դարձել Կոստանց քաղաքը։ Մետաքսեղենի արդյունաբերությունը զարգացել եր համարյա բացառապես Իտալիայի քաղաքներում, վորոնք մետաքսն ստանում եյին Արևելքից, գլխավորապես Ջենովայում, Վենետիկում ու Լուկկում։ Դարձյալ Իտալիայի քաղաքներում, ամենից առաջ Վենետիկում, զարգացավ նաև ապակեղենի արտադրությունը,

վորը մետաքսեղենի արդյունաբերության նման փոխ եր առնված Արևելքից։ Մի քանի գերմանական քաղաքներ հռչակված եյին իրենց մետաղե արդյունքներով, Զոլինգենը՝ զենքով, Նյուրնբերգը՝ մանր յերկաթե իրերով։ Լյուբեկում, վորը սաթ արդյունահանելու տեղին մոտ եր գտնվում, ծաղկում եր սաթե համրիչների արտադրությունը։

Արդյունաբերական արդյունքներն սկզբում վաճառվում եյին առավելապես տոնավաճառներում։ Ժամանակի ընթացքում, յերբ առանձին քաղաքների հատուկ արտադրություններն ավելի ու ավելի համբավ եյին ձեռք բերում, թույլատրվում եր նրանց արդյունքների ներմուծումը տեղական քաղաքային շուկաներնել։ Սկզբում իբր բացառություն թույլատրում եյին միայն այն արդյունքների համար, վորոնք չեյին պատրաստվում տեղում (մետաքսի գործվածքների, նուրբ մահուդների ու այլոց համար)։ Հետագայում այս թույլտվությունը տարածվեց ուրիշ արդյունքների վրա յել։

6. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ։ Այն րոպեյից, յերբ հաղթահարվում ե քաղաքային փակվածությունը, քաղաքային տնտեսության հիմքերը խորտակվում են։ Տեղական արդյունաբերության վորքան ավելի շատ արդյունքներ եյին միջկոմմունալ առևտրի առարկա դառնում, այնքան ավելի յեր ընդարձակվում ու ամրանում ինքն իսկ առևտուրը։ Քաղաքների միջև սկզբում թույլ ու ցրիվ առևտրական կապերն ավելի սերտ ու հարատև եյին դառնում և ամրապնդվում եյին առևտրային հատուկ պայմանագրերով ու համաձայնություններով։ Արտադրության մասնագիտացումն ըստ քաղաքների ուժեղանում ե։ Արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք զարգանում են մի քանի քաղաքներում, միաժամանակ բոլորովին չքանում են ուրիշների մեջ։ Յուրաքանչյուր յերկրում առանձին արտադրությունների հատուկ շրջաններ ու կենտրոններ են կազմվում։ XV դարի վերջում Պարիզում ծախվում եր մահուդ, վոր բերվում եր Շամպանից, Նորմանդիայից, գործվածքներ՝ Ովերնից, աստառացու՝ Արրասից, յերկաթեղեն ու զարդնոցային արդյունքներ՝ Տուլուզից, սանրեր՝ Լիմոժից։ Մահուդի աշխույժ առևտուր եր լինում Տուր քաղաքում, ուր իրենց արդյունքներն եյին առաքում ֆրանսական 15 քաղաքներ։ Մետաքսեղենի արդյունաբերությունը զարգացած եր առավելապես Լիոնում։ Գերմանիայում մահուդ պատրաստվում եր մերձհռենոսյան քաղաքներում, կտավեղեն՝ Սիլեզիայում, յերկաթեղեն ու զարդնոցային արդյունքներ՝ Նյուրնբերգում։ Անգլիայում նույնպես առաջ եյին յեկել մահուդի, կտավեղենի, յերկաթի արդյունքների ու արդյունաբերության այլ ճյուղերի արտադրության սեփական կենտրոններ (արևելյան կոմսությունների մեջ)։

Քաղաքների միջև կապերի ամրապնդման հետ ամբողջ տնտեսա-

կան կյանքն սկսում ե կառուցվել ավելի լայն հիմունքի վրա՝ ազգային ու պետական չափեր ընդունելով։ Քաղաքային տնտեսությունը խորտակվում ե՝ տեղի տալով ազգային տնտեսությանը։ Քաղաքային սահմանափակ շուկայի փոխարեն ազգային շուկա յե կազմվում։ Արդյունաբերական խոշոր կենտրոններն աշխատում են վոչ թե միայն իրենց շրջանի, այլ ամբողջ յերկրի համար։ Ազգային արդյունաբերությունն ու ազգային առևտուրը զարգանում են։ Ամբողջ յերկրի համար միաձույլ ստակային սիստեմ և չափերի ու կշիռների միատեսակ սիստեմ ե հաստատվում։ Ներքին անհամար մաքսային պատնեշները չքանում են, և նրանց փոխարեն սահմանվում են մաքսատներ պետության սահմանների վրա։ Միջոցներ են ձեռք առնվում հաղորդակցության ճանապարհների բարելավման ու նրանց անվտանգության համար, նաև բռնելու ու պատժելու համար ինչպես մանր կողոպտիչներին, այնպես և ֆեոդալներին, վորոնք իրենց ամրոցներից հարձակվում եյին անցվոր վաճառականների վրա։ Սրա հետ միասին հրապարակ ե մղվում կենտրոնական իշխանության նշանակությունը։ Ազգային տնտեսության հետ կապված լինելով ու միաժամանակ նրա զարգացման հետ միասին, զարգանում ե նաև ազգային պետությունն ու ազգային պետական իշխանությունը, վորն ամենից առաջ ծառայում եր բուրժուազիայի նորածին դասակարգի շահերին, մի դասակարգի, վորի ույժն ու նշանակությունն արդեն վոչ թե հողային տիրապետությունների մեջ եր ամփոփված, այլ դրամական կապիտալ ունենալում։

15-րդ ու 16-րդ դարերն անցման ժամանակաշրջան են կազմում, 17-րդ ու 18-րդ դարերն՝ ազգային տնտեսության ծաղկման ժամանակը։ Ռուսաստանում ազգային տնտեսության առաջանալու պրոցեսն սկսվել ե 16-րդ դարում, սակայն այստեղ ավելի դանդաղ ե առաջ ընթացել այն և ավարտվել ե 19-րդ դարի կեսին միայն։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՄՔԱՐԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

1. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՎԵԼՆ ՈՒ ՀԱՄՔԱՐԱՅԻՆ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՂ ԴԱՌՆԱԼԸ։ Արտադրության մասնագիտացման զարգանալու և միջկոմմունալ առևտրի մեծանալու հետ համքարային կազմակերպությունն արդեն չափազանց նեղ էր աճող արդյունաբերության համար։ Ընդսմին սկսվում է նրա քայքայումը։ Համքարության խորտակումը միաժամանակ տեղի յե ունենում ինչպես ներսից՝ նախկին հավասարության չքանալու շնորհիվ, այնպես և դրսից այն բանի հետևանքով, վոր առևտրային կապիտալը միջամտում է արտադրության ասպարեզը։ Վորքան դժվարանում եր համքար վարպետի կոչման հասնելը, այնքան ավելի արագ եր աճում վարպետացուների թիվը, այնքան ավելի շատերն եյին նրանցից զրկված լինում առանձին արհեստանոցներում։ Բանվորների թվի այսպես մեծանալուն նպաստում եր այն հանգամանքը, վոր միջկոմմունալ առևտրի զարգացման հետ մեծանում եր արդյունաբերական արդյունքների պահանջը։ Չնայած վոր 1—2 բանվորից ավելի ունենալն արգելված եր, ավելի բարեկեցիկ վարպետները ձեռքի տակ յեղած վարպետների թիվն իրենց արհեստանոցում հասցնում են մինչև 6—10-ի ու նույնիսկ ավելի շատի։ Միաժամանակ նրանք սաստկացնում են այս բանվորների աշխատանքի շահագործումն ել՝ բանվորական օրը շատ ու շատ յերկարացնելով այն սահմաններից ավելի, վոր թույլատրել եյին համքարային կանոնադրությունները։

Արտադրությունն այսպիսով ընդարձակելով, ավելի բարեկեցիկ առանձին վարպետներն սկսում են իրենց արդյունքներն վաճառել վոչ միայն տեղական քաղաքային շուկայում, այլև տանում են տոնավաճառներն ու մոտագույն, ավելի նշանավոր առևտրային կենտրոնները։ Ընդսմին նրանք ավելի հաճախ հանձն են առնում նաև ուրիշ արհեստավորների արդյունքների վաճառքը՝ այսպիսով հանդես գալով առևտրային միջնորդների նոր դերում։ Արտադրության այն ճյուղերում, վորոնց մեջ աշխատանքի արդյունքը հաջորդաբար անցնում է միքանի համքարությունների վարպետների ձեռքով, ինչպես օրինակ՝ մա-

հուդեղենի արդյունաբերության, սառը զենքի արտադրության մեջ, արդյունքների վաճառքը հենց միայն այս հանգամանքի շնորհիվ կենտրոնանում է այն համքարության անդամների ձեռքում, վորն ավարտում եր արտադրությունն ու պատրաստվող արդյունքին վերջնական կերպարանք տալիս։ Այս պարագան նրանց բացառիկ բարենպաստ դրության մեջ եր դնում այլ համքարությունների անդամների նկատմամբ, վորոնք մի տեսակ կախված եյին լինում նրանցից։

Այս բանի շնորհիվ առանձնապես առաջ գնաց մահուդագործների համքարությունը, վոր իշխում եր մի շարք ստորին համքարությունների վրա՝ բուրդ ծախողների, գզրարների, սանդերքով գզողների, մանողների, ջուլհակների, լմողների (валялщик), խավատողների (стригальщик), ներկարարների ու նախշողների համքարությունների վրա։ Դեռ միջնադարյան ժամանակաշրջանում մահուդագործների համքարությունը մնացած բոլոր համքարություններից բարձր եր կանգնած՝ նրանց միջև թե հարստությամբ ու թե ազդեցիկ դիրքով առաջին տեղը գրավելով։ Նմանապես մահուդագործներն եյին, վոր ամենից առաջ շահվեցին արտադրության ընդարձակումից, վորովհետև միջկոմմունալ առևտրի մեջ ամենավաճառուն (наиболее ходкий) ապրանքներից մեկը հենց մահուդն եր։

2. ԱՐՀԵՍՏԻ ԿԱՊԻՏԱԼԻՆ ՅԵՆԹԱՐԿՎԵԼԸ։ Սակայն արհեստից արտադրության նոր ձևերին անցնելը վոչ այնքան այս ճանապարհով եր կատարվում, վոչ այնքան արտադրությունը միքանի արհեստավորների ձեռքում միացնելու ու վերջիններիս ձեռնարկող դարձնելու ճանապարհով եր լինում, վորքան արհեստը կապիտալին յենթարկելով։ Մինչ այդ, ինչպես արդեն գիտենք, միայն յերկու ձևով եր զարգանում կապիտալը—առևտրային ու վաշխառուական կապիտալի ձևով։ Կապիտալի այս յերկու ձևն ել զարգանում եյին միաժամանակ ու զուգահեռաբար, միմյանց հետ սերտ կապ ունենալով։ Առևտրային կապիտալը վաճառող առևտրականի ձեռքում անհրաժեշտ րոպեյին փող եր մատակարարում գնորդին։ Այսպիսով կապիտալի յերկու տեսակն ել փոխանակության պրոցեսում դեր եյին կատարում՝ այս պրոցեսի յերկու կողմերին ել ծառայելով ու, կարծես թե, այս տեսակետից մեկը մյուսի լրացումը լինելով։ Ահա թե ինչ է պատճառը, վոր կապիտալի սկզբնական ձևերի զարգացումն անմիջական կապ է ունենում առևտրային փոխանակության զարգացման հետ։

Արհեստի ու քաղաքային փակ տնտեսության տիրապետության ժամանակաշրջանում արտադրության պրոցեսն, ընդհակառակը, միանգամայն անկախ եր կապիտալից։ Սկզբում առևտրային կապիտալը սահմանափակվում եր բացառապես միջնորդությամբ, ընդսմին վոչ այնքան բուն իսկ արտադրողների միջև, վորոնք անմիջորեն իրար

հետ եյին փոխանակում արդյունքները, վորքան ֆեոդալների միջև, վորոնք կախյալ ազգաբնակության աշխատանքի արդյունքները փոխանակում եյին պերճանքի այն ապրանքների հետ, վորոնք ներմուծվում եյին այլ յերկրներից։ Վաշխառուական կապիտալն էլ ճիշտ նմանապես ամենից առաջ ֆեոդալների դասակարգի դրամական պահանջն եր բավարարում։ Միայն հետագայում ու շատ ավելի չափերով զարգացավ մանր վաշխառությունը, վոր ծառայում եր յերկրագործ ու արհեստավոր, այսինքն իսկական արտադրող բնակչությանը։ Այսպիսով ինչպես առևտրային, այնպես և վաշխառուական կապիտալի աճումը կատարվում եր ամենից առաջ բարձր դասակարգի, գլխավորապես խոշոր ֆեոդալների գույքերի ու հասույթների հաշվին։ Սակայն նրա ճնշումը դեռ շատ վաղ ու ընդմիշտ շարունակ աճող սաստկությամբ զգում եյին նաև մանր արտադրողները, մանավանդ գյուղացիք, վորովհետև սենյորները վաճառքի արդյունքների ու վաշխառուների վճարելու միջոցների աճող կարիքին բավարարություն եյին տալիս այն բանի միջոցով, վոր իրենցից կախված ազգաբնակության շահագործումը շատացնում եյին։

Այսպիսով թե միջնորդաբար ու թե անմիջորեն նպաստելով մանր արտադրողների քայքայմանն ու միաժամանակ արտադրության հին ձևերի հիմքերը փորելով՝ կապիտալը, սակայն, չեր միջամտում արտադրողական գործունեյության բուն իսկ ասպարեզը և չեր փոխում արտադրության վոչ յեղանակն ու վոչ էլ բնույթը։ Կապիտալն ու արտադրողն այսպիսով անջատված եյին և իրարուց անկախ։ Այն միջոցին միայն, յերբ արտադրության նախկին յեղանակների ու ձևերի նեղ շրջանակները չափազանց անձուկ դարձան, և նրանց ունեցած միջոցներն էլ ակնհայտնի կերպով անբավարար դուրս յեկան, վրա հասավ կապիտալի՝ արտադրության պրոցեսին անմիջորեն միջամտելու ժամանակը։

Կապիտալի միջամտությունն սկզբում արտահայտվում եր դրամի փոխատվությամբ՝ ընչապակաս վարպետներին նյութեղեն բաժանելով, նախորոք նրանց ամբողջ արտադրությունը գնելով, ընդվորում արհեստավորը կողմնակի վաճառքի իրավունքից զրկվում եր, վերջապես արհեստային արդյունքների մասսայական մեծագնումով (скупка)։ Այս տեսակ գործառնություններով զբաղվում եյին Գերմանիայի բոլոր ամենահարուստ ու աչքի ընկնող առևտրական տները 15—16-րդ դարերում—Ֆուգգերների, Վելզերների, Գումպլիների, Ռուլանդների ու այլոց տները։ Այսպիսով կապիտալն առաջվապես հանդես է գալիս իբրև առևտրային ու վաշխառուական կապիտալ, բայց արդեն մեծագնորդական (скупщический) կապիտալի նոր ձևով։ Կանգնելով արտադրողների ու սպառողների արանքում՝ կապիտալը ժամանակի ըն-

թացքում ավելի ու ավելի յե դառնում շուկայի գերիշխող տեր։ Ահա թե ինչն է պատճառը, վոր ազգային տնտեսության ժամանակաշրջանը միաժամանակ նաև առևտրային կապիտալի գերակշռության շրջան է, առևտրային կապիտալիզմի դարաշրջան ճիշտ այնպես, ինչպես քաղաքային ռայոնական տնտեսության ժամանակաշրջանը արհեստի տիրապետության դարաշրջանն եր, իսկ հաջորդ շրջանը՝ արդյունաբերական կապիտալիզմի։*)

3. ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ։ Առանձին արհեստավորների զատվելը մի կողմից, և անկախ արհեստի անկումն ու սրա՝ առևտրային կապիտալին յենթարկվելը մյուս կողմից պատճառ դարձան, վոր համքարության քայքայումն արագ քայլերով առաջ ընթացավ, այն համքարության, վոր ձգտում եր բոլոր արտադրողներին հավասար պայմանների մեջ դնելու։ Արհեստավորների նախկին հավասարությունն ու անկախությունը չքացավ։ Չքացավ արհեստավորի՝ շուկայի հետ ունեցած անմիջական կապն էլ, վորի հետ անհետանում է արտադրողի՝ իր աշխատանքի արդյունքների վրա ունեցած իշխանությունն էլ. արհեստավորի ու շուկայի արանքում բուսնում է միջնորդը, վորին այնպես ուշադրությամբ արտաքսում եյին համքարային կանոնադրությունները։ Վերջապես իրենց ույժը կորցրին նաև բանվորների քանակի ու բանվորական ժամանակի սահմանափակում-

*) Առանձին քաղաքներում, վորտեղ առևտուրը զարգացած եր և առևտրի շահերն արդեն շատ վաղուց պահանջում եյին արտահանության ծառայող արտադրությունն ընդարձակել, դեռևս քաղաքային տնտեսության դարաշրջանում ստեղծվել եյին պայմաններ մեծագնորդական կապիտալի ծագման ու արհեստը նրան յենթարկելու համար։ Այսպես եր, օրինակ՝ Վենետիկում ու Իտալիայի առևտրային հանրապետությունների միքանի քաղաքներում, ինչպես և յեվրոպական ցամաքի միքանի արդյունաբերական կենտրոններում։ Սակայն միայն առևտրային կապիտալիզմի դարաշրջանում այս հատ-հատ դեպքերն ընդհանուր կանոն դարձան։ Հին դարերի առևտրային քաղաքներում, ամենից առաջ Հունաստանում, առանձնապես բարենպաստ աշխարհագրական պայմանների շնորհիվ առևտրային զարգացումն, այն է՝ Արևելքի կուլտուրական ժողովուրդների ու Միջերկրական ծովի արևմտյան կիսի կիսաքաղաքակիրթ մարզերի (область) միջև յեղած առևտրային միջնորդությունը կատարվում եր բացառիկ արագությամբ և, Միջնադարյան Յեվրոպայի հակառակ, շատ կանխել եր արհեստի զարգացմանը։ Այս պատճառով էլ այստեղ առևտրային կապիտալը դեռևս բացակայող արհեստը մի բանով փոխարինելու նպատակով պետք է դիմեր ստրուկների աշխատանքին՝ ստրուկներ գնելով ու սրանց հարկադրելով, վոր աշխատեն հատուկ գործանոցներում։ Սակայն այսպիսի արդյունաբերությունը, վոր հիմնված եր ստրուկների անազատ աշխատանքի վրա, անկենսունակ դուրս յեկավ, ուստի և հետագա զարգացում չունեցավ։ Սրա հետ միասին Հունաստանի տնտեսական զարգացումը կանգ առավ, իսկ այս իր հերթին առաջ բերեց ամբողջ հունական յերկրի ընդհանուր անկում, մի անկում, վորի պակասը լրացրեց տեղափոխությունը ծովային առևտրային ճանապարհների, վորոնք հին դարի յերկրորդ կիսին անցնում եյին Ալեքսանդրիայի վրայից, Հունաստանից հարավ։

ները, վորոնց նպատակն եր համքարության առանձին անդամների միջև յեղած արտադրական անհամաչափությունը կանխել ու արգելել։ Շուկայի ընդարձակման ու արտադրության ընդհանուր մեծացման հետ այս սահմանափակումներն իրենք իրենց անհետանում եյին։ Ընդհակառակն, առևտրական դասակարգից կախված լինելու վիճակի մեջ ընկնելով՝ արհեստավորներն իրենք հարկադրված եյին իրենցից կախում ունեցող վարպետացուների ու բանվորների շահագործումը սաստկացնել։ Մահուդագործների համքարության նման հարուստ համքարությունների մեջ վարպետները մեծ մասամբ դադարում եյին անձամբ աշխատելուց՝ իրենց վերապահելով աշխատանքի ընդհանուր հսկողությունը միայն և այսպիսով իսկական ձեռնարկողներ դառնալով։ Ընդսմին չքանում եյին նաև վերջին հետքերը նախկին մերձավորության, վոր մի ժամանակ գոյություն ուներ վարպետների ու վարպետացուների միջև։ Վարպետի կոչման հասնելու հնարավորության վերացումը մի կողմից, շահագործման սաստկանալը՝ մյուս կողմից, վարպետացուների՝ վարձու բանվոր դառնալը լիակատար դարձրին, և սրանց ու գործատեր-ձեռնարկողների շահերը գնալով հետզհետե ավելի ու ավելի յեյին տարբերվում իրարից։

Շահերի այսպիսի հակադրությունն ու միևնույն ժամանակ նրանց աշխատանքի աճող շահագործումը, բնականաբար, վարպետացուների կողմից դիմադրություն եյին առաջ բերում և նրանց կռվի յեյին մղում վարպետների դեմ։ Այն պայմանները, վորոնցում գտնըվում եյին վարպետացուներն այն ժամանակ, նպաստում եյին նրանց միահամուռ հանդես գալուն և այսպիսով հեշտացնում նրանց կռիվը գործատերերի դեմ։ Ապրելով ու աշխատելով մեծ մասամբ իբրև անմիջական հարևաններ, միևնույն փողոցում, շարունակ իրար հանդիպելով ճաշակրպակներում (харчевня), վարձելու վայրերում, վարպետացուները հեշտությամբ եյին հաղորդակցում իրար հետ և ամեն ժամանակ կարող եյին միաբանվել միահամուռ ու ընդհանուր գործողությունների վերաբերմամբ։ Դեռ շատ վաղ, արդեն տասնչորրորդ դարում նրանք միություններ, յեղբայրություններ են կազմում, սակայն այսպիսի միությունների թիվը հատկապես արագ սկսում է շատանալ հաջորդ դարում։

Վարպետացուների յեղբայրություններն սկզբնապես թաղման գանձարկղների ու փոխոգնության ընկերությունների միևնույն բնույթն են կրում, ինչպիսին ունեյին նաև արհեստավորական համքարություններն իրենց գոյության սկզբնական շրջանում։ Սակայն ժամանակի ընթացքում, յերբ սրվում են հարաբերությունները վարպետների հետ, այն չափով ել այս միությունները դառնում են մարտական կազմակերպություններ, գործատերերի դեմ կռվելու նպատակով հա-

տուկ միություններ։ Վարպետացուներն իրար հետ համաձայնության են գալիս, վոր բանվորական որը կարճացնելու, աշխատավարձը բարձրացնելու, ընդհանրապես աշխատանքի ու ապրուստի պայմանները լավացնելու վերաբերմամբ ընդհանուր պահանջներ առաջադրեն։ Այս պահանջները ձեռք բերելու միջոցներ եյին գործադուլը, վարպետացուների փոխադարձ համաձայնությամբ աշխատանքը դադարեցնելըն ու բոյկոտը, յերբ խուսափում են ամեն տեսակի հարաբերություն ունենալուց թե՛ այն վարպետների հետ, վորոնք առանձնապես վատ համբավ ունեյին, և թե այն վարպետացուների հետ, վորոնք չեյին ոժանդակում ընկերներին ընդհանուր կռվի ընթացքում։

Վարպետների ու վարպետացուների միջև ընդհարումներն առանձնապես հաճախադեպ են դառնում տասնհինգերորդ դարից։ Վարպետները վարպետացուների գործադուլներին ու պահանջներին պատասխանում եյին նրանով, վոր կազմում եյին գործադուլներին ու այլ գործողություններին մասնակցողների անունների սև ցուցակներ, հալածում եյին ամենից ավելի անհանգիստ վարպետացուներին, մերժում եյին աշխատանք տալ սրանց և վերջապես մի շարք ընդհանուր որենսդըրական միջոցներ եյին ձեռք բերում։ 1465 թվին Ստրասբուրգում բանվորների ու վարպետացուների վերաբերմամբ հատուկ կանոնադրություն հրատարակվեց, վոր արգելում եր նրանց կազմել միություններ ու մտնել միությունների մեջ, գործադուլներ կազմակերպել, ունենալ իրենց ճաշակրպակներն ու ընդհանրապես հավաքվել միասին։ Այս կանոնադրությունն որինակ ծառայեց և ընդունվեց բազմաթիվ այլ քաղաքներում։ Բացի այսպիսի ընդհանուր կարգադրություններից, վարպետացուների դեմ ձեռք եյին առնում մի շարք առանձին հատուկ միջոցներ ել։ Սակայն այս բոլոր միջոցները մեծ մասամբ հաջողություն չեյին ունենում, և կռիվը վոչ միայն չեր դադարում, այլ գնալով ավելի ու ավելի սաստիկ եր բորբոքվում։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԻԲՐԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ։ Արտադրության համքարային հին կազմակերպությունը նոր պահանջների ազդեցության շնորհիվ, վորոնց բավարարելը նրա ույժերից վեր դուրս յեկավ, անկման հասավ։ Յեթե առանձին համքարություններ դեռ շարունակում եյին ել գոյություն պահպանել, ապա սրանք արդեն ամենևին չունեյին նախկին համքարությունների նշանակությունն, այն կազմակերպությունների, վորոնք միացնում ու ընդգրկում եյին իրենց մեջ ամբողջ արդյունաբերական գործունեությունը։ 17-րդ—18-րդ դարերի համքարություններն այլևս վոչ այլ ինչ են, յեթե վոչ սակավաթիվ արհեստավորների փակ ընկերություններ, վորոնցում արհեստը ժառանգաբար ավանդվում է հորից վորդուն, կազմակերպություններ, վորոնք կենսունակությունից զուրկ են և աստիճանաբար կորցնում են ամեն մի նշանակություն արդյունաբերական կյանքում։

*Համքարային արհեստն իր նշանակությունը միքիչ ավելի յերկար պահպանեց արդյունաբերության այն ճյուղերում միայն, վորոնք աշխատում եյին տեղական գնորդի կամ պատվիրատվի (*заказчик*) համար և այս պատճառով արդյունքների միանվագ մասսայական արտադրություն չեյին պահանջում. այսպիսին եր դերձակների, կոշկակարների, շաքարահաց թխողների, մսագործների և այլոց արհեստը։ Ընդհակառակն՝ արդյունաբերության այլ ճյուղերում, վորոնք աշխատում եյին ավելի ընդարձակ շուկայի համար, և ամենից առաջ մանածագործական (*ткацкий*) ու մետաղագործական արդյունաբերության, ինչպես և լեռնային արդյունաբերության մեջ, արդեն շատ վաղ նկատելի յե միտում դեպի խոշոր արտադրության զարգացման կողմը, մի արտադրության, վոր մեծաքանակ բանվորներին միացնում է միքանի ձեռնարկությունների մեջ։ Արհեստը մեծագնորդական կապիտալին յենթարկելն առաջին քայլն եր այս ճանապարհին։ Զարգացման պրոցեսսն այս բանի վրա դադար առնել չեր կարող, վորովհետև բանից*

դուրս եր գալիս, վոր արտադրության արհեստային յեղանակն ինքնըստինքյան անբավարար եր և ույժ չուներ ժամանակի պահանջներին գոհացում տալու համար։ Ուռճացած ու բազմացած նոր կարիքները նաև արտադրության նոր յեղանակներ եյին պահանջում։ Այսպիսի մի յեղանակ կարող եր միայն խոշոր արտադրությունը լինել։ Սակայն արտադրության այս նոր ձևի ծագման համար անհրաժեշտ եր մի կողմից՝ նախորոք կուտակումն այնպիսի կապիտալների, վորոնք ավելի խոշոր լինեյին, քան այն կապիտալները, վորոնք պահանջվում եյին առևտրական գործառնություններ կատարելու համար, և մյուս կողմից՝ վարձու պրոլետարների դասակարգի գոյացումը, վորոնք հարկադրված լինեյին իրենց բանվորական ույժը վաճառելու։

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ։ Ներկայումս արտադրության կապիտալիստական յեղանակի տիրապետության ժամանակ, կապիտալի կուտակման գլխավոր աղբյուրը վարձու բանվորի աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքի յուրացումն է։ Իսկ այն ժամանակաշրջանում, յերբ կապիտալը գոյություն ուներ դեռ միայն առևտրային ու վաշխառուական կապիտալի ձևով, ինչպես տեսանք, արտադրության մեջ անմիջորեն մուտք գործելու հնարավորություն չուներ այն, հետևաբար և իրենից կախումն ունեցող արտադրողների աշխատանքի արդյունքները յուրացնել չեր կարող։ Այս պատճառով ել կուտակման միակ աղբյուրները առևտրային վաստակն ու փոխատվությունների տոկոսներն եյին։

Առևտրային կապիտալի հիմքը կազմում եյին ֆեոդալական հասույթները, լիներ այս անմիջական ձևով, յերբ իրենք՝ ֆեոդալները, զանազան արդյունքներ ստանալու կարիք ունենալով, մասնակցում եյին առևտրին իրենց դրամագլուխներով (իսկ այս, ինչպես գիտենք, առևտրային զարգացման սկզբում սովորական յերևույթ եր), թե միջնորդաբար, յերբ այս հասույթները զանազան առևտրային ու վաշխառուական գործառնությունների ճանապարհով անցնում եյին պրոֆեսիոնալ առևտրականների տրամադրության ներքո։ Սակայն առևտրային կապիտալի հետագա աճումը կատարվում է արդեն լիովին անկախորեն, ամենից առաջ առևտրային վաստակի կուտակման կերպարանքով։ Առևտրային վաստակը վիթխարի չափերի յեր հասնում։ Այս կախումն ուներ մի կողմից գաղութային արդյունքներին տիրանալու նախնական յեղանակներից (իսկ այս տիրանալը կատարվում եր անմիջական բռնի յուրացման ճանապարհով) և մյուս կողմից՝ բուն իսկ յեվրոպական շուկայի պայմաններից, վորոնք թույլ եյին տալիս յեկվոր վաճառականներին բոլորովին քմահաճ գներ նշանակելու։

*Ինչպես գիտենք, առևտուրն իր ծագման միջոցին մոտիկ առընչություն ուներ հենության (*пиратство*) հետ։ Հետագայում յել, յերբ*

ավելի հաստատուն հարաբերություններ սահմանվեցին, այս առևտուրն ամենևին չզատվեց միանգամից նախնական բռնի հնարներից։ Փյունիկեցի ու հույն վաճառականները հնում, իտալացի առևտրականները միջին դարերում, նովգորոդցի գետահենները (ушкуйник) Ռուսաստանում նույնքան վաճառականներ եյին, վորքան և սոսկ կողոպտիչներ, ավազակներ։ Խաչակրաց չորրորդ արշավանքի ժամանակ Կոստանդնուպոլիսն ավարի տալը նույնպես, ինչպես և ավելի վաղ՝ Անտիոքը, Կեսարիան ու Լևանտի (Արևելքի) մյուս քաղաքները թալանի տալը միջնադարյան Յեվրոպայում հարստություն կազմելու գլխավոր հիմունքներից մեկը յեղավ։

Գաղութային տիրապետությունների հաշվին կուտակման ավելի սիստեմատիկ յեղանակ եր տեղական ազգաբնակության ամենալայն շահագործումը, լիներ այս՝ տուրքեր գանձելու կերպարանքով, թե անմիջորեն աշխատանքի հարկադրելու կերպարանքով։ Իտալիայի առևտրային հանրապետություններն իրենց լևանտական տիրապետություններում մշակում եյին զանազան արևելյան մրգեղեններ, պատրաստում եյին քաղցրավենիքներ, ներկող նյութեր, սարքում եյին շաքարեղենի ու բամբակենու պլանտացիաներ, ընդսմին ընդարձակ չափերով օգտագործում եյին տեղական ազգաբնակության աշխատանքը։ Սրա հետ միասին նրանք իրենց եյին յենթարկում մետաքսեղեն ու բամբակեղեն գործվածքների, բրդային ու ապակեղեն արդյունքների տեղական արտադրությունը։ Միևնույն ժամանակ իտալացի առևտրականները բռնի յեյին վաճառում իրենց ապրանքները տեղացիներին՝ սրանց հարկադրելով գնելու այնպիսի իրեր ու արդյունքներ, վոր նրանց հարկավոր չեյին բոլորովին։ Այսպիսով առևտուրը միակողմանի գործողության բնույթ եր ընդունում, մի գործողության, վորի ընթացքում ավելի ուժեղ կողմն իր կամքն եր թելադրում թույլին։ Ի հետևանս այն հանգամանքի, վոր իտալացի վաճառականները յերկու հարյուր տարի իբրև տեր ու տնօրեն խաղեր եյին սարքում Լևանտի (Արևելքի) քաղաքներում, այս ծաղկած յերկիրը կատարյալ անապատ դարձավ։

Գաղութային արդյունքները ձեռք բերելու այսպիսի պարզացրած յեղանակը նրանց ինքնարժեքը վաճառականի համար մեծ մասամբ չնչին մեծություն եր դարձնում։ Միաժամանակ յեվրոպական շուկաներում վաճառականը կատարյալ տեր եր և կարող եր այնքան բարձր գներ նշանակել, վորքան կամենում եր։ Այս շուկայում գլխավոր գնորդները ֆեոդալներն եյին, վորոնք պերճանքի առարկաների հետ փոխանակում եյին իրենց տնտեսական ավելցուկները, իսկ սրանք արտադրվում եյին ճորտերի աշխատանքով և, հետևաբար, ֆեոդալների բաժին եյին դառնում առանց սրանց կողմից վորևե ջանք ու ծախս

գործադրելու։ Ահա թե ինչու նրանք պատրաստ եյին, առանց սեփական տնտեսության արդյունքների արժեքը հաշվի առնելու ամենևին, իրենց քմահաճույքին կամ պերճամոլությանը բավարարություն տալու խաթեր վճարելու իրենց արդյունքներից այնպիսի քանակությամբ, վորքան ուզենային։ Այսպիսի պայմաններում այլևս զարմանալի չե, վոր այն ժամանակվա առևտրային սովորական վաստակը չափվում եր հարյուրավոր տոկոսներով։

Սակայն առևտրային գործառնություններից ստացած վաստակները վորքան էլ բարձր լինեյին, նրանց նշանակությունը չափավորում եյին բուն իսկ միջնադարյան առևտրի աննշան չափերը, ճանապարհների դժվարությունները, ճանապարհածախսերի բարձրությունը և վերջապես այն հսկայական ռիսկը, վորի հետ կապված եյին այն ժամանակվա առևտրային գործառնությունները։ Բացի սրանից, բուն իսկ վաստակներն էլ բավական անհամաչափ եյին բաշխվում։ Վաստակների առյուծային բաժինն ընկնում եր իտալացի առևտրականների ձեռքը, վորոնք անմիջապես հաղորդակցություններ ունեյին Արևելքի յերկրների հետ։ Այս պատճառով էլ ամենից ավելի դրամական կապիտալներ կազմվում են Իտալիայում։ Իսկ յեվրոպական մյուս յերկրներում կուտակումն սկսում է միջնադարյան վերջերին միայն 14—15-րդ դարերից վոչ ավելի վաղ։ Ֆրանսիայում 15-րդ դարում աչքի յեն ընկնում Ժակ Կերի առևտրական տունը, վորը կարողացել եր անմիջական կապեր հաստատել Արևելքի հետ։ Գերմանիայում 15-րդ դարի ընթացքում խոշոր կարողություններ են գոյանում Աուգսբուրգում ու Նյուրնբերգում, վորոնք մշտական առևտրային հաղորդակցություններ եյին պահպանում Վենետիկի հետ (Ֆուգգերների, Վելզերների, Իմհոֆների, Շեյերլների ու այլոց առևտրական տները)։ 15-րդ դարի վերջից պատկերը խիստ փոխվում է։ Մեծ գյուտերի դարաշրջանը նոր դարագլուխ է բաց անում «սկզբնական կուտակման» գործում։ Գաղութային վիթխարի տիրապետություններին իրենց անսպառ հարստություններով այնպիսի հեռանկարներ եյին բաց անում Յեվրոպայի վաճառականների առջև, վոր լևանտական առևտրի վաստակները նրանց հետ համեմատելով՝ չնչին եյին։

3. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Յերբ թաճիկները Կ.-Պոլիսը նվաճեցին, վորից հետո արևելյան շուկաները փակվեցին ու Արևելքի հետ հաղորդակցությունները դադարեցին, այս հանգամանքները դրդեցին յեվրոպացի վաճառականներին Հնդկաստան տանող անմիջական ծովային ուղիներ վորոնելու։ 1498 թվին առաջին անգամ պորտուգալացի Վասկո դը Գաման հասավ Հնդկաստան՝ Աֆրիկայի շուրջը նավելով։ Ինչպես հայտնի յե, վեց տարի նրանից առաջ Կոլումբոսը, վոր նույն նպատակն ուներ աչքի առաջ, գտավ Ամերի-

կան։ Այս գյուտերի հետևանքները բոլոր ակնկալություններից գերազանց յեղան։ Պորտուգալացիք վոչ միայն թափանցեցին Հնդկաստան, Չինաստան, Յապոնիա, այլ հաջողությամբ գրավեցին Աֆրիկայի ամբողջ ծովափը, հիմք ձգեցին Յավայում ու Հնդկական արշիպելագի այլ կղզիներում։ Նույն այս ժամանակ սպանացիք տիրացան ամբողջ նոր աշխարհամասին, վորտեղից Յեվրոպայի վրա իսկական վոսկե անձրև տեղաց։

Յերբ ծովային ճանապարհները տեղափոխվում են և Միջերկրական ծովն իր նախկին բացառիկ նշանակությունը կորցնում է, առևտրային առաջնությունն իտալական հանրապետություններից անցնում է այն յերկիրներին, վորոնք հակված եյին Ատլանտյան ովկիանոսի կողմը։ Սպանացիք ու պորտուգալացիք, հոլլանդացիք, անգլիացիք, ֆրանսիացիք իրար յետևից ձգտում են գաղութային տիրապետություններ ճարելու և գաղութային առևտրի բարիքներին հաղորդակից լինելու։ Գաղութային հարստությունների նույնպիսի գիշատիչ ավարառություն սկսվեց, վորպիսին ավելի վաղ տեղի յեր ունեցել Լևանտի յերկրներում իտալացի վաճառականների տիրապետության ժամանակ։ Օգտվելով այն հանգամանքից, վոր իրենք ույժի կողմից գերազանցում են տեղացիներից, յեվրոպացիք խլում եյին նրանց գույքը, նրանց վրա զանազան տուրքեր ու ռազմատուգանքներ եյին դնում, նրանց վզին եյին փաթաթում սրանց միանգամայն անպիտան իրեր ու ծուռ-պուռ բաներ՝ հարկադրելով անհավատալի բարձր գներ վճարելու և վերջապես նրանց ստիպում եյին իրենց՝ յեվրոպացիների համար աշխատել հանքավայրերում , սրճի (հոլլանդացիք Յավա կղզում ու Զոնդյան մյուս կղզիներում) ու շաքարի (Ամերիկա) պլանտացիաներում։ Այնտեղ, վորտեղ այսպիսի անսահման շահագործման հետևանքով տեղական ազգաբնակությունը բնաջնջվել եր (օրինակ՝ Յամայկա, Կուբա կղզիներում, Իսպանյոլայում), տեղական ազգաբնակությունը չքացել եր արդեն 16-րդ դարի կեսերին, և նրան փոխարինում եյին ստրուկներով, վորոնց բերում եյին դրսից։

Այն ժամանակ, յերբ Ամերիկան ու Հնդկաստանը շրջակա կղզիների հետ միասին ամենից առաջ գաղութային հարստությունների արտահանման յերկիրներ եյին, Աֆրիկան գլխավորապես մարդկային նյութեղեն (материал) եր մատակարարում, վոր անհրաժեշտ եր այս հարստությունների շահագործման համար։ Դեռ 16-րդ դարի սկզբից պորտուգալացիք արդեն հատուկ արշավանքներ են ձեռնարկում նեգր ստրուկներ ճարելու նպատակով։ Նեգրերի տարեկան արտահանությունը ժամանակ առժամանակ հասնում եր միքանի հարյուր հազար մարդու։ Հոլլանդացիք մարդկանց այսպիսի հափշտակություն կազմակերպեցին հետագայում Ցելեբես կղզում։ 16-րդ դարից սկսած յերեք հար-

յուրամյակի ընթացքում յեվրոպական առևտրի ամենից ավելի վաստակաբեր (прибыльный) ճյուղերից մեկը մարդավաճառքն եր։

Յեվրոպացիք պակաս գիշատիչ կերպով չեյին շահագործում գաղութների տեղական հարստությունները, քան շահագործել եյին նրանց մարդկային աշխատանքը։ Հոյակապ անտառները զոհ եյին գնում նրանց ընչաքաղցությանը, առանց վորևե սիստեմի ու ծրագրի ձգվող շաքարի պլանտացիաներն ուժասպառ եյին անում հողն ու անպիտան դարձնում հետագա մշակման համար։ Հոլլանդացիք Մոլուկկյան կղզիներում վոչնչացնում եյին մշկընկույզի (мускатный орех) ամբողջ անտառներ ու մեխակի լայնածավալ բուրաստաններ այն նպատակով, վոր այս հարստություններից ոգտվել չկարողանան նրանց առևտրական միացորդները։ Սրա հետևանքով ամենահարուստ շրջաններն ավերվեցին ու բոլորովին ամայացան։

4. ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ։—ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։ Գաղութային տիրապետություններ ձեռք բերելուց հետո յեվրոպացի առևտրականների համար առաջին անգամ եր հնարավորություն ստեղծվում արևելյան ու ընդհանրապես գաղութային յերկիրների արդյունքները տեղում և այն ել սահմանափակ քանակությամբ ստանալու։ Ընդսմին գաղութային արդյունքների ներմուծումը միանգամից շատացավ հսկայական աստիճանի։ 16-րդ դարի սկզբում արդեն Լիսաբոն եր ներմուծվել մինչև 700 հազար տոննա ապրանք (տոննան հավասար է մոտ 62 փթի)։ Տաքդեղի ներմուծումը Պորտուգալիա հասնում եր 26 հազար տոննայի, այն ինչ 15-րդ դարում վենետիկցիք Ալեքսանդրիայից, այն ժամանակվա արևելյան առևտրի գլխավոր կենտրոնից, արտահանել եյին 200 տոննայից վոչ ավելի։ Գաղութների հարստությունները գիշատիչ կերպով ավարառության յենթարկելով՝ գաղութային արդյունքների առևտրականները միևնույն ժամանակ շահագործում եյին նաև յեվրոպական սպառողներին՝ քմահաճորեն բարձր գներ նշանակելով։ Գաղութային առևտրից ստացած վաստակը հաճախ հասնում եր 500 ու ավելի տոկոսների։

Գների բարձրությունը, հետևաբար և առևտրային վաստակի բարձրությունն ընդսմին ամենից առաջ կախված եր առևտուրը մենաշնորհի յենթարկելու աստիճանից ու մրցումը վտարելուց։ Միայն նա, ով շուկայի լիակատար ու միակ տերն եր, կարող եր քմածին գներ սահմանել՝ առանց վախենալու այն բանից, թե առևտրական մրցակիցները գները կիջեցնեն։ Յեվ ահա դեպի մենաշնորհն ունեցած այսպիսի ձգտման հետ կապ ունենալով՝ մի կողմից կռիվ է սկսվում մրցող ազգերի միջև ամենահարուստ գաղութներին միայնակ տիրապետելու համար, մյուս կողմից՝ յուրաքանչյուր ազգի ներսում ծագում են ա-

ռևտրական ընկերություններ, վորոնք աշխատում են ամբողջ գաղութային առևտուրն իրենց բուռը ձգելու։

Ամբողջ 16-րդ դարի ընթացքում Սպանիան ու Պորտուգալիան միակ յեվրոպական յերկրներն եյին, վորոնք գաղութների տեր եյին։ Առաջինին պատկանում եր յերկրագնդի արևմտյան կիսի տիրությունը, յերկրորդին՝ արևելյան։ Սակայն այս նշանավոր դիրը, վոր գաղութային քաղաքականության մեջ խաղում եյին Պիրինեյան թերակղզու զույգ պետությունները, բոլորովին պատահական եր և յերկար չտևեց։ Բանից դուրս յեկավ, վոր նրանց տնտեսական զարգացումն այս տիրության համար չափազանց անբավարար եր։ Պորտուգալիան բոլորովին յերկրորդ առևտրային յերկիր եր դեռևս, Սպանիայում, բացի սակավաթիվ քաղաքներից, առևտուրը զարգացած չեր ամենևին։ Մավրերի ստեղծած առևտուրն ու արդյունաբերությունը չքացել եյին նրանց բնաջնջվելով կամ արտաքսվելով։ Պորտուգալիայի վաճառականները սահմանափակվում եյին Լիսաբոն գաղութային արդյունքներ բերելով՝ սրանց հետագա տարածումը թողնելով ոտարերկրացի, գլխավորապես նիդերլանդացի վաճառականներին։ Արդեն 16-րդ դարում շնորհիվ այս հանգամանքի Լիսաբոնի կողքին իբրև գաղութային առևտրի յերկրորդ կենտրոն աչքի յեր ընկնում Անտվերպենը, վոր ամբողջ հյուսիսային ու կենտրոնական Յեվրոպային գաղութային ապրանքներ եր մատակարարում։ Սպանացիք իրենց կողմից վոչ մի առևտուր չեյին անում՝ համարյա բացառապես ամերիկյան վոսկու արտահանությամբ սահմանափակվելով։ Այս պատճառով եւ հարստությունները արագ կուտակվում եյին, բայց արդյունաբերության թույլ զարգացման շնորհիվ նրանք իրենց համար արտադրողական գործադրություն վոչ մի տեղ չեյին կարողանում գտնել։

Այսպիսով տնտեսական թույլ զարգացման շնորհիվ վոչ Սպանիան ու վոչ Պորտուգալիան չկարողացան յերկար պահպանել գաղութային առևտրի մեջ ունեցած իրենց առաջնությունը, վոր պատահական եր և ամենից առաջ հետևանք եր Յեվրոպայի ամենահարավ-արևկան եր և ամենից առաջ հետևանք եր Յեվրոպայի ամենահարավ-արևմըտյան ծայրամասում գրաված իրենց աշխարհագրական դիրքի։ Բոլորովին այլ վիճակի մեջ գտնվեցին հյուսիսային Յեվրոպայի յերկրները՝ Հոլլանդիան ու մանավանդ Անգլիան, յերկրներ, վորոնց արդյունաբերական կյանքը դեռ միջնադարի վերջերին արդեն բարձր աստիճանի զարգացման եր հասել։ Գաղութային առևտրից ստացած կապիտալներն այնտեղ արդյունաբերության մեջ եյին գործադրվում, վորի հետևանքով եւ հենց ծագումն առավ խոշոր արդյունաբերությունը բուն իսկ Անգլիայում։ Շատ չքաշեց, վոր հյուսիսային յերկրների առավելությունները հանդես յեկան։ 17-րդ դարի կեսերին հոլլանդացիք պորտուգալցիներին սրանց համարյա բոլոր գաղութներից դուրս

եյին մղել. 17-րդ դարի վերջերին հոլլանդացոց գաղութների մեծ մասըն իր հերթին անցել եր անգլիացիների ձեռքը. 18-րդ դարը գաղութային տիրապետությունների համար Անգլիայի և Ֆրանսիայի միջև մղվող կռվի ժամանակաշրջանն եր, մի կռիվ, վոր վերջացավ Անգլիայի լիակատար հաղթանակով։ Այսպիսով 19-րդ դարի սկիզբներին Անգլիան համարյա միակ գաղութային պետությունն եր, վոր գաղութներ ուներ յերկրագնդիս բոլոր մասերում։

5. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—ԲՈՐՍԱՆԵՐԸ։ Գաղութային առևտուրը մենաշնորհի յենթարկելու նպատակներով, վորոնք ամենից առաջ պատճառ եյին դառնում գաղութային գերակշռության համար մղվող գաղութային կռվի, առանձին պետությունների ներսումն եւ, ինչպես արդեն ասել ենք, հատուկ առևտրական ընկերություններ եյին առաջանում, վորոնց մասնակիցներն այս կամ այն գաղութային մարզի կամ յերկրի հետ առևտուր անելու բացառիկ իրավունքն եյին յուրացնում։ Առաջին այսպիսի ընկերությունն Արևելյան-Հնդկական ընկերությունն եր, վոր ծագել եր Նիդերլանդում 1602 թվին։ Այնուհետև շուտով դարձյալ Նիդերլանդում կազմակերպվեց Արևմտա-Հնդկական ընկերությունը Բրազիլիայի հետ առևտուր անելու նպատակով։ Համարյա միաժամանակ Անգլիայում յերևան են գալիս սեփական Արևելյան-Հնդկական, հետո Աֆրիկական, Հուդսոնյան, Գրենլանդյան ընկերությունները։ Ֆրանսիայում գոյություն ունեյին Կանադական, Արևելյան-Հնդկական ու Արևմտյան-Հնդկական ընկերությունները։

Այս ընկերությունների մեծ մասը չի բավականանում հիմնադիրների ու անմիջական մասնակիցների կապիտալներով, այլ բացի սրանցից դրամական միջոցներ ե հավաքում, բաց թողնելով ու վաճառելով ակցիաներ, թղթեր, վորոնց տիրանալն իրավունք ե տալիս վաստակի վորոշ մասում բաժին ունենալու։ Այսպիսով առաջին բաժնետիրական ընկերություններն առևտրային ընկերություններն եյին (իսկ ներկայումս գլխավորապես արդյունաբերական ընկերություններն են)։ Միացնելով ու կենտրոնացնելով մանր սեփականատերերի դրամական խնայողությունները, վորոնք մինչ այդ առանց գործադրության եյին մնացել, բաժնետիրական ընկերություններն իրենց հերթին պակաս դեր չեյին խաղացել կապիտալների գոյանալու ու աճման պրոցեսում։

Առևտրային ու դրամական պտույտների (оборот) մեծանալու հետ միասին, միջազգային շուկաներում գաղութային արդյունքների ու արդյունաբերական առարկաների մասսայորեն, մեծաքանակ յերևան գալու հետ միասին առևտուրն ինքն եւ լրիվին այլ կերպարանք ե ընդունում։ Վոչ տոնավաճառային, վոչ եւ առավել ևս քաղաքային վաճառանոցային առևտուրն այլևս ի վիճակի չեն նոր ժամանակի

պահանջներին գոհացում տալու։ Առևտուրն այլևս պարզ փոխանակային գործարք չէ, վոչ ապրանք ապրանքով անմիջորեն փոխանակելու, վոչ էլ կանխիկով ապրանք ձեռք բերելու գործողություն։ Սովորաբար ապրանքներն արդեն տվյալ վայրը չեն բերվում, այլ գտնվում ու պատվիրվում են նմուշներ ցույց տալով։ Առևտրային գործարքներ կնքվում են այն ապրանքների բեռների նկատմամբ, վորոնք դեռ գտնվում են ճանապարհին։ Արդյունաբերական արդյունքների խոշոր պատվերներ ընդունվում են, յերբ դեռ նրանք չեն պատրաստված կամ չկան մեջտեղում։

Սրա հետ կապ ունենալով՝ առևտրային վարկն էլ, վոր դեռ իտալացոց լևանտական առևտրի մեջ նշանավոր դեր եր կատարում, այժմ բացառիկ նշանակություն է ստանում։ Սովորական յերևույթ են դառնում այն գործարքները, յերբ չստացված ապրանքների համար մուրհակ են առնում, պատվիրած ապրանքների փողը նախապես վճարելով։ Հաշվեհարդարը (расчет), մանավանդ զանազան ազգություններին պատկանող վաճառականների միջև, մեծ մասամբ նույնպես մուրհակներով է կատարվում։ Որինակ, Անտվերպենի վաճառականը Ջենովացի վաճառականից ապրանք առնելով՝ նրան վոչ թե համապատասխան դրամական գումարն եր ուղարկում, այլ մի ուրիշ Ջենովացի վաճառականի մուրհակը, վոր իր մոտն եր լինում։ Վորովհետև զանազան պետություններում ստակային սիստեմը (монетная система) տարբեր եր լինում, այլև վորովհետև դրամանիշների արժեքը տատանվում եր (ստակի (монета) մաշվելու ու փչանալու, յերկրի ֆինանսական միջոցների ընդհանուր վիճակի ու այլ պատճառներով), ապա անհրաժեշտ է լինում առանձին պետությունների ստակային սիստեմների միջև վորոշ փոխհարաբերություն սահմանել, վորպեսզի մուրհակներով հաշվեհարդար կատարելը հնարավոր լինի։ Այս նպատակին հասնում են այսպես կոչված մուրհակային կուրսի միջոցով, վոր առանձին պետությունների դրամական միավորների հարաբերությունն արտահայտում է վոսկու ծանրության վորոշ միավորով, վորի շնորհիվ նրանց փոխադարձ հարաբերությունը հաշվելը հնարավոր է լինում։

Առևտրի ու դրամական վարկի փոփոխված պայմանները կյանքի կոչեցին մի բոլորովին նոր հիմնարկություն էլ—բորսան։ Բորսան հենց այն տեղն եր, վորտեղ կատարվում եյին մեր նկարագրած առևտրային վարկային ու մուրհակային գործարքները, և վորտեղ իրար եյին հանդիպում զանազան յերկրների վաճառականները։ Հենց այստեղ էլ կատարվում եր նաև առևտրական ընկերությունների բաժնետոմսերի (ակցիա) առքն ու վաճառքը, նմանապես և պետական փոխառությունների ստորագրվելը։ Այսպիսով բորսան միաժամանակ թե ապրանքային, թե դրամական ու թե ֆոնդային առևտրի վայր եր։

(Ֆոնդ կոչվում են այն արժեթղթերը, վորոնց հասութաբերությունը (доходность) փոխվում է, որինակ, ակցիաները։ Սրանցից տարբերվում են ոբլիգացիաները, վորոնք սովորական փոխատուական տոկոսի չափով անփոփոխ տարեկան հասույթ են ապահովում. այսպիսիք են մեծ մասամբ պետական փոխառություններն ու պետության բաց թողած այլ թղթերը)։

Առաջին բորսանները ծագեցին Բրյուգգեյում դեռ 15-րդ դարի վերջում, (այստեղ սկզբում ժողովները լինում եյին տեղական հարուստ Վան-դեր-Բուրսեյի տան առջև, այստեղից էլ առաջացավ բորսայի անունը)։ 16-րդ դարում Բրուգգեյի բորսայի նշանակությունը տեղի յե տալիս այն նշանակությանը, վոր ունեյին Անտվերպենի ու Լիոնի բորսաները։ 17-րդ դարում համաեվրոպական նշանակություն է ստանում Ամստերդամի բորսան։

Ֆոնդային ու պետական թղթերի՝ բորսայում կատարած լայն շրջանառության հետ կապ ունենալով, զարգանում է մի բոլորովին նոր յերևույթ—բորսային խաղն ու չարաշահությունը։ Վորովհետև թե մեկ ու թե մյուս թղթերի գները կախում ունեյին նրանց հասութաբերությունից, իսկ հասութաբերությունը փոխվում եր՝ նայած տվյալ ընկերության գործերի վիճակին կամ տվյալ պետության վարկունակությանը (кредитоспособность) ու քաղաքական հաջողություններին, ուստի և համապատասխան կերպով փոխվում եյին թղթերի գներն էլ։ Գործերի բարեհաջող վիճակի ժամանակ թղթերի գները բարձրանում են, հակառակ դեպքում՝ ընկնում։ Բորսային խաղն էլ հենց այն է ամենից առաջ, վոր ցածր գներով ակցիաներ են հավաքում, համապատասխան ընկերությունների կամ ձեռնարկությունների գործերի առաջիկայում լավանալու ակնկալությամբ, նմանապես և իր ժամանակին վաճառում են բարձր գին ունեցող թղթեր՝ նրանց անկումը նախատեսելով։

ՏԱՍՆԵՎՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ

1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅՈՒՐԱՑՆԵԼԸ։ Վորքան էլ հսկայական լինեյին այն հարստությունները, վոր ընդձեռում էր գաղութների գիշատչորեն շահագործումը, վորքան էլ արագ ընթանար կապիտալների կուտակումն այս ճանապարհով, սակայն քանի դեռ այս պրոցեսը սահմանափակվում էր բացառապես առևտրային փոխանակության ու դրամական շրջանառության ասպարեզով, և արտադրության ձևերի ու յեղանակների վոչ մի փոփոխություն չեր ուղեկցում նրան, հիշյալ պրոցեսը վերջիվերջո ապարդյուն էր անցնում և անընդունակ էր լինում տընտեսական արմատական հեղաշրջում կատարելու։ Ամենահարուստ գաղութների տեր լինելն Սպանիայի ու Պորտուգալիայի տնտեսական կյանքի պայմանները չփոխեց։ Միայն այնտեղ, վորտեղ արդյունաբերությունն արդեն առաջուց հասել էր ավելի նշանավոր զարգացման և վորտեղ գաղութային առևտրում կուտակված կապիտալն այս պատճառով կարող էր արտադրողական գործադրություն ունենալ, միայն այնտեղ էր կապիտալի դերն իրապես առաջադիմական լինում։

Այս պատճառով էլ իր հետևանքներով ու վերջնական արդյունքներով շատ ավելի էյական էր կուտակման մյուս յեղանակը, վոր տեղի յեր ունենում քաղաքային ու առանձնապես գյուղական արտադրողներին շահագործելու միջոցով և նրանց հավելյալ աշխատանքի արդյունքների յուրացման ճանապարհով։ Այս դեպքում կապիտալն արտադրողների հետ անմիջական շփման մեջ էր մտնում սկզբում նրանց իրեն յենթարկելով, իսկ հետո յել մի ընդհանուր ձեռնարկության մեջ հավաքելով։ Ինքն իսկ կուտակումն այստեղ կատարվում էր արտադրության ընդարձակման հետ կապ ունենալով և հենց այս ընդարձակումով էլ պայմանավորված էր։ Կուտակված գումարները կուտակվելուն պես իսկույն մտցնում եյին գործի մեջ, վորը սրա շնորհիվ ընդարձակվում էր և զարգանում, ըստ վորում իր հերթին արագանում էր կուտակման հե-

տագա պրոցեսն էլ։ Այսպիսով առևտրային կապիտալի արտադրական արդյունաբերական կապիտալ դառնալն այս դեպքում կատարվում էր նրա (կապիտալի) կուտակման բուն իսկ պրոցեսի հետ միաժամանակ ու զուգահեռաբար։

Մեզ արդեն հայտնի յեն այն յեղանակներն ու հնարները, վորոնցով առևտրային կապիտալը ծառայագրում է (закабалить) ազատ արտադրող-արհեստավորներին։ Այս միջոցներն եյին դրամով կամ նյութեղենով (материал) փոխատվությունը, ամբողջ արտադրությունն առաջուց ժամկետով կամ անժամկետ գնելը (закупка), պատրաստի արդյունքների մեծագնումն (скупка) ու ընդսմին վոչնչացումն այն անմիջական կապի, վոր մինչ այդ գոյություն ուներ արտադրողի ու շուկայի միջև։ Սակայն քաղաքային արհեստավորներին հպատակեցնելը հեշտ գործ չեր։ Համքարային կազմակերպություններում միացած քաղաքային արհեստավորները կապիտալի՝ նրանց ազատության նկատմամբ արած վոտնձգություններին ցույց եյին տալիս մի դիմադրություն, վոր համառ էր լինում և վոչ միշտ անհաջող։ Շահագործման համար անհամեմատ ավելի բարենպաստ հող էր գտնում կապիտալը գյուղական ազգաբնակչության միջավայրում, վոր անկազմակերպ էր ու միևնույն ժամանակ ավելի կարիքավոր։

2. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ։ Գյուղում հողային տնտեսության տարածմանն ուղեկից եյին թե ճորտային կախման թուլացումն ու թե միաժամանակ նաև գյուղացիության նշանավոր մասի մասնակի կամ լիակատար հողազրկությունը։ Հարկերի, տուրքերի ու պարտույթների աճող ճնշումը լրացնում էր գյուղական ազգաբնակչության մասսայի քայքայման պակասը։ Գյուղացու տնտեսությունը խորտակվում էր, յերկրագործությունն այլևս չեր կերակրում նրան, և ընդսմին նա ավելի ու ավելի հաճախ էր հարկադրված լինում դիմելու ոժանդակ զբաղմունքների ու գործերի, մասնավորապես մինչ այդ նրա համար խորթ արհեստային գործունեյության։

Լրացուցիչ աշխատանքի կարիք զգալով, չունենալով վոչ սեփական արհեստանոց, վոչ սեփական նյութեղեն, միաժամանակ վոչ մի հատուկ հասարակական հիմնարկի ու կազմակերպության պաշտպանությունը չվայելելով՝ այսպիսի գյուղական արդյունաբերողն անհամեմատ ավելի լիովին էր կախումն ունենում մեծագնորդ (скупщик) կապիտալիստից, քան քաղաքային արհեստավորը։ Բացի սրանից, արհեստային աշխատանքը գյուղական արհեստավորի համար գոյության միջոցների գլխավոր աղբյուր չեր, ինչպիսին էր քաղաքի համքարային արհեստավորի համար, այլ ոժանդակ աղբյուր էր, այս պատճառով էլ հենց միայն այս պարագայի շնորհիվ նա կարող էր ցածր վարձով գոհանալ։ Այլև գյուղի բնակիչների պահանջների բուն իսկ մակարդակը

շատ ցածր եր քաղաքացու պահանջներից։ Վերջապես գյուղում շատ ընդարձակ չափերով կարելի յեր օգտագործել կանանց ու մանուկների աշխատանքն ել, վորոնց գործադրությունը խստիվ արգելում եյին քաղաքի արհեստային համքարությունների վերջին ժամանակվա կանոնադրությունները։

Այսպիսով գյուղական արտադրողների շահագործումը վոչ միայն ավելի մատչելի յեր մեծագնորդ կապիտալիստին, այլև միաժամանակ նրան ավելի օգուտ եր խոստանում։ Ահա թե ինչու առևտրային կապիտալը՝ ձգտելով արտադրությունն ու արտադրողներին իրեն յենթարկելու, հենց ամենանվազ դիմադրության գծով եր ընթանում՝ ուղղվելով գլխավորապես քաղաքամերձ ու գյուղական վայրերը։ Այստեղ շահագործման սկզբնական ու ամենապարզ ձևն այսպես կոչված տնայնագործական կամ տնային արդյունաբերությունն եր։ Ժամանակակից արդյունաբերական բանվորից տարբերվելով՝ տնայնագործն աշխատում ե իր տանը և միայն նյութեղենը (յերբեմն նաև արտադրության գործիքներն) ստանում ե կապիտալիստից։ Նյութեղենը տնայնագործների միջև բաշխելու համար հիմնվում են տարաբաշխման (раздаточная) գրասենյակներ։ Տնայնագործները պետք ե կատարած, վերջացրած պատրաստի արդյունքները հենց նույն այս գրասենյակները ներկայացնեն վորոշ գնահատությամբ, վոր մեծ մասամբ չափազանցած ե լինում։

Ինչպես տնայնագործն արդեն վոչ այնքան արհեստավոր ե, վորքան բանվոր, վորն աշխատում ե մի վորոշ վարձով, թեև դեռևս վոչ թե գործատիրոջ գործանոցում, այլ իր տանը, ճիշտ նմանապես ել ինքը կապիտալիստը, վորից կախում ունի տնայնագործը, հանդես ե գալիս վոչ թե հասարակ, մեծագնորդի դերում, այլ ամենից առաջ նյութեղենը տարաբաշխողի դերում, նյութեղեն, վոր նա ձեռք եր բերել նախորյա (предварительная) գնման միջոցով։ Այսպիսով նախքան տնայնագործի հետ գործ ունենալը, նա պետք ե կապիտալի վորոշ ծախսումներ (затраты) կատարե։ Ահա թե ինչու նա այժմ արդեն վոչ թե հասարակ մեծագնորդ ե, այլ կիսով չափ ձեռնարկող, վորին վոչ այնքան վերավաճառքի համար ձեռք բերած արդյունքի վերջնական գինն ե շահագրգռում, ինչպես վաճառականին, վորքան արտադրության ծախքերը, հում նյութերի գնման ու տնայնագործների աշխատավարձի համար արած ծախքերը։

3. ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ։ Տնայնագործական արդյունաբերությունը զարգանում ե արդյունաբերական արդյունքների աճող պահանջի (խնդրանք, спрос) հետ կապ ունենալով։ Ահա թե ինչն ե պատճառը, վոր ամենից առաջ դեռևս միջնադարյան շրջանում տնայնագործական արդյունաբերություն ծագում ե այն քաղաքներում ու ավաններում, վորտեղ լայն չափերով զարգացել եյին արտահանության համար ձեռնարկված զանազան հատուկ արտադրություններ։ Այսպես, արդեն տասնհինգերորդ մասամբ նույնիսկ դեռևս տասնվեցերորդ դարերում Լուկկում, Վենետիկում, Ջենովայում համեմատաբար ընդարձակ չափերով զարգացել ու տարածվել եր մետաքսեղեն գործվածքների տնայնագործական արդյունաթյունը, Ֆլորենցիայում ու Միլանում, ինչպես և Ֆլանդրիայում ու մերձակա վայրերում՝ մահուդի տնայնագործական արտադրությունը, Կոնստանցայի շրջակայքում՝ կտավեղենի տնայնագործական արտադրությունը, Նյուրնբերգում ու Զոլինգենում՝ ամենաբազմազան մետաղե արդյունքների տնայնագործական արտադրությունը։

Տասնվեցերորդ դարից սկսած տնայնագործական արդյունաբերությունը տարածվում ե ավելի ընդարձակ չափերով ու ամեն տեղ։ Այս ու հաջորդ դարում տնայնագործական արհեստը զարգանում ե Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, վորտեղ այս արհեստը կիրարկվում ե նաև լեռնային արդյունաբերության ասպարեզում։ Տասնյոթ ու տասնութերորդ դարերի ընթացքում տնայնագործական արտադրությունը թափանցում ե Յեվրոպայի անտեսապես ամենահետամնաց վայրերն ել։ Ռուսաստանում գոնե այն վայրերում, վորտեղ տնայնագործական արդյունաբերությունն ունեցել ե ամենամեծ զարգացում, այն ե՝ Մերձվոլգյան նահանգներում, նրա ծագումը գնում հասնում ե դեռ տասնյոթերորդ դարն ել։

ՏԱՍՆԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐԱՑՈՒՄԸ (ՊՐՈԼԵՏԱՐԻԶԱՑԻԱՆ) ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳՈՅԱՆԱԼԸ

1. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՔԱՇԵԼԸ։ Կապիտալիստական խոշոր արտադրության համար իբրև յերկրորդ անհրաժեշտ նախադրյալ պետք է ծառայեր, ինչպես արդեն ասել ենք, վարձու բանվորների լայնածավալ դասակարգի գոյանալը, բանվորների, վորոնք անձնապես ազատ լինելով՝ միաժամանակ զրկված լինեյին արտադրության սեփական միջոցներից, ուստի և հարկադրված լինեյին իրենց բանվորական ույժը վաճառելու։ Այսպիսի վարձու պրոլետարների դասակարգի կազմվելը կատարվում եր կապիտալների կուտակման հետ միաժամանակ ու զուգահեռաբար իբրև նույն պրոցեսսի շրջոնք (հակառակ) կողմը։ Վարձու բանվորների դասակարգի կազմը լրացվում եր, մասամբ նախկին համքարային վարպետացուներով, մասամբ անկախությունը կորցրած ու լիովին կապիտալից կախման մեջ ընկած արհեստավորներով, սակայն սրանք բոլորը լոկ միավորներ եյին։ Բանվոր դասակարգի գլխավոր մասսան կազմում եյին քայքայված ու հողազուրկ դարձած գյուղացիները։ Ահա թե ինչու պրոլետարիատի ծագման պատճառները պետք է փնտրել գլխավորապես գյուղատնտեսական կյանքի փոփոխված պայմանների մեջ ու ամենից առաջ այն հանգամանքի մեջ, վոր գյուղական տնտեսության արդյունքները քաշվում են, մտցվում ընդհանուր ապրանքային պտույտի մեջ։

Միջկոմմունալ առևտրի կենդանանալն ու արտադրության ընդարձակումն անխուսափելի կերպով պետք է այն հետևանքն ունենային, վոր գյուղատնտեսական արդյունքների պահանջը մեծանար։ Մի կողմից աճում եր հում նյութերի (բրդի, վշի, կաշիների ու այլոց) պահանջը, մյուս կողմից՝ ազգաբնակության ավելի ու ավելի մեծ մասն եր դիմում արդյունաբերությամբ զբաղվելուն և ընդմին յերկրագործական տնտեսությունից կտրվելով՝ սկսում եր գյուղատնտեսական արդյունքներ ստանալու կարիքն զգալ։ Գաղութային առևտրի զարգացումն ազդում եր նույն այդ ուղղությամբ։ Գաղութային առև-

տուրը կապիտալի կուտակմանը նպաստելով՝ միևնույն ժամանակ շուկան ընդարձակում եր նշանավոր չափով։ Գաղութներից ստացած արդյունքների հետ փոխանակելու համար յեվրոպական պետությունները արտահանում եյին արդյունաբերական իրեր, վորոնք, ինչպես տեսել ենք արդեն, անպատկառ կերպով փաթաթում եյին տեղացիների վզին։ Արդյունքների դեպի գաղութներն արտահանելն իր հերթին պահանջում եր, վոր արտադրությունն ընդարձակվեր, հետևաբար և կողմնակի կերպով ազդում եր, վոր հում նյութերի պահանջը շատանար։

Գաղութային արդյունքների ներմուծման հսկայական մեծացումն ու ընդմին նույն այս արդյունքների գների անկումը միևնույն ժամանակ նպաստում եյին, վոր նրանք ավելի լայն տարածվեն, մանավորապես յերկրագործ ազգաբնակության շրջաններում։ Այս պատճառով հողատերերը փողի մշտական կարիք զգալով, ավելի ու ավելի հաճախ են դիմում այն արդյունքների մշակման, վորոնց պահանջն ամենից շատ է, և ամենից առաջ բրդի մշակման, կամ այս բանն անելու հարկադրում եյին վարձակալներին՝ (арендатор) կալութավարձը (арендная плата) բարձրացնելով։

2. ԴՐԱՄԱՀԱՐԿԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՍՏԿԱՆԱԼԸ։ Գյուղական տնտեսության ընդհանուր առևտրային փոխանակության մեջ քաշվելուն ուղեկից եր գյուղատնտեսական արտադրության պայմանների ու սրա հետ միասին ամբողջ յերկրագործ բնակչության վիճակի արմատական հեղաշրջումը։ Հողատերերը փողի աճող կարիքին գոհացում եյին տալիս կախյալ ազգաբնակությունից տանվող դրամահարկերը շատացնելով կամ թե, ինչպես և ավելի առաջ եյին անում, իրենցից լիովին կամ կիսովին կախումն ունեցող գյուղացիներին ավելի վճարունակ ազատ վարձակալներով փոխարինելով։ Ընդհակառակն՝ այն վայրերում, վորտեղ լիովին անձեռնմխելի յեյին մնացել ճորտային հարաբերությունները (Գերմանիայում, գլխավորապես արևելյան մասում, Ավստրիայում ու Ռուսաստանում), շուկայի համար նշանակված գյուղատնտեսական արդյունքների արտադրության բարձրացմանը հասնում եյին նրանով, վոր անմիջորեն սաստկացնում եյին ճորտ ազգաբնակության աշխատանքի շահագործումը։ Կալվածատիրական արտավարերը (запашки) շատանում են ի հաշիվ գյուղացական հերկերի, կոռի որերի թիվն ավելանում է ի հաշիվ այն որերի, յերբ գյուղացին կարող եր աշխատել իր համար։ Հողատիրոջ օգտին յեղած պարտույթների ու տուրքերի ավելանալու հետ միաժամանակ աճում են նաև այն հարկերը, վոր գանձում եր պետությունը։

Գյուղացին աճող դրամահարկերը վճարելու համար փողի կարիք զգալով՝ իր աշխատանքի արդյունքների ավելի ու ավելի մեծ մասն

էր հարկադրված վաճառելու շուկայում, համապատասխան չափով սահմանափակելով նույն արդյունքների՝ սեփական տնտեսության մեջ գործադրությունը։ Սրա շնորհիվ նրա տնտեսությունն ընկնում է. տնտեսական կահույքը (инвентарь)—լծկան ու բեռնակիր անասուններ, գյուղատնտեսական գործիքներ—կրճատվում են։ Ընդսմին լայն ասպարեզ է բացվում գյուղական մանր վաշխառության գործունեության համար, որը խլում է գյուղացուց նրա արտադրած արդյունքների ու բանվորական ժամանակի ավելի ու ավելի մեծ մասը, դրամական փոխատվություն ընձեռելով գյուղացուն կամ սրան վարձակալությամբ հող տալով այն պայմանով, որ բերքի մի մասը հատուցվի վաշխառուին կամ սրա համար որոշ քանակությամբ աշխատանք գործադրվի (այսպես կոչված կիսարարային, հարակաշային վարձակալություն ու աշխատավճար վարձակալություն—испольная и отработочная аренды)։ Մանր վաշխառուական կապիտալի միջամտությունը լրացնում է գյուղացու տնավերության (разорение) պակասը։ Յերկրագործությունն այլևս չի կերակրում նրան, և այս բանի շնորհիվ նա հարկադրված է լինում որևէ օժանդակ ու կողմնակի զբաղմունքի դիմելու։ Բացի յերկրագործական մշակ դառնալուց, գյուղացուն այսպիսի անհրաժեշտ լրացուցիչ աշխատանք տալիս է տնայնագործական արհեստը կամ ձմեռվա սեզոնին դեպի քաղաք աշխատանքի «չվելը»։

Գյուղացիների վրա ծանրացած դրամահարկերի ավելանալը, գյուղացական աշխատանքի շահագործման սաստկանալը, գյուղացական տնտեսության բնավերությունն ու գյուղացության մասսայի աճող տնանկությունն ու աղքատացումը, սրանց հետ միասին նույն մասսայի միջից սակավաթիվ ունևոր համփաների առաջ գալը,—ահա սրանք են առաջին հետևանքներն այն բանի, յերբ ապրանքային ու առևտրային հարաբերությունները թափանցում են գյուղի կյանքի մեջ։

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃՈՐՏԱՅԻՆ ԿԱԽՄԱՆ ԱՆԿՈՒՄԸ։ Գյուղական տնտեսության պայմանների էլ ավելի վճռական հեղաշրջում տեղի յե ունենում այն յերկիրներում, որտեղ, ինչպես Անգլիայում, մասամբ և Նիդերլանդում, առևտրային կապիտալի ազդեցությունը հատուկ ուժգնությամբ էր զգացվում։ Գյուղատնտեսական արդյունքների պահանջի շատանալուն ուղեկցում էր սրանց գների բարձրանալն էլ։ 16-րդ դարի ընթացքում բրդի գները բարձրացան մեկ ու կես և յերկու անգամ։ Հացի գներն աճում են էլ ավելի արագ։ Յերբ ամենից առաջ բրդի պահանջը շատացավ, միաժամանակ և նրա գները բարձրացան, սրա հետևանքն այն յեղավ, որ լայն չափերով տարածվեցին ոչխարաբուծությունն ու արոտների տնտեսությունը։ Միքիչ ավելի ուշ, յերբ աճում է արդյունաբերական ազգաբնակությունը, և հացի պահանջն ավելանում (Նիդերլանդում ու Անգլիայում 17-րդ դարում, Ֆրանսիայում, մասամբ և Գերմանիայում 18-րդ դարում, Ռուսաստանում 19-րդ դարի առաջին կեսից ոչ վաղ), այն ժամանակ սրա հետ կապ ունենալով զարթնում է հետաքրքրությունը դեպի բուն յերկրագործական տնտեսությունները։ Պարապուտները (пустоши) կտրվում են, ճահիճները չորացվում, յերկրագործության կատարելագործված սիստեմներ են մուծվում, ավանդական յեռադաշտային սիստեմը փոխարինվում է վեց ու յոթնամյա ցանքափոխությամբ (севооборот)։

Յերբ հետաքրքրություն զարթնեց գյուղական տնտեսության նըկատմամբ և հողային տիրապետությունների հասութաբերությունն ավելացավ, այս հանգամանքն իր հերթին պատճառ դարձավ, որ հողի վարձակալությունն ու ծախու գներն արագ բարձրացան։ Աղքատ գյուղացական տնտեսությունը, որ համեմատաբար չնչին տուրք էր տալիս (բահրա, մյուլք чинш, ценз), այսպիսի պայմաններում հողատիրոջ համար ավելի յեր բեռ դառնում, որը խանգարում էր նրան իր տիրապետություններից ավելի բարձր հասույթ ստանալ։ Ահա թե ինչն է պատճառը, որ հենց իրենք՝ հողատերերն սկսում են ձգտել, որ ազատվեն այս բեռից և հոժարակամ ազատ են արձակում իրենց ճորտերին փրկանքով ու նույնիսկ առանց փրկանքի։ Ճորտային կախման քայքայվելու ու չքանալու պրոցեսսը, որ դեռևս քաղաքային տնտեսության շրջանում էր սկսվել, առևտրային կապիտալիզմի տիրելու միջոցին արագությամբ մոտենում էր իր վախճանին և ընդսմին այնքան ավելի արագ, որքան ավելի ուժգին է արտահայտվում առևտրային կապիտալի ազդեցությունը գյուղական կյանքում։

Իտալիայում ճորտային կախումը վերջնականապես անհետացավ դեռ միջնադարյան ժամանակաշրջանում։ Նիդերլանդում ու Անգլիայում ճորտային հարաբերությունների վերջին հետքերը չքանում են նույնպես արդեն 15-րդ դարում։ 17-րդ ու 18-րդ դարերում տնտեսության գերիշխող ձևն Անգլիայում խոշոր ֆերմերային տնտեսությունն էր։ Ֆրանսիայում նույնպիսի խոշոր տնտեսություն յերևան է գալիս 18-րդ դարի յերկրորդ կեսին միայն, սակայն այստեղ էլ անձնապես կախումն ունեցող ճորտերը պատահում են լոկ իբրև հազվագյուտ բացառություն։ Գյուղացության վիթխարի մեծամասնությունը հողատերերի նկատմամբ հողային, այլ ոչ թե անձնական կախման հարաբերության մեջ էր, այսինքն իրենք պարտական եյին զանազան վճարումների ծանրությունը կրել իրենց հողամասից օգտվելու փոխարեն, իսկ յերբ թողնեյին այս հողամասերն, ապա հողատերերի նկատմամբ ունեցած ամեն պարտականությունից ազատվում եյին։ Տնտեսապես հետամնաց յերկրներում՝ Գերմանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում գյուղացիների ազատագրության պրոցեսսն ավելի յերկարատև

ձև ընդունեց։ Ինչպես արդեն տեսել ենք, այստեղ սկզբում հասութաբերությունը բարձրացնելուն հասնում են վոչ թե ճորտային աշխատանքի շահագործումը թուլացնելով, այլ ընդհակառակը, սաստկացնելով։ 17-րդ ու 18-րդ դարերն այս յերկրներում ճորտատիրության ու ճորտային տնտեսության բարձրագույն ժամանակներն եյին։ Գերմանիայում ճորտային իրավունքն իր գոյությունը պահպանեց մինչև 19-րդ դարի սկիզբը։ Ավստրիայում այն վերջնականապես վոչնչացավ 1848 թվականի հեղափոխությամբ միայն։ Ռուսաստանում գյուղացիների մասնակի ազատագրություն սկսվեց հյուսիսային արդյունաբերական նահանգներում 19-րդ դարի առաջին կիսին, և միայն 1861 թվականից ճորտային իրավունքի վերացումն իբրև ընդհանուր միջոց կիրառվեց կյանքում։

4. ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐԱՑՈՒՄԸ (пролетаризация)։ *Գյուղացության ազատագրությանը սովորաբար ուղեկից եր այն հանգամանքը, վոր նրանց հողամասերից կտրում եյին, հաճախ և բոլորովին նրանց զրկում հողից։ Հողազրկության աստիճանն ամենից առաջ կախված եր նրանից, թե վոր աստիճան նշանակություն ուներ յերկրում առևտրային կապիտալը։ Վորքան ավելի լիակատար եր այն ազդեցությունը, վորքան ավելի ընդարձակ պահանջ և զգացվում շուկայում գյուղատնտեսական արդյունքների նկատմամբ, այնքան ավելի մեծ եր լինում հողատիրոջ գայթակղությունն այն նպատակով, վոր վերջնականապես պոկ գա գյուղացուց և անցնի կամ սեփական տնտեսությանը և կամ թե չե հողերը տա խոշոր վարձակալներին ավելի ձեռնտու պայմաններով։*

Անգլիայում գյուղացության հողազրկությունն ավելի ընդարձակ չափեր ընդունեց, յերբ բրդի պահանջը շատացավ և վոչխարաբուծությունը զարգացավ։ Մինչև 15-րդ դարի կեսն Անգլիայում բուրդը չեր վերամշակվում և անմշակ դրությամբ արտահանվում եր գլխավորապես Ֆլանդրիա։ 15-րդ դարի յերկրորդ կեսից Անգլիայում մահուդի ինքնուրույն, սեփական արդյունաբերություն և զարգանում, և այն ժամանակվանից սկսած մահուդը դառնում և Անգլիայի արտահանության ամենագլխավոր առարկաներից մեկը։ Անգլիական բրդի արտահանումը դեպի արտասահման մի կողմից, մի բրդի սաստիկ սպառումն ու գործածությունը տեղում, բուն յերկրում մյուս կողմից՝ բրդի արտասովոր պահանջ առաջացրին և վոչխարաբուծությունը դարձրին գյուղական տնտեսության ամենաձեռնտու ճյուղերից մեկը։ Ցեվ սրա հետևանքով սկսվում և համայնական հանդերի հաջորդական հափշտակությունն ու «ցանկապատումը» (մինչ այդ հանդերում, վորոնք համայնական սեփականություն եյին համարվում, մասնավոր ցանկապատեր գոյություն չունեյին), վորին հաճախ ուղեկցում եր հողագործների լիովին վտարումն իրենց զրաված հողամասերից։ Խլած հողերը դառնում եյին վոչխարների արոտավայեր։ 16-րդ դարի մի օրենսդրական ակտի ասելով՝ 5—6 հազարական վոչխար պահող տնտեսությունները բացառություն չեյին կազմում։ Իսկ առանձին անհատներն ունեյին 20 ու 25 հազար գլուխ վոչխարների հոտեր։ «Վոչխարները լափում են մարդկանց»,—«Ուտոպիայի» հեղինակի (Թ. Մորի) այս պատկերավոր արտահայտությունը բազմիցս կրկնում են 16-րդ դարի այլ հեղինակներ ել։ «Վոչխարները կլանում են մեր մարգագետիններն ու արոտավայրերը, մեր հացահատիկը, մեր անտառը, ամբողջ քաղաքներ ու գյուղեր»,—գանգատվում եր, օրինակ, Թ. Մորի ժամանակակիցներից մեկը։ Արոտավայրերը, վորոնք դեռ 15-րդ դարում բոլոր գյուղատընտեսական հողերի քառորդից պակաս մասն եյին կազմում, արդեն 16-րդ դարի կեսերին ավելի քիչ տարածություն չեն գրավում, քան վարելահողերը, իսկ ավելի ուշ ժամանակներում մեկ ակր հերկին յերեք ակր արոտավայր եր ընկնում։ «Ցանկապատելն» առանձին յեռանդով կերակրվում եր 15-րդ դարի վերջին ու 16-րդի սկզբին, այնուհետև նաև 18-րդ կեսին ու 19-րդի սկզբին, յերբ Անգլիայում մեքենային մանածագործության անցան, իսկ այս նորից բարձրացրեց բրդի գինը։ Այս բոլորի հետևանքով անցյալ դարի սկիզբներին արդեն Անգլիայում գյուղացիությունը համարյա բոլորովին չքացել եր։

Ցանկապատելու սիստեմը գոյություն և ունեցել յեվրոպական ուրիշ յերկրներում ել, օրինակ, Ֆրանսիայում ու Գերմանիայում, սակայն վոչ ամենևին այնպիսի բացառիկ չափերով, ինչպես Անգլիայում։ Համայնական հողերը հափշտակելով, հողատերերը տալիս եյին դանազան տուրքեր վճարելու պայմանով նույն գյուղացիներին, հրավիրում եյին ազատ վարձակալների կամ թե չե նույն հողերի վրա սեփական տնտեսություն եյին հիմնում։ Սրա հետևանքն ամենուրեք լինում եր գյուղացության նշանավոր մասի տնավերությունն ու հողազրկությունը և թափառաշրջիկության սաստկանալը։

Արտաքսված լինելով իրենց հողերից՝ գյուղացիները մեծ մասամբ քիչ անգամ եյին իրենց համար աշխատանք գտնում գյուղական տընտեսության մեջ, մանավանդ այն վայրերում, վորտեղ տարածված եր լինում արոտատեղերի տնտեսությունը։ «Նրանք սիրով կըսկսեյին աշխատել,—գրում և նույն Մորը,—սակայն վոչ մի տեղ նրանց համար զբաղմունք գտնել չեն կարողանում։ Այժմ մի հովիվը հերիք և մի հոտին այնտեղ, վորտեղ հողագործությունը պահանջում եր բազմաթիվ աշխատողներ»։ Կյանքի սովորական շավղից դուրս մղված մարդկանց այս ամբողջ մասսայի համար միակ յելքը տնայնագործական արհեստն եր ու ընդհանրապես վարձու աշխատանքն արդյունաբերության մեջ։ Սակայն գյուղական ազգաբնակության բանվորացումն այնքան արագ

եր առաջ ընթանում, մանավանդ Անգլիայում, վոր արդյունաբերության մեջ վարձու աշխատանքի պահանջների աճումը նրանից շատ յետ եր մնում։ Այսպիսով հողազուրկ դարձած գյուղացիների հսկա մասի համար զբաղմունք չեր ճարվում արդյունաբերության մեջ ել, և այս պատճառով նրանց վոչինչ չեր մնում, մի ժամանակակցի ասելով, քան «թափառել պետությունով մեկ, ինչքան աչքը կտրում ե, վոմանք մուրացկանությամբ զբաղվելով, ուրիշներն ել գողություն անելով»։ 16-րդ դարի վերջի գրականությունն, ինչպես և պաշտոնական վավերագրերը լիքն են գանգատներով այն մասին, թե թափառաշրջկությունը արտասովոր չափերով զարգացել ե։ Թափառաշրջիկների դեմ ամենախիստ միջոցներն եյին ձեռք առնում, մինչև և մահվան պատիժն իսկ։ Սակայն հասկանալի յե, վոր վոչ մի պատիժ չեր կարող ոգնել այնտեղ, վորտեղ ամենից քիչ մեղավորը հենց իրենք պատժողներն եյին։ Միևնույն յերևույթները, թեև ավելի թույլ չափով, տեղի յեյին ունենում յեվրոպական մյուս պետությունների մեջ ել։ Այսպես, թափառաշրջկությունը սաստիկ զարգացած եր նաև Ֆրանսիայում, և հեղափոխության նախորյակին ել այնտեղ գոյություն ուներ մուրացկանների (mendiants) բազմամարդ դասակարգը։

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼՆ ԻԲՐԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑ

1. *ԿԱՊԻՏԱԼՆ ԻԲՐԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ, ՎՈՐ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑ Ե ԴԱՌՆՈՒՄ։* Քանի դեռ կապիտալը հանդես եր գալիս իբրև առևտրային կապիտալ, քանի դեռ նրա դերը վոչ այլ ինչ եր, բայց յեթե պարզ միջնորդություն, պատրաստի արդյունքների պարզ վերավաճառք, այդ միջոցին արտադրության ամբողջ պրոցեսն սկզբից մինչև վերջ ընթանում ե առանց կապիտալի վորևե միջամտության և արտադրողը, լինի գյուղացի յերկրագործ, թե քաղաքացի արհեստավոր, պահպանում ե նրա նկատմամբ ունեցած իր լիակատար ինքնուրույնությունն ու անկախությունը։ Գործը փոխվում ե այն բանից հետո միայն, յերբ կապիտալը հանձն ե առնում մատակարարել արտադրողին հում նյութ կամ, ինչպես այս տեղի յե ունենում մեծ մասամբ տնայնագործական արդյունաբերության մեջ, նմանապես նաև արտադրության գործիքներ։ Այս ժամանակվանից սկսած կապիտալը հանդես ե գալիս արդեն վոչ թե դրամական ձև զգեցած, այլ արտադրության միջոցների փոխակերպված ձևով։ Իր այս նոր ձևով կապիտալը վոչ միայն անմիջորեն թևակոխում ե արտադրության ասպարեզն, այլև արտադրողների վրա իշխանություն ձեռք բերում, ընդվորում այս իշխանությունն այնքան ավելի լիակատար ե լինում, այնքան ավելի մեծ, վորքան ավելի շատ ե արտադրողն արտադրության միջոցների կարիք զգում և վորքան ավելի քիչ ե հնարավորություն ունենում այս միջոցներն առանց կապիտալի ոժանդակության ձեռք բերելու։ Այն հանգամանքը, վոր գյուղական տնայնագործը հարկադրված ե ստանալու կապիտալիստից վոչ միայն հում նյութն, այլ մեծ մասամբ իր գործանոցի ամբողջ սարք ու կարգն ել, մեկն ե այն պայմաններից, վորոնք սաստկացնում են նրա կախումը կապիտալիստից։

Այսպիսով յերբ կապիտալն արտադրության միջոցների յե փոխակերպվում, այն ժամանակվանից սկսվում ե կապիտալիստի ձեռքում իբրև գործիք ծառայել մինչ այդ անկախ արտադրողին ծառայագրելու և սրա աշխատանքը շահագործելու համար։ Սակայն ինքնըստինքյան

հասկանալի յե, թե վորպեսզի կապիտալը կարողանա իր այս նոր դերով հանդես գալ, ապա անհրաժեշտ ե, վոր արտադրողներն այս կամ այն կերպ նախորոք զրկված լինեն արտադրության սեփական միջոցներից, անհրաժեշտ ե, վոր նախորոք կատարված լինի արտադրողների ու արտադրության միջոցների անջատումն իրարուց։ Արտադրողի ու արտադրության միջոցների այսպիսի անջատումը հենց գյուղացու հողազրկությունն ե ամենից առաջ, գյուղացու, վորի համար հողն իբրև արտադրության գլխավոր միջոց ե ծառայում։

Վարպետի կոչմանը հասնելու հնարավորությունների փակվելը, վոր զրկում եր վարպետացուներին սեփական արհեստանոց ունենալու իրավունքից ու կարելիությունից, սրանց ել ե մատնում նմանապես կապիտալիստի ձեռքը։ Արտադրության միքանի ճյուղերում հում նյութեղեն, ինչպես, որինակ՝ բոժոժը, բամբակը, կարող եյին առևտրային կապիտալի միջոցով միայն ստացվել։ Ահա թե ինչն եր պատճառը, վոր արտադրության այս ճյուղերը հենց գլխից կապիտալիստական կազմակերպություն են ստանում, սկզբում տնային արդյունաբերության ձևի ներքո։

2. ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՋԱՏՎԵԼԸ ՇՈՒԿԱՅԻՑ։ Արտադրողի ծառայացնելու ու նրան կապիտալի իշխանությանը յենթարկելու պրոցեսի մեջ պակաս եյական նշանակություն չունի այն հանգամանքը, յերբ արտադրողը կորցնում ե շուկայի հետ ունեցած իր անմիջական կապը։ Վորքան ավելի յե ընդարձակվում ու միաժամանակ անորոշ դառնում շուկան, այնքան մանր արտադրողի համար դժվար ե լինում իր արդյունքների անմիջական վաճառքը շուկայում, այնքան ավելի յե ընդհատվում նրա շուկայի հետ ունեցած կապը։ Այնինչ արդյունքները շուտափույթ ծախելը նրա համար կյանքի խնդիր ե։ Վորովհետև նման վաճառքը միայն կարող ե նրան անհրաժեշտ միջոցներ ընձեռնել ինչպես գոյությունը պահպանելու, այնպես և արտադրությունը շարունակելու համար։

Այսպիսով մեծագնորդի միջնորդությունն ավելի ու ավելի անխուսափելի ու անհրաժեշտ ե դառնում։ Սակայն այսպիսի միջնորդությունը շատ թանկ գնով ե ձեռք բերվում։ Արհեստավոր արտադրողը հարկադրված ե լինում գոհանալու ամենացածր վարձով, վոր նրան հազիվ հնարավորություն ե տալիս գոյությունը պահպանելու ու արտադրությունը շարունակելու։ Այսպիսով հում նյութ ձեռք բերելն ու պատրաստի արդյունքների վաճառքը, այսինքն արտադրողի գործունեյության սկզբի ու վերջի րոպեները, սահում, դուրս են պրծնում նրա ձեռքից։ Այժմ կրկնակի կապանք ե նրան կաշկանդում, կապում կապիտալիստ մեծագնորդից և նրա կախման մեջ դնում առևտրային կապիտալից։

Իբրև այս պրոցեսի ավարտումն հանդես ե գալիս կապիտալիստական կազմակերպության առաջին ձևն, այսպես կոչված տնային արդյունաբերությունը, վորի ժամանակ տնայնագործը հում նյութն ստանում ե տարաբաշխման գրասենյակից և այստեղ ել պետք ե ներկայացնի պատրաստի արդյունքները վորոշ գնահատությամբ։ Այստեղ սաղմային դրությամբ գոյություն ունեին մի կողմից՝ կապիտալիստ ձեռնարկողը, վոր իր հաշիվներն անում ե արդեն վոչ թե պատրաստի արդյունքների գնից ելնելով, ինչպես վաղեմի վաճառականն, այլ արտադրության ծախքերի ընդհանուր գումարից, իսկ մյուս կողմից՝ տնայնագործը, վոր ավելի ու ավելի յե վորոշ վարձով աշխատող, վարձու բանվոր դառնում։

3. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ։ Ինչպես արդեն ասել ենք, տնային արդյունաբերությունը զարգանում ե այն գյուղական վայրում, վորտեղ առևտրային կապիտալը չի հանդիպում դիմադրության, ինչպես քաղաքում, և վորտեղ այս հանգամանքի շնորհիվ նրա առաջ բացվում ե տնայնագործների աշխատանքի ամենալայն, համարյա անարգել շահագործման հնարավորությունը։ Քաղաքամերձ վայրերում այսպիսի շահագործումն ավելի կազմակերպված ձև ե ընդունում՝ տարաբաշխման գրասենյակներից նյութեղեն բաշխելու հետ միասին։ Քաղաքի ավելի հեռու ընկած վայրում առևտրային կապիտալը հանդես ե գալիս, իբրև մեծագնորդական կապիտալ, ըստվորում իբրև տնայնագործական արդյունքների մեծաքանակ գնման միջնորդներ մեջտեղ են գալիս նաև տեղական ավելի ունևոր համփա (кулак) գյուղացիները կամ գյուղե գյուղ շրջող մանր մեծագնորդները։ Հանձինս վերջինների՝ առևտրային կապիտալը թափանցում ե գյուղի ամենահեռավոր ու խուլ անկյունները։ Այսպիսի մանր մեծագնորդություն (скупщичество) տարածված ե հատկապես Ռուսաստանում, վորտեղ հեռավորությունների մեծությունն արգելք ե լինում գյուղական տնայնագործների ու խոշոր ձեռնարկողների միջև անմիջական հաղորդակցություններ հաստատելուն։

Առևտրային կապիտալի հաղթանակը քաղաքում ավելի պակաս լրությամբ ե լինում։ Քաղաքային արհեստավորն, ինչպես արդեն ասված ե, ավելի յեր ապահովված, իրեն անկախ վարպետ եր զգում, վերջապես համքարային տնտեսությունները նրան նեցուկ եյին հանդիսանում։ Համքարությունները համառ պաշտպանում եյին իրենց կանոնադրությունների հենց այն կետերը, վորոնք, արգելում եյին ամեն մի միջնորդություն ու արդյունքների ամեն վաճառք, վոր համքարությունների անդամների ձեռքով չեր կատարվում։ Սակայն վերջիվերջո մեծագնորդական կապիտալը քաղաքում ել եր հաղթանա-

կում, թեև վոչ այնքան լրիվ չափով, ինչպես գյուղում։ Ինչպես գիտենք, առաջին մեծագնորդները ծագում եյին հենց իրենց արհեստավորների միջից, մանավանդ արտադրության այն ճյուղերում, վորտեղ արդյունքը մինչև վերջնականապես պատրաստվելը միքանի համքարությունների ձեռքով եր անցնում։ Այն վարպետները, վորոնք արդյունքներին վերջնական կերպարանք եյին տալիս և սրանից հետո վաճառում շուկայում, արդեն հենց այս հանգամանքի շնորհիվ իսկական մեծագնորդների վիճակի մեջ եյին ընկնում։ Բուն իսկ համքարությունների ներսում մեծագնորդության զարգացումը վերջիվերջո հեշտացնում եր նաև պրոֆեսիոնալ մեծագնորդ կապիտալիստների մուտքը համքարությունների մեջ։ Արդյունաբերության միքանի ճյուղերում (մետաքսագործական, վոսկեկարի, ժապավենի, պուզմենտի, թավշի արդյունաբերության մեջ), վորտեղ հում նյութի մատակարարումը բացառապես առևտրային վաշխառուական կապիտալի միջոցով եր կատարվում, պատրաստի արդյունքների վաճառքն ել մեծ մասամբ հենց այս կապիտալի տերերի ձեռքումն եր գտնվում։

Մյուս կողմից՝ քաղաքներում ավելի ու ավելի հաճախ են յերևան գալիս այնպիսի արհեստավորներ, վորոնք համքարություններից դուրս են գտնվում և այս պատճառով ել ավելի հեշտությամբ են առևտրային կապիտալից կախման մեջ ընկնում։ Այսպիսի արհեստավորների թվին եյին պատկանում, օրինակ, այն վարպետացուները, վորոնց առջև փակված եյին վարպետի կոչում ստանալու դռները, հետո «արտոնյալ» վարպետները, վորոնք թագավորական կամ տեղական քաղաքային իշխանությունից վորոշ վճարով թույլտվություն եյին ստացել արհեստով պարապելու, թեև համքարային վարպետներ չեյին, ստարերկրացիք, մասնավորապես հայրենիքից վտարված հուգենոտները, շրջակա գյուղերից յեկած արհեստավորներն ու բանվորուհի կանայք, վորոնց նույնպես համքարային կանոնադրությունները սովորաբար արգելում եյին արհեստով պարապելը։ Վերջիվերջո այսպիսի վոչ-համքարային վարպետների թիվը գերազանցում եր համքարային վարպետներից։ Ֆրանսիայում՝ արդյունաբերական խոշոր կենտրոններում ամբողջ արվարձաններ, ինչպես, օրինակ, Թամպլն ու Ս.-Անթուանը Պարիզում, բնակավորված, լցված եյին այսպիսի «ազորինի» աշխատանքի ներկայացուցիչներով։ Վոչ-համքարային անկազմակերպ արհեստավորների այս մասսայի մեջ եր ահա, ամենից առաջ, վոր կապիտալը նպաստավոր հող եր գտնում իրենից կախյալ տնային արդյունաբերությունը նաև քաղաքներում տնկելու ու հաստատելու համար։

ՏԱՍՆՅԵՎՉՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ։ Տնային արդյունաբերությունն արդեն արհեստից խոշոր կապիտալիստական ձեռնարկության անցնելու մի ձև է։ Տնայնագործն աշխատում է իր տանը, բայց այլևս ինքնուրույն չե. նա գտնվում է կապիտալիստի նկատմամբ կախման հարաբերության մեջ, վորից ստանում է հում նյութը։ Կապիտալիստը կազմակերպում է վոչ միայն տնայնագործներին հում նյութ մատակարարելն, այլև պատրաստի արդյունքների վաճառքը։ Բոլոր արդյունքներն անցնում են նրա ձեռքով ու նրա գործակալների ձեռքով, ընդվորում վորոշ պահանջների չբավարարող արդյունքներն անպիտվում են (браковаться)։ Այսպիսով արտադրությունն ինքն իսկ ձեռնարկողի վերահսկմանն է յենթարկվում։ Մնում է ջոկ-ջոկ արտադրող տնայնագործներին միացնել մի շինության մեջ, վորպեսզի խոշոր կապիտալիստական ձեռնարկություն կազմելու պրոցեսը հասնի իր ավարտին։

Սկզբում այսպիսի միացմանն ուղեկից չեն արտադրության յե-
ղանակի ու տեխնիկայի նույնիսկ վորևէ նկատելի փոփոխությունները։
Աշխատանքը դարձյալ ձեռքի աշխատանք է մնում։ Բուն կապիտալիս-
տական ձեռնարկության առաջին ձևի—մանուֆակտուրայի հենց ա-
նունը ծագում է լատիներեն «manus»—«ձեռք» ու «factus»—«արված»,
«շինված» բառերից և հետևաբար «ձեռագործ» է նշանակում։ Մանու-
ֆակտուրայի զարգացումը կարող է կատարվել յերկու կերպ. մի կող-
մից՝ մանուֆակտուրան միացնում է զանազան մասնագիտություննե-
րի արհեստավորների, վորոնք հաջորդաբար աշխատում են միևնույն
արդյունքի վրա։ Այսպես, օրինակ, կառքեր շինելու գործում մասնակ-
ցում են կառագործները, լծասարք շինողները, յերկաթագործները,
հյուսնները, պաստառողները, ապակեգործները, ներկարարները, վեռ-
նիճողները (լաքողները—лакировщики), սառը զենք պատրաստելում
աշխատում են դարբինները, ջրդեղողները (закаливальщик), հղկիչ-
ներն, առանձին մասերը պատրաստող վարպետներն ու վերջապես մա-
սերը միացնողները։ Մյուս դեպքերում, ընդհակառակը, մանուֆակ-

տուրային ձեռնարկության մեջ միանում են միևնույն մասնագիտության բանվորները։ Այսպիսիք են ժամացույցի ասեղի ու թղթի մանուֆակտուրաները։ Այսպիսով սկզբում պարզ համագործակցություն, պարզ կոոպերացիա յեր այս, և միայն աստիճանաբար, յերբ աշխատանքի բաժանման ոգուտները յերևան յեկան, արտադրության պրոցեսը տրոհվում եր առանձին մասերի, վորոնք հանձնարարվում եյին հատուկ բանվորների։

Այսպիսով մանուֆակտուրաները կարող են ծագել հավասարապես թե զանազան տեսակի բանվորներին միացնելու միջոցով և թե աշխատանքը հաջորդաբար բաժանելով սկզբնապես միատեսակ բանվորների միջև, վորոնք արտադրության ամբողջ պրոցեսը կատարում են ըսկզբից մինչև վերջը։

2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ։ Յեթե զանազան մասնագիտությունների բանվորներին մի ձեռնարկության մեջ միացնելը լիովին բնական ու հասկանալի յեր թվում, ապա տնայնագործ բանվորներին մի շինության մեջ միացնելու համար կապիտալիստը կարող եր շատ դրդապատճառներ ունենալ։

Այս միացման շնորհիվ ամենից առաջ ավելորդ եր դառնում, վերանում եր միջնորդների անհրաժեշտությունը, վորոնք տնայնագործներին նյութեղեն եյին բաժանում, և միևնույն ժամանակ թե առաջինների ու թե վերջինների կողմից նյութեղենը թաքցնելու հնարավորության առաջն առնվում եր։ Այնուհետև հեշտացնում եր՝ ինչպես բանվորների աշխատանքի վերահսկողությունն, այնպես և ամբողջ գործի ընդհանուր ղեկավարությունը. այս գործը կարիքի դեպքում ավելի դյուրին ու արագ կարելի յեր ընդարձակել, քան տնային արտադրությունը, վոր ցրիվ յեկած եր լինում բազմաթիվ տնայնագործական արհեստանոցներում։ Հետո արտադրության մանուֆակտուրային յեղանակի դեպքում մեծ չափով միջոցներ են տնտեսում, յերբ արհեստանոցը սարք ու կարգի յեն ձգում և արտադրության միջոցներ են ձեռք բերում։ 20 մարդու համար մի ընդհանուր արհեստանոց կազմակերպելն ու սարքի դնելը շատ ավելի եժան ե նստում, քան ամեն մեկի համար առանձին՝ 20 արհեստանոց շինելը։ Միևնույն գործիքներն աշխատանքի ժամանակ հերթով ձեռքից ձեռք են անցնում և այս պատճառով յուրաքանչյուր առանձին բանվորի համար լիակատար կոմպլեկտ չի պահանջվում։ Տնտեսվում ե նաև այն ժամանակը, վոր անհրաժեշտ ե նյութեղենն առանձին արհեստավորների արհեստանոցները հասցնելու ու բաշխելու, այլև նրանցից պատրաստի արդյունքներն ստանալու համար։

Սակայն մանուֆակտուրայի գլխավոր առավելությունը զատ-զատ գոյություն ունեցող մանր արտադրության նկատմամբ՝ կայանում ե

աշխատանքի բաժանումը։ Աշխատանքի բաժանումից բղխող ոգուտները, ի դեպ, մեծ մասամբ միանգամից չեն յերևան գալիս, այլ այն չափով միայն, վոր չափով զարգանում ե արտադրության մանուֆակտուրային յեղանակը, մանավանդ վոր մանուֆակտուրաների մեծ մասի մեջ, վորոնք մեկ մասնագիտության գործավորների (работник) են միացնում, սկզբում աշխատանքի վոչ մի բաժանում չկար դեռևս։ Մանուֆակտուրայի մեջ աշխատանքի բաժանումը կարող ե յերկու տեսակ լինել. կամ յուրաքանչյուր բանվորի հանձնարարում են առարկայի առանձին մասերի պատրաստումը, որինակ, ժամացույցի մեխանիզմ շինելիս, կամ թե առարկան՝ շինվելու միջոցին հաջորդաբար անցնում ե մի շարք բանվորների ձեռքով, վորոնք նրա վրա զանազան գործողություններ են կատարում։ Վերջին դեպքում արտադրության պրոցեսը տրոհվում ե մի շարք ամենապարզ գործողությունների։ Մանուֆակտուրայի մեջ սրան իբրև որինակ կարող ե ծառայել գնդասեղներ շինելը. մի բանվոր մետաղից լար ե քաշում, մյուսը՝ ձգում, յերկարացնում ե այն, յերրորդը՝ կտրտում ե մասերի, չորրորդը՝ ծայրն ե սրում, հինգերորդը՝ հղկում ե մյուս ծայրը, վորի վրա պետք ե անցկացնեն սաղագնդիկը, յերկու կամ յերեք հոգի զբաղված են հենց այս սաղագնդիկները պատրաստելով, յերկուսն զբաղվում են սաղագնդիկները ասղի ծայրին պնդացնելով ու վողորկելով. նույնիսկ պատրաստի գնդասեղները թղթի վրա խրելը հանձնարարված ե հատուկ բանվորների։ Այսպիսով գնդասեղների արտադրությունն ընդհանրապես առած, տրոհվում ե 18 զատ-զատ գործողությունների։ Եվ ավելի շատ բանվորներ զբաղված են լինում ասեղի արտադրության մեջ. յուրաքանչյուր ասեղ անցնում ե 70 բանվորի ձեռով։

Արհեստային արտադրության մեջ վոչ մի նման բան չկար։ Առանձին համքարությունների միջև յեղած աշխատանքի բաժանման դեպքերը հազվադեպ բացառություններ եյին, ինչպիսին կար, որինակ, մահուդի կամ զենքի արտադրության մեջ։ Ինչպես գիտենք, առանձին համքարությունների միջև, ճիշտ ե, զարգացած եր ուշադիր ու մանրակրկիտ մասնագիտացում ըստ արդյունքների տեսակների, սակայն արդյունքների յուրաքանչյուր հատուկ տեսակին նվիրված արտադրության մեջ աշխատանքի բաժանում մեծ մասամբ գոյություն չուներ։ Սովորաբար յուրաքանչյուր արհեստավոր ամբողջ աշխատանքն սկզբից մինչև վերջն ինքն եր կատարում, ընդվորում հաճախ այս բանի համար պահանջվում եր միքանի տեսակ արհեստների հմտություն։ Այսպես՝ վոսկերիչներն իրենք եյին հալում մետաղը, տափակացնում, հալվածքները միացնում (чеканить), փորագրում, հաղճապակով պատում։ Մեծ մասամբ արհեստավորն ինքը պետք ե շիներ իրեն անհրաժեշտ գործիքներն ել։ Մեկ տեսակի արդյունքների արտադրության մեջ աշ-

տուրային ձեռնարկության մեջ միանում են միևնույն մասնագիտության բանվորները։ Այսպիսիք են ժամացույցի ասեղի ու թղթի մանուֆակտուրաները։ Այսպիսով սկզբում պարզ համագործակցություն, պարզ կոոպերացիա յիր այս, և միայն աստիճանաբար, յերբ աշխատանքի բաժանման ոգուտները յերևան յեկան, արտադրության պրոցեսը տրոհվում եր առանձին մասերի, վորոնք հանձնարարվում եյին հատուկ բանվորների։

Այսպիսով մանուֆակտուրաները կարող են ծագել հավասարապես թե զանազան տեսակի բանվորներին միացնելու միջոցով և թե աշխատանքը հաջորդաբար բաժանելով սկզբնապես միատեսակ բանվորների միջև, վորոնք արտադրության ամբողջ պրոցեսը կատարում են ըսկըզբից մինչև վերջը։

2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։—ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ։ Յեթե զանազան մասնագիտությունների բանվորներին մի ձեռնարկության մեջ միացնելը լիովին բնական ու հասկանալի յեր թվում, ապա տնայնագործ բանվորներին մի շենության մեջ միացնելու համար կապիտալիստը կարող եր շատ դրդապատճառներ ունենալ։

Այս միացման շնորհիվ ամենից առաջ ավելորդ եր դառնում, վերանում եր միջնորդների անհրաժեշտությունը, վորոնք տնայնագործներին նյութեղեն եյին բաժանում, և միևնույն ժամանակ թե առաջինների ու թե վերջինների կողմից նյութեղենը թաքցնելու հնարավորության առաջն առնվում եր։ Այնուհետև հեշտացնում եր՝ ինչպես բանվորների աշխատանքի վերահսկողությունն, այնպես և ամբողջ գործի ընդհանուր ղեկավարությունը. այս գործը կարիքի դեպքում ավելի դյուրին ու արագ կարելի յեր ընդարձակել, քան տնային արտադրությունը, վոր ցրիվ յեկած եր լինում բազմաթիվ տնայնագործական արհեստանոցներում։ Հետո արտադրության մանուֆակտուրային յեղանակի դեպքում մեծ չափով միջոցներ են տնտեսում, յերբ արհեստանոցը սարք ու կարգի յեն ձգում և արտադրության միջոցներ են ձեռք բերում։ 20 մարդու համար մի ընդհանուր արհեստանոց կազմակերպելն ու սարքի դնելը շատ ավելի եժան ե նստում, քան ամեն մեկի համար առանձին՝ 20 արհեստանոց շինելը։ Միևնույն գործիքներն աշխատանքի ժամանակ հերթով ձեռքից ձեռք են անցնում և այս պատճառով յուրաքանչյուր առանձին բանվորի համար լիակատար կոմպլեկտ չի պահանջվում։ Տնտեսվում ե նաև այն ժամանակը, վոր անհրաժեշտ ե նյութեղենն առանձին արհեստավորների արհեստանոցները հասցնելու ու բաշխելու, այլև նրանցից պատրաստի արդյունքներն ստանալու համար։

Սակայն մանուֆակտուրայի գլխավոր առավելությունը զատ-զատ գոյություն ունեցող մանր արտադրության նկատմամբ՝ կայանում ե

աշխատանքի բաժանումը։ Աշխատանքի բաժանումից բղխող ոգուտները, ի դեպ, մեծ մասամբ միանգամից չեն յերևան գալիս, այլ այն չափով միայն, վոր չափով զարգանում ե արտադրության մանուֆակտուրային յեղանակը, մանավանդ վոր մանուֆակտուրաների մեծ մասի մեջ, վորոնք մեկ մասնագիտության գործավորների (работник) են միացնում, սկզբում աշխատանքի վոչ մի բաժանում չկար դեռևս։ Մանուֆակտուրայի մեջ աշխատանքի բաժանումը կարող ե յերկու տեսակ լինել. կամ յուրաքանչյուր բանվորի հանձնարարում են առարկայի առանձին մասերի պատրաստումը, որինակ, ժամացույցի մեխանիզմ շինելիս, կամ թե առարկան՝ շինվելու միջոցին հաջորդաբար անցնում ե մի շարք բանվորների ձեռքով, վորոնք նրա վրա զանազան գործողություններ են կատարում։ Վերջին դեպքում արտադրության պրոցեսը տրոհվում ե մի շարք ամենապարզ գործողությունների։ Մանուֆակտուրայի մեջ սրան իբրև որինակ կարող ե ծառայել գնդասեղներ շինելը. մի բանվոր մետաղից լար ե քաշում, մյուսը՝ ձգում, յերկարացնում ե այն, յերրորդը՝ կտրտում ե մասերի, չորրորդը՝ ծայրն ե սրում, հինգերորդը՝ հղկում ե մյուս ծայրը, վորի վրա պետք ե անցկացնեն ասղագնդիկը, յերկու կամ յերեք հոգի զբաղված են հենց այս ասղագնդիկները պատրաստելով, յերկուսն զբաղվում են ասղագնդիկները ասղի ծայրին պնդացնելով ու վողորկելով. Նույնիսկ պատրաստի գնդասեղները թղթի վրա խրելը հանձնարարված ե հատուկ բանվորների։ Այսպիսով գնդասեղների արտադրությունն ընդհանրապես առած, տրոհվում ե 18 զատ-զատ գործողությունների։ Եվ ավելի շատ բանվորներ զբաղված են լինում ասեղի արտադրության մեջ. յուրաքանչյուր ասեղ անցնում ե 70 բանվորի ձեռով։

Արհեստային արտադրության մեջ վոչ մի նման բան չկար։ Առանձին համքարությունների միջև յեղած աշխատանքի բաժանման դեպքերը հազվադեպ բացառություններ եյին, ինչպիսին կար, որինակ, մահուդի կամ զենքի արտադրության մեջ։ Ինչպես գիտենք, առանձին համքարությունների միջև, ճիշտ ե, զարգացած եր ուշադիր ու մանրակրկիտ մասնագիտացում ըստ արդյունքների տեսակների, սակայն արդյունքների յուրաքանչյուր հատուկ տեսակին նվիրված արտադրության մեջ աշխատանքի բաժանում մեծ մասամբ գոյություն չուներ։ Սովորաբար յուրաքանչյուր արհեստավոր ամբողջ աշխատանքն սկզբից մինչև վերջն ինքն եր կատարում, ընդվորում հաճախ այս բանի համար պահանջվում եր միքանի տեսակ արհեստների հմտություն։ Այսպես՝ վոսկերիչներն իրենք եյին հալում մետաղը, տափակացնում, հալվածքները միացնում (чеканить), փորագրում, հղկապակիով պատում։ Մեծ մասամբ արհեստավորն ինքը պետք ե շիներ իրեն անհրաժեշտ գործիքներն ել։ Մեկ տեսակի արդյունքների արտադրության մեջ աշ-

խատանքի խսկական բաժանում (այն էլ վոչ թե հասարակական բաժանում, վոչ թե առանձին համքարությունների միջև, այլ մեկ ձեռնարկության բանվորների միջև) առաջին անգամ միայն մանուֆակտուրայի մեջ է կիրարկվում, և արդեն մենակ այս հանգամանքն արտադրության մանուֆակտուրայի յեղանակն արհեստից շատ ու շատ բարձր է դասում և նրան վիթխարի առավելություն է տալիս ժամանակի տնտեսման ու աշխատանքի արտադրողականության ասպարեզում։

Մանուֆակտուրայի մեջ բոլոր առանձին գործողությունները վոչ թե հաջորդաբար են կատարվում՝ մեկը մյուսի յետևից, այլ միաժամանակ ու զուգահեռաբար, ըստվորում յուրաքանչյուր բանվոր անընդհատ միևնույն աշխատանքն է կատարում։ Սրա շնորհիվ այլևս մի գործողությունից մյուսին անցնելու, գործիքները փոփոխելու և այլ նման բաների համար ժամանակ չեն կորցնում, ինչպես արհեստային աշխատանքի միջոցին։ Բանվորը, վորը մի վորևե պարզ գործողություն կատարելու մասնագետ է դարձել, այս գործողությունն անհամեմատ ավելի ճարպիկ ու արագ է կատարում, քան արհեստավորը, վորն անցնում է մեկ գործողությունից մյուսին։ Աշխատանքի այսպիսի մասնագիտացման հետ թե՛ ավելի լավ ու թե յուրաքանչյուր առանձին գործողության ավելի հարմարված ինստրումենտներ ու աշխատանքի գործիքներ են պատրաստվում։ Արտադրության՝ առանձին գործողությունների տրոհվելը թույլ է տալիս վերջապես այս գործողություններից ամենապարզերը հանձնարարել այնպիսի անձերի, վորոնք վոչ մի արհեստագիտական նախապատրաստություն չունեն, այն է՝ թույլերին, ինվալիդներին, կանանց ու նույնիսկ մանուկներին։ Այս հանգամանքի շնորհիվ փորձված բանվորները կարող են իրենց ամբողջ ժամանակը բացառապես նվիրել ավելի բարդ ու դժվար գործողություններ կատարելուն։

Մանուֆակտուրան կարծես թե մեկ միաձույլ մեքենա յե, վորի մեջ առանձին բանվորները համապատասխանում են մեխանիզմի առանձին մասերին։ Այս պատճառով էլ զանազան գործողություններ կատարող բանվորների թիվը պետք է խիստ համաձայնեցրած լինի իրար. օրինակ, այն բանվորների թիվը, վորոնք իրենց բաժին ընկած աշխատանքն ուրիշներից յերկու անգամ ավելի արագ են կատարում, պետք է համապատասխան կերպով յերկու անգամ քիչ լինի, վորովհետև հակառակ դեպքում նրանք սոխպված պիտի լինեն սպասելու պատճառով ժամանակի կեսը կորցնելու։

Մանուֆակտուրայի բանվորի նեղ մասնագիտացումն ու իր ամբողջ ուշադրության, իր ամբողջ աշխատանքի մի վորևե գործողության վրա կենտրոնացնելը նրան դարձնում է յուրաշարժ (автомат), նրա

կյանքն ու ամբողջ հոգևոր գործունեյությունը զրկում է բովանդակությունից, անդամալուծում է նրան մարմնապես ու բարոյապես, բայց այս բոլորը ձեռնարկու կապիտալիստին չի հետաքրքրում։ Ընդհակառակն, հենց այս հանգամանքը նրա աչքում առանձին առավելություն ունի։ Մանուֆակտուրային բանվորների կատարած պարզ գործողությունններն արհեստի հակառակ վոչ մի առանձին նախորյա վարժմունք (выучка) չեն պահանջում։ Ընդամին բանվորական ույժի արժեքը ցածանում է, և համապատասխան չափով էլ կարելի յե ցածացնել նաև աշխատավարձը։ Ցեվ իրոք, 16—18-րդ դարերում մանուֆակտուրաների ծաղկման ամբողջ ժամանակաշրջանում նկատելի յե աշխատավարձի անընդհատ անկումն։ 15-րդ դարի վերջում ֆրանսական բանվորի աշխատավարձը (ժամանակակից դրամների վերածելով) կազմում եր 900 ֆրանկ, հաջորդ դարի սկզբին՝ 1230 ֆրանկ, 18-րդ դարի սկզբին՝ 750, վերջում՝ 516 ֆրանկ։ Աշխատավարձի հարաբերական անկումը, բոլոր մթերքների ընդհանուր թանկանալու շնորհիվ, էլ ավելի մեծ եր։

3. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՆ ՈՒ ԱՐՀԵՍՏԸ։ Շնորհիվ այն առավելությունների, վոր ունեյին մանուֆակտուրան ու մասամբ էլ տնային արդյունաբերությունը, շնորհիվ ցածր աշխատավարձի, վորով գոհանում եյին գյուղական տնայնագործն ու մանուֆակտուրային բանվորը, շնորհիվ աշխատանքի ավելի բարձր արտադրողականության, վոր ուներ արտադրության մանուֆակտուրային յեղանակը, վերջապես շնորհիվ ձեռնարկու կապիտալիստի՝ շուկայի պայմաններին ավելի լավ ծանոթ լինելուն, տնայնագործական ու մանուֆակտուրայի արդյունաբերությունը հեշտությամբ հաղթում են արհեստին։ Դեռևս 16-րդ դարի կեսին, ինչպես վկայում է հուշակավոր «ակտը ջուլհակների մասին», վոր հրատարակված եր Անգլիայում համքարային արհեստավորների շահերի համար, ջուլհակները գանգատվում են, վոր «հարուստ ու բարեկեցիկ մահուդագործներն ամեն կերպ ճնշում են նրանց, իրենց տներում բազմաթիվ հաստոցներ (станок) սարքելով ու պահելով, վորոնց վրա բանում են վարպետացուներ ու չսովորած բանվորներ աշխատեցնելով և այսպիսով բազմաթիվ արհեստավորների տնավեր դարձնելով ու շատ ավելի ցածր աշխատավարձ վճարելով, քան վճարում եյին առաջ»։

Մանուֆակտուրան Անգլիայում, Ֆրանսիայում ու Նիդերլանդում հայտնվում է 16-րդ դարի կեսին, Գերմանիայում՝ 17-րդ դարում, Ռուսաստանում՝ 18-րդ դարում, և ամենուրեք նրա յերևան գալուն ուղեկից է արհեստի անկումն արդյունաբերության այն բոլոր ճյուղերում, վորտեղ միայն թափանցել եր առևտրային ու արդյունաբերական կապիտալը։

Համքարային անկախ արհեստի հակառակ՝ տնայնագործական ար-

հնատային արդյունաբերությունը հիշյալ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում վոչ միայն չեր ընկնում, այլ ընդհակառակն, աճում ու զարգանում եր։ Տնայնագործի աշխատանքի արտակարգ լարվածությունը, տնայնագործի, վոր աշխատում եր ամբողջ ընտանիքով հանդերձ և ընդամին բավականանում աշխատավարձի չափազանց ցածր մակարդակով, կապիտալիստին պակաս վաստակ չեր ապահովում, բացի սրանից միաժամանակ նրան՝ կապիտալիստին ազատում եր այն հոգսերից ու ծախսերից, վորոնք մանուֆակտուրային ձեռնարկություն կազմակերպելու հետ կապ ունեյին։ Այս պատճառով ել արդյունաբերության կապիտալիստական յերկու ձևն ել, տնային արդյունաբերությունն ու մանուֆակտուրան համարյա յերեք հարյուրամյակի ընթացքում՝ մինչև մեքենային արտադրության սկիզբը շարունակում եյին գոյություն ունենալ կողք-կողքի։ Հաճախ նրանք միասին տեղավորվում են նույնիսկ մի ձեռնարկության մեջ, մանավանդ մանածագործական արդյունաբերության մեջ. Նյութեղենն սկզբում տնայնագործներն եյին մշակում և հետո նոր արդեն մտնում եր մանուֆակտուրայի մեջ՝ վերջնական մշակման յենթարկվելու համար։

2. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ։—ԿԱՆԱՆՑ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ։ Արտադրության նոր ձևը վորքան ավելի յեր բուն կապիտալիստական ձեռնարկություն դառնում, վորքան ավելի վճռական եր սրա տարած հաղթանակն արհեստի նկատմամբ, այնքան ավելի լիակատար եր դառնում կապիտալի իշխանությունը ձեռնարկության ներսում, այնքան ավելի մեծ կախման մեջ եյին լինում նրանից բանվորները։ Թեև մանուֆակտուրայի բանվորներն ազատ մարդիկ եյին համարվում և վարձվում եյին հատուկ պայմանագրերով, սովորաբար մի քանի տարվա ժամկետով, բայց և այնպես մանուֆակտուրաների ներսում զուտ զորանոցային կարգեր եյին թագավորում։ Բանվորներն իրավունք չունեյին վորոշ տարածությունից ավելի հեռանալու մանուֆակտուրայի սահմաններից, վորոշ ժամերից հետո չեյին կարող դուրս գալ մանուֆակտուրայի շենքից, ամենաչնչին զանցառությունների համար գործատերը սեփական հայեցողությամբ նրանց զանազան տուգանքների ու պատիժների յեր յենթարկում*)։

*) Յեվրոպայի արևելյան կեսում, վորտեղ հարկադրական աշխատանքն ընդհանրապես գերակշռում եր ազատ աշխատանքից, մանուֆակտուրաներում ել ճորտեր կամ մանուֆակտուրաներին հատկացրած այսպես կոչված՝ «պ ո ս ե ս ս ի ո ն» գյուղացիներ եյին աշխատում։ Առաջին դեպքում սրանք կալվածատերերի բանի ձգած կալվածատիրական գործարաններն եյին, յերկրորդ դեպքում՝ պոսեսսիոն գործարաններն եյին, վորոնք մեծ մասամբ պատկանում եյին ազնվական ծագում չունեցող ու ճորտեր պահելու իրավունքից զրկված անհատներին։ Անազատ հարկադրական աշխատանքով բանող այսպիսի մանուֆակտուրաներ տարածված եյին Ավստրիայում, մասամբ Գերմանիայում և մանավանդ Ռուսաստանում տասնեութերորդ դարում, Պետրոս I-ինի ժամանակից սկսած։

Մանուֆակտուրայի տերը՝ բանվորների վրա ունեցած այսպիսի համարյա բացարձակ իշխանությունը նրան հնարավորություն եր ընձեռում նրանց աշխատանքն ամենից ընդարձակ չափերով շահագործելու։ Տեսել ենք արդեն, թե արտադրության մանուֆակտուրային յեղանակի տիրապետության շրջանում աշխատավարձն ինչպես նկատելի կերպով ու արագ ընկնում եր։ Աշխատավարձի անկման ուղեկից եր միաժամանակ նաև բանվորական օրվա յերկարելը։ Աշխատանքի արտադրողականության բարձրանալն արդեն կրճատում եր անհրաժեշտ բանվորական ժամանակը, այսինքն այն աշխատանքի ժամանակը, վոր պահանջվում ե իրեն իսկ բանվորի ապրուստի միջոցների արժեքն արտադրելու համար և վորի համար վճարելն այս պատճառով անհրաժեշտ եր։ Սրա հետ միաժամանակ, նույնիսկ բանվորական օրվա նախկին տևողությունը պահպանելիս շատանում եր հավելյալ աշխատանքի քանակը, վոր յուրացնում եր կապիտալիստը։ Սրանով ել չբավականանալով՝ մանուֆակտուրաների տերերը յերկարացնում եյին բանվորական օրը մինչև վերջին սահմանները։ 14 ու 16 ժամյա բանվորական օրը սովորական յերևույթ եր։ Մանուկներն ինն ու նույնիսկ հինգ-վեց տարեկան հասակից սկսած նույնպես պարտական եյին աշխատելու առավոտյան ժամը 5-ից մինչև յերեկոյան ժամը 7-ը։

Վորովհետև կանանց ու մանուկների աշխատանքն ավելի եժան եր, ապա սրանց շահագործումն ամենից ընդարձակ չափերով տարածվեց մանուֆակտուրային ձեռնարկություններում (ինչպես և տնային արդյունաբերության մեջ)։ Շատ մանուֆակտուրաների մեջ կանանց թիվը 5 ու 6 անգամ ավելի յեր, քան տղամարդ բանվորների թիվը։ Մանուկների աշխատանքը նույնպես սովորական յերևույթ եր։ Հաճախ մանուֆակտուրաներին կից պահում եյին հատուկ «մանկատներ», վորտեղ ապրում եյին մանուֆակտուրաներում վարձված մանուկները. կտրված լինելով իրենց ծնողներից՝ նրանք սրանով ել ավելի լիակատար կախումն եյին ունենում ձեռնարկության տերերից։

ՏԱՍՆՅԵՎՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՇՈՒԿԱՅԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 16-րդ ու 18-րդ ԴԱՐԵՐՈՒՄ։— ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄԸ։ Ինչպես վոր արհեստը քաղաքային ռայոնական տնտեսության փակ շրջանակի մեջ եր զարգանում, ճիշտ այնպես ել տնայնագործական ու մանուֆակտուրային արդյունաբերության զարգացումը տեղի յեր ունենում առանձին պետությունների սահմաններում։ Մանուֆակտուրայի ծաղկման ժամանակը նաև ազգային տնտեսության ծաղկման ժամանակն եր։ Յուրաքանչյուր յերկիր, յուրաքանչյուր ազգ, ինչպես առաջ ամեն մի քաղաք, ձգտում է ամփոփվելու իր մեջ և առանձնանալու ուրիշներից, ձգտում է տեղական ազգային արդյունաբերության ու առևտրի զարգացումն ապահովելու՝ ամենից առաջ արգելելով ոտարերկրյա ապրանքների ու արդյունքների ներմուծումն, ընդվորում բացառություն արվում եր հում նյութերի ու միքանի գյուղատնտեսական արդյունքների համար միայն։

Ազգային արդյունաբերությունն ու առևտուրը հովանավորելու նպատակն ամենից առաջ այն եր, վոր առևտրային նպաստավոր հաշվեկշիռ (բալանս) ստացվեր, այսինքն ապրանքների արտահանության ընդհանուր գումարը գերազանցեր ներմուծման գումարից։ Իսկ առևտրային նպաստավոր հաշվեկշիռն իր հերթին պետք է ոժանդակեր յերկրում թանկագին մետաղների ու կապիտալների կուտակմանը։ Տնտեսական այսպիսի քաղաքականությունը, վոր հայտնի յե մերկանտիլիզմ անունով, լիովին համապատասխանում եր դարաշրջանի անցումային (переходный) բնույթին, մի դարաշրջան, յերբ տեղի յեր ունենում սկզբնական կուտակումը կապիտալների, վորոնք անհրաժեշտ եյին ինչպես խոշոր տնտեսության հետագա զարգացման, այնպես և պետական իշխանության աճող պահանջները գոհացնելու համար։

16-րդ դարում արդեն մի շարք առանձին կարգադրություններ են հրատարակվում, վորոնք արգելում եյին արդյունաբերական այս կամ այն արդյունքների ներմուծումը։ Մերկանտիլիզմի սիստեմն իր լիակատար զարգացման հասնում է 17-րդ դարի կեսերին միայն՝ Ֆրան-

սիայում Լյուդովիկ 14-րդի ու սրա մինիստր Կոլբերի ժամանակաշրջանում, Անգլիայում՝ Կրոմվելի իշխանության ժամանակ։ Տնտեսապես հետամնաց յերկրներում մերկանտիլիզմը զարգացավ ավելի ուշ, 18-րդ դարից վոչ վաղ, և յերբեք այն բացառիկ նշանակությունը չունեցավ, ինչպես Ֆրանսիայում ու Անգլիայում։ Յեթե մերկանտիլ սիստեմը յեվրոպական պետությունների մեջ միաժամանակ ու հետևողական կերպով կիրարկվեր, այս համազոր կլիներ միջազգային առևտրական հաղորդակցությունների համարյա լիակատար ընդհատմանը։ Սակայն մերկանտիլիզմն, ինչպես հենց նոր տեսանք, յեվրոպական բոլոր պետությունների մեջ միաժամանակ չծագեց ամենևին, այլև ամենուրեք հետևողական կերպով կիրարկվել չեր կարող յերբեք։ Ընդհակառակն, տնտեսապես հետամնաց յերկիրներն, ինչպիսիք եյին՝ Պիրենեյան թերակղզու յերկիրները, հյուսիսային պետությունները—Շվեդիան, Նորվեգիան, Դանիան, Ռուսաստանը, Մերձավոր Արևելքի յերկրներն ու ամենից առաջ Տաճկաստանը, մասամբ Գերմանիան, Ավստրիան ու նույնիսկ Իտալիան, վոր այս ժամանակ ընկած վիճակում եր,—սրանք բոլորը հենց արդյունաբերական արդյունքների ներմուծման կարիք եյին զգում։ Այս պատճառով էլ մերկանտիլ սիստեմը հետևողական կերպով կիրարկում եյին միայն առաջավոր արդյունաբերական յերկիրներն իրար նկատմամբ։ Անգլիան, Ֆրանսիան ու Նիդերլանդը վոչ միայն փոխադարձաբար անջրպետված եյին մաքսային պատնեշներով, այլև համարյա անընդհատ թշնամական հարաբերությունների մեջ եյին գտնվում։ Ընդհակառակն, յեվրոպական մյուս պետությունների՝ Սպանիայի, Պորտուգալիայի, հյուսիսային պետությունների, Ռուսաստանի հետ նրանք առևտրային դաշինքներ եյին կնքում՝ իրավունք ձեռք բերելով իրենց արդյունաբերական արդյունքները բոլոր այս յերկըրներն արտահանելու և փոխանակելու համար տեղական արտադրանքների հետ—հարավային յերկրների գինու, ձիթյուղի, մրգերի, լեղակի, վորդան կարմրի, թանկագին մետաղների հետ, և հյուսիսային յերկըրների ու արևելյան Յեվրոպայի կանեփաթելի (пенька), վշի, ճարպի, փայտեղենի ու յերկաթի հետ։ Այսպիսի առևտրային դաշնագրեր կնքեցին, օրինակ, 18-րդ դարի ընթացքում Անգլիան՝ Պորտուգալիայի, Սպանիայի, Դանիայի, Ռուսաստանի հետ, Ֆրանսիան՝ Սպանիայի, Շվեդիայի, Դանիայի, Ռուսաստանի հետ. բացի սրանից, ֆրանսական նորաձևության (модные) ապրանքները լավ վաճառվում եյին Գերմանիայում։ Ինչպես Անգլիան, այնպես և Ֆրանսիան աշխույժ ու կենդանի առևտրային հաղորդակցություն ունեյին «Լևանտի» յերկրների —Տաճկաստանի, Յեգիպտոսի, Տրիպոլի հետ։ Ֆրանսիայի ու Անգլիայի արտաքին արտահանման առևտրի կենդանանալուն նշանավոր չափով նպաստում եր նաև այն հանգամանքը, վոր արտադրության նոր

ճյուղեր եյին ծագել այդ յերկրներում—Ֆրանսիայում՝ հայելիների, ժանյակների (հաշիա), գոբլենյան գործվածքների, պերճանքի զանազան առարկաների արտադրությունը, Անգլիայում 18-րդ դարի կեսից բամբակեղենի (хлопчатобумажный) արդյունաբերությունը։

Վերջապես պետք է նկատի ունենալ, վոր արտաքին առևտուրը ընդհանրապես ու յեվրոպական յերկրներից արդյունաբերական արդյունքների արտահանությունը՝ մասնավորապես ավելի ու ավելի յեր ուղղվում դեպի գաղութային տիրապետությունները։ Առանձնապես աճում եր Անգլիայի գաղութային առևտուրը, Անգլիայի, վոր 18-րդ դարի ընթացքում ամենահզոր գաղութային պետությունն եր դարձել։ Այն ժամանակ, յերբ Անգլիայի ընդհանուր արտահանությունն այդ դարի ընթացքում 6,5 միլլիոն ֆունտ-ստերլինգ (մոտ 60 միլլիոն ռուբլի), բարձրացավ մինչև 18,5 միլլիոն ֆունտ ստերլինգի (մոտ 180 միլլիոն ռուբլի), նրա արտահանությունը դեպի Նիդերլանդ մեծապես կրճատվեց, իսկ դեպի Ֆրանսիա միայն աննշան չափով ավելացավ և այն էլ լոկ ի հետևանս առևտրային դաշինքի, վոր կնքվեց 1786 թվին, հեղափոխության նախորյակին, իսկ հեղափոխությունը նորից ընդհատեց առևտրային հաղորդակցությունը յերկու յերկրների միջև։ Հետևաբար արտահանության աճման ամբողջ տարբերությունը, վոր հավասար է 12 միլլիոն ֆունտ-ստերլինգի, բաժին է ընկնում մնացած յեվրոպական պետություններին ու գաղության յերկրներին, ի թիվս վորի մոտ 7 միլլիոն ֆունտ-ստերլինգ ընկնում է գաղութներին (դարի սկզբին դեպի գաղութները կատարած արտահանությունը կազմում եր մոտ մեկ միլլիոն ֆունտ-ստերլինգ, վերջում՝ 8 միլլիոն ֆունտ-ստերլինգից ավելի (Բեր)։ Անգլիական արտահանության ամբողջ աճած մասն այն ժամանակ արդյունաբերական արդյունքներին եր բաժին ընկնում, վորովհետև ընդհանրապես Անգլիայից քիչ թե շատ մեծ քանակով հում նյութ չեր արտահանվում։ Ֆրանսիայի արդյունաբերական արդյունքների արտահանությունն այն դարի ընթացքում յեռապատկից ավելի շատացավ—1716 թվին 38 միլլիոն ֆրանկից (մոտ 16 միլլիոն ռուբլի) մինչև 123 միլլիոն ֆրանկ (մոտ 50 միլլիոն ռուբլի) 1787 թվին։ Ֆրանսական արտահանության մյուս նշանավոր հոդվածըն արևելա—ու արևմտա-հնդկական գաղութային ապրանքներն եյին։ Նույն տարիների ընթացքում Ֆրանսիայից տարած գաղութային ապրանքների արտահանությունը կազմում եր 17,8 միլլիոն ֆրանկ ու 156,3 միլլիոն ֆրանկ (այնինչ արտահանության ընդհանուր գումարն եր 105,7 միլլիոն ֆրանկ ու 424,5 միլիոն ֆրանկ (Լևասսերի հաշվելով))։

2. ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄԻ ՍԻՍՏԵՄԻ ԹՈՒԼԱՆԱԼԸ։—ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ։ Արդյունաբերության արագ աճման և

անգլիական ու ֆրանսական արտահանության շատանալու հետևանքով մերկանտիլ սիստեմն ավելի ու ավելի յեր կորցնում իր նշանակությունը։ Սրա հետևանքով այս առաջադեմ արդյունաբերական զույգ յերկիրներում ու ամենից առաջ Անգլիայում ավելի ու ավելի հաճախ են սկսում ձայներ հնչել հօգուտ ազատ առևտրի, վորը կաշկանդակված չլինի վոչ մի արգելքով ու մաքսերով։ Անգլիայի տնտեսագետ հեղինակները—Նորթը դեռևս 17-րդ դարի վերջում, Ադամ Սմիթը 18-րդ դարում, Ֆրանսիայում ֆիզիոկրատների դպրոցը, ազատ առևտրի հայտարարումն են պահանջում։ 1786 թվին վերջապես յերկու տնտեսությունների միջև առևտրային դաշնագիր կնքվեց։ Սրա հետևանքները Ֆրանսիայի համար չափազանց աննպաստ յեղան։ Անգլիան այն ժամանակներում մասամբ արդեն անցել եր մեքենային արդյունաբերության, և Ֆրանսիան կարճ միջոցում այն աստիճան հեղեղվեց անգլիական ապրանքներով, վոր նրա սեփական արդյունաբերությունը ծանր ճգնաժամի յենթարկվեց առևտրային դաշնագիրը կնքելուց հետո հենց առաջին տարիներում։ Ինչպես արդեն ասել ենք, հեղափոխության պայթումը Ֆրանսիայում նորից ընդհատեց անգլա-ֆրանսական դաշնագրի կիրարկումը։

Միջազգային առևտրի աճմանը վերաբերող տվյալները, վոր մեջ բերինք, ցույց են տալիս, վոր արտադրության ընդարձակմանն ուղեկցում եր վոչ միայն վաճառքի ընդարձակումն յերկրի ներսում, վոր հետևանք եր արդյունաբերական ազգաբնակության՝ ի հաշիվ յերկրագործականի շատանալու, այլև արտաքին արտահանության, և ամենից առաջ արդյունաբերական արդյունքների արտահանության նշանավոր չափերով մեծանալու։ Արդյունաբերական զարգացման հետ միաժամանակ ու զուգահեռաբար՝ շուկայի ու սրա վաճառքի պրոցեսն եր կատարվում։ Ինչպես արտադրությունն, այնպես և արդյունքների վաճառքն ընդմին ավելի ու ավելի ընդարձակ, ավելի ու ավելի մասսայական չափեր եյին ընդունում։ Այսպիսով ժամանակակից խոշոր մեքենային արդյունաբերության զարգացումը վոչ միայն բնական ավարտումն եր այն փոփոխությունների, վորոնք կատարում եյին արտադրության պայմանի մեջ՝ մանր զատզատված արհեստից տնային ու մանուֆակտուրային արդյունաբերության անցնելով, այլև ընդհանուր տնտեսական պայմանների ծնունդ եր, վաճառքի շուկաների ընդարձակման ու արդյունաբերական արդյունքների մասսայական արտադրության պահանջի ծագելու հետևանք։

ՏԱՍՆԵՎՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԻՆ ՅԵՂԱՆԱԿԸ. ԲԱՆՎՈՐՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՆ.

1. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԻՆ (машинной) *ՅԵՂԱՆԱԿԻ ԾԱԳՈՒՄԸ։* Արտադրողական գործունեյությունը դեռևս արտադրության մանուֆակտուրային յեղանակի ժամանակ արդեն տրոհվում եր մի շարք զատզատված բաղադրիչ մասերի։ Առանձին բանվորների աշխատանքը կազմում եյին զուտ մեքենաբար կատարվող պարզ գործողությունները, վորով բանվորը մի յուրաշարժ (ավտոմատ) եր դառնում։ Այստեղից հեշտ եր ու բնական այն մտքին հասնելը, թե կարելի յե բանվորին փոխարինել վորևե մեքենական շարժիչով, վորը շարժման մեջ դրվեր բնության ույժերով, ջրով, քամիով կամ վերջապես շոգիով։ Դեռևս հին դարերում հայտնի յեր ջրի ու քամու ույժի գործադրությունը։ Սակայն բանից դուրս եր գալիս, վոր սրանց կիրարկումը թե չափազանց անբավարար ե, թե անհարատև և թե վերջապես կախված ե զուտ արտաքին բնական պայմաններից, այնպես վոր սրանց միջոցով բավարար չափով չեր կարող լուծվել արտադրությունը մեծացնելու խնդիրը։ Քամու ույժը փոփոխական ե ու անհամաչափ, ջրի ույժը կարելի յե կիրարկել վորոշ տեղերում ու տարվա մեջ վորոշ ժամանակ միայն և ընդամենը հնարավոր չե կամովին այն շատացնել։ Միայն գոլորշու շարժիչ ույժի մեջ մարդիկ գտան այն անհրաժեշտ ույժը, վորը կարելի յեր կիրարկել, վորտեղ ուզենաս, միաժամանակ կարելի յեր շատացնել այնքան, վորքան կամենաս։

Շոգին ոգտագործելու միտքը կար դեռ 17-րդ դարում, սակայն իրական գործադրություն ունեցավ այն միայն հաջորդ դարի յերկրորդ կեսում, յերբ պարզվեց, վոր արդյունքների մասսայական արտադրության պահանջ կա։ (Մինչ այդ շոգու ույժը գործադրում եյին հանքահորերից (шахта) ու հանքավայրերից (рудник) ջուրն արտամղելու համար, և այս էլ անում եյին չափազանց անկատար գործիքների միջոցով)։ Շոգեշարժիչը գտել ե Ջ. Ուատտը 1769 թվին։ Սկզբում Ուատտի մեքենան կիրարկվեց նույնպես լեռնային արդյունաբերության մեջ։ Բամբակեղենի արդյունաբերության մեջ առաջին մեքենաները (այն ե՝ հռչակավոր Ջեննի ճախարակը) շարժման մեջ եր դրվում ջրի

ույժով*)։ Միայն 1785 թվից սկսած նաև բամբակեղենի (хлопчатобумажный) արդյունաբերության մեջ առաջին անգամ գործադրեցին շոգեշարժիչի ույժը։ Մանածագործական մեքենական հաստոցը (станок) (Կարտրայտ) յերևան ե գալիս միքիչ ուշ, 1789 թվին միայն։ 19-րդ դարի սկզբին Ֆրանսիայում հնարեցին մետաքսագործային ու վուշ մանելու մեքենաները։ Կես դարի ընթացքում արտադրության մեքենային յեղանակը տարածվեց վոչ միայն արտադրության կարևորագույն զույգ ճյուղերի, լեռնագործային ու մանածագործային արդյունաբերության մեջ, այլև արտադրության բազմաթիվ ավելի պակաս կարևոր ճյուղերում (գուլպաներ, ժանյակներ ևայլն հյուսելու մեջ)։

2. ԲԱՆՎՈՐՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՆ։ Մեքենային արտադրությունն, ինչպես արդեն գիտենք, արտադրության մանուֆակտուրային յեղանակի հետագա զարգացումն ու ավարտումն եր։ Մեքենան ընդհանրապես փոխարինում եր մարդու բանվորական ույժին, իսկ առանձին մեքենան կամ միևնույն մեքենայի զանազան մասերը՝ տարբեր մասնագիտությունների բանվորներին։ Ամեն մի մեքենա կազմված ե յերեք մասից. 1) շարժիչից, վոր բռնում ե բուն իսկ բանվորական ույժի տեղը, 2) հաղորդիչ մեխանիզմից, վոր իր հերթին կախված ե լինում թափի անիվների ու ատամնավոր անիվների, գլանների, շարժաբեր կաշեփոկերի (приводные ремни) ու այլոց բարդ սիստեմից և շարժում ե գործիքը, նայած հարկավորությանն՝ ուղիղ, ուղղահայաց կամ շրջանադարձ (круговращательное) ուղղությամբ (մեքենայի այս մասը կարծես բանվորի ձեռքի տեղն ե բռնում), և վերջապես 3) բուն գործիքից—իլիկից, հաստոցից, մուրճից ևայլն։ Մեքենաներով աշխատող գործարանում արտադրությունը նույն կերպ ե բաժանվում առանձին բաղկացուցիչ մասերի, ինչպես և մանուֆակտուրայում։ Միայն այս բոլոր գործողությունները արդեն վոչ թե բանվորներն են կատարում, այլ մեքենաները, ընդվորում առարկան իր պատրաստվելու համեմատ մի մեքենայից անցնում ե մյուսին, ինչպես վոր առաջ մի բանվորից մյուսին եր անցնում։ Մարդկային աշխատանքի տեղը բռնող մեքենայի յերևան գալը պետք ե ամենից եական կերպով ազդեր վոչ միայն այն դերի վրա, վոր ուներ բանվորն արտադրության մեջ, այլև բանվոր դասակարգի վիճակի վրա։ Արտադրության մանուֆակտուրային յեղանակը, վոր հատուկ վարժունք չեր պահանջում, բանվորի՝ արտադրության մեջ ունեցած նշանակությունն ու դերը ձգել եր։ Մեքենային

*) 1765 թվին մանող Ջ. Հարգրիվսը հնարեց Ջեննի մեքենական (механический) ճախարակը, վոր միանգամից միքանի իլիկ ե շարժում. 1771 թվին Արկրայտը շինեց առաջին մանելու արհեստանոցը, վոր շարժվում եր ջրի ույժով. սրանից հետո Կրոմպտոնը շուտով միացրեց իրար այս յերկու գյուտերն այսպես կոչված մյուլ-մեքենան շինելով (Ջեննի, վոր շարժվում ե ջրով)։

արտադրության մուծումով նախկին հնարները, վորոնք ամենից առաջ քաջավարժության (сноровка) ու ընտելության (навык) վրա յեյին հիմնվում և յերկար վարժմունք եյին պահանջում, այժմ փոխարինվում են մեքենաների ճիշտ ու համաչափ, մաթեմատիքական խիստ ստույգ հաշիվների վրա հիմնվող գործողություններով։ Յերբ ընդամենը մեքենան վտարեց մարդկային աշխատանքը նույնիսկ այն պարզ գործողությունները կատարելու ասպարեզից էլ, վոր անում եյին մանուֆակտուրային բանվորներն, այն ժամանակ բանվորների դերը յեղավ բացառապես մեքենայի գործողություններին հսկելն ու սրան վորոշ ժամանակամիջոցներից հետո հում նյութ հասցնելն ու պատրաստի արդյունքները հեռացնելը։

Այս անելով՝ բանվորը դառնում եր մեքենայի սոսկ կցորդը (придаток)։ Այս պատճառով մի կողմից՝ անորակյալ անվարժ բանվորների՝ մասնագետ բանվորներին դուրս մղելու պրոցեսսն ու մյուս կողմից՝ կանանց ու մանուկների աշխատանքի՝ չափահաս տղամարդ բանվորների աշխատանքը դուրս մղելու պրոցեսսը մեքենաների մուծումով ել ավելի ընդարձակ չափեր եր ընդունում։ Մարդկային աշխատանքին փոխարինելով՝ յուրաքանչյուր մեքենա բռնում եր վոչ թե մեկ, այլ բազմաթիվ տասնյակ բանվորների, իսկ ներկայումս հարյուրավոր ու մինչև անգամ հազարավոր բանվորների աշխատանքի տեղը։ Մեքենայի արտադրության մուծումով աշխատանքի արտադրողականությունը միանգամից վիթխարի չափերով մեծացավ։ Դեռ ձեռքով բանող առաջին մանելու մեքենան ուներ վոչ թե մեկ, այլ 16—18 իլիկ, ներկայումս յուրաքանչյուր առանձին մեքենա շարժում է մի քանի հարյուրական ու նույնիսկ հազարական իլիկներ։ Հիմա մի հալոցի հնոց (доменная печь) տարեկան համարյա նույնքան չուգուն է հալում, վորքան հալում եյին 18-րդ դարի վերջում ամբողջ Անգլիայում։

Պուդլինգացման յեղանակը մուծելուց հետո արդեն (յերբ յերկաթը հալում են վոչ թե փայտ, այլ քարածուխ վառելով) չուգունը յերկաթ դարձնելու ժամանակի տևողությունը 18-րդ դարի վերջում յերեք շաբաթից իջավ մինչև յերկու որ ու կեսի, իսկ տեխնիքական հետագա կատարելագործություններից հետո կրճատվելով հասավ 20 րոպեյի։ Թե աշխատանքի արտադրողականությունն արտադրության զարգանալումն ինչքան է մեծանում, սրա ամենալավ որինակը գնդասեղներ պատրաստելն է։ Արհեստային մշակման միջոցին մի բանվորն որական շինում է 10 գնդասեղից վոչ ավելի։ Ադամ Սմիտի վկայությամբ տասը բանվոր ունեցող մանուֆակտուրայի ամենորյա արտադրողականությունը մի բանվորի համար կազմում եր 4,800 գնդասեղ։ Ներկայումս յուրաքանչյուր առանձին բանվոր՝ միքանի մեքենա շարժման մեջ դնելով, որական արտադրում է մինչև 7 միլլիոն գնդասեղ։

Արտադրողականության ավելանալը շուտով ազդեց արտադրության ընդհանուր չափի վրա յել։ 18-րդ դարի առաջին 70 տարվա ընթացքում Անգլիայի բամբակ մանելու գործարաններում բամբակի սպառումն աճել է 2 ու կես անգամ (2 միլլիոն ֆ.-ից մինչև 5 միլլիոն ֆ.), իսկ մեքենաներ մտցնելուց հետո նույնքան ժամանակամիջոցում 120 անգամ (անցյալ դարի 40-ական թվականներին մինչև 600 միլլիոն ֆ.)։ 18-րդ դարի յերկրորդ կեսի ընթացքում Անգլիայի բրդի գործվածքների արտադրությունը մեծացավ 6-7 անգամ, յերկաթ հալելը—15 անգամ։

3. ՀԱՍԱՐԱԿ ՈՒ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ։—ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՆ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԻՋՈՑ։ Արտադրության պրոցեսսը կրկնվող, շարունակ վերականգնվող պրոցեսս է։ Վորպեսզի արտադրության պրոցեսսը կարողանա անխափան կատարվել, անհրաժեշտ է արտադրության միջոցների մշտական վերականգնումը—արտադրության միջոցների վերարտադրությունը (վերանորոգում ու նոր գործիքների պատրաստում, հում նյութի ստացում ևայլն), այլ և բանվորական ույժի (հետևաբար նաև կենսամիջոցների) վերարտադրություն։ Հենց այս պատճառով էլ ամեն մի արտադրություն միևնույն ժամանակ նաև վերարտադրություն է։ Յեթե արտադրությունը ծառայում է միայն սպառման նպատակներին, այն է՝ անհրաժեշտ կարիքները բավարարելու նպատակներին, ապա այն վերականգնըվում է մշտապես միևնույն չափերով։ Այս՝ հասարակ վերարտադրությունն է։ Այս հասարակ վերարտադրությունից տարբերվելով՝ ամեն մի արտադրություն, վոր վերսկսվում է ավելի մեծացած չափերով, ընդլայնված վերարտադրություն է։

Այսպիսի ընդլայնված վերարտադրություն է հենց կապիտալիստական արտադրությունը, վորի նպատակը վոչ թե անմիջական սպառումն է, այլ վաստակ կորզելն ու կապիտալ կուտակելը։ Ընդամենը կուտակման միջոց է հանդիսանում հավելյալ արժեքը, վոր ստեղծում են բանվորները և յուրացնում կապիտալիստ ձեռնարկուները։

Յերբ արտադրության մեջ մեքենայի նշանակությունն աճում է ի հաշիվ մարդկային աշխատանքի, սրանով ավարտվում է յերբեմնի անկախ արտադրողի՝ բանվոր դառնալու պրոցեսսը, բանվոր, վոր կախումն ունի արտադրության միջոցների սեփականատիրոջից, և այս միջոցներն այժմ նրան վերջնականապես անմատչելի յեն դարձել։ Իբրև վարձու բանվոր նա այժմ արդեն վոչ մի իրավունք չունի իր աշխատանքի արդյունքի նկատմամբ և հարկադրված է բավականանալու բացառապես աշխատավարձով, վոր հազիվ ապրուստի անհրաժեշտ միջոցներ է ապահովում նրան։ Ուրիշ խոսքով՝ վարձատրվում է անհրաժեշտ բանվորական ժամանակը միայն, այսինքն այն աշխատանքի ժամա-

նակը, վոր պահանջվում են իրեն իսկ գործավորի (работник) գոյու-
թյունը պահպանելու և նրա բանվորական ույժը վերաստեղծելու հա-
մար։ Ամբողջ հավելյալ արժեքը, վոր բանվորական որվա մնացած մա-
սի ընթացքում ստեղծում է բանվորը, ձեռնարկուն է յուրացնում։ Կա-
պիտալիստը հավելյալ արժեքն իրացնելուց (реализация) հետո, այ-
սինքն՝ պատրաստի արդյունքները ծախելուց ու այսպիսով սրանց
արժեքը դրամի վերածելուց հետո այն արժեքը լոկ մասամբ է գործա-
դըրում իր վրա։ Հավելյալ արժեքի մյուս ավելի մեծ մասը կապիտալիս-
տը միացնում է կապիտալին և գործադրում է արտադրության հետա-
գա ընդարձակման, աշխատանքի արտադրողականությունն բարձրացը-
նող նոր տեխնիքական կատարելագործություններ մուծելու, լրացու-
ցիչ բանվորներ գործի մեջ բերելու, նոր գործատներ (заведения) կազ-
մակերպելու վրա։ Արտադրության ընդարձակվելու հետ շատանում է
ձեռնարկությունից ստացվող հավելյալ արժեքի գումարն էլ։ Իսկ այս
աճող հավելյալ արժեքի ձեռնարկության մեջ մտցնելն իր հերթին նը-
պաստում է, վոր ձեռնարկությունն էլ ավելի ընդարձակվի, և ընդսը-
մին հավելյալ արժեքի գումարն էլ ավելի մեծ չափով ավելանա ևայլն։
Այսպիսով բանվորների ստեղծած հավելյալ արժեքը կապիտալիստի
համար կուտակման նույնպիսի աղբյուր է դառնում, վորպիսին առև-
տըրային կապիտալիզմի շրջանում սկզբնական կուտակման համար ա-
ռևտրային վաստակն էր, վոր հիմնվում էր մենաշնորհի ու գաղութ-
ների գիշատիչ շահագործման վրա։

4. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻ ԲԱՆԱԿԸ։ Արդյունաբերական կա-
պիտալիզմի արտադրությունն անսահման ընդարձակելու ձգտման ըն-
թացքում յերբեք բանվորական ույժերի պակասություն չի ունեցել։
Ընդհակառակն, արդյունաբերական վերելքի ժամանակաշրջաններում
անգամ՝ աշխատանքի առաջարկը միշտ գերազանցել է և գերազան-
ցում է նրա պահանջից։ Այս յերևույթն ամենից առաջ յերկու պատ-
ճառ ունի։ Կապիտալիզմի զարգացումը մի կողմից տնավեր է անում
մանր արտադրողներին՝ արհեստավորներին ու գյուղացիներին և նը-
րանց բանվոր դարձնում։ Տեխնիկայի զարգացումը մյուս կողմից բազ-
մաթիվ բանվորների աշխատանքն ավելորդ է դարձնում։ Տեսել ենք
արդեն, վոր վարձու պրոլետարների դասակարգի կազմվելը կապիտա-
լիստների սկզբնական կուտակման հետ միաժամանակ ու զուգահեռա-
բար էր կատարվում։ Ընդսմին պրոլետարների թիվն այնքան արագ
էր աճում ամբողջ մանուֆակտուրային շրջանի ընթացքում, վոր շատ
ու շատ էր գերազանցում արդյունաբերության՝ բանվորական ույժերի
նկատմամբ ունեցած կարիքից։ Մեքենաների մուծումը, վորը բազմա-
թիվ բանվորների աշխատանքն ավելորդ էր դարձնում, ազդում էր մի-
ևնույն ուղղությամբ և նպաստում, վոր պարապ բանվորների թիվն էլ

ավելի շատանա։ Մասնագետներին փոխարինում էին անորակյալ բան-
վորները, հասակավոր տղամարդկանց՝ կանայք ու մանուկները։ XIX
դարի առաջին տասնամյակներում մանկական աշխատանքի կիրարկու-
մը չտեսնված չափերի հասավ։ Առաջացավ առևտրականների մի հա-
տուկ դասակարգ, վոր պարապում էր մանուկների աշխատանքի առև-
տըրով։ Սրանք չնչին վարձով պոկում էին մանուկներին ծնողներից
կամ անտուն մանուկներին հանում ապաստարաններից և հետո սրանց
ամբողջ խմբով վաճառում գործարանատերերին։ Մանկական աշխա-
տանքը շահագործվում էր ամենաանմարդի կերպով։ Մանուկներն որա-
կան 16-ական ու ավելի ժամ էին աշխատում և հաճախ գիշերներն
անքուն պետք է անցկացնեյին։ Պատահում էր, վոր գործարանից
դառնալիս մանուկները մեռնում էին ուժասպառությունից։ Միևնույն
ժամանակ տասնյակ հազարավոր ու հարյուր հազարավոր տնայնա-
գործներ ու բանվորներ ավելորդ էին համարվում և փողոց էին շը-
պըրտվում՝ առանց գործ գտնելու վորևե հույսի։ Այսպես էր կազմվում
այն բանվորական պահեստի բանակը, վորի մեջ կապիտալիստը միշտ
կարող էր գտնել վոչ միայն անորակյալ անվարժ բանվորներ, այլև
կարիք յեղած դեպքում՝ փորձառու մասնագետներ էլ։

Յեթե աշխատանքի արտադրողականության հետ արտադրության
ծավալը չմեծանար, ապա գործարաններում զբաղված բանվորների
թիվը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի պիտի կրճատվեր։ Սա-
կայն արտադրության ընդարձակվելը, վորի պատճառը հավելյալ ար-
ժեքի կուտակվելն ու կապիտալի վերածնվելն է, էլ ավելի արագ էր
կատարվում, քան տեխնիկայի զարգացման հետ աշխատանքի արտա-
դըրողականությունն է աճում։ Այսպես, որինակ՝ արտադրության մե-
քենային յեղանակի մուծումից հետո յոթանասնամյա ժամանակաշըր-
ջանի ընթացքում անգլիական բամբականանածային արդյունաբերու-
թյան բամբակի սպառումը, ինչպես ասել ենք, շատացել էր 120 ան-
գամ, այնինչ այս արդյունաբերության արտադրողականությունը
նույն ժամանակի ընթացքում ավելացել էր միքանի տասնյակ ան-
գամ միայն։ Սրա շնորհիվ՝ լրացուցիչ բանվորների պահանջ է առա-
ջանում միշտ։ Գործարանները նորից սկսում են բանվորներին ձգել
դեպի իրենց, և բանվոր ազգաբնակության թիվը վոչ միայն չի պա-
կասում, այլ մեծանում է բացարձակորեն ու նույնիսկ հարաբերաբար,
ամբողջ ազգաբնակության հետ համեմատած տոկոսային հարաբերու-
թյամբ անգամ։

Մյուս կողմից՝ բանվորական պահեստի բանակն էլ չի չքանում
վերջնականապես։ Տեխնիկայի զարգացումը, վոր մի վորոշ թիվ բան-
վորների ավելորդ է դարձնում, չնայած վոր այս յերևույթը շարու-
նակվում է վոչ այնպիսի սրընթաց կերպով, ինչպես մեքենաներ մըտ-

ցրնելու առաջին ժամանակաշրջանում, կանացի ու մանկական աշխատանքի միջոցով տղամարդկանց աշխատանքի վտարվելը, արտադրության կապիտալիստական յեղանակի՝ գյուղական տնտեսության մեջ տարածվելը, վոր քայքայում ե գյուղական մանր արտադրողներին,— այս բոլոր պատճառները նպաստում են, վոր բանվորական պահեստի բանակի շարքերը շարունակ լրացվեն։ Գործազուրկների այս բանակի գոյությունը վոչ միայն բանվորների՝ կապիտալիստին հարկավոր թիվըն ե ապահովում, այլև ձեռնարկուների դասակարգին ամենազդու զենքըն ե տալիս բանվորների դեմ կռվելու համար, վորովհետև գործազուրկ պրոլետարների շարքում միշտ գտնվում են մարդիկ, վորոնք պատրաստ են համառող բանվորներին փոխարինելու, ինչ պայմանով վոր ուզենաս։

ՏԱՍՆԵՎՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒՅԺՆ ԻԲՐԵՎ ԱՊՐԱՆՔ.

1. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Յերբ ձեռքի աշխատանքը դուրս ե մղվում մեքենայի աշխատանքի միջոցով, յերբ խոշոր գործարանային ձեռնարկությունները վտարում են մանր արտադրողներին, այն ժամանակ իբրև արտադրությունը կազմակերպող և ուղեցույց ույժ առաջնակարգ նշանակություն ե ստանում արդյունաբերական կապիտալը։ Մեքենային արտադրության հաղթանակը միաժամանակ նաև արդյունաբերական կապիտալիզմի ու խոշոր կապիտալիստական արդյունաբերության հաղթանակն եր։

Կապիտալիստական տնտեսությունն ամենից առաջ ապրանքային տնտեսություն ե։ Արդյունքները շուկայում պետք ե հանդես գան իբրև ապրանք և վաճառվեն նրա համար, վորպեսզի վերադառնան կապիտալիստի գրպանն իբրև դրամական կապիտալ, վորն անհրաժեշտ ե արտադրությունը շարունակելու ու ընդլայնելու համար։ Տնտեսության նախընթաց ձևերը, նախնական տնտեսությունը, համայնա-յերկրագործականը, կալվածային-ֆեոդալականն ամենից առաջ բնատնտեսական հարաբերություններով եյին բնորոշվում։ Բոլոր արդյունքները սպառվում եյին սեփական տնտեսության սահմաններում առանց ապրանք դառնալու։ Փոխանակվում եյին տնտեսական ավելցուկները միայն, հաճախ նույնիսկ վոչ իրենց իսկական արժեքով. ավելցուկները տիրոջ աչքում գին չունեյին, ահա թե ինչու նա պատրաստ եր զիջելու սրանցից, ինչքան ասես, այն արդյունքների փոխարեն, վորոնք նրան անհրաժեշտ եյին, սակայն չեյին պատրաստվում սեփական տնտեսության մեջ։ Նույնիսկ քաղաքային տնտեսությունը դեռևս ապրանքային տնտեսության զուտ տիպը չեր ներկայացնում։ Արհեստավորը բանում եր վոչ այնքան ծախելու նպատակով, վորքան պատվերով, հաճախ պատվիրատուի նյութեղենով։ Այլև ընդսմին քաղաքային տնտեսությունը չեր բացասում, վոր նրա կողքին գոյություն ունենային կալվածային ու գյուղացական տնտեսությունները, վորոնք բնատնտեսության զուտ ձևերն եյին ավելի կամ պակաս չափով։

Միայն կապիտալիստական տնտեսությունն է ապրանքային տընտեսություն գլխավորապես, միայն արտադրության կապիտալիստական եղանակն է, որ միևնույն ժամանակ տեղ չէր թողնում արտադրության այլ եղանակների համար։ Կապիտալիստական հարաբերությունները վերջիվերջո տարածվում են ամբողջ երկրում, թափանցելով ամենահեռավոր անկյուններն ու ամենուրեք խորտակելով արտադրության ու տնտեսության հին մինչկապիտալիստական հիմունքները։ Կապիտալիստական հասարակության մեջ բոլոր արդյունքները, սակավ բացառությամբ, ապրանքի ձև են ստանում։ Այսպիսով ապրանքային արտադրությունն, այսինքն շուկայի համար արտադրելը արտադրության գերիշխող ձևն է դառնում. սրա հետ միաժամանակ ապրանքային փոխանակային հարաբերություններն էլ միայն կապիտալիստական դարաշրջանումն են հասնում իրենց ամենալիակատար զարգացմանն ու արտահայտությանը։

2. ԱՊՐԱՆՔԻ ԷՅՈՒԹՅՈՒՆԸ։—ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՈՒ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ։ Ինչպես արդեն գիտենք, ապրանք է կոչվում աշխատանքի ամեն մի արդյունք, որ նախանշվում է (предназначается) ոչ թե իրեն իսկ արտադրողի կամ սրա ընտանիքի սեփական սպառման համար, այլ ուրիշ արդյունքների կամ փողի հետ փոխանակելու համար։ Ամեն մի արդյունք, որպեսզի ապրանք դառնա ու փոխանակված լինի, պետք է գոհացնե մարդկային որոշ պահանջները, ուրիշ խոսքով պետք է որոշ սպառողական արժեք ունենա։ Փոխանակության միջոցին այս կամ այն արդյունքների որոշ քանակ փոխանակվում է ուրիշ արդյունքների որոշ քանակի հետ, թեև սրանք որակով բոլորովին տարբեր լինեն։ Առանձին արդյունքների՝ փոխանակության ընթացքում միմյանց նկատմամբ ունեցած քանակային հարաբերությունները կազմում են արժեքի փոխանակային ձևը։ Այսպիսով յուրաքանչյուր արդյունք, որ ապրանք է դառնում, պետք է բացի սպառողական արժեքից նաև որոշ փոխանակային արժեք ունենա։

Ապրանքների սպառողական արժեքն ամենից առաջ կախված է նրանց կոչումը որոշող հատկություններից։ Օրինակ, վերնազգեստի (сюртук) կոչումն ու հետևաբար սպառողական արժեքը բոլորովին այլ են, քան սրճի կամ թեյի կոչումն ու սպառողական արժեքը։ Ընդհակառակն, ապրանքներն, իբրև փոխանակային արժեքներ, իրարուց տարբերվում են բացառապես քանակապես, անկախ նրանց հատուկ որպիսություններից։ Միայն այս կերպով կարող են միմյանց հետ համեմատվել իրենց բնույթով բոլորովին տարբեր առարկաները, և մենք, օրինակ, կարող ենք ասել, որ մեկ վերնազգեստը հավասար է 40 ֆունտ սրճի կամ 10 ֆունտ թեյի։ Յեթե ապրանքները միշտ ու ամեն պայմաններում միևնույն կոչումը կամ սպառողական արժեքն ունեն, ապա

նրանց փոխանակային հարաբերությունները կամ փոխանակային արժեքը փոխվում է՝ տեղի ու ժամանակի պայմաններից կախումն ունենալով, և այս արժեքը միայն տվյալ վայրի ու տվյալ ժամանակի համար որոշ մեծություն է ներկայացնում։

Որպեսզի իրենց հատկություններով միանգամայն տարբեր արդյունքները կարողանան միմյանց հետ համեմատվել, պետք է պարունակեն մի այնպիսի ընդհանուր բան, որը հնարավոր դարձնե նրանց համեմատությունը։ Բոլոր ապրանքների համար ընդհանուր է նրանց այն հատկանիշը միայն, որ նրանք բոլորը մարդկային աշխատանքի արդյունքն են։ Ամեն մի ապրանք ամենից առաջ աշխատանքի արդյունք է ապրանքային ձևով։

3. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ։—ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՏԻՇԻԶՄԸ։ Յեթե ամեն մի ապրանք աշխատանքի արդյունք է, ապա, ընդհակառակն, ամեն մի արդյունք ապրանք չէ ամենևին։ Ինչպես արդեն ասված է, աշխատանքի միայն այնպիսի արդյունքն է ապրանք, որը նախանշված է ոչ թե արտադրողի սեփական սպառման, այլ շուկայում վաճառելու համար։ Այսպիսով ապրանքային արտադրությունն ուղղված է ոչ թե տեղի մասնավոր պահանջները բավարարելու նպատակակետն, այլ դեպի հանրայինները և այս պատճառով ամենից առաջ հասարակական բնույթ ու կոչում ունի։ Սակայն հասարակության համար տեղի ունեցող ամեն արտադրություն ապրանքային ձևով չի արտահայտվում։ Նախնադարյան կոմունիստական հասարակության մեջ կամ ավելի ուշ ժամանակի նահապետական համայնքների մեջ առանձին արտադրողների աշխատանքի արդյունքները ճիշտ նույնպես համայնքի բոլոր անդամների միջև էին բաշխվում, այնուամենայնիվ այս հանգամանքը պատճառ չէր լինում, որ նրանք ապրանք դառնային։ Աշխատանքի արդյունքներն ապրանք են դառնում, երբ ծագում է փոխանակությունը, և վերջինիս չքանալու հետ նրանք նորից պիտի զրկվեն իրենց այս կոչումից։

Այսպիսով, արդյունքների ապրանքային ձևը ոչ այլ ինչ է, յեթե ոչ որոշ հասարակական հարաբերությունների հետևանք, յեթե ոչ հասարակական աշխատանքի արդյունքներն առանձին սպառողների միջև բաշխելու մի եղանակ, որը հատուկ է մանավանդ կապիտալիստական դարաշրջանին։ Նախնադարյան համայնքում կամ նահապետական ընտանիքի մեջ այսպիսի բաշխումը կատարում էին համայնքի պետերն ու ղեկավարներն անմիջորեն։ Փոխանակության ժամանակ այս բաշխումը կատարվում է անկազմակերպ ձևով, իբրև հետևանք առուծախի առանձին, ոչ մի հաշվառքի չենթարկվող դեպքերի անվերջ շարքի։ Ապրանքային փոխանակության շրջանում ինչպես

Միայն կապիտալիստական տնտեսությունն ե ապրանքային տընտեսություն գլխավորապես, միայն արտադրության կապիտալիստական յեղանակն ե, վոր միևնույն ժամանակ տեղ չեր թողնում արտադրության այլ յեղանակների համար։ Կապիտալիստական հարաբերությունները վերջիվերջո տարածվում են ամբողջ յերկրում, թափանցելով ամենահեռավոր անկյուններն ու ամենուրեք խորտակելով արտադրության ու տնտեսության հին մինչկապիտալիստական հիմունքները։ Կապիտալիստական հասարակության մեջ բոլոր արդյունքները, սակավ բացառությամբ, ապրանքի ձև են ստանում։ Այսպիսով ապրանքային արտադրությունն, այսինքն շուկայի համար արտադրելը արտադրության գերիշխող ձևն ե դառնում. սրա հետ միաժամանակ ապրանքային փոխանակային հարաբերություններն էլ միայն կապիտալիստական դարաշրջանումն են հասնում իրենց ամենալիակատար զարգացմանն ու արտահայտությանը։

2. ԱՊՐԱՆՔԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ.—ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՈՒ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ։ Ինչպես արդեն գիտենք, ապրանք ե կոչվում աշխատանքի ամեն մի արդյունք, վոր նախանշվում ե (предназначается) վոչ թե իրեն իսկ արտադրողի կամ սրա ընտանիքի սեփական սպառման համար, այլ ուրիշ արդյունքների կամ փողի հետ փոխանակելու համար։ Ամեն մի արդյունք, վորպեսզի ապրանք դառնա ու փոխանակված լինի, պետք ե գոհացնե մարդկային վորոշ պահանջները, ուրիշ խոսքով պետք ե վորոշ սպառողական արժեք ունենա։ Փոխանակության միջոցին այս կամ այն արդյունքների վորոշ քանակ փոխանակվում ե ուրիշ արդյունքների վորոշ քանակի հետ, թեև սրանք վորակով բոլորովին տարբեր լինեն։ Առանձին արդյունքների՝ փոխանակության ընթացքում միմյանց նկատմամբ ունեցած քանակային հարաբերությունները կազմում են արժեքի փոխանակային ձևը։ Այսպիսով յուրաքանչյուր արդյունք, վոր ապրանք ե դառնում, պետք ե բացի սպառողական արժեքից նաև վորոշ փոխանակային արժեք ունենա։

Ապրանքների սպառողական արժեքն ամենից առաջ կախված ե նրանց կոչումը վորոշող հատկություններից։ Որինակ, վերնազգեստի (сюртук) կոչումն ու հետևաբար սպառողական արժեքը բոլորովին այլ են, քանի սրճի կամ թեյի կոչումն ու սպառողական արժեքը։ Ընդհակառակն, ապրանքներն, իբրև փոխանակային արժեքներ, իրարուց տարբերվում են բացառապես քանակապես, անկախ նրանց հատուկ վորակություններից։ Միայն այս կերպ կարող են միմյանց հետ համեմատվել իրենց բնույթով բոլորովին տարբեր առարկաները, և մենք, որինակ, կարող ենք ասել, վոր մեկ վերնազգեստը հավասար ե 40 ֆունտ սրճի կամ 10 ֆունտ թեյի։ Յեթե ապրանքները միշտ ու ամեն պայմաններում միևնույն կոչումը կամ սպառողական արժեքն ունեն, ապա

նրանց փոխանակային հարաբերությունները կամ փոխանակային արժեքը փոխվում ե՝ տեղի ու ժամանակի պայմաններից կախումն ունենալով, և այս արժեքը միայն տվյալ վայրի ու տվյալ ժամանակի համար վորոշ մեծություն ե ներկայացնում։

Վորպեսզի իրենց հատկություններով միանգամայն տարբեր արդյունքները կարողանան միմյանց հետ համեմատվել, պետք ե պարունակեն մի այնպիսի ընդհանուր բան, վորը հնարավոր դարձնե նրանց համեմատությունը։ Բոլոր ապրանքների համար ընդհանուր ե նրանց այն հատկանիշը միայն, վոր նրանք բոլորը մարդկային աշխատանքի արդյունքն են։ Ամեն մի ապրանք ամենից առաջ աշխատանքի արդյունք ե ապրանքային ձևով։

3. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ.—ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՏԻՇԻԶՄԸ։ Յեթե ամեն մի ապրանք աշխատանքի արդյունք ե, ապա, ընդհակառակն, ամեն մի արդյունք ապրանք չե ամենևին։ Ինչպես արդեն ասված ե, աշխատանքի միայն այնպիսի արդյունքն ե ապրանք, վորը նախանշված ե վոչ թե արտադրողի սեփական սպառման, այլ շուկայում վաճառելու համար։ Այսպիսով ապրանքային արտադրությունն ուղղված ե վոչ թե տեղի մասնավոր պահանջները բավարարելու նպատակներին, այլ դեպի հանրայինները և այս պատճառով ամենից առաջ հասարակական բնույթ ու կոչում ունի։ Սակայն հասարակության համար տեղի ունեցող ամեն արտադրություն ապրանքային ձևով չի արտահայտվում։ Նախնադարյան կոմունիստական հասարակության մեջ կամ ավելի ուշ ժամանակի նահապետական համայնքների մեջ առանձին արտադրողների աշխատանքի արդյունքները ճիշտ նույնպես համայնքի բոլոր անդամների միջև եյին բաշխվում, այնուամենայնիվ այս հանգամանքը պատճառ չեր լինում, վոր նրանք ապրանք դառնային։ Աշխատանքի արդյունքներն ապրանք են դառնում, յերբ ծագում ե փոխանակությունը, և վերջինիս չքանալու հետ նրանք նորից պիտի զրկվեն իրենց այս կոչումից։

Այսպիսով, արդյունքների ապրանքային ձևը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ վորոշ հասարակական հարաբերությունների հետևանք, յեթե վոչ հասարակական աշխատանքի արդյունքներն առանձին սպառողների միջև բաշխելու մի յեղանակ, վորը հատուկ ե մանավանդ կապիտալիստական դարաշրջանին։ Նախնադարյան համայնքում կամ նահապետական ընտանիքի մեջ այսպիսի բաշխումը կատարում եյին համայնքի պետերն ու ղեկավարներն անմիջորեն։ Փոխանակության ժամանակ այս բաշխումը կատարվում ե անկազմակերպ ձևով, իբրև հետևանք առուծախի առանձին, վոչ մի հաշվառքի չենթարկվող դեպքերի անվերջ շարքի։ Ապրանքային փոխանակության շրջանում ինչպես

առանձին արտադրողը չի կարող վստահ լինել, վոր կըհաջողե իր ապրանքը վաճառել, այնպես էլ գնորդը հաճախ չի իմանում, թե արդյոք շուկայում կըգտնի՞ իրեն հարկավոր ապրանքը։

Մարդկանց գիտակից կամքից այսպես անկախ լինելու շնորհիվ՝ փոխանակային հարաբերությունների հասարակական բնույթը, նրանց՝ արդյունքների բաշխման յեղանակ լինելու կոչումը մթագնում է, և սրա հետևանքով սկսում է այնպես թվալ, վոր իբրև թե ապրանքներն իրենք ինչ վոր առանձին հատկություններ ունեն, վորոնց շնորհիվ նրանք վորոշ քանակային հարաբերություններով փոխանակության առարկաներ են դառնում, և թվում է, թե վերնազգեստը, որինակ, ինքնըստինքյան հավասար է 40 փունտ սրճի ու այս պատճառով էլ միշտ կարող է փոխանակվել համապատասխան քանակով սրճի հետ։ Մարդկանց միջև յեղած հասարակական հարաբերությունները ընդունում են ձև այնպիսի հարաբերությունների, վորոնք կարծեք գոյություն ունեն իրենց իսկ ապրանքների միջև։ Այսպիսով ապրանքներին վերագրում են այնպիսի հատկություններ, վոր իրոք չունեն, ճիշտ այնպես, ինչպես վայրենու աչքում ֆետիշը, մի անշունչ առարկա, վոր նա աստված է համարում, օժտված է գերբնական ույժով։ Այսպիսով փոխանակության մասին ունեցած սխալ գաղափարը, թե այն վոչ թե արդյունքների բաշխման մի յեղանակ է, այլ բուն իսկ արդյունքների հատկություն, վորով նրանք ապրանքների դեր են խաղում, իրոք վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի տեսակ ապրանքային ֆետիշիզմ։

Թե ինչու կապիտալիստական շրջանում արդյունքների բաշխումը հենց ապրանքային փոխանակության ձև է ընդունում, սրա պատճառը կապիտալիստական արտադրության հատուկ պայմաններն են։ Յուրաքանչյուր արտադրող, լինի սա յերկրագործ գյուղացի, արհեստավոր կամ, վերջապես խոշոր ձեռնարկու կապիտալիստ, իր արդյունքներն արտադրում է մյուսներից անկախ։ Այս պատճառով էլ ինչպես արտադրությունն, այնպես և արտադրած արդյունքների բաշխումը վոչ թե պլանաչափորեն են կատարվում, այլ անկազմակերպ ու քաոսաբար։ Ամեն մի արտադրող իրեն անհրաժեշտ սպառման առարկաները կարող է ստանալ միայն մեկ միջոցով. նա պետք է աշխատանքի այն արդյունքները, վորոնք իրեն են պատկանում, փոխանակե աշխատանքի այնպիսի արդյունքներով, վորոնք ուրիշին են պատկանում։ Փոխանակության ու արդյունքներն ապրանք դարձնելու ճանապարհով է միայն, վոր առանձին արտադրողների մասնավոր աշխատանքը հանրօգուտ աշխատանք է դառնում։

4. ԱՇԽԱՏԱՆՔՆ ԻԲՐԵՎ ԱՐԺԵՉԱՓ։ Ապրանքները կարող են փոխանակվել իբրև վորոշ արժեքներ, վորովհետև փոխանակող կողմերից յուրաքանչյուրը կամենում է իր ապրանքի փոխարեն այնպիսի արդյունք ստանալ, վոր արժեքով հավասար լինի նրան։ Այսպիսով թե ապրանքային փոխանակությունն ու թե առանձին ապրանքների արժեքի մասին ունեցած մտապատկերը վոչ այլ ինչ է, բայց յեթե հետևանք վորոշ հասարակական հարաբերությունների, այն է՝ փոխանակային հարաբերությունների, վորոնք գոյություն ունեն արտադրողների միջև կապիտալիստական տնտեսության պայմաններում։ Արժեք ստեղծող աղբյուրը մարդկային աշխատանքն է։ Վոր բոլոր ապրանքներն աշխատանքի արդյունք են, հենց այս հանգամանքն է ահա, վոր, ինչպես արդեն ասել ենք, ամենատարբեր բնույթ ունեցող արդյունքների առադրությունն (сопоставление) ու հետևաբար նաև փոխանակությունը հնարավոր է դարձնում։ Աշխատանքն է արժեք ստեղծում, աշխատանքն է դարձյալ, վոր ընդմին հանդես է գալիս նաև իբրև արժեչափ։[1])

Ինչպես գիտենք, ապրանքները միմյանց հետ համեմատվում են բացառապես իրենց փոխանակային ու վոչ թե սպառողական արժեքներով. նրանք համեմատվում են վոչ իբրև սեղան, կտավ, վերնազգեստ, հացահատիկ, այլ իբրև ընդհանրապես աշխատանքի արդյունքներ։ Հետևաբար այս արժեքներ ստեղծող աշխատանքն ինքն իսկ քննության է առնվում վոչ իբրև աշխատանքի այս կամ այն տեսակ, վոչ իբրև հյուսնի, ջուլհակի, դերձակի, յերկրագործի աշխատանք, այլ իբրև աշխատանք ընդհանրապես՝ ույժերի ու ընդունակությունների վորոշ ծախսման իմաստով։ «Ջուլհակի աշխատանքն ու դերձակի աշխատանքը թեև վորակով տարբեր արտադրողական գործունեյություն են, սակայն յերկուսն էլ մարդկային ուղեղի, մկանների, նյարդերի, ձեռքերի ու այլ որգանների արտադրողական ծախսումն (затрата) են և այս իմաստով նրանք մարդկային աշխատանքն են լոկ» (Մարքս)։ [2]) Արդյունքների մեծա-

1) Հակառակ դեպքում, յեթե մի այլ արժեչափ գոյություն ունենար, և, որինակ, միատեսակ աշխատանք պահանջող արդյունքները զանազան արժեք ունենային, այս դեպքում պակաս արժեքավոր արդյունքներ պատրաստող մարդիկ չեյին ճարվի։

2) Այն ուսմունքը, թե աշխատանքն է արժեքի աղբյուրն ու արժեքի չափը, գտնվում ենք 17 ու 18-րդ դարերի տնտեսական հեղինակների՝ Նորտի, Ադամ Սմիթի ու այլոց մոտ։ Այս ավելի մանրամասն զարգացրել է անգլիացի դասական հայտնի տնտեսագետ՝ Ռիկարդոն, սակայն արժեքի աշխատանքային թեորիան իր վերջնական մշակումն ու ավարտումն ընդունեց Մարքսի «Կապիտալում» միայն։ Մի ուրիշ, իրերի արժեքը նրանց օգտակարության աստիճանով բացատրող թեորիա յել գոյություն ունի, վոր ավելի քիչ է տարածված։ Այսպիսի բացատրության սխալ լինելն ինքնըստինքյան ակնհայտնի յե։ Իրի օգտակարության աստիճանը կախված է այն պահանջից, վոր մարդիկ զգում են նրա նկատմամբ, այսինքն նրա սպառողական արժեքից, իսկ սպառողական արժեքն իր հերթին կախված է իրերի վորակային տարբերություններից։ Սակայն վորակային տարբերությունները չի կարելի քանակային մեծություններով արտահայտել։ Անկարելի յե, որինակ, առադրել ու թվական հարաբերություններով արտահայտել հացի, սեղանի, տան, կտավի օգտակարության աստիճանը։

մասնության արժեքը բազմաթիվ արտադրողների աշխատանքի հետևանքով է կազմվում։ Այսպես, օրինակ, գործվածքներն անցնում են մանողների, ջուլհակների, ներկարարների ձեռքով, բացի սրանից, նրանց արժեքի մեջ մտնում է նաև այն հում նյութերի արժեքը, վորոնցից շինում են գործվածքներն, իսկ ժամանակակից գործարանային արդյունքների արժեքի մեջ է մտնում նաև մեքենաների ու գործարանի ամբողջ սարք ու կարգի արժեքի մի մասն էլ։

Զանազան արդյունքների արժեքը վորոշվում է աշխատաքի այնքան ժամանակով, վորքան գնում է նրանց պատրաստելու վրա։ Սակայն այս դեպքում ուշադրության է առնվում վոչ թե յուրաքանչյուր առանձին արդյունքի վրա գործադրած ժամանակն, այլ աշխատանքի ու ժամանակի հանրորեն անհրաժեշտ այն միջին քանակը, վոր գնում է արտադրության տվյալ պայմաններում, հմտության ու աշխատանքի լարվածության միջին աստիճանի ժամանակ վորոշ տեսակի արդյունքներ պատրաստելու վրա։ Բոլորովին նույնանման արդյունքների վրա մի արտադրող է ավելի ջանք գործ դրել, մի ուրիշն ավելի քիչ աշխատել, բայց արդյունքների արժեքն այս պատճառով տարբեր չի լինի, և շուկայում յերկուսն էլ միևնույն վճարը կըստանան։ Մասնավորապես ժամանակակից քաղաքներում, վորտեղ մարդու դերը մեքենայի գործողության հսկելն է միայն, առանձին բանվորների աշխատանքի մեծ տարբերություն չի յել կարող լինել։ Հանրորեն անհրաժեշտ աշխատանքի քանակը մշտական, անփոփոխ մեծություն չէ։ Արտադրողականության բարձրանալու կամ իջնելու հետ այն փոփոխվում է, ընդսմին փոփոխվում է արդյունքի արժեքն էլ։ Արտադրության մեքենային յեղանակի մուծումից հետո բոլոր արդյունքների գինը միանգամից ընկավ, թեև վորակով նրանք նախընթաց ժամանակի նույնպիսի արդյունքներից ցած չեյին, իսկ առանձին դեպքում նույնիսկ բարձր էլ եյին։

5. ԲԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՅԺՆ ԻԲՐԵՎ ԱՊՐԱՆՔ։ Աշխատանքն արժեքի աղբյուրն է, բայց ինքն արժեք չէ ճիշտ այնպես, ինչպես ծանրության ույժը, վոր պատճառ է մարմնի կշռի, կշիռ չունի, կամ ինչպես ջերմությունը բարեխառնություն չունի։ Այլ բան է առանձին արտադրողների բանվորական ույժը, վորի արժեքը կախված է նրա նոր արժեքներ արտադրելու ընդունակությունից։ Կապիտալիստական հասարակության մեջ, վորտեղ ամեն ինչ ապրանքի յե փոխանակվում, բանվորական ույժը, վոր ապրանքներ է ստեղծում, ինքն էլ է ապրանք դառնում։ Կապիտալիստական ամբողջ տնտեսությունը կատարվում է արտադրողների աշխատանքով, վորոնք հարկադրված են իրենց բանվորական ույժը ծախելու։

Ստրկի կամ ճորտի բանվորական ույժը պատկանում է տիրոջը՝

սեփականության իրավունքով։ Մյուս կողմից անկախ արտադրողներն էլ՝ գյուղացիք ու արհեստավորները, վորոնք արտադրության սեփական գործիքներ ու միջոցներ ունեն, իրենց բանվորական ույժը նույնպես չեն ծախիլ, այլ կըգերադասեն ինքնուրույն աշխատել ու իրենց աշխատանքի փոխարեն շուկայում ստանալ իրենց արտադրած արդյունքի լրիվ արժեքը։ Այսպիսով վարձու բանվորը, վոր շուկայում ծախում է իր բանվորական ույժը, պետք է մի կողմից անձնապես ազատ մարդ լինի, մյուս կողմից՝ պետք է զրկված լինի արտադրության սեփական միջոցներից, պետք է արտադրության միջոցներից ազատված պրոլետար լինի։ Ինչպես տեսել ենք, գյուղացության մասսայական հողազրկումն ու մանր արհեստավորների տնավեր լինելը, վորոնք ուղեկից են կապիտալիզմի զարգացմանը սրա հենց առաջին քայլերից սկսած, կապիտալին մատակարարում են նրան անհրաժեշտ բանվորական ույժեր, այն էլ շատ ավելի քանակով, քան բավական է նրան։

Այսպիսով արտադրության կապիտալիստական յեղանակի տիրապետության ժամանակ բանվորական ույժը մի ապրանք է շուկայում շրջանառության մեջ գտնված մյուս ապրանքների կողքին։ Սակայն այս միանգամայն առանձին տեսակի ապրանք է։ Բանվորական ույժը միակ արժեքն է, վոր արժեքներ է ստեղծում։ Բանվորական ույժի սպառման պրոցեսը միևնույն ժամանակ ապրանքների ու հավելյալ արժեքի արտադրության պրոցես է նաև (Մարքս)։ Վո՛չ աշխատանքի գործիքները, վո՛չ էլ գործարանային մեքենաներն իրենք իրենց արժեք չեն ստեղծում։ Միայն բանվորական ույժի միջոցով են նրանք շարժողության մեջ դրվում և սկսում են արժեքներ ստեղծելու մեջ դեր խաղալ։ Մեքենան աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելով՝ շատացնում է արտադրվող արդյունքների քանակն էլ, բայց ընդսմին ստեղծվող արժեքը չի շատացնում։ Արժեքն առաջվա նման չափվում է բանվորական ժամանակով։ Յեթե բանվորն այժմ միևնույն ժամանակում ավելի քանակությամբ արդյունք է արտադրում, ապա վերջիններիս արժեքը համապատասխան չափով ընկնում է։ Մեքենաները նույնպես, ինչպես և հում նյութերը, աշխատանքի արդյունքին են փոխանցում իրենց սեփական ույժերի մի մասը, վոր իր հերթին չափվում է սրա պատրաստելու վրա գործադրած աշխատանքի քանակով։ Մեքենայի, ինչպես և գործարանային մյուս սարք ու կարգի արժեքը բաշխվում է արդյունքների այն ամբողջ քանակի մեջ, վորոնք կարող են պատրաստվել նրա ոգնությամբ, մինչև վոր աստիճանաբար մաշվելու հետևանքով մեքենան լիովին անպետք կըդառնա։ Թեև ընդսմին արդյունքի արժեքը մեծանում էլ է, սակայն վոչ թե վորևէ նոր արժեք ստեղծելու հետևանքով, այլ շնորհիվ այն հանգա-

մանքի, վոր առաջուց ստեղծված արժեքները պարզորեն փոխանցվում են արդյունքին։

Բանվորական ույժի, ինչպես և ամեն մի այլ ապրանքի արժեքը, վորոշվում է այն ժամանակով, վոր անհրաժեշտ է այն արտադրելու ու վերարտադրելու համար, ուրիշ խոսքով՝ բանվորի գոյությունն ու ուժերն անհրաժեշտ բարձրության վրա պահելու համար։ Պակաս էական նշանակություն չունի նաև տոհմի շարունակությունը և, հետևվաբար, ընտանիքի պահպանությունը։ Այս կետում հավասարապես շահագրգռված են ինչպես ինքը բանվորն, այնպես և կապիտալիստը, վորովհետև բանվոր դասակարգի բնաջնջվելով կըչքանար նաև այն բանվորական ույժն, առանց վորի արտադրության կապիտալիստական յեղանակն ինքն իսկ աներևակայելի յէ։ Այնուհետև ապրուստի միջոցների թվի մեջ մտնում են վոչ միայն այն միջոցները, վորոնք բանվորի ու նրա ընտանիքի ամենակենսական բնական պահանջներն են գոհացնում, ինչպես ուտելիքը, հագուստը, բնակարանը, վառելիքն, այլև այն միջոցներն էլ, վորոնք՝ նայած բանվորական մասսայի զարգացման կուլտուրական մակարդակին՝ ծախսվում են այնպիսի պահանջներ բավարարելու համար, վորոնք առաջանում են սովորության շնորհիվ, օրինակ՝ ծխելը, լրագիր կարդալը, թատրոն հաճախելը և այլն։ Այս պատճառով էլ բանվորական ույժի արժեքը զանազան յերկիրներում ու զանազան ժամանակաշրջաններում տարբեր է և տվյալ ժամանակի համար միայն վորոշ մեծություն է այն։

Նորմալ (բնականոն) աշխատավարձ կըլիներ այն վարձը, վոր բավական կըլիներ բանվորի բոլոր պահանջները գոհացնելու և, հետևվաբար, համապատասխան կըլիներ բանվորական ույժի իրական արժեքին։ Իրականության մեջ մեծ մասամբ այսպիսի լիակատար համապատասխանություն չի նկատվում, սակայն աշխատավարձն ընդհանրապես շատ շեղվել չի կարող նորմայից։ Չափազանց ծանր աշխատավարձը ձեռնտու չի կապիտալիստների դասակարգին, վորովհետև աշխատավարձի ընկնելով բանվորի զարգացման կուլտուրական աստիճանն էլ է ընկնում, և սրա հետ նաև ընկնում է նրա աշխատանքի արտադրողականության աստիճանն էլ։ Մյուս կողմից՝ աշխատավարձի ավելի աչքի ընկնող չափով բարձրանալուն արգելք է լինում արդյունաբերական պահեստազորի ներկայությունն էլ, վոր պատճառ է լինում անընդհատ մրցման բանվորների միջև և դժվարացնում է աշխատավարձ բարձրացնելու համար մղած նրանց կռիվը։

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՍՏԱԿՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

1. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—ԿԱՅՈՒՆ ՈՒ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ։—ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ։ Բանվորի ստացած աշխատավարձը հանելուց հետո մնացած ամբողջ արժեքը, վոր նա յէ ստեղծել, պատկանում է ձեռնարկու կապիտալիստին։ Միայն շնորհիվ այս հանգամանքի, միայն շնորհիվ այն բանի, վոր կապիտալի՝ բանվորի աշխատանքը վարձատրելու համար ծախսված մասը նորից վերադառնում է կապիտալիստի գրպանը մի ավելցուկով հանդերձ, հնարավոր է դառնում բուն իսկ կապիտալիստական արտադրությունը։ Ուստի և ձեռնարկուի՝ արտադրության մեջ մտցրած ամբողջ կապիտալը կարելի յէ բաժանել յերկու մասի։ Առաջինն այն մասն է, վոր կապիտալիստը ծախսում է ձեռնարկությունը սարքի ձգելու, այլև հում նյութեր ձեռք բերելու համար, մի մաս, վոր արտադրության պրոցեսսում չի մեծանում և պատրաստի արդյունքները վաճառելուց հետո լոկ վերադառնում է կապիտալիստի գրպանը. այս մասը մնում է անփոփոխ ու կայուն, այսպիսով կազմելով կայուն կապիտալը։ Իսկ մյուս մասը, վոր ծախսվում է բանվորական ույժը վարձատրելու համար, աճում է, փոփոխվում է և սրա հետևանքով կազմում է փոփոխական կապիտալը։ Կապիտալի այս մասի կոչումն ամենից առաջ նոր հավելյալ արժեք առաջ բերելն է։

Հավելյալ արժեքի նորման, բարձրությունը վորոշվում է այն հարաբերությամբ, վոր ունի հավելյալ արժեքը ձեռնարկության բանվորների անհրաժեշտ աշխատանքի նկատմամբ, ուրիշ խոսքով՝ աշխատավարձի նկատմամբ։ Յեթե բանվորական օրվա յերկարությունը 10 ժամ է և բանվորական ույժի արժեքը վերարտադրվում է, օրինակ՝ 5 ժամվա ընթացքում, ապա հավելյալ արժեքի նորման կըկազմե $5/5$ = 100 տոկոսի։ Հավելյալ արժեքի նորմայի բարձրությունն ամենից առաջ կախված է բանվորական օրվա յերկարությունից։ Այսպես, յեթե բանվորական օրը 12 ժամ է և հավելյալ ժամանակն էլ արդեն վոչ թե 5, այլ 7 ժամ է, ապա հավելյալ արժեքի նորման կարտահայտվի $7/5$

մանքի, վոր առաջուց ստեղծված արժեքները պարզորեն փոխանցվում են արդյունքին։

Բանվորական ույժի, ինչպես և ամեն մի այլ ապրանքի արժեքը, վորոշվում է այն ժամանակով, վոր անհրաժեշտ է այն արտադրելու ու վերարտադրելու համար, ուրիշ խոսքով՝ բանվորի գոյությունն ու ուժերն անհրաժեշտ բարձրության վրա պահելու համար։ Պակաս էական նշանակություն չունի նաև տոհմի շարունակությունը և, հետևաբար, ընտանիքի պահպանությունը։ Այս կետում հավասարապես շահագրգռված են ինչպես ինքը բանվորն, այնպես և կապիտալիստը, վորովհետև բանվոր դասակարգի բնաջնջվելով կըչքանար նաև այն բանվորական ույժն, առանց վորի արտադրության կապիտալիստական յեղանակն ինքն իսկ աներևակայելի յե։ Այնուհետև ապրուստի միջոցների թվի մեջ մտնում են վոչ միայն այն միջոցները, վորոնք բանվորի ու նրա ընտանիքի ամենակենսական բնական պահանջներն են գոհացնում, ինչպես ուտելիքը, հագուստը, բնակարանը, վառելիքն, այլև այն միջոցներն էլ, վորոնք՝ նայած բանվորական մասսայի զարգացման կուլտուրական մակարդակին՝ ծախսվում են այնպիսի պահանջներ բավարարելու համար, վորոնք առաջանում են սովորության շնորհիվ, օրինակ՝ ծխելը, լրագիր կարդալը, թատրոն հաճախելը և այլն։ Այս պատճառով էլ բանվորական ույժի արժեքը զանազան յերկիրներում ու զանազան ժամանակաշրջաններում տարբեր է և տվյալ ժամանակի համար միայն վորոշ մեծություն է այն։

Նորմալ (բնականոն) աշխատավարձ կլիներ այն վարձը, վոր բավական կլիներ բանվորի բոլոր պահանջները գոհացնելու և, հետևաբար, համապատասխան կլիներ բանվորական ույժի իրական արժեքին։ Իրականության մեջ մեծ մասամբ այսպիսի լիակատար համապատասխանություն չի նկատվում, սակայն աշխատավարձն ընդհանրապես շատ շեղվել չի կարող նորմայից։ Չափազանց ծանր աշխատավարձը ձեռնտու չի կապիտալիստների դասակարգին, վորովհետև աշխատավարձի ընկնելով բանվորի զարգացման կուլտուրական աստիճանն էլ է ընկնում, և սրա հետ նաև ընկնում է նրա աշխատանքի արտադրողականության աստիճանն էլ։ Մյուս կողմից՝ աշխատավարձի ավելի աչքի ընկնող չափով բարձրանալուն արգելք է լինում արդյունաբերական պահեստազորի ներկայությունն էլ, վոր պատճառ է լինում անընդհատ մրցման բանվորների միջև և դժվարացնում է աշխատավարձ բարձրացնելու համար մղած նրանց կռիվը։

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՍՏԱԿՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ.

1. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—ԿԱՅՈՒՆ ՈՒ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ։—ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ։ Բանվորի ստացած աշխատավարձը հանելուց հետո մնացած ամբողջ արժեքը, վոր նա յե ստեղծել, պատկանում է ձեռնարկու կապիտալիստին։ Միայն շնորհիվ այս հանգամանքի, միայն շնորհիվ այն բանի, վոր կապիտալի՝ բանվորի աշխատանքը վարձատրելու համար ծախսված մասը նորից վերադառնում է կապիտալիստի գրպանը մի ավելցուկով հանդերձ, հնարավոր է դառնում բուն իսկ կապիտալիստական արտադրությունը։ Ուստի և ձեռնարկուի՝ արտադրության մեջ մտցրած ամբողջ կապիտալը կարելի յե բաժանել յերկու մասի։ Առաջինն այն մասն է, վոր կապիտալիստը ծախսում է ձեռնարկությունը սարքի ձգելու, այլև հում նյութեր ձեռք բերելու համար, մի մաս, վոր արտադրության պրոցեսում չի մեծանում և պատրաստի արդյունքները վաճառելուց հետո լոկ վերադառնում է կապիտալիստի գրպանը. այս մասը մնում է անփոփոխ ու կայուն, այսպիսով կազմելով կայուն կապիտալը։ Իսկ մյուս մասը, վոր ծախսվում է բանվորական ույժը վարձատրելու համար, աճում է, փոփոխվում է և սրա հետևանքով կազմում է փոփոխական կապիտալը։ Կապիտալի այս մասի կոչումն ամենից առաջ նոր հավելյալ արժեք առաջ բերելն է։

Հավելյալ արժեքի նորման, բարձրությունը վորոշվում է այն հարաբերությամբ, վոր ունի հավելյալ արժեքը ձեռնարկության բանվորների անհրաժեշտ աշխատանքի նկատմամբ, ուրիշ խոսքով՝ աշխատավարձի նկատմամբ։ Յեթե բանվորական օրվա յերկարությունը 10 ժամ է և բանվորական ույժի արժեքը վերարտադրվում է, օրինակ՝ 5 ժամվա ընթացքում, ապա հավելյալ արժեքի նորման կըկազմե $\frac{5}{5} = 100$ տոկոսի։ Հավելյալ արժեքի նորմայի բարձրությունն ամենից առաջ կախված է բանվորական օրվա յերկարությունից։ Այսպես, յեթե բանվորական օրը 12 ժամ է և հավելյալ ժամանակն էլ արդեն վոչ թե 5, այլ 7 ժամ է, ապա հավելյալ արժեքի նորման կարտահայտվի $\frac{7}{5}$

հարաբերությամբ=340 տոկոսի։ Սակայն հավելյալ արժեքի նորման կարող ե բարձրանալ նաև այլ ճանապարհով, այն ե՝ անհրաժեշտ բանվորական ույժը կրճատելու միջոցով։ Այսպիսով կրճատման հասնում են ապրուստի միջոցներն եժանացնելով կամ աշխատանքի արտադրողականությունը մեծացնելով, վորի շնորհիվ բանվորն ավելի կարճ ժամանակամիջոցի ընթացքում վերարտադրում ե իր բանվորական ույժի որական արժեքը։ Բանվորական որը յերկարացնելու միջոցով ստացած հավելյալ արժեքը կոչվում ե բացարձակ հավելյալ արժեք. իսկ այն հավելյալ արժեքը, վոր կազմում ե անհրաժեշտ բանվորական ժամանակը կրճատելու հետևանքով, կոչվում ե հարաբերական հավելյալ արժեք։

2. ՎԱՍՏԱԿՆ ԻԲՐԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ԻՐԱՑՈՒՄՆ (реализация)։—ՎԱՍՏԱԿԻ ՆՈՐՄԱՆ։ Արդյունքների վաճառումով հավելյալ արժեքն իրանում ե, այսինքն դառնում ե դրամ՝ կազմելով ձեռնարկուի վաստակը։ Վերջիվերջո ամբողջ վաստակը չի մնում ձեռնարկուի ձեռքում։ Վաստակի մի մասը նա հարկադրված ե լինում գիջելու հողատիրոջն իբրև վճար այն հողից օգտվելու համար, վորի վրա կառուցել ե ֆաբրիկային շինությունները, յեթե սրանք շինված են վոչ թե սեփական, այլ վարձակալած հողի վրա։ Մյուս մասը հարկադրված ե գիջելու առևտրականին իբրև առևտրային վաստակ այն միջնորդության համար, վոր նա անում ե արդյունքները վաճառելու միջոցին։ Սակայն ինչ էլ վոր լինի, համենայն դեպս առաջին հերթին ամբողջ վաստակը, կամ ավելի ճիշտ, ամբողջ հավելյալ արժեքն անցնում ե ձեռնարկու կապիտալիստի տրամադրության ներքո*)։

Սակայն կապիտալիստն իր վաստակը հաշվում ե վոչ թե հավելյալ աշխատանքի նորմայով, վոչ թե այն հարաբերությամբ, վոր ունի հավելյալ արժեքն անհրաժեշտ բանվորական ժամանակի նկատմամբ, այլ այն հարաբերությամբ, վոր ունի ամբողջ գործադրված կապիտալի նկատմամբ, վորի մեջ մտնում են ինչպես աշխատավարձն, այնպես և հում նյութերի ու ամբողջ ձեռնարկության սարք ու կարգի վրա արած ծախսերն, ուրիշ խոսքով՝ կապիտալի կայուն մասը։

Այն հարաբերությունը, վոր ունի վաստակն ամբողջ կապիտալի նկատմամբ, կազմում ե վաստակի նորման, վորն, ինչպես տեսնում ենք, եյապես տարբերվում ե հավելյալ արժեքի նորմայից։ Վորովհետև վերջինս հավելյալ արժեքի հարաբերությունն ե վոչ թե ամբողջ կապիտալի, այլ միայն նրա փոփոխական մասի նկատմամբ, վոր ծախսվում ե բանվորներին աշխատավարձ տալու վրա, ապա պարզ բան ե, վոր հավելյալ արժեքի նորման ավելի բարձր պիտի լինի, քան վաստակի նորման։ Վաստակի նորմայի բարձրությունը կախված ե կայուն ու փոփոխական կապիտալի հարաբերական չափերից. վորքան մեծ ե կայուն կապիտալի համեմատությամբ, այնքան ցած պիտի լինի վաստակի նորման, վորովհետև կայուն կապիտալը փոփոխականի հակառակ, վոչ մի հավելյալ աշխատանք չի ստեղծում, հետևաբար և չի յել շատացնում վաստակի քանակը։

*) Այն իրողությունը, թե վաստակն առաջանում ե բանվորի ստեղծած ու կապիտալիստի յուրացրած հավելյալ արժեքից, վորոշ մանրամասնել ու պարզաբանել ե միայն Մարքսը։ Ինչպես հայտնի յե, հենց այս իրողության վրա յե հիմնվում գիտական սոցիալիզմի ուսմունքը։ Ընդհակառակը, մնացած տնտեսագետ հեղինակների մեծ մասը, վորոնց յերկերն ավելի կամ պակաս չափով ներկա կապիտալիստական հարաբերությունների ջատագովություն են կամ արդարացումը, չեն ընդունում, վոր վաստակը պարզապես աշխատանքը յուրացնելու պտուղ ե լոկ, և այս պատճառով էլ աշխատում են կապիտալիստի վաստակ ստանալու իրողությանը վորևե այլ բացատրություն գտնել։ 18-րդ դարի վերջի ու 19-րդի սկզբի այսպես կոչված դասական դպրոցի տնտեսագետներն՝ Ադամ Սմիտն ու Ռիկարդոն վաստակը պարզապես իբրև գոյություն ունեցող իրողություն են ընդունում։ Նրանց աչքում վաստակն ապրանքների գնի նույնպիսի բաղկացուցիչ մասն ե կազմում, ինչպես և աշխատավարձը։ «Այն արժեքը, վոր բանվորը միացնում ե հում նյութին,—ասում ե Ադամ Սմիտը,—բաժանվում ե յերկու մասի, վորոնցից մեկն աշխատավարձը ծածկելու համար ե ծառայում, իսկ մյուսը՝ ձեռնարկուի իր կապիտալի համար ստացած վաստակն ե, այն կապիտալի, վոր գործադրել եր հում նյութ ձեռք բերելու ու բանվորներին աշխատավարձ տալու համար»։ Ահա այս ե բոլորը։ Այսպիսով, վաստակ ստանալու միակ հիմքը կազմում են արտադրության ծախքերը։ Ադամ Սմիտի նման Ռիկարդոն էլ ե վաստակի մեջ տեսնում ամենից առաջ «հատուցումն այն ռիսկի փոխարեն, վոր ուղեկից ե կապիտալն արտադրողաբար գետեղելուն»։ Վաստակի ծագման խնդիրը լուծելու առաջին փորձը գտնում ենք Ռիկարդոյի ժամանակակցի—Սեյի մոտ։ Նա կարծում ե, թե վաստակը մի արժեք ե, վոր ստեղծվում ե մեքենաների արտադրության բարձրանալու շնորհիվ։ Այսպիսով, կապիտալիստը, վոր նպաստում ե մեքենաների տարածմանը՝ հասարակությանը պակաս ծառայություն չի մատուցում, քան բանվորն իր աշխատանքով։ Սակայն մենք արդեն գիտենք, վոր մեքենան ինքն իրեն վոչ մի նոր արժեք չի ստեղծում։ Անցյալ դարի կիսում անգլիացի տնտեսագետ Սենյորը (իսկ նրանից հետո նաև Կուրսել-Սենելը, Շուլցե-Դելիչն ու այլք) արդարացնում եր վաստակ ստանալն՝ ասելով, թե այս մի հատուցումն ե կապիտալիստին այն բանի փոխարեն, վոր նա իրեն զսպել ե և իր կապիտալն այլ կերպ անարտադրողաբար չի գործադրել։ Բայց հենց բանն այն ե, թե ինչու յե իրեն զսպում, ժուժկալում կապիտալիստը, յերբ վաստակի նշանավոր մասը վատնում ե իր անձնական ցանկությունների ու պահանջների համար և միաժամանակ նաև պահպանում ե ու նույնիսկ մեծացնում էլ ե իր կապիտալն ուրիշների հաշվին։ Այսպիսով կապիտալիստն իր գույքը միանգամից ծախսելու փոխարեն իրեն ապահովում ե այնպես, վոր թե մշտական հասույթ ե ստանում և թե անընդհատ աճող կապիտալ ե ունենում։ Այս արդեն, համենայն դեպս, ժուժկալություն չե, այլ ուղիղ հաշիվ։ Անգլիացի հայտնի տնտեսագետ՝ Ջ. Ստ. Միլլը իր նախորդների նման վաստակի մեջ տեսնում ե հատուցումն «ռիսկի» ու «ժուժկալության» համար։ Սրա հետ միասին ձեռնարկուի մատուցած գնահատելի ծառայությունն ե համարում ձեռնարկության վրա հսկելու ու այն ղեկավարելու աշխատանքը, մի «աշխատանք», վորն իրականության մեջ վոչ մի կերպ համապատասխան չի յեղել «հատուցման», վիթխարի չափերին և վորը մեծ մասամբ կապիտալիստներն իրենց վրայից թոթափել ու ձգել են ձեռնարկության կառավարչի ու այլ ծառայողների վիզը։ Համեմատաբար

Իբրև օրինակ՝ առնենք յերկու ձեռնարկություն, վորոնք հավասար մեծությամբ կապիտալ ունեն, ամեն մեկը հարյուր հազար ռուբլի, և վորոնց հավելյալ արժեքի նորման նույնպես միանման է և հավասար է 100 տոկոսի, բայց վորոնց կայուն ու փոփոխական կապիտալի հարաբերությունը տարբեր է։ Մի ձեռնարկության մեջ կայուն կապիտալը 70 հազար է, փոփոխականը՝ 30 հազար, իսկ մյուսում՝ կայունը՝ 30 հազար, փոփոխականը՝ 20։ Առաջին ձեռնարկության հավելյալ արժեքը, հարյուր տոկոսյան նորմայի դեպքում, կլինի 30 հազար, իսկ յերկրորդինը՝ 20 հազար, և, հետևաբար, յերկու դեպքում էլ վաստակի տարբեր նորմա կստացվի. մեկինը կլինի $^{30}/_{1000}$=30 տոկոսի, մյուսինը $^{20}/_{1000}$=20 տոկոսի։ Այսպիսով հավելյալ արժեքի միանման նորմայի դեպքում վաստակի նորման կարող է տարբեր լինել*)։

Մյուս կողմից՝ բարձրությունը վաստակի նորմայի, վոր հաշվում են վորոշ ժամանակամիջոցի, օրինակ, մի տարվա համար, կախված է նաև կապիտալի շրջանառության արագությունից, այսինքն այն ժամ-

մոտիկ ժամանակներումս, անցյալ դարի վերջում, Բյոմ-Բավերկը վաստակի մի նոր, ավելի սրամիտ, բայց վոչ ավելի համոզարար տեսություն առաջարկեց։ Բյոմ-Բավերկը չվում է այն սխալ տեսակետից, վորն արժեքը բացատրում է նրանց օգտակարությամբ (տեսեք վերևում, 141 յերեսի ծանոթությունը)։ Այս տեսակետի համաձայն՝ արդեն պատրաստի արդյունքների օգտակարությունն ու հետևաբար նաև արժեքը պետք է ավելի լինի, քան այն արդյունքների օգտակարությունը, վորոնք դեռ չեն պատրաստված և ապագայում պետք է հրապարակ գան։ Յերբ կապիտալիստը հում նյութերի ու աշխատավարձի համար կապիտալ է ծախսում, նա հենց վճարում է այն արժեքների համար, վորոնք դեռ չեն ստեղծված, ուստի և ավելի ցածր են, իսկ վաճառում է պատրաստի արդյունքներ, վորոնք հենց այս պատճառով ավելի բարձր են գնահատվում։ Պատրաստի արդյունքների ու պատրաստվելիք արդյունքների արժեքի տարբերությունն է, վոր կապիտալիստի վաստակն է կազմում։ Նույնիսկ մի այնպիսի սրաթափանց տնտեսագետ, վորպիսին է Ռոդբերտուսը, վորը վաստակի մեջ տեսնում է այն, ինչ-վոր է այն իրոք, այն է՝ ուրիշի աշխատանքը յուրացնելու նույնպիսի հետևանք, վորպիսին եյին սորկի կամ ճորտի աշխատանքի շահագործման իրողությունները, այս տեսակի վրա կանգնած չի մնում և վերջիվերջո Միլլի նման ընդունում է, թե ինչպես կապիտալիստներն, այնպես և հողատերերը, վորովհետև «ազգային արտադրության ղեկավարողների» դեր են կատարում, իբրև այս բանի հատուցումը, վաստակ ստանալու իրավունք ունեն։ Ընդամենը սակայն նա նկատում է. «Ակնհայտ է, վոր մասնանշված գործունեյությունն, ինչպես և դատավորի, ուսուցչի, բժշկի գործունեյությունը, կարող է վարձատրվել բանվորների աշխատանքի արդյունքից բաժին հանելու միջոցով միայն, վորովհետև նյութական հարստություններ այլ աղբյուր գոյություն չունի»։

*) Հնարավոր է հակառակ դեպքն էլ։ Օրինակ, յերկու ձեռնարկություն, վորոնք ունեն 200,000-ական ռուբլի հավասար կապիտալ ու 30,000-ական ռուբլի միանման վաստակ, բայց բանվորներ վարձելու համար ծախսում են մի դեպքում 40,000, մյուսում՝ 50,000, վաստակի հավասար նորման կունենան. 30 հազար։ 200 հազարի= 15 տոկոսի, բայց նրանց հավելյալ արժեքի նորման տարբեր կլինի. 30 հազ.։ 40 հազ. =75 տոկոս, և 30 հազ.։ 50 հազ.=60 տոկոսի։

կետի տևողությունից, վորի ընթացքում կապիտալի՝ հում նյութ գնելու ու բանվորներ վարձելու համար գործադրած մասը հանում է իր գինը և վերադառնում կապիտալիստի գրպանը։ Պարզ բան է, վոր հավասար կապիտալ ու հավասար վաստակ ունեցող յերկու ձեռնարկություններից այն ձեռնարկության մեջ ավելի կլինի տարեկան վաստակի գումարը (հետևաբար նաև վաստակի նորման), վորի փոփոխական կապիտալը վաստակով հանդերձ տարվա ընթացքում ավելի շատ անգամ կըկարողանա պտույտ գործել ու վերադառնալ կապիտալիստի տիրոջ գրպանը։ Յեթե յերկու ձեռնարկությունն էլ, օրինակ՝ 100 հազար ռուբլուն 10-հազարական վաստակ են տալիս, ապա այն ձեռնարկությունը, վորի կապիտալը տարին յերեք անգամ պտույտ կըգործե, կըստանա 30 հազար ռուբլի վաստակ, այսինքն նրա վաստակի տարեկան նորման = 30 տոկոսի, իսկ այն ձեռնարկությունը, վորի կապիտալը կըպտըտվի տարին մեկ անգամ, կունենա միայն 10 հազար ռուբլի վաստակ, և վաստակի տարեկան նորման էլ հավասար կլինի 10 տոկոսի *)

3. ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹԱՆ։—ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՈՒ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼ։ Վաստակը, ինչպես տեսնում ենք, միևնույն հավելյալ արժեքն է, հաշված միայն վոչ այն հարաբերությամբ, վոր ունի այս արժեքն ստեղծող բանվորական ույժի վճարի նկատմամբ, այլ այն հարաբերությամբ, վոր ունի ամբողջ կապիտալի նկատմամբ։ Պատրաստի արդյունքի արժեքի մնացած մասը վոչ այլ ինչ է, բայց յեթե հետևանք այն բանի, վոր արտադրության ծախքերի արժեքը փոխանցվում է նրա արդյունքի (մնացած մասի) վրա, ուստի և արդյունքները վաճա-

*) Այսպիսով, նայած վերևում մասնանշած պայմաններին, առանձին ձեռնարկությունների վաստակի նորման արդյունաբերության տարբեր ճյուղերում էլ պետք է տարբեր լինի։ Սակայն իրոք այս տարբերությունն այնքան էլ մեծ չի լինում։

Վաստակի ավելի բարձր նորմա ունեցող ձեռնարկությունները, իբրև ավելի հասութաբեր, ավելի շատ կապիտալներ են գրավում դեպի իրենց ասպարեզը։ Սրա հետևանքով այս տեսակի ձեռնարկությունները թվով ավելի յեն շատանում, քան այս համապատասխանում է հասարակական պահանջներին։ Սրանց արդյունքները գնորդներ չեն ունենա, և նրանց գինը պետք է ընկնի. բայց քանի վոր այսպիսով հիշյալ արդյունքներն իրենց իրական արժեքից ցած գնով կըվաճառվեն, ուստի վաստակն էլ կընկնի։ Ընդհակառակը, վաստակի ցածր նորման ունեցող ձեռնարկությունների թիվը քիչ կլինի, և սրա շնորհիվ նրանց արդյունքների գներն էլ կըբարձրանան։ Առաջին դեպքում վաստակի ցածանալու, իսկ յերկրորդ դեպքում՝ բարձրանալու հետևանքով վերջնականում կազմում է վաստակի միջին նորմա, վորից մեծ չափով շեղվել չի կարող առանձին ձեռնարկությունների վաստակը։ Նույն այս պատճառով առանձին արդյունքների շուկային գներն էլ հաճախ շեղվում են նրանց իրական արժեքից, վորըն, ինչպես գիտենք, վորոշվում է բանվորական ժամանակի այն քանակով, վոր դնում է նրանց պատրաստելու վրա։

ռելիս այս մասի իրացումը (реализация) լոկ վերադարձնում է կապիտալիստին նրա ծախսած գումարները։ Սակայն բոլոր ծախսերը միևնույն արագությամբ չեն վերադառնում։ Կապիտալի մի մասը, որ գործադրվում է հում ու զանազան օժանդակ նյութեր (օրինակ՝ վառելիք, գործիքներն օծելու յուղ ևայլն) գնելու համար, լրիվ վերադառնում է կապիտալիստի գրպանը արդյունքները պատրաստելուց ու ծախելուց հետո, որպեսզի ապագայում նորից ծախսվի միևնույն նպատակով։ Կապիտալի այս մասը մեծ մասամբ տարեկան մի անգամ է պտույտ գործում։ Ընդհակառակը՝ կապիտալի այն մասը, որ ծախսըվել է ձեռնարկությունը կազմակերպելու և սարքի ձգելու վրա, միանգամից չի վերադառնում, այլ բազմաթիվ տարիների ընթացքում ու մաս-մաս, այն ամբողջ ժամանակի ընթացքում, քանի ֆաբրիկային շենքերն ու մեքենաները կատարում են իրենց կոչումը։

Այսպիսով բացի կապիտալի այն բաժանումից, ըստ որի այն տրոհվում է կայուն կապիտալի ու փոփոխական կապիտալի (կապիտալի օրգանական բաժանումը), գոյություն ունի կապիտալի մի ուրիշ բաժանում էլ, յերբ այն տրոհվում է հիմնական կապիտալի, որը ծախսվում է ձեռնարկության սարք ու կարգի վրա և վերադառնում է մաս-մաս միայն, ու շրջանառու կապիտալի, որը ծախսվում է հում նյութ ու բանվորական ույժ գնելու վրա և տարին միքանի անգամ է պտույտ գործում։ Կապիտալի բաժանման այս յերկու տեսակի նշանակությունը միևնույն արժեքը չունի ամենևին։ Մինչդեռ կապիտալի առաջին, օրգանական բաժանումը անհրաժեշտ է ամողջ կապիտալիստական տնտեսության էությունը պարզ կայուցանելու համար, յերկրորդ բաժանումը շատ ավելի պակաս էական է և հատկապես միայն հենց իրեն՝ ձեռնարկուի աչքում նշանակություն ունի։

4. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ։—ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ։ Արդեն գիտենք, որ բանվորների նոր ստեղծած ամբողջ արժեքը կապիտալիստի գրպանը չի մտնում։ Նրա մի մասը գընում է անհրաժեշտ բանվորական ժամանակը վարձատրելու, այսինքն՝ բանվորական աշխատանքը վարձատրելու վրա։ Բանվորների ստացած աշխատավարձն ու կապիտալիստի վաստակը միմյանց նկատմամբ հակառակ հարաբերության մեջ են գտնվում։ Որքան բարձր է աշխատավարձն, այնքան քիչ պետք է լինի կապիտալիստի վաստակը համապատասխան չափով և, ընդհակառակը, որքան ցած է աշխատավարձն, այնքան բարձր է վաստակը։ Յերբ կապիտալիստը ձգտում է աշխատավարձն իջեցնելու, սրա պատճառն ամենից առաջ այն է, որ նա կամենում է բանվորի ստեղծած արժեքից, իր իբրև վաստակ ըստացվող բաժինը մեծացնել։ Աշխատավարձի զանազան տեսակներն ու հաշվեհարդարի յեղանակները կապիտալիստի ձեռքում պակաս իրա-

կան, ազդու յեղանակ չեն այն նպատակի համար, որ շատացնի իր վաստակը յերեք յեղանակով՝ կամ աշխատավարձը վարագուրված կերկով ցածրացնելու, կամ աշխատանքի լարվածությունը բարձրացնելու և կամ բանվորական օրը յերկարացնելու միջոցով։

Տարբերվում են ամենից առաջ աշխատավարձի յերկու տեսակները—բնավարձն (плата натурой) ու դրամավարձը (денежная плата)։ Առաջին տեսակը լայն տարածված էր վաղ ժամանակներում, իսկ Ռուսաստանում՝ համեմատաբար մոտիկ անցյալում։ Բանվորները ձեռնարկուից ստանում են բնակարան ու բնեղենով ապրուստ։ Հաճախ ֆաբրիկային կից հատուկ խանութ է պահվում, որտեղից բանվորները պետք է ձեռք բերեն ամեն ինչ, որ իրենց անհրաժեշտ է. հաճախ բուն իսկ հաշվեհարդարը կատարվում է անդորրագրերով, որոնք տըրվում են խանութի վրա, խանութի հասցեյով։ Ընդսմին խանութից մթերքները սովորաբար տալիս են բարձրացրած գներով կամ թե վատ որակով։ Սրա շնորհիվ իրական աշխատավարձն անվանական աշխատավարձից ցած է լինում։ Ուրիշ դեպքերում, որ ավելի քիչ է պատահում, վճարումը կատարվում է այն արդյունքներով, որոնք պատրաստվում են գործարանում (այսպես կոչված trucksistem). ընդսմին պատրաստի արդյունքները վաճառելու հոգսի մի մասն այսպիսով ֆաբրիկատիրոջ վրայից ընկնում է բանվորների վրա, դեռ չխոսենք զանազան չարարկությունների (злоупотребление) մասին, օրինակ, յերբ բանվորներին անպիտան (бракованный) արդյունքներ են տալիս և այլն։ Բնեղենով վճարումը բնորոշ է ամենից առաջ արդյունաբերական կապիտալիզմի զարգացման սկզբնական աստիճանների համար և ավելի յերկար պահպանվում է տնտեսապես հետամնաց յերկրներում միայն կամ արդյունաբերության հետամնաց ճյուղերում։

Զարգացման ավելի բարձր աստիճաններում դրամավարձը ոչ միայն տիրող է լինում, այլ հաշվեհարդարի միակ յեղանակ է դառնում։ Դրամավարձի ժամանակ առաջնակարգ նշանակություն է ստանում այսպես կոչված իրական աշխատավարձն, այսինքն մի վարձ, որ արտահայտվում է կարևորագույն կենսամթերքների այնպիսի քանակով, ինչչափ կարելի յե հիշյալ վարձով ձեռք բերել։ Յեթե դրամավարձն առաջվանն է մնացել կամ նույնիսկ ավելացել է, բայց ավելի քիչ, քան շուկայում գոյություն ունեցող գներն, ապա այս նշանակում է, որ ընդսմին իրական աշխատավարձն ընկնում է, որովհետև բանվորն այժմ նրանով քիչ մթերք կարող է ձեռք բերել, քան առաջ։

Բացի աշխատավարձի զանազան տեսակներից, բանվորների հետ հաշվեհարդար անելու զանազան յեղանակներ էլ գոյություն ունեին, որոնցից ամենագլխավորն են՝ ժամանակավարձը (повременная) ու

գործավարձը (сдельная) կամ հատավարձը (поштучная плата)։ Ժամանակավարձը վճարում է աշխատանքի վորոշ ժամկետերի համար և կարող է լինել շաբաթավարձ, որավարձ ու ժամավարձ։ Հաշվեհարդարի այս յեղանակի միջոցին առաջնակարգ նշանակություն ունի աշխատավարձի ու աշխատանքի ժամանակի քանակի փոխհարաբերությունը։ Այսպես՝ վարձը կարելի յե բարձրացնել կամ ցածրացնել՝ միաժամանակ բանվորական օրը կրճատելով կամ յերկարացնելով, յերբ բանվորը նույն վարձն ստանում է շատ կամ քիչ ժամերի համար։ Բացի սովորական բանվորական ժամանակից, գործարանատերը մտցնում է նաև արտակետյա (сверхурочный) ժամեր՝ սրանց համար միքիչ ավելի թանգ վճարելով։ Այդպիսի արտակետյա ժամերի մուծումը հաճախ նրա ձեռքում լոկ իբրև միջոց է ծառայում բանվորական օրը յերկարացնելու համար։ Պատահում է, վոր հետագայում աշխատավարձն ընկնում է, իսկ արտակետյա ժամերը մնում են։

Հատավարձը և վորոշ կետարքի (գործի վորոշ քանակ—урок) համար տրված վարձը, վոր լինում է աշխատանքի հետևանքների կամ բանած արդյունքների թվի համեմատ, մտցնում են ամենից առաջ այն նպատակով, վոր աշխատանքի լարվածությունը բարձրանա։ Աշխատանքի վարձատրության այս սիստեմի ժամանակ բանվորն աշխատում է, վորքան կարելի յե, շատ արդյունք պատրաստել, վորովհետև սրան համապատասխան աճում է նրա ստացած աշխատավարձն էլ։ Արդյունքների լավորակությունն ընդամին ապահովվում է նրանով, վոր այս արդյունքներն ընդունելու ժամանակ վորոշ պահանջներ են անում, ընդվորում այս պահանջները չբավարարող արդյունքներն անպիտվում են (браковаться), և սրանց վճարը չի տրվում։ Այսպիսով, բացի աշխատանքի լարվածությունն ավելացնելուց, բանվորների վրա հսկելու անհրաժեշտությունը վերանում է և տնտեսվում են այն միջոցները, վորոնք այսպիսով վերահսկման համար պիտի ծախսվեյին։

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ. ԲԱՆԿԵՐԸ. ԲՈՐՍԱՆ.

1. *ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ։* Արտադրության ու վերարտադրության պրոցեսսում կապիտալը մշտական շրջապտույտ է գործում՝ տարբեր ձևերով հանդես գալով։

Սկզբնապես կապիտալն իբրև դրամ ծախսվում է արտադրության միջոցներ ձեռք բերելու վրա. այնուհետև արդեն արդյունաբերական կապիտալի ձևով այն արտադրողաբար սպառում է ձեռք բերած արտադրության միջոցները՝ վերջիններս ավելի մեծ արժեք ունեցող արդյունքներ դարձնելով. վերջապես, արտադրած արդյունքները վաճառահանվում են շուկայում, ընդվորում սրանց արժեքը նորից իրացվում է դրամական ձևով՝ ընդունելով դրամական կապիտալի ձև։ Սրանով էլ ավարտվում է կապիտալի շրջապտույտի պրոցեսսը։ Այսպիսով վորպեսզի կապիտալը կարողանա նոր շրջապտույտ սկսել, վորպեսզի կապիտալիստը կարողանա յուր վաստակն ստանալ, բանվորներին աշխատավարձ վճարել, արտադրության նոր միջոցներ ձեռք բերել, սրա համար անհրաժեշտ է արտադրած արդյունքները նախորոք վաճառահանել շուկայում, վերջիններս իրացնել նոր դրամական կապիտալի ձևով։ Սակայն անորոշ շուկայի համար բանող ապրանքային տնտեսության հենց բուն իսկ բնույթի շնորհիվ ապրանքների իրացումն ու սրանց՝ դրամական ձևին վերածելը չի կարող նրանց արտադրության համաչափ քանակով կատարվել։ Ապրանքների տարբեր տեսակները զանազան ժամանակ են պահանջում իրենց պատրաստման համար. արդյունքների մի քանի տեսակների արտադրությունը կապ ունի տարվա վորոշ յեղանակի հետ. ապրանքների մի մասը վաճառահանվում է հենց արտադրության վայրում, մյուսներն ուղարկվում են հեռավոր շուկաները։ Այսպիսով առանձին ապրանքատերերը տարբեր ժամանակներում են հանդես գալիս իբրև վաճառողներ ու գնորդներ։ Հենց միայն այս հանգամանքի շնորհիվ արդեն ապրանքային շուկայում մշտական հավասարակշռություն չկա և չի յել կարող լինել։

Այսպիսով ապրանքների յեթե վոչ մեծ մասը, գոնե նշանավոր մասը կամ վորոշ ժամանակի ընթացքում վաճառահանման է սպասում

և կամ վաճառահանվում է վարկով, ընդվորում ապրանքների ոտարման րոպեն ժամանակորեն (во времени) անջատվում է նրանց գների իրացման րոպեյից։ Ապրանքատերը, վոր յուր ապրանքները բաց է թողնում վարկով, ինքը դրամական փոխատվության ու վարկի կարիք է զգում, վորովհետև արտադրությունն անընդհատ շարունակելու համար նրան դրամական միջոցներ են անհրաժեշտ։ Սակայն վորչափով վճարման գործողությունն այսպիսով անջատվում է փոխանակության բուն իսկ գործողությունից, վորչափով ընդսմին դրամները փոխանակության անմիջական միջոցից դառնում են իսկական վճարամիջոց ու վարկի միջոց, այնչափով էլ հենց ինքը՝ դրամական կապիտալն էլ ավելի ու ավելի յե անջատվում արդյունաբերական ու առևտրային կապիտալից իբրև կապիտալի առանձնահատուկ ձև, իբրև իսկական դրամական կապիտալ, իբրև տոկոսաբեր կապիտալ, ինչպես վոր այս անվանում է Մարքսը։ Իսկ վորչափով դրամական կապիտալը կապիտալի շրջապտույտի պրոցեսի մեջ է մտնում իբրև սրա ինքնուրույն մասնակից, այս կապիտալը վաստակի յուր բաժինն է ստանում տոկոսների ձևով։

2. ԲԱՆԿԵՐԸ։—ՊԱՍՍԻՎ ՈՒ ԱԿՏԻՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

Սկզբնապես դրամական կապիտալը հանդես եր գալիս հասարակ վաշխառության ձևով։ Բանկային կապիտալի ավելի կատարյալ ձևը յերևան է գալիս, յերբ զարգանում է առևտուրը և ընդլայնվում ապրանքափոխանակությունը։ Արդյունաբերական կապիտալիզմի ծագման հետ բացառիկ նշանակություն է ստանում դրամական կապիտալի ու բանկերի դերը։ Վորքան ավելի մեծաքանակ ապրանքներ են շուկա նետվում, վորքան ավելի յեն մեծանում առանձին արդյունաբերական ձեռնարկությունների պտույտները, վորքան ավելի մեծ գումարներ են դրըվում ձեռնարկությունների մեջ հիմնական կապիտալի ձևով, այնքան ավելի մեծ նշանակություն են ստանում բանկերն ու բանկային գործառնությունները։

Բանկային գործառնությունների բուն իսկ բնույթը փոխվում է։ Այն բանկերը, վորոնք ծառայում եյին քաղաքային առևտրի պետքերին, գլխավորապես այնպիսի հաստատություններ եյին, վորոնք դրամական վճարումներ կատարելու ժամանակ հանդես եյին գալիս իբրև միջնորդներ։

Նրանք վաճառականներից փող եյին պահ ընդունում, նրանց անունից վճարքներ եյին անում, նրանց հարկավոր դրամները փոխադրըրում այլ քաղաքներ։ Ընդսմին բանկ դրած գումարները պետք է անձեռնմխելի մնային, և բանկերը յեթե այս գումարներով առևտրային ու վարկային ոպերացիաներ կատարում էլ եյին՝ վարկատրելով (кредитовать) գլխավորապես թագավորներին, ապա այս բանը նրանց

կողմից ավելի շատ չարարկություն (злоупотребление) եր, քան ընդհանուր կանոն։ Դեռևս 17-րդ ու 18-րդ դարերում այն ժամանակվա խոշորագույն բանկերը—Ռիալտոն Վենետկում ու Ամստերդամինը—ավանդային գումարներն իրավունք չունեյին փոխ տալու և ընդհանրապես այն գումարները պտույտի բաց թողնելու։

Նախընթաց ժամանակվա բանկերի հակառակ, արդի բանկերն ամենից առաջ հենց վարկային բանկեր են, վորոնք դրամական միջոցներ են կուտակում հատկապես այն նպատակով, վոր այս միջոցները փոխատվական ու այլ կարգի վարկային ոպերացիաների համար գործածեն։ Վարկի կարիքը յերբեք այնպես մեծ չի յեղել, ինչպես արդի կապիտալիստական դարաշրջանում։ Ձեռնարկությունների վիթխարի չափերը պահանջում են, վոր ահագին դրամական կապիտալներ ծախսըվեն, իսկ առանձին ձեռնարկուների գրպանում այլևս այսպիսի կապիտալներ չկան։ Մյուս կողմից՝ խոշոր ձեռնարկությունների փողի կարիքն իսկ վոչ համաչափ է լինում ու վոչ էլ մշտական։ Դրամի պահանջի ու առաջարկի միջև յեղած այս անհավասարակշիռ վիճակի հետևանքով ձեռնարկուի մոտ կամ ազատ միջոցների ավելցուկ է լինում և կամ նրանց պակասությունն է զգացվում։ Առաջին դեպքում նա ազատ գումարը բանկն է մուծում, յերկրորդում, ընդհակառակն, վարկատրվում է (кредитоваться) բանկից, այսինքն բանկից փոխ է վերցնում իրեն անհրաժեշտ միջոցները։ Բանկերի այս յերկակի կոչման համաձայն (յերկրի դրամական ազատ միջոցներն իր կողմը ձգել ու սրանց արտադրողական զետեղում (производительное помощение) ընձեռնել արդյունաբերողներին վարկատրելու միջոցով) բանկային բոլոր ոպերացիաները բաժանվում են յերկու կարգի. պասսիվ, վոր վերաբերում է կապիտալներ քաշելուն, ու ակտիվ, վոր վերաբերում է սրանք ձեռնարկուների միջև բաշխելուն։

Առաջին տեսակի գործառնություններին պատկանում են. 1) ավանդներ ընդունելը։ Ավանդները լինում են ժամկետավոր, վորոշ ժամանակով, կամ ավելի հաճախ՝ անժամկետ ավանդներ, այն է՝ այսպես կոչված «ընթացիկ հաշվով» մուծանքներ (взносы), վոր ավանդատուն միշտ կարող է յետ պահանջել մաս-մաս կամ լիովին։ Ընդսմին ավանդատերը փողն ստանում է կամ անձամբ կամ թե պահանջագրով է ուզում—իր ստորագրությամբ ուրիշի անունին վորոշ գումարի չեկ է գրում։ Բանկերն ստացած ավանդների համեմատ վորոշ տոկոս են վըճարում, վոր սովորաբար մեծ չի լինում։ Բանկը տոկոսը բարձրացնելով կամ իջեցնելով կարող է, յերբ հարկավոր համարե, դրամի հոսանքը դեպի բանկը հորդացնել կամ նվազեցնել։ 2) Լոկ ավանդներ ընդունելը կամ այսպես կոչված դեպոզիտային գործառնությունները բավական չհամարելով՝ բանկը բաց է թողնում «գրավաթղթեր» (зак-

ладные листы), ոբլիգացիաներ, պարտային հանձնառություններ, վոր պետք ե հանգցնել վորոշ ժամկետի ընթացքում։ 3) Միքանի բանկեր, գլխավորապես կենտրոնական բանկերն, իրավունք ունեն բանկային արժետոմսեր բաց թողնելու, վորոնցով նրանք հաշվեհարդար են կատարում՝ պարտավորություն հանձն առնելով ամեն պահանջած րոպեյում այն արժետոմսերը դրամով փոխարինելու։ Այսպիսով բանկային արժետոմսերը լիովին նույնն են, ինչ վոր են պետության բաց թողած թղթադրամները և նրանք վերջիններիս հետ զուգընթաց շրջանառության մեջ են գտնվում։

Ակտիվ գործառնությունների շարքին են պատկանում. 1) գրավով փոխատվությունը, 2) մուրհակներ զեղչելը, 3) արդյունաբերական ընկերությունների բաժնետոմսեր, տոկոսաբեր թղթեր ձեռք բերելն ու նման ոպերացիաները։ Փոխատվություններ տալիս են, յերբ գրավ են դրվում շարժական գույքեր—ապրանքներ (իսկապես վոչ թե բուն ապրանքներն, այլ վկայականներ այն մասին, թե այն ապրանքները պահ են տրված ապրանքային պահեստանոցում և այս ինչ արժեքն ունեն. խոսքն այսպես կոչված «վարրանտի» մասին ե), և կամ յերբ գրավ են դրվում արժեթղթեր ու անշարժ գույքեր—հող, տներ ևայլն (հիպոտեկային վարկ)։ Առաջին տեսակի ոպերացիաներով պարապում են կարճակետ վարկի բանկերը, վորոնք գլխավորապես արդյունաբերական ու առևտրային ձեռնարկությունների պետքերին են ծառայում, իսկ յերկրորդ կարգի գործառնություններով զբաղվում են յերկարակետ վարկի կամ հիպոտեկային բանկերը, վորոնք վարկային ոժանդակություն են տալիս առավելապես հողատերերին ու քաղաքների տնատերերին։ Բացառիկ դեպքերում փոխատվություններ տալիս են՝ առանց գրավի յել, վստահելի անձանց յերաշխավորությամբ կամ հավատ ընծայելով նույն ինքն ստացողի անձնավորությանը (այսպես կոչված անձնական վարկ)։

Մուրհակների զեղչումը կամ դիսկոնտի յենթարկելն այն ե, յերբ բանկը ժամկետը լրանալուց առաջ մուրհակներ ե գնում այն վարկատուներից, վորոնք փողի կարիք են զգում և հնարավորություն չունեն սպասելու, վոր մուրհակով վորոշած ժամանակին դրամ ստանան։ Ընդսմին բանկը մուրհակին վճարում ե ավելի քիչ, քան նրա արժեքն ե՝ այսպիսով իր ոգտին պահելով վորոշ տոկոս (զեղչման կամ դիսկոնտի տոկոս)։ Յերբ բանկերն ազատ դրամական միջոցներ ունեն, ապա մուրհակները զեղչում են՝ ցածր տոկոսով բավականանալով, հակառակ դեպքում զեղչման ժամանակ հանելիք տոկոսն, ընդհակառակը, բարձրացնում են։ Այս պատճառով էլ զեղչման տոկոսի բարձրանալը կամ ցածրանալն ամենալավ հայտանիշն ե այն բանի, թե բանկերի կանխիկ դրամական միջոցների քանակությունն ինչ ուղղությամբ ե

փոփոխվել։ Արդյունաբերական վերելքների շրջաններում, յերբ շնորհիվ այն հանգամանքի, վոր փողի պահանջը մեծանում ե, ուստի և դրամը դուրս ե հոսում բանկերից, զեղչման տոկոսը բարձրանում ե. իսկ ճգնաժամերի շրջանում, յերբ արդյունաբերական գործերի կանգ առնելու պատճառով փողի պահանջ չկա, և դրամական շուկան լճացման (застой) վիճակ ե ունենում, զեղչման տոկոսն էլ սրա հետ ցածանում ե։

Բանկերի ակտիվ ոպերացիաների յերրորդ տեսակը, զանազան ընկերությունների բաժնետոմսերը ձեռք բերելը խոշոր նշանակություն ստացավ համեմատաբար մոտիկ ժամանակներում, յերբ ակցիոներական գործը զարգացավ։

3. ԲՈՐՍԱՆ։ Դեռևս առևտրային կապիտալի տիրապետության դարաշրջանում միջազգային առևտրի աճումը բանկերի կողքին նմանապես կյանքի կոչեց մի ուրիշ հատուկ հիմնարկ—բորսան (տես վերևում, գլուխ 10-րդ, § 5)։ Բորսան ամենից առաջ արժեթղթերի առևտրի ու չարաշահության վայր ե։ Սակայն յեթե առաջներում, առևտրային կապիտալիզմի դարաշրջանում, բորսայում շրջանառություն եյին անում գլխավորապես առևտրային բաժնետիրական ընկերությունների ակցիաներն, ապա այժմ սրանց տեղը բռնում են արդյունաբերական ընկերությունների բաժնետոմսերը։ Վորովհետև արդյունաբերական ձեռնարկությունների մեջ սկզբից դրվող կապիտալը մեծ ե լինում, ուստի այս ձեռնարկությունները հաճախ բաժնետիրական ընկերությունների ձև են ընդունում։ Ինչպես առաջներում առևտրային ընկերությունները, ճիշտ նույն կերպ էլ այժմ ամեն մի նորակազմ արդյունաբերական բաժնետիրական ընկերություն քիչ կամ շատ մեծ քանակությամբ բաժնետոմսեր, թղթեր ե բաց թողնում, վորոնց տիրանալն իրավունք ե տալիս ձեռնարկության վաստակների մեջ մասնակցություն ունենալու, այսինքն ձեռք ձգելու վաստակամաս (ДИВИДЕНД), մի մաս այն գումարից, վոր իրանց միջև բաժանելու համար ստանում են բաժնետերերը՝ սրանցից յուրաքանչյուրի ձեռք բերած բաժնետոմսերի քանակի ու արժեքի համեմատ։ Բաժնետոմսերի վաճառքից ստացած գումարներից ե հենց կազմված լինում ձեռնարկության սկզբնական կապիտալը։ Գործող ձեռնարկությունները բաց են թողնում նաև լրացուցիչ ակցիաներ։ Իսկ վորովհետև ձեռնարկության վաստակն ու հետևաբար նրա վճարած վաստակամասն անփոփոխ մեծություն չե, այլ փոփոխվում ե ձեռնարկության գործերի կացության համեմատ, ուստի համապատասխան կերպով փոխվում ե բաժնետոմսերի արժեքն էլ, և հենց այս հանգամանքն ե, վոր բաժնետոմսերը դարձնում ե բորսային խաղի ու չարաշահության առարկա։ Յուրաքանչյուր ձեռնարկության բաժնետոմսերի բորսային գինը կախված ե նրա

վճարելիք վաստակամասի բարձրությունից։ Վաստակի բարձրանալու կամ ընկնելու և համապատասխան կերպով վաստակամասի բարձրանալու կամ ընկնելու հետ բորսայում բարձրանում կամ ընկնում է առանձին ձեռնարկությունների բաժնետոմսերի պահանջն ու գինն էլ։ Տնտեսական կյանքի ընդհանուր քայքայման կամ ուղիղ ընթացքի խանգարման հետ ընկնում է բորսայում շրջանառություն անող բոլոր թղթերի ու բաժնետոմսերի արժեքն էլ։ Այսպիսով ամեն մի խոշոր տնտեսական յերևույթ, ճգնաժամի ակնկալություն, առանձին ձեռնարկությունների կոտր ընկնել, հացահատիկների լավ ու վատ բերք, ինչպես և այնպիսի քաղաքական դեպքեր, վորոնք սպառնում են, թե իրերի կանոնավոր ընթացքը կըխանգարեն, առաջ են բերում բորսային արժեքների մասնակի կամ ընդհանուր անկում։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ։ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃԵԼՆ ՈՒ ՄՐՑՈՒՄԸ

1. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ 18-րդ դարի վերջում արտադրության մեջ տեղի ունեցած հեղաշրջումը, վոր աստիճանաբար ընդգրկում եր արտադրության մեկ ասպարեզը մյուսի յետևից, անխուսափելի կերպով վերջիվերջո պետք է հասցներ այնտեղ, վոր հաղորդակցության յեղանակների ու միջոցների մեջ էլ նույնպես հեղաշրջում կատարվեր։ Արդյունքների մասսայական արտադրությունը պահանջում եր, վոր հում նյութն էլ մասսայական չափով ստացվի և պատրաստի ապրանքներն էլ մասսայորեն փոխադրվեն։ Այնուհետև անհրաժեշտ եր, վոր ապրանքները տարածվեյին, վորքան կարելի յե, արագ, վորպեսզի փոխադրության ծախսերը չափազանց բարձր չլինեյին և արդյունքները շատ չթանգացնեյին և վերջապես վորպեսզի հաղորդակցությունը վորոշ ճշտություն ու կանոնավորություն ունենար և ապրանքները վաճառելը դանդաղեցնող արգելքներ չստեղծեր։ Այնինչ մինչկապիտալիստական Յեվրոպայի հաղորդակուցության ճանապարհներն ու յեղանակները չեյին բավարարում այս պահանջներից և վոչ մեկը։ Հաղորդակցության ցամաքային միջոցները մնացել եյին համարյա նույն թշվառ վիճակում, ինչպես և միջնադարյան շրջանում։ Քարած ճանապարհներ գրեթե չկային. ծովային հաղորդակցությունը, վոր կատարվում եր առագաստանավերով, դանդաղ ու անկանոն եր տեղի ունենում, վորովհետև հաջող քամիներից եր կախված։ Կապիտալիստական տնտեսության ծագման հետ այս բոլորն անշուշտ պետք է փոխվեր։

Շոգու նույն ույժը, վոր արդյունաբերական ձեռնարկությունների մեջ մեքենաները շարժում եր, այժմ ոգտագործեցին փոխադրության նպատակների համար։ 1807 թվին սկսեց գործել Ֆուլտոնի առաջին շոգենավը, 1826 թվին Անգլիայում գործի ընկավ առաջին յերկաթուղին։ Այն ժամանակվանից սկսած յերկաթուղային շինարարությունը խիստ արագ թափով առաջ ընթացավ։ 1840 թվին արդեն մինչև 10 հազար կիլոմետր յերկաթուղի յեր անցկացրած, 1860 թվին՝ 100

հազարից ավելի, իսկ ներկայումս՝ միլլիոն կիլոմետրից շատ (ի թիվս որի 400,000 կիլոմետր Հյուս. Ամ. Միացյալ-Նահանգներում)։ Շոգենավային հաղորդակցությունը նրանից պակաս զարգացում չունեցավ և կարճ միջոցում բոլորովին դուրս մղեց առագաստավոր նավագնացությունը։ Ընդսմին ծովային հաղորդակցությունն արագացավ ու ավելի կանոնավորվեց։ Յեվրոպայից Ամերիկա գնալը, որ 18-րդ դարում բարենպաստ պայմաններում կատարվում եր 6 շաբաթում, ներկայումս 5 որից քիչ ժամանակ ե պահանջում։ Նավերի բեռնունակությունն (грузопод'емность) ել շատացավ։ 18-րդ դարում ամենախոշոր առևտրային նավերի տարողությունը 500—600 տոննայից (30—60 հազար փութ) ավելի չեր, ներկայումս առևտրային նավերը 20 հազար տոննայից (1,200,000 փութ) շատ են վերցնում։

2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ։ Դժվար չե պատկերացնել, թե յերկաթուղային ու նավային հաղորդակցության շնորհիվ որքան պետք ե աճեր շրջանառության արագությունն, ինչպես և քանակն այն ապրանքների, որոնք պտույտներ եյին գործում շուկայում։ Միլլիարդավոր ճանապարհորդներ, հայրուր միլլիոնավոր փութերով զանազան բեռներ ու ապրանքներ այժմ մի յերկրից այլ յերկիր ու մի աշխարհամասից մյուսն են շպրտվում։ Հեռագրի շնորհիվ, որի համար ոչ վիթխարի հեռավորությունն ե արգելք ու ոչ ել ջրային տարածությունները, ապրանք արտադրողը միշտ կարող ե իրազեկ լինել թե ամբողջ համաշխարհային շուկայի, այնպես ել սեփական ապրանքների վիճակի մասին։

Հաղորդակցության ճանապարհների զարգացմանը, որ արտադրության ուռճացած ծավալի հետևանք եր, ուղեկից եր շուկաների արտասովոր չափերով ընդարձակվելը, իսկ այս իր հերթին նպաստում եր, որ արտադրությունն ել ավելի աճի ու ընդարձակվի։ Յերկաթուղիների շնորհիվ՝ արդյունաբերական արդյունքները թափանցում են ամենահեռավոր անկյուններն ու վայրերն՝ աստիճանաբար վտարելով տնագործ (домодельный) առարկաները և այդպիսով նպաստելով բնատնտեսական (натурально-хозяйственный) կարգերի քայքայմանն ամենուրեք, որտեղ այս կարգերը դեռ կանգուն եյին մնում։ Հաղորդակցության ճանապարհների զարգացումը միևնույն ժամանակ ավելի ու ավելի յեր ջնջում առանձին յերկրների ու աշխարհամասերի միջև յեղած սահմանները և նրանց շաղկապելով մի ընդարձակ համաշխարհային շուկա դարձնում, որի համար այլևս ոչ մի ազգային խտրություն չկար։ Կապիտալն իր եյությամբ խորապես միջազգային ե։ Ամենուրեք ներխուժում ե այնտեղ, որտեղ միայն բարենպաստ պայմաններ են ստեղծվում նրա աճման համար։ Վերջիվերջո ոչ մի սահման, մաքսային ոչ մի պատնեշ չկարողացավ դիմանալ կապիտալի

այսպիսի հզոր արշավին, կապիտալի, որ ձգտում եր անսահման ընդարձակվելու։

Առաջավոր ու հարուստ յերկիրներից կապիտալը հոսում ե աղքատ ու հետամնաց յերկիրները՝ մշակելով սրանց բնական հարստություններն, այս յերկիրները ծայրից-ծայր կտրատելով յերկաթուղային ճանապարհներով, այնտեղ արդյունաբերական ձեռնարկություններ հիմնելով։ Միշտ նմանապես բանվոր բնակչությունն ել գաղթում ե մի շարք յերկիրներից ուրիշ յերկիրներ, որտեղ բանվորական աշխատանքի մեծ պահանջ կա և որտեղ նրան ավելի լայն հնարավորություն ե տրվում յուր աշխատանքը գործադրելու գյուղատնտեսության ասպարեզում։ Ռուսաստանը, Տաճկաստանն ու տնտեսապես հետամնաց այլ յերկիրներ մինչպատերազմյան ժամանակներում ծառայում եյին իբրև վայրեր, որտեղ գործադրվում եյին անգլիական, ֆրանսական, բելգիական, գերմանական կապիտալները։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները մի մշտական ջրամբար եյին, ուր հոսում եյին յեվրոպական յերկիրների թե ավելորդ կապիտալներն ու թե ավելացած բանվոր բնակչությունը։

Առանձին յերկիրների միջև մշտական միջազգային տնտեսական կապեր հաստատելու հետ՝ աշխատանքի որոշ բաժանումն ե առաջ գալիս։ Յերկիրներից միքանիսը գլխավորապես հացահատիկ են արտադրում և մատակարարում համաշխարհային շուկային, մյուսները համաշխարհային շուկային արդյունաբերական արտադրանքներ են հասցնում։ Վերջապես որոշ վայրեր ել հանդիսանում են արտադրության տեղեր այնպիսի հում նյութերի, որ սպառում ե բոլոր կապիտալիստական յերկիրների արդյունաբերությունը։

3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՎԵԼՆ ՈՒ ՄՐՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ Որքան ել որ արագ են ընդլայնվում կապիտալիստական տնտեսության շրջանակներն ու սահմանները, ինքը՝ կապիտալիստական արտադրությունն ել ավելի արագ ե աճում։ Նրա գլխավոր տարբերություններից մեկը, որով զանազանվում ե արտադրության բոլոր նախընթաց յեղանակներից, անսահման ընդարձակվելու հակումն ե։ Ձեռնարկուի շահերը չեն միայն, որ թելադրում են նրան անսահմանորեն ընդարձակվել։ Կան պատճառներ, նույնիսկ արդյունաբերողների կամքից անկախ, որոնք սրանց դրդում են շարունակ ընդլայնել արտադրությունը։ Նոր մեքենաների ու զանազան տեխնիքական կատարելագործությունների մուծումը համապատասխան ծախսեր ե պահանջում, որի հետ աճում ե կայուն կապիտալն ի հաշիվ փոփոխականի։ Բայց մենք արդեն գիտեյինք, որ կայուն կապիտալն արդյունաբերական կապիտալի որքան ավելի մեծ մասն ե կազմում, այնքան ավելի ցած պետք ե լինի վաստակի նորման, այսինքն՝ վաստակի տո-

կոսային հարաբերությունն արտադրության ամբողջ ծախքերի նկատմամբ։ Յուրաքանչյուր առանձին արդյունքին բաժին ընկնող վաստակի նորմայի անկման փոխարեն կապիտալիստը վարձատրվում ե նրանով, վոր իր հերթին բարձրացնում ե աշխատանքի արտադրողականությունն, այսինքն շատացնում ե արդյունքների այն քանակը, վոր արտադրում եր նույն կապիտալի միջոցով *)։

Այսպիսով, աշխատանքի արտադրողականության ամեն մի բարձրացում առաջ ե բերում վաստակի նորմայի անկումն, և վաստակի յուրաքանչյուր անկում իր հերթին առաջ ե բերում ձգտում արտադրողականությունն ել ավելի բարձրացնելու։ Կապիտալիստական արդյունաբերական զարգացումն այնպիսի կախարդական շրջագծի մեջ ե կատարվում, վոր կատարելագործությունները հաջորդում են կատարելագործություններին։ Շոգուն ու շոգեշարժիչներին հերթափոխելու (на смену) յեն գալիս ելեկտրականությունն ու ելեկտրական շարժիչներն, իբրև արտադրության միջոց ծառայող նախնական (примитив) որգանական նյութերին ու իրերին՝ անորգանականներն ու արհեստականները. փայտին՝ իբրև շինարարական նյութի, փոխարինում ե յերկաթը, փայտեղեն վառելիքին՝ քարածուխը, մարխին (лучина) ճարպին ու մոմին, իբրև լուսելիքի՝ նավթը, գազն, ելեկտրականությունը, բուսական ներկանյութերին՝ քիմիականները, բնական պարարտացմանը՝ հանքայինները։ Տեխնիկայի զարգացման հետ ընդարձակվում են առանձին ձեռնարկությունների չափերն ել։ Սկզբնական համեստ ֆաբրիկաներն իրենց տեղը զիջում են ժամանակակից վիթխարի ֆաբրիկաներին, վորոնք ունեն հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորներ։

Արտադրության անսահմանորեն ընդարձակվելու հողի վրա տեղի յեն ունենում սաստկացած մրցումն, գոյության կատաղի կռիվն առանձին կապիտալիստների միջև։ Յուրաքանչյուր քայլափոխ պահանջում ե կատարելագործություններ։ Այն ձեռնարկությունները, վորոնք անընդունակ են լինում տեխնիկայի առաջադիմություններին հետևելու, կորստի յեն դատապարտված։ Այն տենդագին թափի միջոցին, վորով առաջ ե ընթանում տեխնիկայի զարգացումը, արտադրության անընդհատ ընդլայնումն առանձին ձեռնարկությունների համար կյանքի ու մահվան խնդիր ե դառնում։ Սակայն արտադրության ամեն մի ընդարձակման համար կապիտալ ե անհրաժեշտ, իսկ անհրաժեշտ նոր կապիտալ գոյանում ե արդյունքների նախորյա վաճառքի հետևանքով Յեվ ահա այս հողի վրա ավելի ու ավելի յե սաստկանում կռիվը վաճառքի ու շուկաների համար։

*) Տես վերևում, 8-րդ գլուխ, § 2։

Համաշխարհային շուկայի զարգացմամբ այժմ ամեն մի ազգային ու ևս առավել տեղական համքարային սահմանափակումներ ու պատնեշներ կորցնում են իրենց ույժն ու նշանակությունը։ Ազատ մրցման հողի վրա դեմ առ դեմ, իրար հակառակ կանգնում են ինչպես յուրաքանչյուր առանձին յերկրի ներսի կապիտալիստներն, այնպես և տարբեր յերկիրների կապիտալիստները։ Ապրանքների եժանությունն ու ընտիր հատկությունները միակ միջոցները—զենքերն են այս կատաղի կռվում։ Հաղթող են հանդիսանում ավելի խոշոր ձեռնարկությունները, վորոնք միաժամանակ և ավելի մեծ կապիտալ ունեցողներն են։ Նրանց կապիտալներն ու վաստակի ընդհանուր քանակն ավելի արագ ե աճում, քան մանր ձեռնարկություններինը։ Այս պատճառով նրանք ավելի հեշտ են դիմանում վաստակի նորմայի անկման, ավելի հեշտ են նրա պատճառած բացը ծածկում զանազան կատարելագործություններով ու ներմուծություններով. ընդվորում նույն այս ներմուծությունները նրանց հնարավորություն են տալիս արդյունքների գները ցածրացնելու, հատկությունները լավացնելու և այսպիսով հաղթահարելու իրենց ավելի թույլ մրցորդներին։ Այսպիսով մրցման հետևանքը լինում ե ամենախոշոր ձեռնարկությունների հաղթանակն, այլև այն, վոր արտադրությունն ավելի ու ավելի փոքրաթիվ ձեռնարկուների բուռն ե կենտրոնանում։

Մրցման հետևանքները սակայն աստիճանաբար, տարեցտարի չեն յերևան գալիս, այլ պարբերաբար, վորովհետև կապիտալիստական տնտեսության ամբողջ զարգացումն ել վոչ թե աստիճանական եվոլյուցիայի ձևով ե կատարվում այլ հրումներով (толчок)։ Արդյունաբերության վերելքի ու ծաղկման պարբերաժամերին (период), յերբ բազմաթիվ նոր ձեռնարկություններ են ծագում, հաջորդում են անկման պարբերաժամերն ու ճգնաժամերը, վորոնք քայքայում ու կորուստ են բերում այն բոլոր ձեռնարկություններին, վորոնք ավելի քիչ են կենսունակ։ Յուրաքանչյուր նոր վերելքի հետ նոր ծագած ձեռնարկություններն ավելի խոշորանում են, նախկինները ընդարձակվում, յուրաքանչյուր ճգնաժամի միջոցին վոչնչանում են շարունակ ավելի թույլ ու ավելի փոքր ձեռնարկությունները։ Այսպես մի յուրատեսակ արդյունաբերական ընտրանք (отбор) ե կատարվում։

ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊ ԼԻՆԵԼԸ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ.

1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ։ Կապիտալիստական դարաշրջանին նախորդել է մանր, անջատված արտադրության շրջանը։ Յուրաքանչյուր արտադրող աշխատում էր լիովին ինքնուրույն ու մյուսներից անկախ, իր սեփական գործանոցում, աշխատանքի սեփական գործիքներով։ Այսպիսի պայմաններում բնական է, որ աշխատանքի արդյունքն էն արտադրողի լիակատար սեփականությունը կըկազմեր, և արտադրողն ինքն էլ անմիջապես կըլիներ այն արդյունքը շուկայում վաճառողը։ Կապիտալիզմը բոլորովին փոխակերպեց արտադրության ամբողջ սիստեմը՝ բազմաթիվ առանձին ու մինչ այդ անջատ-անջատ արտադրողներին մի ձեռնարկության մեջ միացնելով։ Կապիտալիստական արտադրության բուն իսկ յեղանակներն ու գործիքները պահանջում են, որ բազմաթիվ մասնակիցների աշխատանքը միաժամանակ կիրարկվի, և այսպիսով նրանք արդեն աչքի յեն ընկնում իրենց հասարակական բնույթով։

Սակայն կապիտալիզմը մանր ու մասնավոր արտադրությունը խոշոր ու հասարակական դարձնելով՝ անխախտ պահեց յուրացման նախկին յեղանակները։ Ինչպես արտադրության գործիքներն, այնպես էլ աշխատանքի արդյունքներն առաջվա նման պատկանում են մասնավոր մարդկանց, բայց այժմ արդեն վոչ թե մանր արտադրողներին, այլ կապիտալիստ ձեռնարկուներին, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքից։ Արտադրության հասարակական բնույթ՝ յուրացման մասնավոր յեղանակների պահպանումով հանդերձ,—այս է ահա կապիտալիստական տնտեսակարգի հիմնական հակասությունը։

Այս հիմնական հակասության մեջ են պարփակված կապիտալիստական տնտեսությունը բնորոշող մնացած բոլոր հակասական կողմերն ու յերևույթներն էլ։ Այն հակասությունը, վոր կա արտադրության ու յուրացման յեղանակների միջև, սոցիալական հարաբերությունների ասպարեզում դասակարգային կռվի աղբյուր է հանդիսանում՝ պատճառ լինելով հետևյալին. արտադրող ու շահագործվող դասակարգերը,

վոր այլևս իրենք չեն իրենց աշխատանքի արդյունքներից ոգտվողը, ձգտում են իրենց վզից թոթափելու կապիտալիզմի լուծը։ Բուն տնտեսական յերևույթների ասպարեզում միևնույն հակասությունն է կազմում հիմքն արտադրության անկազմակերպ լինելու ու անիշխանության, վորոնք կարող են վերացվել միայն այն ժամանակ, յերբ արդյունաբերության կապիտալիստական ձևը տապալվի, և հասարակական արտադրության արդյունքները հենց հասարակական սեփականություն դառնան։ Հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորներին համեմատաբար փոքրաթիվ ձեռնարկությունների մեջ միացնելով, կապիտալիզմը կազմակերպում է տնտեսությունը։ Սակայն միևնույն ժամանակ պահպանելով արտադրության գործիքների ու աշխատանքի արդյունքների մասնավոր սեփականությունը՝ կապիտալիզմը հենց սրանով արգելք է լինում և թույլ չի տալիս, վոր արտադրած արդյունքները հասարակական բաշխման յենթարկվեն, և ընդսմին հանուր տնտեսական ամբողջությունն էլ պլանաչափ կազմակերպություն դառնա։ Այսպիսով կապիտալիստական տնտեսությունը մի անկազմակերպ ամբողջություն է, վոր բաղկացած է կազմակերպված մասերից։ Հենց սրանից էլ առաջանում է կապիտալիստական տնտեսակարգի գլխավոր չարիքն— արտադրության անիշխանությունն ու նրանից ծնունդ առնող ճգնաժամերը։

2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Կապիտալիստական տնտեսությունն ամենից առաջ ապրանքային տնտեսություն է։ Արտադրության արդյունքներն անմիջապես չեն բաշխվում հասարակության մեջ գոյություն ունեցող պահանջի ու կարիքների համեմատ, այլ նախորոք պետք է ապրանք դառնան, և միայն ապրանքի ձևով են հասնում սպառողին։ Բաշխման ամեն ուրիշ յեղանակ կըհակասեր կապիտալիստների, այն է՝ աշխատանքի արդյունքների տերերի մասնավոր շահերին, վորովհետև նրանց կըզրկեր պատրաստի արդյունքները վաճառելու միջոցով իրենց վաստակն իրացնելու (реализовать) հնարավորությունից, այսինքն իրենց վաստակը լրիվ ստանալու հնարավորությունից։

Սակայն ինչպես շուկայի տարողությունն (ёмкость), այնպես և շուկայում յուրաքանչյուր տվյալ րոպեյին գերիշխող պահանջները շարունակ փոփոխվում են և այս պատճառով էլ առջուց չեն կարող հաշվի յենթարկվել։ Վոչ մի ձեռնարկու չի կարող նախորոք իմանալ, թե պատրաստվող արդյունքի կարիքը կա՞, և թե նրանք կըվաճառվե՞ն արդյոք, թե՞ վոչ։ Առաջարկի ու պահանջի, հասարակական արտադրության ու սպառման համապատասխանությունը չի սահմանվում վորևե նախորյա հաշվառքի միջոցով, այլ առաջանում է պահանջի շատանալու ու քչանալու, առևտրի կենդանանալու ու լճացման միջոցով, պա-

տանաբար համարվելու, մի շարք անընդհատ տատանումների ու հըրումների միջոցով, պարբերական գերարտադրության ու սրանից առաջացող արդյունաբերական ճգնաժամերի միջոցով։

3. ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։ Ազգաբնակության նշանավոր մասը գնման միջոցներ չունենալու հետևանքով հարկադրված է իր սպառումը սահմանափակելու ամենանհրաժեշտ պիտույքներով։ Իր ազդեցությունը լայնքով (вширь) տարածելով, մի ասպարեզը մյուսի յետևից ապրանքային պտույտի մեջ քաշելով, այսպիսով հետզհետե նորանոր շուկաներ նվաճելով, կապիտալիզմը միաժամանակ վորոշ չափով ազգաբնակության գնողականությունն (покупательная способность) էլ եր թուլացնում։ Ֆաբրիկային ապրանքների ու արդյունքների տարածումը մահ է պատճառում մանր արտադրությանը և քայքայում է մանր արտադրողների տնտեսությունը։ Ընդսմին արհեստավորների ու գյուղացիների ավելի ու ավելի մեծ մասն է աղքատ, մուրացիկ ու պրոլետար դառնում, վորոնք ֆաբրիկային արդյունքների սպառող կարող են դառնալ իբրև վարձու բանվոր միայն։

Բանվոր դասակարգի միջավայրում նկատելի յե սպառման հարաբերական անկումն՝ պատրաստվող արդյունքների քանակի հետ համեմատած։ Յերբ մշտական կապիտալն ավելի արագ է աճում ի հաշիվ փոփոխականի, այսինքն՝ մեքենաներն ու գործարանները սարքի ձգելու ծախսերն ավելի յեն շատանում աշխատավարձի հետ համեմատած, իսկ սրան ուղեկցում է աշխատանքի արտադրողականության բարձրացումն, ապա այս բոլորի հետևանքն այն է լինում, վոր նույն քանակով բանվորներն այժմ ավելի բազմաթիվ արդյունքներ են պատրաստում։ Յեթե արտադրության ընդարձակման հետ աճում է նաև բանվորների թիվն, ապա համապատասխան կերպով նրանց ստեղծած արդյունքների քանակն էլ է շատանում։ Բանվոր դասակարգի աշխատավարձի դանդաղ աճումն ու նրա կենսական պահանջների մակարդակի բարձրանալը, վոր առաջինի հետ կապ ունի, ճիշտ նմանապես չի համապատասխանում այն արագությանը, վորով արտադրությունն է աճում։ Այն յերկրներում, վորտեղ արդյունաբերությունը քիչ է զարգացած և բանվորների թիվն էլ հարաբերաբար աննշան է, ինչպես Ռուսաստանում, այս հանգամանքը շուկայի զարգացման վրա համեմատորեն փոքր ազդեցություն է ունենում։ Այստեղ շուկայի ընդարձակումը տեղի յե ունենում ի հաշիվ մասսաների, գլխավորապես ի հաշիվ գյուղացի ազգաբնակության, վորին ապրանքային հորձանքը դեռ իր մեջ չի քաշել և վորն այսպիսով կուսական հող է ներկայանում աճող կապիտալիզմի համար։ Ընդհակառակն, արդյունաբերական առաջադեմ յերկրներում, վորտեղ, ինչպես օրինակ՝ Անգլիայում, բանվորներն ազգաբնակության, հետևաբար և սպառողների ընդհանուր թվի կեսից

ավելին են կազմում, յերբ համեմատաբար կրճատվում է բանվոր դասակարգի մասնակցությունն իր արտադրած արդյունքների սպառման գործում, այս հանգամանքն անշուշտ ամենից եյական հետևանքներ պիտի ունենա։

Յերբ ներքին շուկան շարունակաբար անբավարար է դառնում հետզհետե, արդյունաբերական առաջադեմ յերկրները ձգտում են այս թերությունը գոցել արտահանող առևտուրը զարգացնելով, արտաքին շուկաներ ու գաղութներ ձեռք բերելով։ Սակայն արտաքին շուկաների ընդարձակումն էլ ունի իր, ամենից առաջ աշխարհագրական վերջին սահմանները. ներկայումս յերկրագնդի վրա յեղած բոլոր յերկրամասերը, վորոնք կարող են իբրև գաղութային տիրապետություն ծառայել, բաշխված են յեվրոպական պետությունների միջև։ Մյուս կողմից՝ արտաքին շուկաներին էլ վերջիվերջո միևնույն ճակատագիրն է վիճակվում, ինչ վոր ավելի վաղ ունեցել է ներքին շուկայի զարգացումը։ Յերբ արտաքին շուկաների վրա տարածվում է կապիտալիզմի ազդեցությունը և գործարանային արդյունքներն ու առարկաները մասսայորեն ներս են խուժում տնտեսապես յետամնաց յերկրներն, այն ժամանակ ոտարյերկրյա մանր արտադրությունը խորտակվում ու վոչնչանում է, իսկ նրան հերթափոխելով զարգանում է տեղական խոշոր արդյունաբերությունը, վորն սկսում է մրցել ներմուծվող արդյունքների հետ։ Իբրև օրինակ մի յերկրի, վորն արդեն սպառել, պրծել է իր թե՛ արտաքին ու թե ներքին շուկաները, կարող է ծառայել նույն Անգլիան։ Նրա լայնածավալ գաղութներում տեղական արդյունաբերության զարգանալու հետևանքով ապրանքներն Անգլիայից այնտեղ արտահանելը դադարեց։ Մնացած արտաքին շուկաներից՝ Ռուսաստանից, Տաճկաստանից, Չինաստանից Անգլիան վտարվեց գերմանական ապրանքների միջոցով։ Վերջին տասնամյակներում անգլիական արտահանությունը համարյա դադարեց աճելուց։ Բամբակեղենի (хлопчатобумажная) գործվածքների արտահանությունը, վոր մի ժամանակ անգլիական արտահանող առևտրի գլխավոր առարկան եր կազմում, դեռ անցյալ 80-ական թվականներին սկսեց ընկնել նկատելիորեն։ Այսպիսով անգլիական արդյունաբերական արդյունքները ներքին շուկայի ակներև անբավարարության հետ մեկտեղ արտաքին շուկաներում էլ վաճառքի չեյին արժանանում։ Սրա հետևանքով անգլիական արդյունաբերությունը վերջին հիսնամյակի ընթացքում պարբերական լճացման է յենթակա և նրա զարգացումը համարյա լիովին կանգ է առել։ Անգլիան, վոր անցյալ դարի ամբողջ առաջին կեսի ընթացքում համաշխարհային արդյունաբերության մեջ առաջնակարգ տեղն եր գրավել, 70-ական թվականներից ավելի ու ավելի զիջում է այս տեղը յե-

րիտասարդ արդյունաբերական յերկրներին — Հ. Ա. Միացյալ-Նահանգներին ու Գերմանիային[1])։

Բացի այն հանգամանքից, վոր շուկան անընդհատ անբավարար ու նեղ ե դառնում, կապիտալիստական արտադրության զարգացման անհամաչափ ու անկանոն ընթացքի մյուս պատճառը նրա լիովին անկազմակերպ լինելն ե։ Շուկայի լայնանալով խախտվում ե արտադրության ու սպառման միջև յեղած անմիջական համապատասխանությունը, վոր գոյություն ուներ նահապետական ու նախապետական համայնքում և վորը մասամբ պահպանվում եր նաև սահմանափակ քաղաքային շուկայի սահմաններում։ Վորքան ընդարձակվում ե շուկան, այնքան անորոշ ե դառնում այն և այնքան ավելի քիչ ե մատչելի լինում դիտողությանը։ Վաճառքը վոչ թե ամիջորեն ե կատարվում, այլ միջնորդների միջոցով, հաճախ յերրորդ ու չորրորդ ձեռքերի միջոցով։ Շուկայում տիրող անորոշությունն էլ ավելի մեծանում ե ձեռնարկուների միջև յեղած մրցման հետևանքով, վորոնք ձգտում են, վորքան կարելի յե միմյանցից ավելի ապրանք շպրտել շուկա։

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ։ Այսպիսով մի կողմից սպառման աճումը յետ ե մնում արտադրության արագ ընդարձակումից, մյուս կողմից՝ արտադրության անկազմակերպ ու քաոսային վիճակն արգելք են լինում պահանջի ու առաջարկի հարաբերությունը կանոնավորելուն (համաձայնացնելուն)։ Այս պատճառով արտադրության աճումը միշտ առաջ ե ընկնում, գերազանցում ե շուկային պահանջից, վորի հետևանքը լինում ե պահանջի ժամանակավոր կրճատու-

1) Բամբակեղենի արդյունաբերությունը, վոր ամենից առաջ ազգաբնակության լայն շրջանների պետքերին ե ծառայում, վերջին տասնամյակների ընթացքում Անգլիայում համարյա չի զարգանում։ Էլ ավելի նշանակալից ե վիճակը Անգլիայի յերկաթեղենի արդյունաբերության, վորի աճումը գլխավորապես վկայում ե այն մասին, թե կապիտալիստական տնտեսության զարգացումը, վոր աստիճան արագ ու ինտենսիվ ե կատարվում. վորովհետև արդյունաբերության այս ասպարեզը սերտ շաղկապված ե մեքենաշինության (машиностроение) հետ։ Անցյալ դարի վերջում ու այս դարի սկզբում Անգլիայի յերկաթեղենի գործի զարգացումը Գերմանիայի ու Հ. Ա. Միացյալ-Նահանգների հետ համեմատած հետևյալ պատկերն ունի.

Թվականներ	Անգլիա	Գերմանիա	Հ. Ա. Մ.-Նահ.
	Միլլիոն փութ		
1886	454,6	215,3	352,3
1899	576,7	489,8	844,2
1913	612,4	1,176,3	1,884,9

Անգլիան, վոր դեռ 80-ական թվականներին առաջին տեղն եր գրավում, 1913 թվին, համաշխարհային պատերազմի նախորյակին, Գերմանիայի հետ համեմատած՝ յերկու անգամ ու Միացյալ-Նահանգների հետ համեմատած՝ յերեք անգամ ավելի քիչ յերկաթ ե արտադրել, իսկ պատերազմին նախորդող 15 տարվա ընթացքում համարյա չի ավելացրել իր արտադրությունը։

մը, վորովհետև ապրանք ավելի յե շուկա մտնում վաճառվելու, քան կարող ե սպառվել։ Իսկ պահանջի կրճատման հետևանքը լինում ե այն, վոր արտադրությունն էլ հարկադրված կանգ ե առնում իր հերթին, տեղի յե ունենում արտադրության դադար, վորին ուղեկցում են ամբողջ արտադրության ծանր ցնցումները, և վորն այսպես կոչված արդյունաբերական ճգնաժամերի անմիջական պատճառն ե հանդիսանում, վորովհետև արդյունաբերության առանձին ճյուղերի միջև սերտ կապ կա[1]), ուստի և զանազան արտադրությունների մեջ ճգնաժամերը մեկուսացած ու տարբեր ժամանակ չեն լինում, այլ ընդգրկում են ամբողջ արդյունաբերթյունը միանգամից ու միաժամանակ։

Շուկան գերլցված ե լինում ապրանքներով, վորոնք չեն ծախվում։ Վաճառքը դադարում ե, գներն ընկնում են, բազմաթիվ ձեռնարկություններ հարկադրված են լինում կամ արտադրությունը դադարեցնելու կամ վնասով աշխատելու։ Պակաս դիմացկունները վոչնչանում են։ Սնանկություններին հաջորդում են սնանկությունները։ Ընդհանուր արտադրությունը կրճատվում ե. մասսայորեն բանվորների հաշիվները մաքրում են և փողոց շպրտում։ Ճգնաժամին հաջորդում ե լճացման ու ճնշված վիճակի պարբերաժամը (период)։ Արտադրության կրճատման շնորհիվ՝ գերարտադրված ապրանքները կամաց-կամաց վաճառվում, պրծնում են. պահանջը կենդանանում ե։ Սրա հետ միասին կենդանանում ե նաև արտադրությունը և նորից սկսվում ե արդյունաբերական տենդն ու արտադրության հետագա անզուսպ աճումը ցնոր ճգնաժամ։

Այսպիսով արդյունաբերական ճգնաժամը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ առաջարկի ու պահանջի խախտված հավասարակշռության բռնի վերականգնումն ամենից առաջ։ Ապրանքների գերարտադրությունը, վորին ուղեկցում ե ճգնաժամը, հնարավոր եր նախընթաց մանուֆակտուրային դարաշրջանում էլ, սակայն լոկ առանձին դեպքերում ու արդյունաբերության առանձին ճյուղերում։ Արտադրության մեքենային յեղանակի զարգացման հետ ե միայն, վոր ճգնաժամերը դառնում են մի սովորական ու ընդսմին պարբերաբար կրկնվող և արդյունաբերության բոլոր ճյուղերն ընդգրկող յերևույթ։ 19-րդ դարի առաջին կիսում ճգնաժամեր ունենում եր բացառապես միայն Անգլիան, վորն

1) Շինարարական գործի զարգացումն, օրինակ, առաջ ե բերում աղյուսի, մետաղե մասերի, փայտեղենի սաստկացած պահանջ և հետևաբար արդյունաբերության համապատասխան ճյուղերի վերելքի պատճառ ե լինում։ Բամբակեղենի արդյունաբերության զարգացումը ճիշտ նմանապես կապ ունի քիմիական ներկերի արդյունաբերության զարգացման հետ։ Ի վերջո, արդյունաբերության ընդհանրապես բոլոր ճյուղերի զարգացումն արտադրության միջոցների (մեքենաների, քարածխի և այլն) սաստկացած պահանջ ե առաջ բերում։

այն ժամանակ մեքենային արդյունաբերության միակ յերկիրն եր։ Այս հատուկ անգլիական արդյունաբերական ճգնաժամերը կրկնվում եյին ճիշտ տասնամյա ժամանակամիջոցը մի անգամ։ Ճգնաժամերի տարիներն եյին՝ 1825, 1836, 1847 ու 1857 թվականները։

1857 թվականի ճգնաժամն արդեն միայն Անգլիայի սահմաններով չսահմանափակվեց, այլ ավելի լայնածավալ չափեր ընդունեց՝ ընդգրկելով նաև Հ.-Ա. Միացյալ-Նահանգներն ու Ֆրանսիան։ 19-րդ դարի յերկրորդ կիսում, յերբ յեվրոպական մնացած յերկիրներում զարգանում ե խոշոր արտադրությունը, և կազմվում ե համաշխարհային շուկան, սրան համապատասխան կերպով ճգնաժամերն ել առավել ևս ընդարձակ համաշխարհային չափեր են ստանում։

Սրա հետ միասին ճգնաժամերի տևողությունն ել ե յերկարում։ Անցյալ դարի առաջին կիսում, յերբ խոշոր արտադրության զարգացումը դեռ նոր-նոր եր սկսվում, յերբ սրա համեմատաբար դեռ աննշան չափերի միջոցին կապիտալիստական յերիտասարդ արդյունաբերության հանդեպ բացվում, տարածվում եյին տակավին չոգտագործված շուկաներ, արդյունաբերությունը համեմատաբար արագ ու հեշտ եր ուշքի գալիս և վոտքի կանգնում ճգնաժամերի պատճառած ցնցումներից։ Ընդհակառակը՝ վորքան ավելի ընդարձակվում ե արտադրությունը, վորքան ավելի լայն չափեր ե ընդունում շուկան, ընդսմին վորքան ավելի անորոշ ու դժվարին են դառնում վաճառքի պայմանները, վորքան ավելի յեն սպառվում ներքին ու արտաքին շուկաները, վորոնք ավելի սաստիկ ե դանդաղում ապրանքների սպառման աճումը, այնքան ավելի դժվար ե լինում արդյունաբերության համար ճգնաժամերին հաղթահարելը։ Սրա շնորհիվ ճգնաժամերն ավելի յերկարամնաց ու տևողական բնույթ են ստանում՝ առանձին յերկիրներում, որինակ՝ Անգլիայում, փոխակերպվելով քրոնիկական գերարտադրության ու նույնիսկ արտադրության զարգացման համարյա լիակատար դադարի*)։

*) Ճգնաժամերը բացատրելու փորձերն սկսվում են այս կարգի առաջին յերևույթների ծագման րոպեյից։ Այսպես, դեռևս անցյալ դարի առաջին կեսի տնտեսագետները—Սեյն ու Սիսմոնդին շոշափել են այս խնդիրը։ Սեյը ճգնաժամերի պատճառների բացատրությունը փնտրում ե ապրանքային փոխանակության պայմանների մեջ, այն ե՝ այն յերևույթի մեջ, յերբ միքանի ապրանքներ մյուսների համեմատությամբ գերարտադրված են լինում, վորի շնորհիվ ապրանքների շրջանառության կանոնավորությունը խանգարվում ե։ Այսպիսով Սեյը ճգնաժամերի պատճառներից մեկի մասնավոր արտահայտությունն, այն ե՝ կապիտալիստական արտադրության անկազմակերպությունը ճգնաժամերն առաջ բերող ընդհանուր պատճառ ե համարում։ Այս պատճառով Սեյի տեսությունն ամենալավ դեպքում կարող ե արդյունաբերության առանձին ճյուղերում միայն տեղի ունեցող մասնավոր ճգնաժամերի ծագումը բացատրել։

Սիսմոնդին, ընդհակառակը, ուշադրություն ե դարձնում ուրիշ կողմի վրա, այն ե՝ մանր արտադրողների տնավերության շնորհիվ շուկաների առաջընթաց կրճատման ու նեղանալու վրա։ Սիսմոնդու տեսակետը նույնպես չի կարող արդյունաբերական ճգնաժամերի բացատրություն համարվել, վորովհետև չվում ե շուկայի կրճատման մասին ունեցած բոլորովին սխալ մտապատկերից, մտահան անելով ինչպես կապիտալիստների ու հողատերերի անարտադրող դասակարգերի սպառման, այնպես և վոչնչացող մանր արտադրողների տեղ բանվոր դասակարգի առաջ գալը, մի դասակարգ, վորի գործադրած ապրանքների սպառումը, թեև դանդաղ, այնուամենայնիվ ավելանում ե։ Ռոդբերտուսը ճգնաժամերի ծագումը բացատրում ե նրանով, վոր քչանում ե բաժինը բանվոր դասակարգի, վորը հասարակական արդյունքն սպառելու ասպարեզում սպառողների գլխավոր մասսան ե կազմում։ Նրա կարծիքով աշխատավարձը, վորն անհրաժեշտագույն կենսամիջոցների գնով ե վորոշվում, վերջինիս անկման հետ նույնպես քչանում ե, այն ինչ բանվորների արտադրած արդյունքների քանակը շատանում ե։ Սրա շնորհիվ նրանք ի վիճակի յեն լինում շուկայում ավելի ու ավելի քիչ արդյունք ձեռք բերելու։ Ռոդբերտուսի տեսությունը Սիսմոնդու թեորիայի նման սխալ հիմունքից ե չվում։ Նրա կարծիքի հակառակ, աշխատավարձը և այն ել վոչ միայն անվանական, այլև իրական աշխատավարձը, վոր կենսամիջոցների այն քանակով ե վորոշվում, վորքան բանվորը կարող ե աշխատավարձով ձեռք բերել, չի ընկնում, այլ թեև դանդաղ, բայց և այնպես աճում ե, իսկ սրա հետ միասին աճում ե նաև սպառողական պահանջը, վոր առաջադրվում ե բոլոր դասակարգերի կողմից։

Ռոդբերտուսի, ինչպես և Սիսմոնդու տեսակետից միանգամայն անբացատրելի յե արդյունաբերության այն նոր վերելքը, վոր վրա յե հասնում ճգնաժամից հետո։ Համեմատաբար մոտիկ ժամանակներումս, անցյալ դարի 90-ական թվականներին արդյունաբերական ճգնաժամի մի նոր թեորիա յել յերևան յեկավ, վոր պատկանում ե ռուս տնտեսագետ՝ Տուգան-Բարանովսկուն և վորը վորոշ չափով տարածվեց՝ թե Ռուսաստանում ու թե Արևմուտքում։ Այս թեորիան Սեյի հայացքների հետագա ու մի-

Գերարտադրությունը, վորն ուրիշ պայմաններում նպաստելով հանրային պաշարների կուտակմանը՝ հանրային աշխատանքի արտադրողականության ապացույց ու հանրային բարեկեցության նշանացույց կլիներ լոկ, արտադրության կապիտալիստական յեղանակի ժամանակ դառնում ե տնտեսական ծանր ճգնաժամի ու հանրային թշվառության պատճառ։ Առատությունը փոխվում ե յուր հակադրության, դառնում ե կարիքի ու չկալության աղբյուր։ Շուկան գերլցված ե ապրանքներով, այն ինչ բնակչության մասսաները տառապում են և դատապարտված են սովի ու կարիքի։

Արտադրության հանրային բնույթի ու յուրացման կապիտալիստական ձևի հակասությունն ընդսմին հասնում ե բարձրագույն աստիճանին։ Ճգնաժամերի ժամանակ արտադրության հանրային յեղանակը բախվում ե փոխանակության միջոցով կատարվող բաշխման յեղանակին, մի յեղանակ, վոր արտադրության հանրային յեղանակի հետ անհարիր ե և հիմնվում ե աշխատանքի արդյունքների մասնավոր յուրացման իրողության վրա։ Այսպիսով մասնավոր շահերն անհնարին դարձնելով պլանաչափ բաշխումն՝ արգելք են լինում տնտեսական կյանքի կանոնավոր ընթացքին ու արտադրող ույժերի անխափան զարգացմանը։

ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ. ԽՈՇՈՐ ՈՒ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ՄՐՑՈՒՄԸ.

1. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ։ Դեռևս ռայոնական քաղաքային տնտեսության դարաշրջանում ապրանքա-դրամային շրջանառության՝ գյուղական վայրերում տարածվելը խարխլեց ճորտային տնտեսության հիմքերը։ Սրա հետևանքը յեվրոպական առաջադեմ յերկիրներում այն յեղավ, որ ճորտերն ազատագրվեցին, և յերկրագործներն էլ անցան ազատ ու կիսազատ վարձակալության, իսկ սրան ուղեկից եր գյուղացության ավելի կամ պակաս հողազրկումը։ Յերբ կապիտալիստական տնտեսության ծագելով

նույն ժամանակի եվ ավելի միակողմանի զարգացումն է հանդիսանում։ Տուգան-Բարանովսկու տեսակետի համաձայն ժամանակակից կապիտալիստական արտադրությունն ինքն իր հերթին հատուկ մեքենաներ է պահանջում հայլն։ Մեքենաները մեքենաներ են ծնում զուտ մեքենական պրոցեսսի հետևանքով։ Արտադրության ընդարձակվելով ճիշտ նույն կերպ աճում է աշխատավարձի ու վաստակի ընդհանուր գումարը, և, հետևաբար, աճում է բանվորի ու կապիտալիստների սպառումն էլ։ Յուրաքանչյուր նախընթաց տարվա արդյունքների պահանջ ստեղծվում է շնորհիվ այն հանգամանքի, որ հաջորդ տարվա արտադրությունն ընդլայնվում է։ Այսպիսով սպառողական շուկայի պահանջը, նրա նեղանալն ու ընդլայնվելը վոչ մի նշանակություն չունի կապիտալիստական արդյունաբերության ճակատագրի համար։ Հենց այս պարագայի շնորհիվ էլ ճգնաժամերն առաջանում են վոչ թե շուկային պահանջի կրճատումից, այլ հատուկ պատճառներից, վորոնց արմատը բուն իսկ արտադրողական պրոցեսսի պայմանների մեջ է, այն է՝ այն յերևույթի մեջ, վոր արդյունաբերության տարբեր ճյուղերում արտադրության համաչափությունը խախտվում է։ Տուգան-Բարանովսկու տեսակետի սխալ լինելն ակներև է ինքնըստինքյան։ Արտադրությունն արտադրության համար՝ վոչ մի իմաստ չունի։ Կապիտալիստական արտադրությունն, ինչպես և արտադրության ամեն մի այլ սիստեմ, վերջիվերջո պետք է սպառողական շուկայի վրա հիմնվի։ Մանելու, հյուսելու, տպագրական ու այլ մեքենաների մեծամասնությունը գործում է անմիջապես սպառողների համար արդյունքներ պատրաստելու նպատակով, և սպառողական շուկայի պետքերին ծառայող ճյուղերի արտադրության ընդարձակումն է միայն, վոր համապատասխան մեքենաների պահանջ է առաջ բերում և այսպիսով զարկ տալիս մեքենաշինարարական արդյունաբերության զարգացմանը։

ապրանքային շրջանառությունն ընդարձակվեց, այս ունեցավ միևնույն հետևանքները, միայն անհամեմատ ավելի լայն չափերով։ Այնտեղ, վորտեղ ճորտային իրավունքն ավելի վաղ եր ընկել, այնտեղ շարունակվում եր թե գյուղացության հողազրկումը և թե մանր յերկրագործական տնտեսությունների՝ խոշոր վարձատրությամբ փոխարինումը։ Այնտեղ, վորտեղ ճորտային հարաբերությունները դեռ պահպանվում եյին, նրանք արագ սկսեցին քայքայվել։

Արդյունաբերության արագընթաց առաջադիմությունները միանգամից բարձրացրին հում նյութի, ինչպես և ուտելու մթերքների պահանջը, յերբ արդյունաբերական ազգաբնակությունն ավելացավ ի հաշիվ յերկրագործականի։ 18-րդ դարի վերջում ու 19-րդի առաջին տասնամյակներում Անգլիայում նորից ուժեղացավ հողերի «ցանկապատումը», ինչպես և կալվածները մանր վարձակալ-ֆերմերներից «մաքրելը»։ Հափշտակած ու «մաքրած» հողերի վրա սկսում են վարել վոչխարաբուծական կամ թե չե խոշոր յերկրագործական տնտեսություններ։ Ընդսմին վարելահողերի ընդհանուր քանակը կրճատվում է։ Այսպիսով այն չափով, վորչափով մեծանում է արդյունաբերական ազգաբնակությունն ի հաշիվ յերկրագործականի, վորչափով բուն յերկրագործական տնտեսությունից անցնում են արդյունաբերական սպառման համար անհրաժեշտ հում նյութերի արտադրության, հացահատիկների մշակությունը նկատելի կերպով նվազում է և հետզհետե ավելի ու ավելի անբավարար դառնում։

Սրա հետ միաժամանակ արդյունաբերական յերկիրներն սկսում են ներմուծվող հացահատիկի կարիք զգալ, իսկ այս բանն իր հերթին հացահատիկի արտադրություն է առաջ բերում տնտեսապես յետամնաց յերկիրներում։

Առաջադեմ արդյունաբերական յերկիրներում կապիտալիստական տնտեսության զարգանալով վորքան ավելի յե սկսվում ներմուծվող հացահատկի կարիք զգացվելը, համաշխարհային շուկայում այնքան ավելի վորոշ է հանդես գալիս յերկիրների՝ յերկու խմբի բաժանվելը. յերկիրների մի խումբը, վոր ցորեն է ներմուծում ու արդյունաբերական արտադրանքներ արտահանում; և հողագործական յերկիրներ, վորոնք հացահատիկ են արտահանում։ Միևնույն ժամանակ գյուղատնտեսական շուկան հետզհետե ավելի յե լայնանում, և ավելի հեռավոր մարզեր են ձգվում, ընկնում ապրանքապտույտի մեջ։ Այժմ յերկրագնդիս բոլոր մասերից հացահատիկ է բերվում Յեվրոպա։ Այսպիսով գյուղատնտեսական արդյունքների առևտուրը նույնպիսի համաշխարհային չափեր է ընդունում, ինչպես և արդյունաբերական արտադրանքների առևտուրը։

2. ՃՈՐՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ։—ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱ-

ԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ։ Այն հանգամանքը, վոր գյուղատնտեսական արդյունքները գրավում, քաշում ե ապրանքային փոխանակության մեջ, վերջիվերջո միևնույն հետևանքները չի հասցնում, ինչ վոր յեղել եր յեվրոպական առաջադեմ յերկրներում, և ամենից առաջ քայքայում ե ճորտային տնտեսությունը։ Գերմանիայում ու Ավստրիայում գյուղացիների ազատագրությունն ավարտվեց 19-րդ դարի առաջին կեսում միայն։ Ռուսաստանում ճորտային տնտեսության քայքայումը, վոր գլխավորապես գյուղացիներին դրամական հարկատվության յենթարկելով եր արտահայտվում, սկզբնապես լայն չափեր ընդունեց հյուսիսային արդյունաբերական նահանգներում միայն։ Ընդհակառակը, կենտրոնական ու հարավային բուն յերկրագործական նահանգներում ճորտատիրության մնացորդները պահպանվեցին գյուղացիների ազատագրության մասին 1861 թվին հրատարակված ընդհանուր որենքից հետո յել հետևյալ կերպարանքով՝ գյուղացիք կալվածատերերից վարձակալած հողի համար պարտավորվում եյին աշխատելու կալվածատերերի հողերի վրա և կամ բարձր բնավարձ կամ դրամավարձ տալու։

Այսպիսով անազատ ճորտային աշխատանքը, վոր կապիտալիստական տնտեսության հետ միանգամայն անհարիր ե, ամենուրեք չքանում ե։ Խոշոր հողատերերը կամ իրենք են ազատավարձու աշխատանքի վրա հիմնված կապիտալիստական տնտեսություն վարում, կամ իրենց հողերը հանձնում են վարձակալների՝ բավականանալով հողային ռենտա ստանալով (ամեն մի անաշխատ հասույթ կոչվում ե ռենտա)։ Հողի հասութաբերությունն, ընդսմին և նրանց ստացած կալութավարձի չափերը տատանվում են, նայած հողի պտղաբերության ու մշակված լինելու աստիճանին և վերջապես այն շուկաների շատ կամ քիչ մոտիկ լինելուն, վորոնք ապահովում են գյուղատնտեսական արդյունքների վաճառքը։

Ռենտան հավելյալ արժեքի այն մասն ե, վոր զիջում են հողատիրոջը և վորը կազմում ե մի գերվաստակ (сверхприбыль), բացի այն վաստակից, վոր ստանում ե հողի վարձակալը։ Այսպիսով արդյունքի գինը կազմվում ե արտադրության ծախքերից ու հավելյալ արժեքից, վորն իր հերթին տրոհվում ե վարձակալի միջին վաստակի ու հողատիրոջը վճարվող ռենտայի։ Սակայն զանազան հողերի հասութաբերությունը միաչափ չի լինում և փոփոխվում ե՝ նայած հողերի պտղաբեր լինելուն ու հացահատկի շուկաներին շատ կամ քիչ մոտկության, վորովհետև շուկայի հեռավորության հետ փոխադրածախսի (провоз) արժեքը մեծանում ե, հետևաբար ավելանում ե արդյունքի ինքնարժեքն ել։ Ընդսմին վարձակալը պետք ե բավականանա տվյալ վայրին ընկնող միջին վաստակով և ամբողջ ավելցուկն,

իբրև ռենտա, զիջե հողատիրոջը։ Յեթե վարձակալը կամենա ավելի վաստակ ստանալ, այն ժամանակ մյուս մրցորդները բավականանալով վարձակալությունից ստացվող սովորական վաստակով՝ կըհամաձայնվեյին ավելի բարձր ռենտա վճարելու։ Հասույթի այն ավելցուկը, վոր ստացվում ե ավելի պտղաբեր լինելու հետևանքով կամ շուկային ավելի մոտ լինելու հետևանքով և վորը հողատիրոջն ե զիջվում, կազմում ե այսպես կոչված տարբերական (դիֆֆերենցիալ) ռենտան, այսինքն՝ մի ռենտա, վոր տարբերվում ե՝ նայած վերոհիշյալ պայմաններին։ Սակայն այն հողամասի տերն ել, վոր նվազագույն հասույթ ե բերում, նմանապես նկատի ունի ռենտա ստանալ, թեկուզ քիչ։ Նվազագույն հասութաբերություն ունեցող հողերից ստացած այսպիսի ցածըր ռենտան կոչվում ե բացարձակ ռենտա։ Այսպիսով սովորական ռենտան կազմվում ե բացարձակ ռենտայից ու տարբերականից, վորը հողամասի հասութաբերության աստիճանով ե վորոշվում։ Ասենք, որինակի համար, յերեք տնտեսություն, վորոնք հողամասերի մեծությամբ ու ծախքերով հավասար են իրար (որինակին պարզ կերպարանք տալու նպատակով շուկայից ունեցած հեռավորությունները հավասար ենք ընդունում)։ Մի տնտեսությունը, վոր տվյալ վայրի պայմանների տեսակետից ամենավատ դրության մեջ ե գտնվում և վորն այսպիսով միայն բացարձակ ռենտա յե բերում, տալիս ե 500 փութ ցորեն, մյուսը՝ 600 փութ, յերրորդը՝ 800 փութ։ Արտադրության ծախքերն այս յերեք դեպքում ել 600 ռուբլի յե։ Յեթե շուկային գինը 1 ռ. 50 կ. ե փթին, ապա ցորենների վաճառքից ստացած գումարը կըլինի 750, 900 ու 1200 ռուբլի, իսկ զուտ հասույթը՝ 150, 300 ու 600 ռուբլի։ Թող միջին վաստակը հավասար լինի 15 տոկոսի, այն ժամանակ 600 ռուբլու վաստակը կըլինի 90 ռ. այս դեպքում վարձակալի, իբրև վաստակ, 90 ռուբլին զուտ հասույթից հանելուց հետո առաջին վատ հողամասի տերը կըստանա միայն բացարձակ ռենտա, վոր հավասար կըլինի 60 ռուբլու, յերկրորդինը՝ 210 ռ., վորից 60 ռ. բացարձակ ռենտա ու 150 ռուբլի տարբերական ռենտա, իսկ յերրորդ հողամասի տերը կըստանա 510 ռուբլի, 60 ռուբլի բացարձակ ռենտա ու 450 ռ. տարբերական ռենտա։ Խոշոր կապիտալիստական վարձակալությունից, վորի նպատակն ամենից առաջ վաստակ կորզելն ե, պետք ե տարբերել այսպես կոչված պարենարարական վարձակալությունը (продовольственная аренда), յերբ գյուղացիք հող են վերցնում իրենց կերակրելու նպատակով («պարենավորման» համար, այստեղից ել ծագում ե հենց անունն ել)։ Գյուղացին հողատիրոջը տալիս ե վոչ միայն գերվաստակն, այլև ամբողջ վաստակն, իսկ հաճախ, բացի սրանցից, անհրաժեշտ արդյունքների մի մասն ել՝ իր պահանջները սահմանափակելով ծայր աստիճան, վորը հազիվ նրան հնարավորություն ե տալիս յուր գոյությունը պահպանելու ընտանիքով հանդերձ։

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ։— ԽՈՇՈՐ ՈՒ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Գյուղատնտեսական շուկայի լայնանալու հետ միասին գյուղական տնտեսության ասպարեզում էլ նկատելի առաջադիմություն է սկսվում. ճահիճները չորացնում են և անջրդի տարածությունները ոռոգում, պարապուտներն (пустырь) ու վատթարագույն հողերը մշակում։ 19-րդ դարի կեսից բնական պարարտացման կողքին լայն չափերով տարածվում են զանազան արհեստական՝ քիմիական ու հանքային պարարտացումները, կալիումային աղեր ու սուպերֆոսֆատներ և այլն։ Գյուղական տնտեսության մեջ էլ անցնում են մշակման մեքենային յեղանակին. հայտնվում են շոգե, ապա էլեկտրական գութանները, սերմիչ, հնձող, խուրձ կապող, կալսող, երանող, խոտ հարող, փոցխող մեքենաները և այլն։ Ռուսաստանում գյուղատնտեսական մեքենաները լայն չափով տարածվել սկսեցին 1905 թվականի հեղափոխությունից հետո միայն։ Սակայն Յեվրոպայում մեքենաների տարածվելուն արգելք եր լինում այն, վոր անցյալ ժամանակներից ժառանգություն մնալով հողային սեփականությունը մանր կտորների յեր բաժանվել և գերիշխում եյին այսպես կոչված «գաճաճային» տնտեսությունները, վորոնցում մեքենաներ կիրարկելը հնարավոր չե։ Ահա թե ինչն է պատճառը, վոր մեքենաների գործածությունը Հյուսիսային Ամերիկայի ու գաղութային յերկիրների կուսական տարածությունների մշակման ասպարեզում ավելի լայն չափեր է ընդունել, քան Յեվրոպայում։ Բուն յերկրագործական մշակույթների առաջադիմությանը զուգընթաց գյուղական տնտեսության մյուս յերկրորդական ճյուղերն էլ զարգացան—կաթնատնտեսությունը, ընտանի թռչունների բուծումը, բանջարաբուծությունը, պտղաբուծությունը և այլն։

Յերբ գյուղատնտեսական արտադրությունը սեփական սպառման համար կատարվող արտադրությունից դառնում է արտադրություն շուկայի համար, գյուղական տնտեսության ասպարեզում էլ ազատ մրցման հարաբերություններն առաջին շարքն են մղվում։ Այստեղ էլ, ինչպես արդյունաբերական մրցման ժամանակ, կռիվը տեղի յե ունենում վոչ միայն առանձին արտադրողների միջև, այլև արտադրողների ամբողջ դասակարգերի միջև, խոշոր ու մանր, կալվածատիրական ու գյուղացական տնտեսությունների միջև։ Գյուղատնտեսական արտադրության ասպարեզում էլ խոշոր ձեռնարկությունները միևնույն առավելություններն ունեն, ինչ վոր արդյունաբերության մեջ. արտադրության միջոցների, շենքերի, ծառայողների ու բանվորների թվի խնայողություն, մեքենաների գործադրության առավել հնարավորություն (մի քանի մեքենաներ, ինչպես, որինակ, շոգե ու էլեկտրական գութաններն ու կալսիչները, բացառապես ավելի խոշոր տնտեսությունների մեջ միայն կարող են գործադրվել)։

Սակայն խոշոր յերկրագործական տնտեսություններն այսպես լրիվ ու այնքան արագ հաղթանակ չեն տանում ու դուրս չեն մղում մանրերը, ինչպես հաղթանակում եր խոշոր արդյունաբերությունն արհեստի հանդեպ։ Մանր յերկրագործական տնտեսության համեմատաբար այսպես դիմացկուն լինելը մի շարք պատճառներ ուներ։ Ամենից առաջ գյուղացին շուկայից այն աստիճան կախում չունի, ինչպես արհեստավորը։ Նրա տնտեսությունը դեռ շարունակում է գլխավորապես սպառողական լինել, այն ե՝ բավարարել սեփական պահանջները։ Յեթե նա մի բան ծախում է, ապա իր արդյունքների մի մասն է միայն վաճառում, ընդվորում վաստակի կարիք չզգալով՝ գյուղացին կարող է իր արդյունքներն ավելի ցած գներով ծախել։ Բացի սրանից՝ գյուղացու առջև ավելի ընդարձակ հնարավորություններ են տարածվում, քան արհեստավորի, վորը մի վորոշ մասնագիտությամբ է զբաղված։ Յերբ գյուղացական տնտեսությունը վարվում է հացահատիկների առևտրի ասպարեզից, ապա հնարավորություն ունի ձվերի, յուղի, բանջարեղենի առևտրին և այլն տնտեսական յերկրորդական ճյուղերի ուրիշ արդյունքների առևտրին անցնելու, ճյուղեր, վորոնցում մեքենաներ գործածելն անհնար է, և վորոնցում խոշոր տնտեսությունն ընդհանրապես մեծ առավելություններ չունի։

Խոշոր տնտեսությունների տարածման մյուս արգելքն արևմտյան յեվրոպական պետություններում այն է, վոր հողային տարածությունը սահմանափակ է և մանր կտորների յե բաժանված բազմաթիվ մանըր սեփականատերերի միջև։ Այս պատճառով էլ խոշոր ձեռնարկություններն այնպես անսահմանակ ու անարգել կերպով չեն կարող ծագել, ինչպես արդյունաբերության մեջ։ Խոշոր հողային տիրապետություններն ընդարձակվել կարող են միայն ի հաշիվ մանր տնտեսությունների՝ վերջիններիս վոչնչացման միջոցով, իսկ մանր տնտեսություններն են հենց, վոր աչքի յեն ընկնում, ինչպես քիչ առաջ ասեցինք, մեծ դիմացկունությամբ։ Բայց գյուղական մանր արտադրողներին իրենց հողամասերից բռնի «մաքրելու» ու հեռացնելու յեղանակները կապիտալիստական հասարակության մեջ այլևս անգործադրելի յեն շնորհիվ այն ակնածության, վոր հասարակությունն զգում է մասնավոր սեփականության հանդեպ։

Հենց մեքենաների գործադրությունն իսկ գյուղական տնտեսության մեջ այնպիսի առավելություններ չի ընձեռում, ինչպես խոշոր արդյունաբերության մեջ։ Գյուղատնտեսական մեքենաներն իրենց կազմությամբ անհամեմատ ավելի պարզ են ու գներով մատչելի, քան արդյունաբերության մեջ կիրարկվող մեքենաները։ Գյուղատնտեսական մեքենաները շարժվում են վոչ թե շոգու ույժով, այլ լծկան անասունի կամ նույնիսկ մարդու ույժով։ Ահա թե ինչու, մի քանի առան-

ձին բացառությունները չհաշված, նրանք գործադրվում են նաև մանր տնտեսությունների մեջ, թեև հարաբերաբար փոքր քանակով։ Միևնույն ժամանակ ավելի պարզ ու մատչելի լինելով՝ գյուղատնտեսական մեքենաներն այնպիսի վիթխարի չափերով չեն բարձրացնում աշխատանքի արտադրողականությունն ամենևին, ինչպես մեքենային յեղանակն արդյունաբերության մեջ։ Բացի սրանից, յերկրագործության մեջ արտադրողական գործունեյության բուն իսկ հետևանքները դեռ շարունակում են կախում ունենալ վոչ այնքան մարդից, վորքան հողի վորակից ու կլիմայական պայմաններից, և արդեն հենց միայն այս պատճառով աշխատանքի արտադրողականության բարձրացումը համեմատաբար սահմանափակ չափով է հնարավոր։ Վերջապես խոշոր ու մանր տնտեսության մրցման մասին խոսելիս անհրաժեշտ է տարբերել կապիտալիստական տիպի խոշոր տնտեսություններ ու հին ֆեոդալական-ճորտային տնտեսությունները։ Մենչդեռ կապիտալիստական յերկրագործական տնտեսության ծագումն ու աճումը կապ ունի գյուղատնտեսության առաջադիմության հետ, միևնույն այս գյուղատնտեսական առաջադիմությունը քայքայում է ճորտային տնտեսությունները, վորի հետևանքով սրանք հաճախ տրոհվում են ավելի փոքր տնտեսական միավորների։

Այս բոլոր պայմանների շնորհիվ Յեվրոպայում գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների աճումը խափանվում է և համեմատաբար դանդաղ առաջ գնում։ Ընդհակառակը, Հ.-Ա. Միացյալ Նահանգներում գյուղական տնտեսության զարգացումն ավելի անարգել է կատարվում, ուստի և այնտեղ միաժամանակ նկատելի յեն թե մեքենաների կիրարկումն ու թե գյուղատնտեսական ձեռնարկությունների թվի ու քանակի աճումն։ Ամերիկայում մշակվող հողերի կեսի չափ տարածությունը բռնում են այն խոշոր տնտեսությունները, վորոնք 100 հեկտարից ավելի ունեն (հեկտարը դեսյատինից միքիչ պակաս է), այնինչ նույնիսկ Անգլիայում խոշոր տնտեսությունները գրավում են ամբողջ մշակելի տարածության 30 տոկոսից վոչ ավելի, իսկ Գերմանիայում՝ 22 տոկոսը միայն։ Միացյալ Նահանգներում տնտեսության միջին չափը 60 հեկտարի յե հավասար, Անգլիայում՝ 25 հեկտարի, Ֆրանսիայում՝ 8,7, իսկ Գերմանիայում՝ միայն 5,5 հեկտարի*)։

*) Անցյալ դարի 90-ական թվականներից սկսած գյուղական տնտեսության զարգացման խնդիրը բուռն քննության առարկա յեր գլխավորապես տնտեսագիտական այն գրականության մեջ, վոր սոցիալիստական ուղղություն ուներ։ Այն հանգամանքը, վոր խոշոր արտադրությունը համեմատաբար դանդաղ եր թափանցում յերկրագործական տնտեսության ասպարեզը, ծառայում եր իբրև հիմունք այն պնդման, թե գյուղական տնտեսության մեջ, արդյունաբերության հակառակ, առավելությունը մանըր տնտեսության կողմն է, ուստի և նկատելի չե մանր տնտեսության խոշոր ձեռ-

4. ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՄՐՑՈՒՄՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ։ Յերկրագործական տնտեսության զարգացման ազատ պայմաններ, վորոնք անցյալի վոչ մի մնացորդից չեն նեղվում ու ճնշվում, կապիտալիստական տիպի խոշոր տնտեսությունների աճում, վերջապես կուսական տափաստանների պտղաբեր հող,—գաղութային յերկիրներն ունեյին այս առավելությունները, վորոնց հետևանքները շուտով յերևան յեկան։ Ամերիկայի, Արգենտինայի, Ավստրալիայի հացահատիկը հեղեղում է յեվրոպական շուկաները, և անցյալ դարի 70-ական թվականներից սկսած անգլովկիանյան յերկիրների մրցումն ավելի սաստիկ ու նկատելիորեն զգալի յե դարձնում իր գոյությունը։ Միաժամանակ շատանում եր հացահատիկների ներմուծումը Ռուսաստանից ու Արևելյան Հնդկաստանից ել։ Մի կողմից՝ կապիտալիստական տիպի խոշոր տնտեսությունների արագ զարգացումը Նովոռոսսիյսկի ծովամերձ տափաստաններում, մյուս կողմից գյուղացական հացահատիկի չափազանց ցածր գները Ռուսաստանին հնարավորություն եյին տալիս հացահատիկի միջազգային շուկայում մրցելու անգլովկիանյան յերկիրների հետ։

Ռուսական ու անգլովկիանյան հացահատիկների սաստկացող մրցումն իսկական գյուղատնտեսական ճգնաժամ առաջացրեց Յեվրոպայում։ Հացահատիկի գներն իջան, հողի գներն ու հողային ռենտան նույնպես ընկան։ Սրա հետ կապ ունենալով՝ հացահատիկի արտադրությունն ու ցանքսերի տարածությունը կրճատվեց. առանձնապես նըկատելի կրճատում տեղի ունեցավ Անգլիայում, վորտեղ անասնապահությունն սկսվեց արագ տարածվել ի հաշիվ յերկրագործական մշակույթների։ Անգլովկիանյան հացահատիկի մրցումն ամենից առաջ Յեվրոպայի խոշոր գյուղական տնտեսության վիճակի վրա ազդեց։ Գյուղացական մանր տնտեսությունը, վոր ավելի քիչ է զգում շուկայի տատանումները, ճգնաժամին ավելի հեշտ դիմացավ։ Ճգնաժամի հետևանքով գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների աճումը կանգ առավ, իսկ յեվրոպական միքանի պետությունների մեջ, որինակ՝ Անգլիայում ու Գերմանիայում, խոշոր ձեռնարկությունների թիվը նույնիսկ կրճատվեց մի քիչ։ Յերկրագործության նվազած հասութաբերության հետևանքով կապիտալը նկատելիորեն սկսեց դուրս փախչել գյուղական տնտեսությունից, վորպեսզի այլ ասպարեզում իրեն ավելի նպաստավոր գետեղման տեղ գտնի։

նարկությունների կողմից վտարվելը։ Այս տեսակետի վրա կանգնած են՝ Հերցը, Դավիդը, Հատտին, Ռուսաստանում՝ Բուլգակովը, Չերնովն ու նարոդնիկային բանակի մյուս ներկայացուցիչները։ Հակառակ տեսակետը, վոր ընդունում է, թե գյուղական տնտեսության ասպարեզում ել խոշոր տնտեսական ձևերի թեկուզ դանդաղ, բայց և այնպես գերակշռող զարգացման տենդենցիա գոյություն ունի, պաշտպանում են Կաուցկին, Կրժիվիցկին, Ռուսաստանում՝ Պլեխանովը, Վլ. Իլյինը, Պ. Պ. Մասլովը, Ֆինն-Յենոտայևսկին ու տնտեսագիտական գրականության մեջ մարքսիստական ուղղության ներկայացուցիչներն ընդհանրապես։

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ.

1. ՀՈՂԻ ԶՈՐԱՀԱՎԱՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ: Թեև մի ամբողջ շարք պայմանների շնորհիվ յերկրագործական մանր տնտեսությունը խոշոր ձեռնարկությունների դեմ կռվելու ընթացքում ընդհանրապես վորոշ դիմացկունություն ցույց տալիս էլ է, սակայն այս հանգամանքը բազմաթիվ ավելի պակաս դիմացկուն գյուղացական տնտեսություններ չի փրկում քայքայումից և սրանց տերերին՝ գույքի կորստից ու կատարյալ բանվորացումից: Ապրանքակապիտալիստական հարաբերությունների ներխուժումը խախտում էր մինչկապիտալիստական կյանքի նահապետական կերտվածքը (уклад), վոչնչացնում էր բնատնտեսական կարգերի վերջին մնացորդները, խարխլում այնտեղ տիրապետող այն հավասարությունը, վոր կար ապրուստի պայմանների մեջ:

Հողը, վոր սերունդների ընթացքում չէր փոխել իր տերերին, այժմ ավելի հաճախ է առուծախի առարկա դառնում: Ճորտատեր կալվածատերերը, վորոնք ժամանակակից պայմաններում իրենց տնտեսությունը շարունակելու հնարավորություն չունեն, իրենց կալքերը (владение) վաճառում, վերջացնում են: Մանր գյուղացական սեփականությունն էլ է իր դիմացկունությունը կորցնում: Վորքան ավելի յե շարժուն դառնում հողային սեփականությունը, վորքան ավելի յե անապահով դառնում մանր գյուղացական տնտեսության վիճակը, տնավեր դարձած ու ծայրահեղության դուռը հասած գյուղացիներն այնքան ավելի հաճախ են հարկադրված լինում հրաժեշտ տալու իրենց ժառանգական հողամասերին և վերջիններս վաճառելու ու սրանից հետո սովորաբար թողնելու, լքելու այն վայրը, վորտեղ մինչ այդ արմատակալել, հարանստել էյին (насидение):

Գյուղացության շերտավորումը, վոր դեռ առևտրային կապիտալիզմի տիրապետության դարաշրջանում էր սկսվել, հիմա միանգամից արագ քայլերով առաջ գնաց: Մի կողմից կազմվում է դրամական կապիտալի տեր, ունևոր գյուղացության դասակարգը, գյուղացական բուրժուազիան: Այս դասակարգի ներկայացուցիչները հանդես են գա-

լիս վաշխառուների, խանութպանների, տնայնագործական արդյունքների մեծագնորդների, հացահատիկների մանր առևտրականների դերում. սրանք գնում են քայքայված կալվածատերերի ու գյուղացիների հողերը, սրանց վրա առևտրային տնտեսություն հիմնում և հատկապես շուկա հանելու համար հացահատիկ ու զանազան տնտեսական արդյունքներ արտադրում: Վարկային ու գյուղատնտեսական ընկերությունների միջոցով միացումն այսպիսի տնտեսատերերին (хозяин) դյուրություն է տալիս թե վարկ ստանալու և թե իրենց արդյունքները վաճառելու:

Գյուղական բուրժուազիայի հետ միաժամանակ աճում է ընչապակաս, պաուպեր գյուղացիների հակադիր դասակարգն էլ (պաուպեր—pauper լատիներեն է, նշանակում է աղքատ): Գյուղացիների հողամասերը բաժանվում են կտորների, մանրանում են, տնտեսությունն ընկնում է, այնինչ հարկային լուծը ծանրանում է, և փողի կարիքը մեծանում: Զունևոր ու ընչապակաս գյուղացիք ընդմին ավելի ու ավելի յեն քայքայվում, պարտքերի տակ ընկնում և կախումն ունենում իրենց հարուստ համագյուղացիներից: Վերջիվերջո շատերը հարկադրված են լինում իրենց տնտեսությունները ծախելու, մի կողմ դնելու, մշակ վարձվելու կամ անցնելու քաղաք աշխատանքի: Ռուսաստանում պաուպեր գյուղացիներն իրենց հողաբաժինները մասսայորեն վաճառել սկսեցին 1905 թվականի հեղափոխությունից հետո, յերբ «հողաճոթեր» («прирезка земли») ստանալու նրանց հույսերն ի դերև յելան: Միքանի տարվա ընթացքում միլիոնավոր դեսյատին հող անցավ գյուղական աղքատներից գյուղական բուրժուազիայի ձեռքը, վորը յեռանդագին զբաղված էր գյուղացական ու կալվածատիրական հողերի մեծագնումով:

2. ՉՈՒՆ ԴԵՊԻ ՔԱՂԱՔ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ: Քայքայված գյուղացության համար անխուսափելի անհրաժեշտություն էր դառնում վորևէ ոժանդակ զբաղմունք գտնելը: Յերբ գյուղական տնայնագործական արդյունաբերությունն ընկնում է և զարգանում խոշոր արդյունաբերությունը, վոր կենտրոնացած էր գլխավորապես քաղաքներում, այն ժամանակ քաղաքը գյուղական ազգաբնակության համար ձգողական կենտրոն է դառնում: Այստեղ, քաղաքում, պաուպեր գյուղացիներն, ինչպես և լիովին պրոլետար դարձած գյուղացիներն ավելի շատ կարող էյին հույս դնել զբաղմունք գտնելու: Քաղաքամերձ գյուղացիներն ամեն որ քաղաք են գալիս աշխատանքի՝ յերթևեկությունը յերկաթուղիով կատարելով: Ավելի հեռավոր գյուղերի շինականները, վորոնք վերոհիշյալ հնարավորությունից զուրկ են, ավելի կամ պակաս յերկար ժամանակով, սովորաբար ձմեռային սեզոնին, փոխադրվում են քաղաք՝ ամառը վերադառնալով

գյուղ դաշտային աշխատանքների։ Վերջապես շատերը բոլորովին թողնում են յերկրագործությունն ու վերջնականապես տեղափոխվում նախ ամենամոտիկ քաղաքն, իսկ հետո այնտեղից ավելի հեռավոր ու խոշոր քաղաքային կենտրոնները։ Ամենօրյա յերթևեկությունները գերակշռում են Արևմտյան Յեվրոպայում, վորտեղ քաղաքներն ավելի մոտ-մոտ են դասավորված, իսկ սեզոնային տեղափոխությունները՝ Ռուսաստանում, մանավանդ այն նահանգներից, վորոնք արդյունաբերական են ու մայրաքաղաքներին մոտիկ։ Կենտրոնական յերկրագործական նահանգներից—Կուրսկի, Տամբովի, Վորոնեժի, Խարկովի ու այլ նահանգներից— գյուղական ազգաբնակության նշանավոր մասն ամառը գնում է հարավ, վորտեղ իրեն աշխատանք է գտնում քարածխի հանքերում կամ վարձվում է Նովորոսսիյսկի շրջանի խոշոր տնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքներ անելու։

Սակայն աշխատելու նպատակով սեզոնային ժամանակավոր չուն դեպի քաղաք՝ անցողական յերևույթ է, ընդվորում բանը սովորաբար նրանով է վերջանում, վոր սեզոնային բանվորը մշտական բանվոր է դառնում և վերջնականապես վերաբնակվում է քաղաքում։

Գաղթը դեպի քաղաք ու քաղաքային ազգաբնակության աճումն ի հաշիվ գյուղականի, կապիտալիստական զարգացման ամենացայտուն ու բնորոշ յերևույթներից մեկն է հանդիսանում։ Առանձնապես թափով մեծանում են խոշոր արդյունաբերական կենտրոնները։ Անգլիայում ամենից վաղ առաջադիմեցին արդյունաբերության այնպիսի կենտրոններ վորպիսիք եյին՝ Լիդսը, Շեֆֆիլդը, Բիրմինհեմը, Մանչեստրը, վորոնց ազգաբնակությունը հարյուր հիսուն տարվա ընթացքում շատացավ միքանի տասնյակ անգամ։ Արդյունաբերական քաղաքների ազգաբնակությունն էլ ավելի արագ եր աճում Ամերիկայում։ Չիկագոն, վոր դեռ անցյալ դարի կեսում հազիվ միքանի հազար բնակիչ ունեցող եր համարվում, նույն դարի վերջին մեծացավ և դարձավ մի վիթխարի քաղաք յերկու միլլիոն ազգաբնակությամբ։ Լոձը (Լեհաստանում), վոր բամբակամանածային արդյունք եր մատակարարում ամբողջ Ռուսաստանին, վոր դեռ անցյալ դարի 60-ական թվականներին մի աննշան քաղաք եր, այս դարի սկզբին մինչև կես միլլիոն բնակիչ ուներ։ Վերջին տասնամյակներում հարավ-արևմտյան Ռուսաստանի քաղաքներն էլ նույնպիսի արագ աճում ցույց տվին շնորհիվ այն բանի, վոր Ռուսաստանի հարավում զարգանում եր մետաղագործական արդյունաբերությունը։

Արդյունաբերական ամենագլխավոր յերկիրների քաղաքային ազգաբնակության աճման մասին կարելի յե դատել՝ տեսնելով, թե ինչպես է աճում ամբողջ ազգաբնակության համեմատությամբ քաղաքա-

յին ազգաբնակության տոկոսը։ Յուրաքանչյուր հարյուր մարդուց քաղաքներում ապրում եր.

	1854 թ.	1871 թ.	1901 թ.
Անգլիայում	51	62	71
Գերմանիայում	28 (Պրուսիայում)	26	57 (1907 թ.)
Ֆրանսիայում	25	31	41
Հ.Ա.Մ.-Նահանգ.	12	21	38

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ.

1. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ (концентрация)։ *Մրցումը, վոր տեղի յե ունենում առանձին ձեռնարկությունների միջև, վերջանում ե ավելի խոշորների ու հզորների հաղթանակով։ Արդյունաբերական յուրաքանչյուր ճգնաժամ կորուստ ե բերում տասնյակ ու հարյուրավոր ավելի քիչ նշանավոր ու պակաս ապահովված ձեռնարկությունների։ Միևնույն ժամանակ նորածագ ձեռնարկությունների բազմության միջից հարատևում են միայն քչերն, ավելի կենսունակները։ Վորքան բարձր են տեխնիկայի առաջադիմությունները, այնքան ավելի ու ավելի փոքրաթիվ ձեռնարկությունների մեջ ե հետզհետե կենտրոնանում արտադրությունը, և միաժամանակ այնքան ավելի կատաղի դառնում մրցումն ու գոյության կռիվն առանձին ձեռնարկությունների միջև։ Այսպիսով մրցման վերջնական հետևանքը լինում ե համակենտրոնացումը, յերբ արտադրությունը կենտրոնանում ե և միանում սակավաթիվ ձեռքերում։ Արդյունաբերական առանձին ձեռնարկություններն ընդսմին ավելի ու ավելի ընդարձակ ու խոշոր չափեր են ընդունում՝ համախմբելով հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորների։*

Արտադրության համակենտրոնացումն ու առանձին ձեռնարկությունների չափերի ընդարձակումն առանձնապես արագ կատարվում ե այնպիսի յերիտասարդ ու տնտեսապես քիչ զարգացած յերկրներում, ինչպիսիք են՝ Ռուսաստանը, Հյուսիսային Ամերիկան, գաղութային մարզերը, վորտեղ կապիտալիզմը հանդես ե գալիս վոչ թե իբրև արհեստական յերկարատև զարգացման պտուղ, այլ սածիլ (շիթիլ) ե արվում կուսական անարատ հողի վրա, և վորտեղ, հետևաբար, խոշոր արտադրությունը տարածվում ե համարյա անարգել կերպով և տեղական մանր արդյունաբերության կողմից դիմադրության չի հանդիպում)։ Ռուսաստանում 1,000 ու ավելի բանվոր ունեցող ձեռնարկու-*

**) 50-ից ավելի բանվոր ունեցող յուրաքանչյուր մի ձեռնարկությանը միջին հաշվով ընկնում ե Ռուսաստանում՝ 290—300 բանվոր, վոչ պակաս յետամնաց Ունգարիայում՝ 227,—Ավստրիայում՝ 185, Գերմանիայում՝ 155, Ֆրանսիայում ու Անգլի-*

թյունների մեջ, վորոնք գործարանային վերատեսչության յենթակա ձեռնարկությունների հազիվ 2 տոկոսն եյին կազմում, պատերազմից առաջ, 1913 թվականին աշխատում եր ամբողջ բանվորության մինչև 40 տոկոսը։ Հ.-Ա. Միացյալ Նահանգների 3,000 խոշորագույն ձեռնարկություններում կենտրոնացած ե բանվորների ընդհանուր թվի մոտ յերրորդական մասը։ Գերմանիայում համակենտրոնացումն անհամեմատ թույլ ե. այստեղ այսպիսի խոշորագույն ձեռնարկությունների մեջ աշխատում են բանվորների 10 տոկոսից վոչ ավելին։

Սակայն համակենտրոնացումն արտահայտվում ե վոչ միայն նրանով, վոր առանձին ձեռնարկությունների չափերը մեծանում են, այլև այսպես կոչված կոմբինացիայով (համակցումով), յերբ արդյունաբերության զանազան ճյուղեր միացնում են մի ձեռնարկության մեջ։ Յուրաքանչյուր խոշոր ձեռնարկություն ձգտում ե, վոր ինքը արդյունահանե (добывать) *իրեն անհրաժեշտ հում նյութը և կատարե նրա սկզբնական մշակումը, ինչպես և վերամշակե հում նյութի այն մասը, վորն արտադրության տվյալ ճյուղին պիտանի չե, բայց կարող ե ոգտագործվել ուրիշ նպատակներով։ Մետաղագործական խոշոր գործարաններն իրենք են հայթայթում իրենց հանքանյութը* (руда), *հալում, դարձնում են չուգուն, չուգունը վերամշակում, անում են յերկաթ ու պողպատ, յերկաթե զանազան արդյունքներ շինում ու փաթթոցելու* (упаковочный) *նյութեղեն պատրաստում։ Բացի սրանից, նրանք հաճախ ունենում են սեփական քարածխի հանքեր, յերկաթուղիներ, նավահանգիստներ։ Ճիշտ նույն կերպ ել բամբակեղենի գործարանները ձեռք են բերում սեփական պլանտացիաներ, իսկ շաքարի գործարաններն ել սովորաբար ունենում են ճակնդեղի սեփական պլանտացիաներ։*

2. ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Արդյունաբերական ձեռնարկությունները վորքան ավելի խոշոր ու ընդարձակ չափեր են ընդունում, այնքան ավելի դժվարանում ե գործի անմիջական հսկումն ու ղեկավարությունը։ Միևնույն ժամանակ ձեռնարկությունների չափերը թույլ են տալիս ծառայողների մի ամբողջ շտատ պահել, և ահա ժամանակի ընթացքում ձեռնարկությունը կառավարելու պարտականությունների ավելի ու ավելի շատ մասն ե հատուկ ծա-

այում՝ ել ավելի պակաս։ Թե վորքան արագ ե կատարվում արտադրության համակենտրոնացումը Ռուսաստանի մեջ, կարելի յե տեսնել 1900 ու 1913 թ. թ. տվյալների համեմատությունից։ Մինչդեռ ֆաբրիկային վերատեսչության յենթակա ձեռնարկությունների ընդհանուր այս տարիներում կրճատվել եր 1,9 տոկոսով (18-ից իջել եր 17,877-ի), բանվորների թիվը նույն տարիներում ավելացել եր 37 տոկոսով 1,646,641-ից բարձրացել եր 2,319,577-ի)։ Միջին թվով յուրաքանչյուր մի ձեռնարկության ընկնում ե 1900 թվին 93 մարդ, 1913 թվին՝ 130։

ռայողների վրա դրվում հետզհետե, վորով բուն իսկ ձեռնարկու տերը գործը ղեկավարելու ասպարեզում ավելորդ ե դառնում։ Մյուս կողմից արդի հսկայական ձեռնարկությունների պահանջած վիթխարի ծախսերն առանձին ձեռնարկու կապիտալիստի ույժերից վեր են հանդիսանում։

Այս բոլոր պայմանների շնորհիվ, միանձնյա ձեռնարկություններին փոխարեն առաջ ե մղվում ընկերովի ձեռնարկությունների մի նոր ձև, ընկերություններ, վորոնց կապիտալները կազմում են միքանի փայատերերի ավանդներից (вклад)։ Այս կարգի ձեռնարկությունների ամենազարգացած ձևն ակցիոներական ձեռնարկությունն ե։ Նորակազմ ակցիոներական ընկերությունները բաց են թողնում շատ կամ քիչ քանակություն իրենց թղթերից, ակցիաներից, վորոնցից ունենալըն իրավունք ե տալիս վաստակի բաժնին մասնակցելու և ստանալու վաստակամաս (дивиденд), մի մաս այն գումարից, վոր տրվում ե ակցիոներներին միմյանց միջև բաժանելու իրենց ակցիաների արժեքի համաձայն։ Ակցիաների վաճառքից ստացած գումարներից ձեռնարկության սկզբնական դրամագլուխն ե կազմում։ Գործող ձեռնարկությունները բաց են թողնում լրացուցիչ ակցիաներ ել։

Ձեռնարկությունների միանձնյա տերերի հակառակ, ակցիա ունեցողները ձեռնարկության մեջ այլևս վոչ մի իրական մասնակցություն չեն ունենում արդեն։ Միևնույն անհատը կարող ե միքանի ու նույնիսկ բազմաթիվ ձեռնարկությունների ակցիաներ ունենալ։ Ակցիաները վաճառվում ու վերավաճառվում են և այսպիսով շարունակ փոխում են իրենց տերերին։

Ընդսմին ակցիաների տերերի մեծամասնությունը փոշիացած մասսա յե մանր սեփականատերերի, վորոնք սահմանափակ թվով բաժնետոմսեր ձեռք բերելու հնարավորություն ունեն։ Այս պատճառով բաժնետիրական ձեռնարկությունների իսկական տերերը հանդիսանում են այն անձինք կամ ավելի հաճախ իրավական անձինք—ընկերություններ, բանկեր, վորոնք մեծացնում են ակցիաների ամբողջ թվի կեսը կամ նույնիսկ 40 ու ավելի պակաս տոկոսը։ Յերբ ծնունդ ե առնում բաժնետիրական ընկերությունը, սրա հիմնադիրները սովորաբար այս նպատակով համապատասխան թվով ակցիաներ են պահում իրենց համար։

Այսպիսով ձեռնարկությունների բաժնետիրական ձևը չի տանում դեպի արդյունաբերության ռամկավարացում (демократизация), ինչպես վոր այս հաճախ փորձում են ցույց տալ՝ մատնանշելով այն իրողությունը, վոր ակցիաները լայն տարածում ունեն։ Ընդհակառակը, ձեռնարկության ակցիոներական ձևն ամենից առաջ չափազանց ուժեղացնում ե հենց խոշոր կապիտալի դիրքը։ Իրենց տնորինության տակ

ունենալով մի կապիտալ, վոր կրկնակի կամ նույնիսկ ավելի շատ ե գերազանցում իրենց սեփական կապիտալից, բաժնետիրական ընկերությունների այս տեր ու տիրականները կարող են իրենց հավաքած ակցիոներական կապիտալի մի մասը գործադրել նոր, այսպես կոչված դուստր ընկերություններ (дочерное общество) հիմնելու վրա։ Ընդսմին այս դուստր ընկերության կարգադրիչ դառնալու համար բավական ե, վոր նրանք—ծնող բաժնետիրական ընկերության հիմնադիրներն—իրենց հերթին գործի մեջ դնեն սրա հիմնադրության համար պահանջվող գումարի կեսն, ի թիվս վորի իրենց սեփական սկզբնական կապիտալի միայն քառորդն ու նույնիսկ ավելի քիչը։ Դուստր ընկերություններն իրենց հերթին կարող են նույն պայմաններով հիմնել թոռ ու այլ ընկերություններ, (внучатное общество) ընդվորում սկզբնական ընկերության հիմնադիրներին ու ամբողջ գործի ղեկավարներին պատկանող կապիտալի մասն ավելի ու ավելի յե կրճատվում։ Գործի մեջ դնելով մի քանի միլլիոն ռուբլի՝ հիմնադիրներն այս բոլորի հետևանքով դառնում են մի քանի տասնյակ միլլիոն ռուբլանոց կապիտալների կարգադրիչներ։

Առանձին տերերին պատկանող կապիտալի համեմատությամբ՝ բաժնետիրական կապիտալն ավելի շարժուն ե։ Վորևե նավթային ընկերության բաժնետոմսերի տերն, օրինակ, միշտ կարող ե յուր ակցիաները ծախել և յուր կապիտալը դնել մետաղագործական կամ յերկաթուղային ընկերության մեջ, մի բան, վոր չի կարող անել մասնավոր ձեռնարկության տերը։ Սակայն, վոր ել ավելի կարևոր ե, բաժնետիրական կապիտալը գերազանցում ե մասնավորից յուր ճկունությամբ ու առաձգականությամբ։ Կարիքի դեպքում այս կապիտալը հեշտությամբ կարող ե մեծացվել նոր լրացուցիչ ակցիաներ բաց թողնելու միջոցով։ Միևնույն ժամանակ նաև այն զանազան ցնցումներին ու ճգնաժամերին, վորոնց հետևանքը լինում ե մասսայական սնանկություն ու մասնավոր ձեռնարկությունների կործանումը, հեշտությամբ են դիմանում բաժնետիրական ձեռնարկությունները, և վերջիններիս վրա այս ցնցումներն ու ճգնաժամերը լոկ նրանով են ազդում, վոր ժամանակավորապես ընկնում են ակցիաների գներն ու բաժնետոմսերի համար վճարվող վաստակամասը։

Ներկայումս միանձնյա ձեռնարկությունները համարյա լրիվին վտարված են ձեռնարկությունների ակցիոներական ձևի կողմից։ Առաջուց հիմնադրված ձեռնարկությունների յել մեծամասնությունը նույնպես ավելացնում ե իր կապիտալներն ակցիաներից բաց թողնելու միջոցով և այսպիսով վերջիվերջո ակցիոներական ձեռնարկություն դառնում։ 1912 թվականին յերկրագնդիս վրա շրջանառության մեջ յեղող արժեթղթերի ընդհանուր գումարը հասնում եր 850 միլլիարդ

ռուբլու, վորի թվում 500 միլլիարդից ավելին գտնվում եր չորս առաջնակարգ յերկրներում — Մեծ Բրիտանիայում, Հ.-Ա. Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում ու Գերմանիայում։ Ֆրանսիայում արժեթղթերի մեջ կենտրոնացած է նրա ամբողջ հարստության մեկ յերրորդական մասը, Գերմանիայում՝ 25—30 տոկոսն, Անգլիայում՝ նույնիսկ 40 տոկոսը։

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՆԱԼՈՒ ՁԳՏՈՒՄԸ։—ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՁԵՎԵՐԸ (ԿՈՐՆԵՐՆԵՐՆ ՈՒ ՌԻՆԳԵՐԸ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԸ, ՏՐԵՍՏՆԵՐԸ)։ Վորքան ավելի յե առաջ գնում արտադրության համակենտրոնացումը, վորքան ավելի սակավաթիվ ձեռնարկություններ են մնում ու ընդգրկում արդյունաբերության յուրաքանչյուր առանձին ճյուղ, բնականաբար այնքան ավելի ակնհայտ է դառնում նրանց ձգտումը, վոր ե՝ լիովին վերացնել մրցումը և շուկայում մենաշնորհային տիրապետություն հաստատել։ Այսպիսով ազատ առևտրի ու ազատ մրցման սկզբունքը, վոր անցյալ դարի կեսին հաղթանակել եր, դարավերջին նորից տեղի յե տալիս մենաշնորհային տենդենցիային ի հետևանս այն հանգամանքի, վոր արդյունաբերական կապիտալը զարգանալով ձգտում եր ազատագրվել ամեն տեսակի կապանքներից։

Շուկայի ու սպառողների վրա լիակատար իշխանություն հաստատելու հնարը գտան նրանով, վոր ամենից առաջ փոխադարձ համաձայնության յեկան խոշորագույն ձեռնարկությունները։ Այսպիսի համաձայնությունների սկզբնական ու ամենից անկատար ձևն այն համաձայնություններն են, վորոնք կնքվում են վորոշ, մեծ մասամբ, կարճ ժամկետով և վորոնք սահմանում են այն գները, վորոնցից ցած չի կարող իր արդյունքը վաճառել համաձայնության մասնակցողներից և վոչ մեկը։ Այս համաձայնություններն այսպես կոչված ռինգերն (ողակներն) են կամ կորներները (անկյուններ)։ Ի դեպ. այս կարգի համաձայնությունները տարածված են գլխավորապես գյուղատնտեսական արդյունքների առևտրի ասպարեզում։ Արդյունաբերության մեջ գերակշռում են համաձայնության ավելի յերկարատև ձևերը։ Այսպիսի հատկություն ունեն ամենից առաջ կարտելները կամ սինդիկատները, համաձայնություններ, վորոնք կնքվում են միքանի տարով և սովորաբար ժամկետի լրանալուց հետո վերանորոգվում են։ Սինդիկատային համաձայնություններն իրենց հերթին կարող են զանազան ձևեր ընդունել։ Սինդիկատների անդամները փոխադարձ համաձայնությամբ սահմանում են շուկային գները, բաժանում են իրենց միջև շուկաները՝ յուրաքանչյուր մասնակցին կամ մասնակցողների խմբին հատկացնելով վորոշ աշխարհագրական շրջան արդյունքները վաճառելու համար, բաշխում են իրենց միջև պատվերները, կանոնավորում

են արտադրությունը՝ վորոշելով, թե յուրաքանչյուր առանձին ձեռնարկություն ինչ չափով պիտի արտադրի։ Վերջապես միքանի սինդիկատներ (այսպես կոչված «պուլերն» — ընդհանուր կաթսա) ունեն ընդհանուր գանձարկղ, վորտեղ մտնում է ամբողջ վաստակը, վորը բաշխվում է բոլոր մասնակիցների միջև։ Սինդիկատները կարող են ընդգրկել վոչ միայն միատեսակ ձեռնարկություններ, ինչպես, որինակ, շաքարի, մետաղագործական ու այլ գործարաններ (հորիզոնական միավորություն), այլև հաճախ այլազան ձեռնարկություններ ել, վորոնք կապ ունեն իրար հետ և վոչ այլ ինչ են, յեթե վոչ ձեռնարկության միևնույն արդյունքի մշակման տարբեր մոմենտները, որինակ, բամբակ մաքրող գործարաններն ու բամբակեղենի մանածային ու մանածագործական ֆաբրիկաները։ Ճիշտ նույն կերպ ել մետաղագործական սինդիկատները ձգտում են իրենց կողմը քաշել քարածխային ձեռնարկությունները, վորպեսզի սեփական վառելանյութ ունենան (ուղղահայաց միավորություն)։

Միավորության ամենակատարյալ ձևն են կազմում տրեստները, վորոնք գլխավորապես Ամերիկայում են տարածված։ Տրեստն առանձին ձեռնարկությունների համարյա լիովին ի մի ձուլվելն է, ընդվորում նրա մասնակիցները հրաժարվում են ամեն մի ինքնուրույնությունից։ Տրեստը ղեկավարում է վոչ միայն վաճառքն, այլև արտադրությունը։ Տրեստի գործերը ղեկավարող կոմիտեն միջամտում է իրեն յենթակա ձեռնարկությունների արտադրության բոլոր մանրամասնություններին՝ սահմանելով աշխատավարձը, բանվորական որվա տևողությունը։ Բացի սրանից, տրեստն իրավունք ունի նույնիսկ փակելու այն ձեռնարկությունները, վորոնց գոյությունն ավելորդ է համարում։

4. ՍԻՆԴԻԿԱՏԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։—ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ։ Արտադրության դեպի սինդիկատացում (синдицирование) ու մենաշնորհացումը (монополизация) թեքվելն սկսվում է դեռևս անցած դարի 70-ական թվականներից, 1873 թվականի ճգնաժամի որերից, մի ճգնաժամ, վոր առաջին անգամն եր համաշխարհային չափեր ընդունել։ Սակայն առաջին համաձայնությունները ժամանակավոր բնույթ եյին կրում, աչքի յեյին ընկնում անհաստատ լինելով և հեշտությամբ քայքայվում եյին։ Սինդիկատներն ու տրեստներն ուռճանալով հզորագույն կազմակերպություններ են դառնում անցյալ դարի վերջին ու ներկա դարի սկզբին միայն։ 1899—1900 թվականների արդյունաբերական վերելքի ու սրան հաջորդող 1900—1903 թվականների ճգնաժամերի որերից սկսած՝ արդյունաբերության սինդիկատացումն ու տրեստացումը (трестирование) արագորեն ու անընկրկելի կերպով առաջ է ընթանում՝ մեկ-

մեկու յետևից նվաճելով արդյունաբերության ասպարեզները։ Հում նյութեր պատրաստող ձեռնարկությունների, օրինակ՝ քարածխային, յերկաթահանքային, չուգունաձուլային ձեռնարկությունների սինդիկատացումը հարկադրում եր նաև այն ձեռնարկություններին, վորոնք վերամշակում են այն հում նյութերը, միանալու, վորպեսզի հում նյութի տերերի սինդիկատից կախումն չունենան։ Հետագայում նրանք ձգտում են վերջիններիս հետ միանալով մեկ սինդիկատ կազմելու։

Սինդիկատային շարժումը, վոր ծագում է արդյունաբերության համակենտրոնացման հետևանքով, իր հերթին ուժեղացնում է նույն այս համակենտրոնացման պրոցեսը։ Սինդիկատը մի ույժ է, վորի դեմ կռվել չեն կարող առանձին ու անջատ ձեռնարկությունները։ Պակաս նշանավոր ձեռնարկություններն այնպես են վոչնչանում, վոր նրանց հետքն անգամ ջնջվում է յերկրիս յերեսից, սակայն ավելի խոշոր ձեռնարկություններն էլ, վորոնք սինդիկատների մեջ մտնելուն հակառակում են, նույնպես ույժ չունեն յերկար ժամանակ դիմանալու հզորագույն կազմակերպությունների դեմ մղած կռվին և վերջիվերջո հարկադրված են լինում միանալու նրանց։ Ամենից ապահով միջոցը, վորով սինդիկատները հարկադրում են ձեռնարկություններին միանալու իրենց, գներն ինքնարժեքից ցած իջեցնելն է, մի բան, վորին հեշտությամբ դիմադրում են հզորագույն կազմակերպությունների անդամները, բայց վորը տնավեր է անում, կործանում առանձին ձեռնարկուներին։

Սինդիկատների ու տրեստների այսպես ամենազոր լինելու հետևանքով նրանց զարգացումն արտասովոր արագությամբ է առաջ գնում։ 90 ական թվականներին արդեն առաջադեմ արդյունաբերական յերկրներում՝ Գերմանիայում ու Հ.-Ա. Միացյալ Նահանգներում խոշոր արդյունաբերական կազմակերպությունների թիվը հարյուրների յեր հասնում։ Սինդիկատացման ու տրեստացման պրոցեսն ընդգրկել եր արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերը։ Արդյունաբերության միքանի, այն էլ կարևորագույն ճյուղերում սինդիկատների ու տրեստների մեջ միացած է ամբողջ կամ համարյա ամբողջ արտադրությունը։ Ամերիկական յերկաթուղային տրեստն ընդգրկում է յերկաթուղային ամենակարևոր գծերի մինչև 95 տոկոսը. նավթային տրեստը, վորին կուլ են գնացել 400 ձեռնարկությունից ավելի, ընդգրկում է ամբողջ արտադրության նույնպես 95 տոկոսը. պողպատի տրեստը, վորին մասնակցում են 800 ձեռնարկություն,—70 տոկոսը։ Գերմանիայում նման դեր են կատարում ածխի ու պողպատի սինդիկատները։ Ռուսաստանում Պրոդամետա (մետաղագործական) ու Պրոդուգոլ (քարածխային) սինդիկատները պատերազմից առաջ ընդգրկում եյին ամբողջ վաճառքի մինչև 70-80 տոկոսը։ Շաքարի սինդիկատը միացնում եր ամբողջ արտադրությունը։

Ձեռնարկությունների միավորման շարժումն իր հետագա զարգացման ընթացքում դուրս է գալիս առանձին յերկրների սահմաններից։ Կազմակերպվում են միջազգային սինդիկատներ, վորոնց նպատակն է համաշխարհային շուկաները բաժանել առանձին ազգային սինդիկատների միջև։ Այսպիսիք են՝ ծովային փոխադրության ու նավագնացության սինդիկատներն, ելեկտրական յերկու—գերմանական ու ամերիկական—տրեստները, վորոնք 1907 թվին բաժանել են համաշխարհային շուկաներն իրենց միջև։ Միջազգային սինդիկատներ առաջացել են նաև արդյունաբերության նավթային, քիմիական, բամբակեղենի, վշեղենի, բրդեղենի ու այլ ճյուղերում։ 1913 թվին միտք ծագեց միջազգային մետաղագործական սինդիկատ կազմելու, սակայն այս մտադրությունն իրականացնելուն արգելք յեղավ պատերազմի ծագումը միայն։

5. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ։ Համակենտրոնացման պրոցեսն արդյունաբերությամբ չի սահմանափակվում, այլ ընդգրկում է հարևան ասպարեզն էլ՝ առևտրի ասպարեզը։ Սինդիկատներն արտադրությունը միացնելով՝ իրենց ձեռքն են առնում արդյունքների վաճառքն էլ։ Յեվ վորքան ավելի բարձր աստիճանի յե հասել արտադրության համակենտրոնացումը, վորքան ավելի քիչ ձեռնարկություններ են մնացել, վորոնք սինդիկատային միավորությունների մեջ չեն մտել և ազատ մրցում են իրար դեմ, այնքան ավելորդ է դառնում առևտրային միջնորդների դերը։ Սինդիկատներն ու տրեստները նույն կերպ, ինչպես և առանձին ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, բաց են անում իրենց սեփական խանութներն իրենց արդյունքների վոչ միայն մեծածախ, այլև մանրածախ վաճառականության համար։ Յեվ վորքան էլ առևտրականները դեռ պահում են իրենց նշանակությունը, նրանք հարկադրված են լինում գործ ունենալու վոչ թե մի շարք առանձին, անջատ ու միմյանց դեմ մրցող ձեռնարկությունների հետ, այլ միաձույլ համախմբված ույժի հետ։ Սինդիկատները թելադրում են նրանց իրենց պայմաններն՝ այսպիսով նրանց դարձնելով իրենց հասարակ գործակալները։

Ընդսմին համակենտրոնացումը հասնում է բարձրագույն աստիճանի։ Այժմ խոշոր արդյունաբերական կազմակերպությունների ձեռքում մնում է վոչ միայն հում նյութ արդյունահանելուց (добыча) ու արդյունքներ արտադրելուց ստացած վաստակն, այլև վաստակի այն մասն էլ, վոր առաջ բաժին եր ընկնում առևտրային կապիտալին։ Հում նյութի արդյունահանությունն, արդյունքների արտադրությունն ու վաճառքը միացնելու միջոցով հասնում են այն հետևանքին, վոր արտադրության ու վաճառքի ամբողջ պրոցեսը լիովին շաղկապվում ու կենտրոնանում է միևնույն ձեռքերում։

6. ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ։ Արտադրության աճմանը զուգընթաց վորքան ավելի համառ ու մեծ է լինում վարկի կարիքն, այնքան ավելի խոշոր նշանակություն է ունենում բանկերի դերն արդյունաբերության համար և այնքան ավելի լայն չափեր են ընդունում բանկերի կատարած գործառնությունները։ Միաժամանակ շատանում են բանկերի միջոցներն էլ։ Արդյունաբերական ձեռնարկությունների աճող վաստակը, մանր սեփականատերերի խնայողությունները, անարտադրող դասակարգի հասույթներն ավելի ու ավելի մեծ քանակությամբ են հոսում, լցվում բանկերը։*)

Ընդսմին բանկային գործի ասպարեզում էլ կապիտալների նույնպիսի համակենտրոնացում է տեղի ունենում, ինչպես և արդյունաբերական ասպարեզում։ Ավելի խոշոր բանկերին կուլ են գնում մանրերը, վորոնք կամ ձուլվում են առաջինների հետ կամ սկսում են կախում ունենալ նրանցից։

Գերմանիայում Բեռլինի 9 խոշորագույն բանկեր սրանց հարող և սրանցից կախում ունեցող բանկերի հետ միասին պատերազմից առաջ ունեյին 11,3 միլիարդ մարկ, վորը կազմում եր գերմանական բանկային կապիտալի մոտ 83 տոկոսը (սրանց թվում գերմանական մի բանկ ուներ 3 միլիարդ մարկ)։ Ամերիկայում նույնպիսի գումար կենտրոնացած է ընդամենը յերկու բանկի—Ռոկֆելլերի ու Մորգանի բանկերի ձեռքում։ Անգլիայում նման դեր խաղում են չորս խոշորագույն բանկեր, Ֆրանսիայում՝ յերեք։ Խոշոր բանկերը ճիշտ մի տունկի նման ամբողջ յերկիրը ծածկում են իրենց բաժանմունքներով՝ միաժամանակ իրենց ազդեցությունը տարածելով արտասահմանի վրա յել։ Անգլիական ու ֆրանսական խոշորագույն բանկերից յուրաքանչյուրն ունի 400 ու նույնիսկ 500 բաժանմունքից ավելի։ Այսպիսով առանձին բանկերն ուռճանում, դառնում են վիթխարի հաստատություններ, վորոնց կապիտալը միլիարդների յե հասնում։

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ։ Միարար ձգտումը (об'единительная тенденция) կանգ չի առնում սրա վրա յել։ Արդյունաբերական և բանկային վիթխարի միավորությունների միջև յուր հերթին սերտ կապ է հաստատվում։ Վորքան ավելի խոշոր չափեր են ընդունում արդյունաբերական և բանկային միավորությունները, ընդսմին վորքան ավելի յե յերևան գալիս, վոր մի կողմից՝ արդյունաբերական ձեռնարկությունները վարկի կարիք են զգում և մյուս կողմից՝ բանկերում հավաքված ազատ կապիտալներին անհրաժեշտ է զետեղում գտնել, այնքան ավելի սերտ փոխհարաբերություններ են սահմանվում առաջինների ու յերկրորդների միջև։ Բանկերը դադարում են միայն վարկային հիմնարկներ լինելուց և ավելի մոտիկ ու անմիջական շփման մեջ են մտնում արդյունաբերության հետ։ Բանկերն իրենց կապիտալներով մասնակցում են նոր արդյունաբերական ձեռնարկությունների հիմնադրությանն, ոժանդակում են այդ ձեռնարկություններին, վորոնք արդեն կան, խոշոր քանակությամբ գնում են առանձին ձեռնարկությունների ակցիաների մեծ մասը և այսպիսով յենթարկում իրենց։ Բանկերի դիրեկտորները զանազան առևտրային և արդյունաբերական ընկերությունների վարչության անդամ են դառնում։ Բանկային կապիտալը հետզհետե մեծացող աստիճանով զետեղում է գտնում արդյունաբերության մեջ՝ ընդսմին փոխակերպելով արդյունաբերական կամ ավելի ճիշտը՝ ֆինանսական կապիտալի։ Ըստ Հիլֆերդինգի վորոշման՝ ֆինանսական կապիտալ այն կապիտալն է, վոր բանկերի տրամադրության տակ է գտնվում, բայց գործադրվում է արդյունաբերության մեջ։

Մի տեսակ սերտաճում (сращивание), ձուլում է կատարվում արդյունաբերական ու բանկային կապիտալի, վորոնք դառնում են մի վիթխարի ույժ, ֆինանսական կապիտալի ույժ։ Այս ձուլումն արդյունաբերական կապիտալի՝ բանկային կապիտալին յենթարկվել չէ այնքան, վորքան սերտաճման և փոխադարձ ներծծման պրոցես։ Ինչպես տեսանք, ձուլման ձգտումը յերկուստեք է, և ձուլվելու նախաձեռնությունն ու առաջի զարկը կարող է միակերպ ծագել զույգ կողմերից էլ։ Այսպես, Ամերիկայում արդյունաբերության տրեստացումը նախորդում եր բանկերի միավորությանը։ Կապիտալի վիթխարի քանակի հենց այն պահանջները, վոր առաջադրում է տրեստացած կապիտալիստը, պահանջներ, վորոնց չեյին կարող բավարարել առանձին բանկերն, այստեղ առաջ բերին բանկային կապիտալների համակենտրոնացում ու միավորություն։ Միացյալ-Նահանգների ամբողջ տնտեսական կյանքի իսկական տերերը բանկերը չեն, այլ արդյունաբերության արքաները, Ռոկֆելլերն ու Մորգանը, վորոնք նավթային ու պողպատի տրեստների գլուխ են կանգնած։ Ռոկֆելլերի նավթային տրեստը միավորում է յերկու բանկային խումբ, Մորգանի պողպատի տրեստը՝ յերեք։ Գերմանիայում բանկային և արդյունաբերական կապիտալների միավորման գործում ղեկավար դերն, ընդհակառակը, պատկանում եր բանկերին։ Սակայն Գերմանիայում էլ Ստիննեսի, Վոլֆի՝

1) Անգլիայում բանկերի ավանդների ընդհանուր գումարը 1880—1908 թվականների ընթացքում 3,75 միլիարդ ռուբլուց բարձրացավ մինչև 10,5 միլիարդի։ Գերմանիայում նույն տարիներում 225 միլիոն մարկից մինչև 3,2 միլիարդ ու 1913 թվականին մինչև 4,5 միլիարդ։ Փարիզի 3 խոշորագույն բանկեր 1890 թվականին ունեյին 260 միլիոն ֆրանկ սեփական դրամ ու 1,245 միլիոն էլ նրանց գանձարկղում զետեղած ուրիշների մտցրած կապիտալ. 1903 թվականի մոտերքն այս թվանշաններն աճելով հասել եյին մինչև 1,258 միլյոն ֆրանկ սեփական ու 5,980 միլիոն զետեղած կապիտալի։ Ռուսական բանկերի ավանդների ընդհանուր գումարը 1897 թվականին 370 միլիոն ռուբլուց 1913 թվականին բարձրացավ մինչև 2,5 միլիարդ ռուբլի։

պատերազմի ժամանակ ծնունդ առած արդյունաբերական վիթխարի կոնցերնները (միավորումները) իրենք կարողացան բանկերին յէնթարկել իրենց՝ նրանց բաժնետոմսերը մեծացնելով։

Դժվար է գերագնահատել նշանակությունը բանկային ու արդյունաբերական կապիտալների ձուլման խրողության, վորի հետևանքով ինչպես բոլոր տեխնիքական միջոցներն, այնպես էլ դրամական կապիտալները համակենտրոնանում եյին մեկի կամ մի քանիսի ձեռքերում։ Սրանք հեշտությամբ մեջ տեղից վերացնում կամ կուլ են տալիս այն անջատ-անջատ ու պակաս նշանավոր մրցորդներին, վորոնք արդյունաբերական և բանկային խոշորագույն կոնցերններից դուրս են կանգնած։ Այսպիսով սինդիկատներն ու տրեստներն իրենց թիկունքին կանգնած բանկերի հետ միասին վերջիվերջո դառնում են շուկայի լիակատար տերերը, և այս մասին ամենից լավ վկայում է բոլոր արդյունքների գների անընդհատ վերելքը, վոր դեռևս պատերազմից առաջ անցյալ դարի վերջերից սկսած նկատվում եր սինդիկատային շարժման հետ միաժամանակ ու սրան զուգընթաց։ Ընդամին կապիտալի համակենտրոնացումը հասնում է համարյա յուր լիակատար ավարտին։ Առևտուրն ու առևտրային ձեռնարկությունները, ինչպես տեսանք, կախումն են ունենում արդյունաբերական միավորված կապիտալից, իսկ այս վերջինս բանկային կապիտալի հետ ձուլվելու միջոցով ավելի ու ավելի յե փոխակերպվում ֆինանսական կապիտալի։

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Յուր ձեռքերում բռնած ունենալով ամբողջ տնտեսական կյանքի թելերը՝ ֆինանսական կապիտալը միևնույն ժամանակ սերտ կապվում է պետության հետ՝ սրան թելադրելով յուր կամքը։ Միլլիարդանոց բյուջեների վրա հիմնվող պետական վիթխարի տնտեսություն վարելով, յուր տրամադրության տակ ունենալով լայնածավալ յերկաթուղային ցանց, արդյունաբերական ձեռնարկություններ, հաճախ նաև հանքարաններ ու ածխի հանքասրահներ, յուր տնօրենության ներքո ունենալով պետական հզոր բանկի ու բազմաթիվ խնայողական գանձարկղների միջոցները՝ պետությունն ինքը հանդես է գալիս իբրև ամենախոշոր ձեռնարկող, ուստի և խոշոր արդյունաբերությունից վոչ պակաս կապված է բանկային կապիտալի հետ։ Պետությունը վարկառըրվում է մասնավոր բանկերից, սակայն հաճախ սա ինքն էլ յուր կողմից ոգնություն է հասցնում բանկերին՝ վարկատրում է և արդյունաբերությունն ապահովում պատվերներով։ Այսպիսով պետության, պետական բանկի ու պետական արդյունաբերական ձեռնարկությունների միջև մի կողմից և տրեստների, տրեստացած բանկերի ու արդյունաբերության միջև մյուս կողմից՝ հաստատվում են սերտական կապեր և հարաբերություններ, վորոնք նման են լինում այն հարաբերություններին ու կապերին, վորոնք գոյություն ունեն բունիսկ բանկային-արդյունաբերական կոնցերնների ներսում առանձին բանկերի և ձեռնարկությունների միջև։ Պետության՝ ֆինանսական շրջանների հետ այսպես միավորվելը հաճախ ամրապնդվում է անհատական կապերով էլ։ Ինչպես վոր բանկերն իրենց ներկայացուցիչներն են ուղարկում և մտցնում արդյունաբերական ձեռնարկությունների վարչությունների մեջ, իսկ արդյունաբերական տրեստներն էլ մտցնում են բանկերի վարչությունների ու վերատեսող խորհուրդների մեջ, ճիշտ նույն կերպ էլ ֆինանսական կապիտալը հաճախ յուր մարդիկն է ունենում նաև կառավարության մեջ։ Այսպես օրինակ, Ֆրանսիայի մինիստրների Մոնեսի կաբինետի մեջ (1911 թ.) մտել եյին մետաղագործական տրես-

տի յերկու ներկայացուցիչներ, և խոշոր արդյունաբերության այս ներկայացուցիչները մեծապես նպաստում եյին այն կոնֆլիկտի սրմանը, վոր Ֆրանսիան ունեցավ Գերմանիայի հետ և վորը բռնկվեց Ֆրանսիայի՝ Մարոկկոյում հաստատվելու հետևանքով։ Ռուրի գրավումը, վորն այնքան ծանր բարդություններ մտցրեց ամբողջ յեվրոպական քաղաքականության մեջ, կատարվեց ֆրանսական լեռնագործարանատերերի (горнозаводчик) կոմիտեյի ճնշման ներքո, այն լեռնագործարանատերերի, վորոնք շահագրգռված եյին Ռուրի հանքային հարստությունները ոգտագործելում։ Այն համառությունը, վոր 1923 թվականին Լոզանի կոնֆերանսում անգլիացիք ցույց տվին Մոսուլի խնդրի ու Մոսուլի նավթի հարցի վերաբերմամբ, ճիշտ նմանապես պայմանավորված եր նրանով, վոր այն ժամանակ Անգլիայի արտաքին գործերի մինիստրության գլուխն եր կանգնած հայտնի Կրզոնը, վորը մոտիկ առնչություն ուներ նավթի տրեստի հետ։ Անգլիայի մինիստրների խորհրդի այժմյան պետը—Բոլդվինը վոչ-պակաս մոտիկ կապ ունի յերկաթագործական խոշոր խնդիրների հետ։ Հյուսիսային-Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահները ֆինանսական ամենակարող շրջանների նույնպիսի կամադրյալներն (ставленник) են։ Այսպիսով պետությունն այլասերվում է և բուրժուազիայի կառավարող որգան լինելուց դառնում է մի ինքնամփոփ ոլիգարխիա՝ ֆինանսիստների խմբի հետ կազմելով մի տեսակ միասնական տրեստ, վորը յուր ձեռքերի մեջ է պահում յերկրի տնտեսական ու քաղաքական ամբողջ կյանքի թելերը։

2. ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄԵՆԱՇՆՈՐՀԱՑՈՒՄԸ, ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Յերբ արտադրությունը համակենտրոնանում է և ամբողջ ժողովրդա-տնտեսական (народно-хозяйственный) կյանքը միավորվում է մի փոքրիկ բուռ ֆինանսիստների ու կապիտալիստների ձեռքերում, բնականաբար փոփոխվում են շուկայի պայմաններն էլ։ Յեթե արդյունաբերական կապիտալիզմի ավելի վաղորյա աստիճանների տարբերիչ գործն ազատ մրցումն եր, ապա ֆինանսական կապիտալի տիրապետության ժամանակը բնորոշվում է, ընդհակառակը, մենաշնորհատիրական ձգտումներով ու տենդենցներով։ Ամբողջ ժողովրդական տնտեսության թելերը յուր ձեռքում պահելով՝ ֆինանսիստների յուրաքանչյուր ազգային խումբ այսպիսով մենաշնորհային դիրք է գրավում ներքին շուկայում։ Սրա շնորհիվ արդյունաբերական տրեստներն ու կոնցերնները լիակատար հնարավորություն ունեն գները կանոնավորելու և վորոշելու ըստ իրենց հայեցողության՝ անկախ նրանց արժեքից ու արտադրության ծախքերի արժեքից՝ այսպիսով բացի հավելյալ արժեքից նաև գերվաստակ ստանալով։

Սակայն մրցումը, վոր վերացվում է ներքին շուկայում, յուր

գոյությունը պահպանում է միջազգային առևտրի մեջ։ Ներքին շուկայում գները բարձրացնելով՝ արդյունաբերողները միևնույն ժամանակ ձգտում են արտածումը զարգացնելու՝ իրենց արդյունքներն արտասահման դուրս բերելով ու վաճառահանելով սրանց ինքնարժեքով կամ նույնիսկ սրանից էլ ցած, «դեն նետելու» գներով (այսպես կոչված տեմպինգի սիստեմ), [1] և այսպես անում են նրա համար, վոր հատացնեն ավելորդ ապրանքները և ներքին շուկան ազատեն սրանց ճնշումից։ Սրա հետևանքով էլ ավելի սաստիկ է զարգանում և սրվում մրցումն ազգային կապիտալիստական խմբերի միջև, մի մրցում, վոր ծնունդ է թե այն կռվի, վոր մղվում է դեռ ևս չոգտագործված ներքին շուկաների համար, և թե այն ձգտման, վորի նպատակն է յուր ներքին շուկան պաշտպանել ուրիշ յերկրների «դեն նետելու» արտածումից։

Ներքին շուկայում յուր տիրապետությունն ապահովելով՝ ֆինանսական կապիտալն այսպիսով պետք է յուր այս մենաշնորհային դիրքը պաշտպանե և ապահովե մյուս պետությունների ֆինանսական խմբերի կողմից սպառնացող մրցումից։ Սրա ամենահասարակ միջոցը մաքսային բարձր դրույքներ սահմանելն է։ Ճիշտ այնպես, ինչպես ներքին առևտրի ասպարեզում, արդյունաբերության համակենտրոնացումը մրցումից հասցնում է մենաշնորհի և արտաքին առևտրային հարաբերությունների ասպարեզում պատճառ է լինում այն բանի, վոր վոչ-պակաս վորոշ շրջադարձ է կատարվում «ազատ» առևտրի սկզբունքներից դեպի ազգային ինքնամփոփությունն ու մաքսային քաղաքականությունը (ազատ առևտրի այս սկզբունքները, վորոնք քարոզվում եյին անցյալ դարի կեսերին, իրապես յերբեք չեյին կենսագործվում հետևողաբար)։ Այս քաղաքականությունը յուր նպատակներով ու նշանակությամբ արմատապես տարբերվում է մերկանտիլիզմի ու պրոտեկցիոնիզմի դարաշրջանի տնտեսական քաղաքականությունից։ Ներկայիս մաքսային քաղաքականությունը հովանավորական նպատակներ չի հետապնդում ամենևին. ընդհակառակն, այս քաղաքականությունն ավելի շուտ հակառակ հետևանքների յե հասցնում։ Ամենից առաջ ծառայելով իբրև մի միջոց, վոր ապահովում է գերվաստակ ստանալը և ներքին շուկայում տիրապետող մի բուռ մենաշնորհատերերի ազատում է դրսից սպառնացող ամեն մի մրցումից, այժմյան մաքսային քաղաքականությունն ընդսմին թոթափում է այս մենաշնորհատերերի վրայից ամեն մի հոգս տեխնիքական առաջդի-

1) Ի դեպ, արդյունաբերողները հաճախ այսպիսի «ինքնազոհության» համար վարձատրվում են՝ արտածման պրեմիաներ ստանալով պետության հաշվին։ Այսպես, մինչև 1905 թվականի Բրյուսելի՝ շաքարի կոնվենցիան յեվրոպական շատ պետությունների մեջ այսպիսի արտածման պրեմիաներ եյին գործադրվում շաքար արտածելու համար։

մության մասին, մի առաջադիմություն, որի գլխավոր շարժիչը կապիտալիստական հասարակության մեջ, ինչպես հայտնի յե, ազատ մրցումն ե հենց: Արդի պետությունների մաքսային քաղաքականությունը զարգանում ե նրանց արդյունաբերության տրեստացմանը զուգընթաց: Հ.-Ա. Միացյալ Նահանգները, վորոնք տրեստացման ճանապարհին մյուս պետություններից ավելի յեն առաջ գնացել, մյուսներից ավելի շուտ ել վոտք են դրել պրոտեկցիոնիզմի ուղին և այս կիրառում են ամենահետևողական կերպով: Ընդհակառակն, Անգլիան, վորտեղ արդյունաբերական տրեստ ու բանկային միավորությունները ավելի քիչ են զարգացել, մինչև վերջին ժամանակներս մնացել եր մի յերկիր, վորտեղ ամենից շատ գոյություն ուներ առևտրի ազատություն: Սակայն վերջին ժամանակներումս այստեղ ել, արդյունաբերա-բանկային կոնցերնների զարգանալուն զուգընթաց, սկսում են սաստկանալ պրոտեկցիոնիստական տենդենցներն ու ձգտումները:

3. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ԿՌԻՎԸ: Ազգային ֆինանսական խմբերի մաքսային քաղաքականությունն ուղղակի հակասում ե կապիտալի միջազգային բնույթին, սրա՝ անսահման ընդլայնման ձգտում են: Մենք գիտենք, վոր կապիտալիստական յերկիրները շատ վաղուց ե, ինչ վոտք են դրել կապիտալներ արտածելու և արտաքին շուկաներ նվաճելու ուղին: Յեվ այս տենդենցն այնքան ավելի յե սաստկանում, վորքան ավելի յե ընկնում վաստակի նորման տեխնիկայի զարգացման ու կապիտալի տեխնիքական կազմության բարձրանալու հետևանքով (տես վերը, գլ. XX, § 3):

Վաստակի նորմայի ցածանալու կորուստները կարող են ծածկվել, գոցվել միայն նրանով, վոր շուկան ընդլայնվի և յետևաբար սաստկանա արտահանությունը դեպի արտասահման: Կապիտալիստի ձեռքում վաստակի նորմայի ցածանալուց խուսափելու մի ուրիշ յեղանակը բուն իսկ կապիտալի արտածումն ե դեպի յետամնաց յերկիրները, վորոնց դեռ չեն կպել կապիտալիզմը և վորտեղ հում նյութի ու բանվորական աշխատանքի խիստ եժան լինելու շնորհիվ վաստակի նորման բարձր ե լինում: Այս յերկու յերևույթները, թե վաճառահանման շուկաների ընդլայնումն ու թե կապիտալի արտածումը վոչ միայն զուգահեռ են զարգանում, այլ հաճախ կապված են փոխադարձաբար, վորչափով վոր կապիտալների արտածումը նպաստում ե վաճառահանման շուկաների ընդլայնմանը: Փոխանակ հում նյութը ներմուծելու և հետո պատրաստի արդյունքն արտահանելու՝ ձեռնարկությունները հիմնվում են հենց հում նյութ ստանալու կամ յենթադրյալ վաճառահանման տեղում: Այսպիսով հում նյութն ստացվում ե տեղում, հենց այստեղ ել մշակվում և վաճառահանվում ե պատրաստի արդյունքների կերպարանքով: Ընդսմին բացի վաստակի նորմայի բարձրացումից խոշոր խնայողության են հասնում շնորհիվ այն հանգամանքի, վոր տնտեսվում են հում նյութն ու արդյունքները փոխադրելու, այլև մաքսեր վճարելու ծախքերը:

Ֆինանսական կապիտալի տիրապետության ժամանակ այս տենդենցները պետք ե յերևան գան ել ավելի նկատելի ու ել ավելի համառ յեղանակով: Բացի արտադրության վիթխարի մեծացումից՝ շուկայի անսահման ընդլայնման անհրաժեշտությունը բղխում ե ֆինանսական կապիտալի տնտեսական քաղաքականությունից ել: Բարձր գները պահպանելու նպատակով ներքին շուկայում իրենց արդյունքների վաճառահանումը կանոնավորելով ու սահմանափակելով սինդիկատներն ու տրեստները ձգնում են սրա փոխարեն իրենց վարձատրել արտածումը մեծացնելու միջոցով: Միաժամանակ, նախքան պատերազմը վերջին տասնամյակներում ե հենց, վոր մեծապես աճում ե կապիտալի արտածումը կապիտալիստական յերկիրներից: Պատերազմն ըսկսելու մոտերքն արտասահմանում զետեղված եյին մինչև 40 միլիարդ ռուբլու անգլիական կապիտալներ, 20-25 միլիարդ ֆրանսական կապիտալներ ու 15-20 միլիարդ ռուբլու գերմանական կապիտալներ, ընդամենը մինչև 80 միլիարդ ռուբլու, վորի թվում յեվրոպական յետամնաց պետություններում—Ռուսաստանում, Տաճկաստանում և այլն—20 միլիարդից վոչ ավելի, իսկ մնացածները՝ գաղութային մարզերում:

Այսպիսով յեթե ֆինանսական կապիտալի տիրապետության ժամանակ արդյունաբերական արտադրանքների ու կապիտալների արտածումն ընդլայնելու տենդենցը վոչ միայն չի թուլանում, այլ ընդհակառակը, նկատելիորեն սաստկանում ե, ապա ել ավելի սուր կերպարանքով պետք ե յերևան գա հակասությունը մի կողմից այս տենդենցի ու մյուս կողմից՝ այն տենդենցի միջև, վոր ձգտում ե մեկուսացնել ազգային շուկաները: Կապիտալիստական աշխարհը փորձում ե այս հակասությունը հաղթահարել այն յեղանակով, վոր ընդարձակում ե առանձին կապիտալիստական պետությունների տերրիտորիաները և նոր շուկաներն ու կապիտալների գործադրման նոր վայրերը մտցնում ե այս պետությունների «ազդեցության վոլորտի մեջ», իսկ վորտեղ հնարավոր ե, մտցնում ե նաև նրանց պետական ու ընդսմին մաքսային սահմանների մեջ ել:

Միևնույն ժամանակ քանի աճում և չափազանց համակենտրոնանում ե արտադրությունն, այնքան ավելի ու ավելի ե սրվում անհրաժեշտ հում նյութ ու արտադրության միջոցներ ստանալու հարցը: Տրեստացրած արդյունաբերության ղեկավարները միևնույն մենաշնորհատիրական տենդենցները տարածում են թե հում նյութի շուկաների վրա, այսինքն՝ բամբակի, ածխի, յերկաթի, նավթի արտադրության

ու արդյունահանության (добыча) վայրերի վրա և թե վաճառահանման շուկաների վրա՝ ձգտելով այս յերկու կարգի շուկաներն էլ իրենց բացառիկ տիրապետության առարկան դարձնելու։

Ֆինանսական կապիտալի, ընդսմին նաև պետական քաղաքականության նպատակ դառնում է ըստ կարելվույն ավելի լայնատարած յերկրամաս նվաճելը նրա համար, վոր այս յերկրամասը բարձր մաքսերի պատնեշով շրջապատելով՝ նրանք իշխեն այն ամբողջ տարածության վրա՝ առանց վորևե մեկին նրանից բաժին հանելու։ Այսպիսով ֆինանսական կապիտալի տիրապետությունն անմիջաբար հասցնում է նվաճումների քաղաքականությանն ու իմպերալիզմին։ Ութսունական թվականներից սկսած՝ Յեվրոպայի քաղաքականությունն ավելի ու ավելի է տոգորվում իմպերիալիստական այսպիսի ձգտումներով։ Մեկը մյուսին առաջընունկի տալով՝ յեվրոպական պետություններն իրենց ույժերն ու միջոցները ներածին չափ շտապում են գաղութներ ձեռք բերելու և նվաճելու ըստ կարելվույն ավելի ընդարձակ տարածությամբ ազատ ու տակավին չգրավված արտեվրոպական յերկիրներ։

Քսան տարվա ընթացքում Ֆրանսիան գրավից Աֆրիկայի յերրորդ մասը, Մադագասկարն էլ հետը, Տոնկինը, Սիամը, Հնդկաչինն Ասիայում։ Անգլիան նույնպես ընդարձակեց իր նախկին գաղութները՝ կցելով նոր նվաճած վայրեր Աֆրիկայում (Յեգիպտոսն ու Տրանսվաալը) և մասամբ Ասիայում (Բիրման)։ Միացյալ Նահանգները, վորոնց սեփական տերրիտորիան արդեն լայնատարած էր, այնուամենայնիվ տիրեցին Ֆիլիպպյան կղզիներին և այլ սպանական գաղութների, վորոնք գտնվում են Ամերիկայում։ Գերմանիան, վոր մյուս պետություններից ավելի ուշ էր վոտք դրել գաղութային քաղաքականության ճանապարհը, կարողացավ համեմատաբար աննշան տիրապետություններ միայն ձեռք բերել Աֆրիկայում (Կամերունը, Վոսկե Ափը և այլն) ու Նոր Գվինեայում։ Նույնիսկ յերկրորդական պետություններն էլ կենդանի մասնակցություն ունեցան գաղութային քաղաքականության մեջ։ Իտալիան նվաճեց Տրիպոլին, Պորտուգալիան նույնպես ձեռք բերեց գաղութներ Հյուսիսային Աֆրիկայում, փոքրիկ Բելգիան՝ կենտրոնական Աֆրիկայում, Կոնգոյի շրջանը, վորը նրա բուն յերկրի տարածությունից գերազանցում է ավելի քան 80 անգամ։

1900 թվականի մոտերքն աշխարհի բաժանությունը յեվրոպական պետությունների միջև ավարտված, պրծած էր։ Պոլինեզիան, վորի ամբողջ տարածության կեսից միքիչ ավելին էր նվաճված դեռ 1876 թվականին, Աֆրիկան, վորի հազիվ մեկ տասներորդ մասն էր 70-ական թվականներին պատկանում յեվրոպական պետություններին, ներկայումս բաժին-բաժին են արված առանց մնացորդի։ Ասիան, բացի Չինաստանից, Յապոնիայից, Պարսկաստանից, ռուսական ու տաճկական

տիրապետություններից, նույնիսկ բաժանված է նվաճողների միջև։ Յերբ բոլոր գաղութային հողերը նվաճվեցին ու բաշխվեցին, այն ժամանակ նրանց հանդեպ ծառացավ յետամնաց յերկիրները տնտեսապես շահագործելու և ամենից առաջ Չինաստանում, Պարսկաստանում։ Տաճկաստանում ազդեցության շրջանները բաժանելու և Բալկանյան թերակղզում իշխելու խնդիրը։

4. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ԱՃՈՒՄԸ։—ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։ Վորքան ավելի քիչ են ազատ հողեր մնում, համաշխարհային շուկայում, այնքան ավելի նեղ է թվում յեվրոպական պետությունների ֆինանսական կապիտալի տեղը և առանձին պետությունների միջև այնքան ավելի հաճախ ընդհարումներ պիտի ծագեն գաղութային գրավումներ անելու խնդրի շուրջը։ Բոլոր յեվրոպական պետությունների շահերն իրար են բաղխվում Չինաստանում, Անգլիայի ու Ռուսաստանի շահերը՝ Պարսկաստանում, Անգլիայինն ու Գերմանիայինը՝ Տաճկաստանում, Ֆրանսիայինն ու Գերմանիայինը՝ Հյուսիսային Աֆրիկայում (Մարոկկոյում)։ Բաղխումների այս մշտական վտանգը, բնականաբար, առանձին պետությունների մեջ առաջ է բերում ուրիշներից հզոր լինելու ձգտում։ Սրանից ծագում է սպառազինման վիթխարի աճումը, վոր նկատելի յեր նույնպես անցյալ դարի վերջին տասնամյակներից սկսած։ Միլիտարիզմն անքակտելի կապված է իմպերիալիզմի հետ այնպես, ինչպես այս վերջինս կապ ունի առանձին յերկիրների ֆինանսական կապիտալի այն ձգտման հետ, վորի նպատակն է համաշխարհային շուկայում մենաշնորհյալ տիրապետությունը։

Իմպերիալիստական միլիտարիստական հակումները, բնականաբար, ամենից ավելի ուժգին պետք է արտահայտվեյին այն յերկրի քաղաքականության մեջ, վորը գաղութային տիրապետությունների տեսակետից զուրկ ու դատարկաձեռն էր մնացել։ Իսկ այսպիսի վիճակի մեջ, ինչպես գիտենք, Գերմանիան էր ընկել։ Ունենալով մեծապես զարգացած ու արագ առաջադիմող արդյունաբերություն, սինդիկատային շարժման ույժի ու ֆինանսական կապիտալի տիրապետության աստիճանի կողմից համարյա յետ չմնալով Միացյալ Նահանգներից՝ Գերմանիան միևնույն ժամանակ մնում էր համարյա առանց գաղութներ ունենալու։ Մինչդեռ Անգլիայի գաղութային տիրապետությունները պատերազմից առաջ հասնում եյին 30 միլլիոն քառակուսի կիլոմետրի, Ֆրանսիայինը՝ 10 միլլիոն, Գերմանիայի գաղութները հազիվ 2,7 միլլիոն քառակուսի կիլոմետր եյին կազմում, վոր անում է միքիչ ավելի, քան փոքրիկ Բելգիայի (2,4 միլլիոն) ու Պորտուգալիայի գաղութներն են (2,1 միլլիոն)։ Այսպիսի պայմաններում Գերմանիային մնում էր մի ճանապարհ—յեվրոպական մյուս պետությունների գա-

ղութային տիրապետությունները բռնի հափշտակել ու վերաբաժանել։ Ուստի և զարմանալի չէ, որ հենց Գերմանիայում է բացառիկ լայնածավալ զարգացում ունեցել միլիտարիզմը և որ վերջին յերեսնամյակի ընթացքում հենց գերմանական քաղաքականությունն է Յեվրոպայի խաղաղությանն սպառնալիք հանդիսացել, մի սպառնալիք, որ պայթեց վերջապես համեվրոպական պատերազմի կերպարանքով։

Դեռևս 1907 թվականին, յերբ Գերմանիան փորձեց Ֆրանսիային պատկանող Մարոկկոյում հաստատվել, քիչ մնաց, որ համաշխարհային պատերազմ բռնկեր։ Բաղդադի յերկաթուղին կառուցելու ծրագիրը, այն յերկաթուղու, որ բաց եր անում Գերմանիայի առջև տաճկական շուկաները և նրան անմիջապես հանում Պարսից ծովի ափերը, դեմ առավ Անգլիայի դիմադրությանը։ Ռուսական շուկաներն իրեն յենթարկելու, այլև Ռուսաստանի վզին սրա համար աննպաստ առևտրային դաշինք փաթաթելու փորձը սրեց նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ։ Այս կերպ հող եր նախապատրաստվում համեվրոպական պատերազմի ծագման համար, մինչև որ վերջապես Ավստրիան, Գերմանիայի դրդմամբ, միջամտեց բալկանյան գործերին, և ինքը Գերմանիան էլ հարձակվեց Բելգիայի վրա՝ յետին նպատակ ունենալով տիրելու սրա ընդարձակ գաղութներին, իսկ այս ազդանշան յեղավ համաշխարհային պատերազմն սկսելու։ Պատերազմը միանգամից ընդգրկեց ամբողջ Յեվրոպան, վորովհետև նրա այս կամ այն կերպ վախճան ստանալուց եր կախված համաշխարհային շուկաները վերջնականապես բաժանելու խնդիրը, մի խնդիր, վորի լուծումով հավասարապես շահագրգռված եր բոլոր յեվրոպական պետությունների ֆինանսական կապիտալը։

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ.

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ։ Յերբ ազատ մրցումը վերացվեց և մենաշնորհատիրական տենդենցները զարգացան, այն հակասությունները, վորոնք հատուկ են կապիտալիստական տնտեսակարգին (տես վերը, գլ. XXI), վոչ միայն չմեղմացան, այլ ընդհակառակը, կապիտալիզմի գոյության ամբողջ շրջանում նրանք յերբեք այնպես սուր ու միևնույն ժամանակ այնպես անսքող հանդես չեյին յեկել, ինչպես հենց ֆինանսական կապիտալի տիրապետության ու իմպերիալիզմի արդի դարաշրջանում։ Վորքան ավելի յե ամբողջ արտադրությունը համակենտրոնանում սակավաթիվ ֆինանսական խմբերի ձեռքում, վորքան ավելի յե արդյունաբերական կապիտալը սերտաճում (сращивается) *բանկային կապիտալի հետ, այնքան ավելի յե վերջինս հեռանում, կտրվում արդյունաբերության անմիջական ղեկավարությունից, այնքան ավելի վորոշակի յե հանդես գալիս նրա մակաբուծային բնույթը։ Գործունեյությունն արդի արդյունաբերական ու ֆինանսական արքաների, վորոնք իրենց բռի մեջ են պահում ամբողջ արդյունաբերությունը, բացառապես այն է, վոր սրանք ակցիոներական կապիտալներն օգտագործում են չարաշահորեն և զուտ ֆինանսական գործարքներ ու գործառնություններ են կատարում։ Արդի հսկա միավորությունների անմիջական նպատակը վոչ այնքան արտադրության կանոնավորումն է, վորքան գների կանոնավորումն այն նպատակով, վոր այս գները բարձր մակարդակի վրա պահեն և գերվաստակ ստանան։ Ձեռնարկուների մասնավոր շահերը, վորոնց արդեն չի զսպում մրցման չափավորող ազդեցությունը, հանդես են գալիս միանգամայն անսքող՝ բացահայտ կերպով բաղխվելով հանրային արտադրության շահերին ու առաջադրություններին։ Մենաշնորհի տիրապետությունն արդի կապիտալիզմին վոչ միայն մակաբուծային, այլ և վորոշ չափով լճացած բնույթ է տալիս։*

Ինչպես գիտենք, կապիտալիստական արտադրության զարգացման գլխավոր դրդապատճառներից մեկը հենց մրցումն է։ Այժմ, յերբ մենաշնորհ է հաստատվում, այս դրդապատճառը դադարում է ներգոր-

ծելուց: Արդյունաբերողներն ավելի ու ավելի յեն հակված տեխնիքա-
կան կատարելագործությունների մեջ վաստակի նորմայի ցածացում մի-
այն նկատելու: Սրա հետևանքով մի կողմից, ինչպես տեսանք, սաստ-
կանում ե կապիտալների արտածումը դեպի այն յերկիրները, վորտեղ
տեխնիկայի մակարդակը ցած ե, իսկ մյուս կողմից ել զարգա-
ցած կապիտալիզմ ունեցող յերկիրներում կանգ ե առնում տեխնիքա-
կան առաջադիմությունը: Հայտնի յեն այնպիսի դեպքեր, յերբ կար-
տելները նոր գյուտերը գտել են բացառապես այն նպատակով, վոր
այս գյուտերը գրվանի տակ դրած պահեն և այս գյուտերի՝ մյուս ար-
դյունաբերողների կողմից լինելիք կիրառումը կանխեն: Արդյունաբե-
րողները գերադասում են իրենց վաստակները մեծացնել վոչ այնքան
արտադրությունն ընդլայնելու միջոցով, վորքան ամենից առաջ գնե-
րը բարձրացնելու միջոցով: Մենք գիտենք արդեն, վոր գները բարձր
մակարդակի վրա պահելու նպատակով արդյունաբերողները կանգ չեն
առնում դեմպինգի սիստեմի առաջ, այն ե՝ դեն նետելու գներով կա-
տարվող արտածման առաջ:

Չնայած արդի կապիտալիզմի մենաշնորհատիրական տենդենց-
ներին, չի վերացվում կապիտալիստական տնտեսակարգի մյուս հակա-
սությունն ել, այն հակասությունը, վոր կա արտադրության անսահ-
ման ընդլայնման տենդենցի ու շուկայի հարաբերական նեղության
միջև: Արդյունաբերական ճգնաժամերը վոչ մի տեղ այնպիսի վիթխա-
րի չափերի չեն հասնում, ինչպես հենց Հյուսիսային Ամերիկայում,
տրեստացված ու սինդիկատացված արդյունաբերության դասական հայ-
րենիքում (տես գլ. 21-րդ, § 3): 1907 թվականի ճգնաժամի միջոցին
ածխի արդյունահանությունն (добыча) այստեղ ընկավ 15 տոկոսով,
իսկ չուգունի հալումը՝ 40 տոկոսով: Ամերիկայի արդյունաբերությու-
նը փոքր տատանումներ չունեցավ յետպատերազմյան տարիներում
ել: Ֆինանսական խմբերի տիրապետությունը վոչ միայն չմեղմացրեց
այն հակասությունները, վորոնք գերարտադրության պատճառն եյին,
այլ, ընդհակառակը, գերվաստակ կորզելու նպատակով մենաշնորհատի-
րական գներ սահմանելով՝ արդյունաբերող կապիտալիստները հենց
սրանով ել իրենց արդյունքներն ավելի քիչ մատչելի յեյին դարձնում
սպառողների լայն մասսաների համար, ել ավելի յեյին սեղմում, նեղ
դարձնում շուկան և դժվարացնում արդյունքների վաճառահանու-
թյունը: Արդյունաբերական արտադրանքների գների՝ մենաշնորհատի-
րաբար բարձրացնելու հետևանքներից մեկն ել այն ե մանավորապես,
վոր հիշյալների գները սաստիկ տարբերվում են գյուղատնտեսական
արդյունքների գներից, և ընդամին գյուղական բնակչության մասսան
հարաբերաբար աղքատանում ե և այլևս հնարավորություն չի ունե-
նում իրեն անհրաժեշտ արդյունաբերական արտադրանքները ձեռք բե-

րելու: Այս յերեվույթը միակերպ նկատվում եր թե Յեվրոպայում ու
Հ.-Ա. Միացյալ Նահանգներում: Սրա հետևանքն այստեղ լինում եր
ֆերմերների մասսայական տնավերությունն ու սրանց ձեռքով իրենց
տնտեսական լուծարքը, մի երողություն, վոր առաջ համարյա անծա-
նոթ եր այստեղ:

Համաշխարհային պատերազմը յերեան հանեց և սրեց կապիտալիս-
տական տնտեսակարգի բոլոր հակասությունները՝ վերջիններս լարման
ծայրահեղ աստիճանին հասցնելով: Ինչպես պատերազմի ժամանակ,
այնպես և յետպատերազմյան ճգնաժամի ծանր պայմաններում լայն
մասսաների հարաճուն տնավերությանը զուգընթաց՝ տեղի յեր ունե-
նում արդյունաբերողների արագ հարստացում, վորի պատճառը ռազ-
մական կապիտալներն եյին և արժեզրկված արժույթի (валюта) չա-
րաշահությունը: Ընդամին կատարվում եր ֆինանսական-արդյունաբե-
րական միավորների հետագա աճումը, վոր ընդգրկեց վոչ միայն Գեր-
մանիան, այլև Մեծ Բրիտանիան, մի յերկիր, վորտեղ պատերազմից
առաջ սինդիկատային շարժումը հարաբերաբար թույլ եր զարգացած:
Այս յերևույթների հետևանքով յեվրոպական յերկրների սպառողա-
կան շուկան սաստիկ նեղացավ, և վաճառականության ճգնաժամը
այստեղ յերկարատև յերևույթի բնույթ ստացավ՝ մանավանդ պատե-
րազմից հետո յեղած առաջին տարիներում:

2. ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԱՃՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: Յերբ ներքին շուկաներում մենաշնորհ ե հաս-
տատվում, մրցումն ել ավելի սուր ձևեր ե ընդունում միջազգային հա-
րաբերությունների միջոցին: Այստեղ, ինչպես տեսել ենք, մրցումն
ստանում ե վաճառահանության ու հում նյութի շուկաների համար
մղվող միջազգային կռվի նշանակություն, մի կռիվ, վորի յելքը վորոշ-
վում ե արդեն վոչ թե տնտեսական միջոցներով, այլ զենքի ույժով: Սա-
կայն զենքի ույժը նույնպես, ինչպես և ազատ մրցումն, ընդունակ չե
լուծելու այն հակասությունները, վորոնց պատճառը կապիտալիստական
տնտեսակարգի հիմքերն են: Ընդհակառակը, վերջին պատերազմն ել
ավելի յե արել ազգային ֆինանսական խմբերի փոխադարձ մրցումը:
Գերմանիայի պարտությունից ու համաշխարհային պայքարի հրապա-
րակից վտարվելուց հետո ել ավելի մեծ սաստկությամբ ե հանդես յե-
կել մրցությունը հաղթող յերկիրների միջև ու ամենից առաջ Ֆրան-
սիայի ու Անգլիայի միջև: Միջին Յեվրոպայի բաժան-բաժան լինելն
ու մի շարք պետությունների կազմվելն ել ավելի յե զարգացել ազ-
գային ինքնամփոփությունն ու մեկուսացումը: Պատերազմի հետևան-
քով նոր ծնունդ առած մանր պետություններն իմպերիալիստական
խոշոր պետությունների նման նույնպես շտապում են արտաքին աշ-
խարհից բաժանվել, կտրվել մաքսային պատնեշով: Միևնույն ժամա-

նաև համաշխարհային Բրիտանական կայսրությունն էլ տրոհումն է ապրում: Անգլիական գաղութները տնտեսական անկախության հավակնություններ են ցուցահանում և յեթե սրանք դեռ համաձայնում են էլ, վոր անգլիական ապրանքների մաքսերը ցածր լինեն, ապա ակներև է, վոր այդ անում են՝ հանդուրժելով միայն մինչև այնքան ժամանակ, քանի իրենց սեփական արդյունաբերությունն ու իրենց սեփական կապիտալիզմն այնքան չեն զարգացել, վոր նրանք առանց անգլիական ներմուծման յոլա գնան: Պատերազմի հետևանքով արտասովոր չափով աճել է Հ.-Ա. Միացյալ Նահանգների նշանակությունը: Հ.-Ա. Միացյալ Նահանգները Յեվրոպայի պարտապանը լինելուց դադարել և դարձել են նրա վարկատուն, վորը յուր պայմաններն է թելադրում նրան. կարճ ժամանակում Միացյալ Նահանգները կարողացան տիրապետող դիրք նվաճել միջազգային շուկայում և Յեվրոպական պետությունների հետքից գնալով վոտք դրին հետևողական իմպերիալիստական քաղաքականության ուղին:

Այսպիսով ազգային կապիտալիստական մրցող խմբերի թիվը վոչ միայն չի կրճատվել, այլ աճել է: Ընդսմին սպառազինումների շարունակական աճումն ու ռազմական տեխնիկայի զարհուրելի զարգացումը մատնանշում են այն, վոր այսուհետև էլ, խաղաղության մասին յեղող բոլոր զրույցների ու Ազգերի Լիգայի գոյության իրողության հակառակ, միջազգային մրցման հարցերը լուծվելու յեն միևնույն միջոցների ոգնությամբ:

Համաշխարհային տնտեսական կապերի ամրապնդման փոխարեն այս կապերի թուլացումն է նկատվում, առանձին յերկիրների միանալու և միաձույլ համաշխարհային տնտեսություն կազմելու փոխարեն միջազգային ընդհարումների հարաճուն սրումն ենք տեսնում:

3. ԿՈՄՄՈՒՆԻԶՄ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՎԱՐՏՈՒՄՆ: Կապիտալիստական մեքենան դադարում է գործելուց: Կապիտալիզմի պահպանման դեպքում տնտեսական հետագա զարգացումն ավելի ու ավելի յե դժվարությունների հանդիպում և ավելի ու ավելի քիչ է հնարավոր դառնում: Յեթե ներքին շուկայում մենաշնորհատիրական տենդենցների տիրապետությունը տանում հասցնում է տնտեսական առաջադիմության խափանմանն ու վաճառահանության լճացած ճգնաժամին, յեթե կապիտալիստների դասակարգը, վոր մի ժամանակ առաջադեմ դասակարգ է յեղել, ավելի ու ավելի փոխվելով, այլասերվում և դառնում է մի բուռ մակաբույծ կապիտալիստների խմբակ, յեթե ազգային-կապիտալիստական խմբերի՝ համաշխարհային շուկայում մղած մրցումը նպաստում է ամենից առաջ ռազմական տեխնիկայի զարգացման, յեթե միևնույն ժամանակ այս խմբերի շահերն արգելք են լինում համաշխարհային տնտեսության

զարգացման ճանապարհին և համաշխարհային տնտեսական կապերի քայքայմանն են տանում հասցնում, ապա պարզ է, վոր կապիտալիզմն արդեն խաղացել պրծել է յուր դերը և վոր այժմ արդեն խոսք պետք է լինի վոչ թե կապիտալիզմի հակասությունների մասին, վորոնք տնտեսական զարգացման ու առաջադիմության պրոցեսը դարձնում են հիվանդագին, այլ զարգացման կանգ առնելու և քայքայման սկսվելու մասին: Արտադրության կապիտալիստական ձևերն առաջադիմական լինելուց դադարում և դառնում են լճացման պատճառ, հետագա զարգացումը խանգարող կապանքներ: Ինչպես վոր հարյուր տարի առաջ ֆեոդալական զանազան կանոնադրումներն (установление) ու համքարային սահմանափակումներն արգելք եյին լինում կապիտալիզմի զարգացմանն, այնպես էլ այժմ ինքը կապիտալիզմն է խոչընդոտ լինում արտադրող ուժերի ու հասարակական-տնտեսական առաջադիմության հետագա զարգացման ճանապարհին: Վոչ միայն սոցիալիստական ուսմունքների պահանջներն ու բանվոր դասակարգի շահերն, այլև տնտեսական զարգացման անխուսափելի ընթացքն է թելադրում, վոր կապիտալիստական հարաբերությունները վերացվեն և արտադրության միջոցներն ու աշխատանքի արդյունքները հանրացման կամ սոցիալիզացիայի յենթարկվեն: Կոմմունիստական հասարակարգը նույնպես անհրաժեշտությամբ պետք է գա կապիտալիզմին հերթափոխելու (на смену), ինչպես իր ժամանակին ինքը կապիտալիզմը փոխարինեց ֆեոդալական կարգերին ու մանր արհեստային արտադրությանը:

Սոցիալիստական շրջաններում իշխող այն համոզմունքը, թե սոցիալիստական հասարակարգի գալուստն անխուսափելի յե, կապիտալիստական զարգացման հիմնական պայմաններն ու տենդենցներն ուսումնասիրելու վրա յե հիմնված: Հենց այս համոզումն է կազմում Մարքսի անվան հետ կապված արդի գիտական սոցիալիզմի գլխավոր տարբերությունն անցյալ դարի առաջին կեսի սոցիալիստական ուսմունքներից, վորոնք կարծում եյին, թե սոցիալիզմը մտավոր առաջադիմության արգասիք պիտի լինի և վոչ թե պատմական զարգացման անխուսափելի հետևանք[1]:

---

1) Անցյալ դարի առաջին կեսում, յերբ կապիտալիզմի բացասական կողմերն արդեն բավականաչափ պարզ պատկերանում եյին, բայց կապիտալիստական զարգացման տենդենցները դեռ յերևան չեյին յեկել, սրանց վերջնական հետևանքները նախատեսել չեր կարելի: Միևնույն ժամանակ պրոլետարիատն էլ դեռ չեր մտել կապիտալիզմի դեմ մղվող կազմակերպված կռվի փուլի մեջ: Ահա թե ինչն եր պատճառը, վոր այն ժամանակվա սոցիալիստները (Ֆուրիեն, Կաբեն, Լ. Բլանը, Ռ. Ոուենն ու այլ այսպես կոչված ուտոպիստ սոցիալիստներն) արդեն գիտակցում եյին, վոր կապիտալիստական հասարակարգին անհրաժեշտորեն պետք է սոցիալիստականը փոխարինե, բայց չեյին կարող նախատեսել վոչ սոցիալիզմի գալստյան պատմական անհրաժեշտությունն ու վոչ էլ այն դերը, վոր պրոլետարիատին վիճակված է խաղալ այս

Պատմական նույն անհրաժեշտությամբ, վորով կապիտալիզմն ընթանում է դեպի յուր կործանումը տանող ճանապարհով, աճում է նաև այն ույժը, վորը պետք է տապալե նրա տիրապետությունը։ Կապիտալիզմն ինքը հանձին պրոլետարիատի, ստեղծում է այն դասակարգը, վորը պետք է նրա կործանման գենքը դառնա. կապիտալիզմն ինքն է յուր համար սեփական «գերեզմանափորներ» պատրաստում։ Կապիտալիստական հանրակարգի տնտեսական հակասությունների զարգացման հետ միաժամանակ ու սրան զուգահեռ սրվում են հիշյալ հասարակարգի մեջ պարունակվող սոցիալական հակասությունները ու պրոլետարիատի՝ այս հակասություններից բղխող դասակարգային կռիվն էլ՝ այսպիսով մոտեցնելով կապիտալիզմի կործանման իրական րոպեն։

խնդրում։ Նրանք կարծում եյին, վոր սոցիալիզմը մի գաղափար է, մի իդեալ, վոր վերջիվերջո պետք է ընդունեն, դավանեն բոլորը, ուստի և մտածում եյին սոցիալիզմը կյանքում իրականացնել կամ բուն իսկ կապիտալիստական հասարակության ներկայացուցիչներին դիմելով ու համոզելով և կամ որինակելի սոցիալիստական համայնքներ կազմակերպելով (ինչպիսիք եյին. Ֆուրիեյի Ֆալանստերները, Օուենի՝ Հյուսիսային Ամերիկայում հիմնած Ներդաշնակության համայնքը և այլն)։

ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՎԵԼԸ.

*Յերբ արդյունաբերական կապիտալիզմը զարգանում է, սրա ազդեցությունը տարածվում է տնտեսական կյանքի բոլոր կողմերի ու ասպարեզների վրա, այն ժամանակ հասարակության դասակարգային կազմը չափազանց պարզ կերպարանք է ընդունում։ «Հասարակությունն ավելի ու ավելի յե բաժանվում յերկու ընդարձակ թշնամական բանակների, յերկու թշնամի դասակարգերի—բուրժուազիայի ու պրոլետարիատի»։ Կապիտալիստական հարաբերությունների այս բնութագիրը, վոր արված է «Կոմմունիստական Մանիֆեստում» 75 տարի առաջ, ուրեմն՝ կապիտալիստական դարաշրջանի սկզբին, էլ ավելի արդարացի յե ներկա ժամանակի վերաբերմամբ, յերբ մի կողմից՝ բնակչության մասսայի բանվորացումը (*пролетаризация*) հսկայական քայլերով առաջադիմել է և յերբ մյուս կողմից՝ կապիտալի ամբողջ հարստությունը կենտրոնանում է մի խումբ մարդկանց ձեռքում, վորոնց թիվն որըստորե փոքրանում է։ Վոչ միայն արդյունաբերության մեջ պարապմունք ունեցող բանվորները, այլև այսպես կոչված ինտելլիգենտային զբաղմունքի (պրոֆեսսիա) ներկայացուցիչները՝ ճարտարապետները, գիտնականները, գրականագետները, բժիշկները հարկադրված են իրենց աշխատանքը վաճառելու, և այսպիսով ընկնում են կապիտալից կախումն ունեցող վիճակի մեջ։*

Չնայած վարձու բանվորի թվացող ազատությանը՝ յերբեք ուրիշ աշխատանքի շահագործումն այնպես քողարկված հանդես չի յեկել, ինչպես ժամանակակից կապիտալիստական դարաշրջանում, և յերբեք շահագործող ու շահագործվող դասակարգերի շահերի հակադրությունն այնպես վորոշ ու սուր չի արտահայտվել։

Այս բանն ամենից առաջ ծագում է այն յերևույթի հետևանքով, վոր ժամանակակից ձեռնարկուն ամենևին շահագրգռված չէ վոչ բանվորի բարեկեցությամբ, վոչ էլ մինչև իսկ նրա կյանքով անգամ, ինչպես շահագրգռված էր նախկին ժամանակների ստրկատերն ու կալվածատեր-ճորտատերը նրանով, վոր նրանց պատկանող ստրուկների ու ճորտերի կյանքը պահպանվի, և սրանք միջին տանելի վիճակ ունե-

նան: Ջեռնարկուն իր բանվորների հետ վոչ մի մշտական հարաբերությամբ չի կապված: Նա սրանց նույնիսկ չի յել ճանաչում. նրա մոտ այսոր մեկն ե աշխատում, վաղը կաշխատեն ուրիշները: Յեթե բանվորն ու սրանց ընտանիքները կարիքի մեջ են ու սովամահ են լինում, յեթե զբաղմունքի անառողջ պայմանների շնորհիվ և ույժից վեր աշխատանքի ազդեցությամբ նրանք կորցնում են իրենց առողջությունն ու աշխատունակությունը, յեթե, վերջապես, նրանք վաղահաս մահով վոչնչանում են, այս բոլորն ամենևին չի վերաբերում ձեռնարկուին: Պակասածների, շարքից դուրս ընկածների տեղը նա միշտ կըգտնի ուրիշներին, վորոնք աշխատանք են վորոնում. նրա սպասին կանգնած ե անգործների արդյունաբերական պահեստազորը: Այս պահեստազորի ներկայությունը ձեռնարկուին վոչ միայն ցանկացած բոպեյին ապահովում ե անհրաժեշտ բանվորական ույժերով, այլ շնորհիվ այն հանգամանքի, վոր գործազուրկները մրցում են իրար հետ, նրան հնարավորություն ե տալիս իր պայմանները թելադրելու բանվորներին:

Բանվորների նկատմամբ ունեցած հարաբերությունների ժամանակ կապիտալիստը միայն նրանով ե շահագրգռված, վոր հարկադրի նրանց աշխատելու, վորքան կարելի յե, յերկար ու ըստ կարելվույն ցածր վարձով: Բանվորների շահերն, ընդհակառակը, պահանջում են ամենից առաջ, վոր ունենան բարոր կյանք, կարճ բանվորական որ ու բարձր աշխատավարձ: Շահերի հենց այսպիսի հակադրությամբ ե պայմանավորված ձեռնարկուների ու բանվորների միջև մղվող կատաղի դասակարգային կռիվը, մի կռիվ, վոր առաջ ե գալիս բանվոր դասակարգի համարյա ծագումն առնելու բոպեյից:

Շահերի այսպիսի հակադրության միջոցին, վոր գոյություն ունի ձեռնարկուների ու բանվորների միջև, ամեն մի փոքրագույն զիջում, բանվոր դասակարգի վիճակի յուրաքանչյուր ամենափոքրիկ բարելավումն կարող ե դուրս կորզվել միայն ույժով, պետք ե ձեռք բերվի, նվաճի բուն իսկ բանվորների ճիգերով: Սակայն ամենազոր կապիտալի դեմ մղված այս կռվում առանձին բանվորն անզոր ե բոլորովին: Բանվորի ամեն մի բողոքի հետևանքը միայն այն կըլիներ, վոր նրան գործից կըհանեյին ու դատումից (заработок) կըզրկեյին: Միայն միացյալ ու միատեղ ջանքերով կարող են բանվորները հաղթահարել ինչպես առանձին ձեռնարկուների, այնպես և կապիտալիստների ամբողջ դասակարգի դիմադրությունը և հարկադրել նրանց, վոր զիջումներ անեն:

Ինքը՝ կապիտալիստական արտադրության յեղանակը, վորի ժամանակ յուրաքանչյուր առանձին ձեռնարկության մեջ կենտրոնացած են հարյուրավոր ու նույնիսկ հազարավոր բանվորներ, նպաստում ե այն բանին, վոր բանվորները միանան ու միասին կռվեն աշխատան-

քի ավելի լավ պայմանների համար: Սակայն ըստ ձեռնարկությունների միանալը, այն ե՝ առանձին ձեռնարկություններում զատ-զատ միանալը բավական չե, վորովհետև ձեռնարկություններն իրենց հերթին ասպարեզ են գալիս բանվորների դեմ իրար հետ համերաշխ: Նրանք մտցնում են հատուկ սև ցուցակներ, ընդվորում այն բանվորները, վորոնց անունն անց են կացրել այն ցուցակների մեջ, այլևս վոչ մի տեղ չեն կարող աշխատանք գտնել[1]): Գործատերերի միասին գործելու մի այլ յեղանակը լոկաուտն ե, յերբ տերերը դադարեցնում են աշխատանքն ու բանվորների հաշիվը մաքրում, իսկ բանվորներն այսպիսով սովի միջոցով հարկադրվում են ձեռնարկուների կամքին յենթարկվելու: Սովորաբար լոկաուտի դիմում են վորոշ վայրի ու աշխատանքի վորոշ ճյուղի ձեռնարկությունների տերերը փոխադարձ համաձայնությամբ, սակայն այն կարող ե ավելի լայնածավալ չափեր էլ ընդունել: Բանվորների դեմ կիրարկած համերաշխ գործողությունների առանձին դեպքերով չբավականանալով՝ ձեռնարկուներն իրանց միջև ավելի յերկարատև միություններ ու միավորություններ էլ են կազմում՝ բանվորների դեմ կռվելու միևնույն նպատակները հետապնդելով:

Գործատուների (работодатель) միությունները ծագում են Անգլիայում դեռ անցյալ դարի 70-ական թվականներից, բայց այսպիսի միություններն առանձնապես արագ սկսում են աճել անցյալ դարի վերջից ու ներկա դարի սկզբից, յերբ բանվորական շարժումը լայն չափերով զարգացավ: Ռուսաստանում նման միություններ յերևան են գալիս 1905 թվականի հեղափոխությունից հետո: Վերջապես հզորագույն սինդիկատներն էլ, վորոնք արդյունաբերության ամբողջ ճյուղեր են միացնում իրենց ձեռքում, ճիշտ նույն կերպ հրապարակ են յելնում ինչպես բանվորների, այնպես և սպառողների դեմ:

Բանվորի միավորությունն ասպարեզ ե կոչում ձեռնարկուների միատեղ գործողություններ, ձեռնարկուների միատեղ գործողությունններն էլ իրենց հերթին զարկ են տալիս այն բանին, վոր բանվորների մեջ ուժեղանա միանալու հակումը: Վորքան ավելի յե աճում կապիտալի հզորությունն ու միացյալ ույժն, այնքան ավելի անհրաժեշտ ե դառնում բանվորների մասսայական միավորությունն էլ: Կապիտալի համակենտրոնացած միացյալ ույժին դիմադըրել կարող ե բանվոր դասակարգի նույնպես համակենտրոնացած միացյալ ույժը: Եվ արդեն առանձին ձեռնարկությունների բանվորները

1) Դեռևս համեմատաբար մոտ ժամանակներում լայն չափերով տարածված եյին հատուկ բանվորական գրքույկները: Յուրաքանչյուր բանվոր պարտական եր իր առանձին բանվորական գրքույկն ունենալու, վորի մեջ գրում եյին նրա վարքին վերաբերող բոլոր տվյալները և վորի նկատների (пометка) համաձայն էլ բանվորը գործ եր գտնում կամ թե մերժում եր ստանում:

չեն կռվում իրենց գործատերերի դեմ, այլ դասակարգն է ասպարեզ յելնում դասակարգի դեմ։ Այսպիսով պրոլետարիատի միավորությունն ու համակենտրոնացումը տեղի յե ունենում արտադրության համակենտրոնացման ու միավորության հետ միաժամանակ։

Նայելով այն հնարներին (прием), վորոնց դիմում է բանվոր դասակարգը ձեռնարկուների դասակարգի դեմ հանդես դուրս գալու ժամանակ, այլև նկատի ունենալով այն նպատակները, վոր պրոլետարիատը դնում է իր առջև, դասակարգային կռվի յերկու գլխավոր տեսակ են տարբերում՝ տնտեսական կռիվ ու քաղաքական կռիվ։ Վորչափ վոր բանվորները հանդես են գալիս աշխատանքի պայմանները բարելավելու, օրինակ, բանվորական օրը կարճացնելու կամ աշխատավարձը բարձրացնելու պահանջներով, այսինքն զուտ տնտեսական պահանջներով, նրանց կռիվը տնտեսական կռիվ է։ Իսկ վորչափ վոր նրանք ձգտում են այս բարելավումներն օրենսդրական ճանապարհով անցկացնելու՝ գործելով պարլամենտի միջոցով կամ այլ յեղանակով աշխատելով ազդելու կառավարության վրա և կամ վորչափ վոր նրանք ամբողջ կապիտալիստական հասարակարգը սոցիալիստական սկզբունքների վրա հիմնված նոր հասարակարգով փոխարինելու նպատակ են հետապնդում, այն չափով էլ նրանց կռիվը քաղաքական բնույթ ու նշանակություն է ստանում։ Բանվորների՝ անմիջորեն ձեռնարկուների դեմ մղած տնտեսական կռիվը ղեկավարում են արհեստակցական միությունները, այսինքն՝ այն միությունները, վորոնք շաղկապում են առանձին մասնագիտությունների, առանձին պրոֆեսիաների բանվորներին. քաղաքական կռվում ղեկավար դերը կատարում է կուսակցությունը, վոր հանդես է գալիս ամբողջ բանվոր դասակարգի անունից։ Իսկ քանի վոր «ամեն մի դասակարգային կռիվ քաղաքական կռիվ է», ապա բանվոր դասակարգի քաղաքական կռվի ղեկավարությունն ու այս կռվի բոլոր ձևերի միացումը պետք է պատկանե պրոլետարիատի կուսակցությանը։

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՌԻՎԸ.

1. *ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*։ Տնտեսական կռիվն, իբրև մի կռիվ, վոր անմիջապես շոշափում է բանվորների նյութական շահերը, շատ ավելի շուտ է ծագում առնում, քան քաղաքական կռիվը, վոր բանվոր դասակարգի զարգացման ավելի բարձր մակարդակ է պահանջում։ Անգլիան, այն յերկիրը, վորտեղ ծնունդ է առել արդյունաբերական կապիտալիզմը, միևնույն ժամանակ արհեստակցական շարժման ու արհեստակցական միությունների հայրենիքն էլ է։ Առաջին արհեստակցական միությունները հանդես են գալիս Անգլիայում դեռ ևս 18-րդ դարի սկզբում, իսկ յեվրոպական ցամաքի վրա՝ 19-րդ դարում, յերբ այնտեղ մուտք է գործում արդյունաբերական կապիտալիզմը, Ֆրանսիայում 40-ական, Գերմանիայում՝ միայն 60-ական թվականներից։

Յերկար ժամանակ արհեստակցական միությունների տարածմանն արգելք եր լինում վոչ միայն այն հանգամանքը, վոր բանվորության միջև հանրային շահերի գիտակցությունը թույլ եր զարգացած, այլև հալածանքները պետական իշխանության, վոր բռնում եր ձեռնարկությունների շահերը պաշտպանելու կողմը։ Անգլիայում 18-րդ դարի ընթացքում միություններին ցույց տրված վերաբերմունքը հանդուրժողական եր, սակայն 1797 թվականին, հզորացող բանվորական շարժման ազդեցության տակ, մի հատուկ օրենք հրատարակվեց, վորով արգելվում եր բանվորական միություններ կազմելը։ Ֆրանսիայում այսպիսի արգելումն մեջտեղ յեկավ դեռ հեղափոխության օրերին, 1791 թվականին, իսկ Գերմանիայում՝ 19-րդ դարի սկզբում։ Քառորդ դար տևող համառ կռվի միջոցով միայն անգլիական բանվորներին հաջողվեց պաշտպանել իրենց՝ միություններ կազմելու իրավունքը (1824 թ.)։ Ֆրանսիայում ու Գերմանիայում բանվորական միություններ կազմելը թույլատրվեց անցյալ դարի 60-ական թվականներին միայն։ Սակայն արհեստակցական միությունների առանձնապես արագ աճումն ու նրանց ազդեցության ուժեղանալն սկսվում է անցյալ դարի վերջից միայն, և, ինչպես արդեն ասել ենք, ֆինանսական կապիտալի հզո-

րության և ույժի աճմանը զուգընթաց ու նրա հետ միաժամանակ: Կապիտալի միավորությունն ուժեղացնում է միավորության հոսանքը բանվորների մեջ էլ:

Նույնիսկ Անգլիայում, վոր արհեստակցական շարժման հայրենիքն է, դեռևս 80-ական թվականներին միություններում (տրեդ-յունիոն) կազմակերպված էին իրենց գործին վարժված մասնագետ բանվորները միայն, վորոնք կազմում էին բանվոր դասակարգի վերին խավը, մի տեսակ՝ բանվորական արիստոկրատիա: Իսկ սևաբանվորների ու ստորին զբաղմունքներ ունեցող բանվորների միավորությունն սկսվում է 80-ական թվականների մեջից միայն: Տարբերվելով նախկին միություններից, վորոնք գլխավորապես տնտեսական կռվի կողմնակիցներ էին, ստորին պրոֆեսիաներ ունեցող բանվորների նորածագ միությունները միանգամից առաջ մղեցին ավելի արմատական, մասամբ և քաղաքական ծրագիր: Այս յերևույթի հետ կապ ունենալով՝ անգլիական արհեստակցական շարժման մեջ 80-ական թվականներից սկսած կազմվում են յերկու հոսանք, վորոնք հայտնի յեն հին ու նոր տրեդյունիոնիզմ անունով: Անգլիական տրեդ-յունիոններն 90-ական թվականներում ունեյին մինչև միլլիոն ու կես անդամ. մեր այս ներկա դարի առաջին 15 տարվա ընթացքում այս թիվը համարյա կրկնապատկվեց: 15 տարվա ընթացքում բանվորներ ավելի շատ էին նոր կազմակերպել՝ միությունների մեջ մտցնելով, քան ամբողջ նախընթաց դարում: Ֆրանսիայում սինդիկատների (բանվորական միությունները Ֆրանսիայում այսպես են կոչվում) անդամների թիվը նույն ժամանակի ընթացքում նմանապես շատացել էր յերկու անգամից ավել (500 հազարը դարձել էր մեկ միլլիոն): Արհեստակցական շարժման զարգացումն էլ ավելի արագ էր կատարվում Գերմանիայում. այստեղ «ազատ» սոցիալ-դեմոկրատական (արհեստակցական) միություններում կազմակերպված բանվորների թիվը դարի սկզբից մինչև պատերազմն աճել էր չորս անգամից ավելի (600 հազարը դարձել էր 2,5 միլլիոն): Բանվորական միությունները նույնպիսի աճումն էին յերևան բերում Հ.-Ա. Միացյալ Նահանգներում էլ, վորտեղ միություններում կազմակերպված բանվորների թիվը 20-րդ դարի սկզբում մեկ միլլիոնից հասել էր յերկու միլլիոնի:

Արհեստակցական միությունների քանակական աճմանը զուգընթաց նկատելի յե նաև այն, վոր տեղական միությունները փոխադարձաբար մոտենում են իրար և ձուլվելով համերկրային միություններ են կազմում: Այժմ յուրաքանչյուր արհեստակցական միություն ընդգրկում է յերկրի տվյալ պրոֆեսիայի բոլոր կազմակերպված բանվորներին*): Միևնույն ժամանակ զանազան պրոֆեսիաների միու-

*) Գերմանիայում համերկրային, այսպես կոչված կենտրոնական միությունների կողքին գոյություն ունեն նաև «տեղական» կազմակերպություններ, սակայն չնչին թվով անդամ ունեն:

թյունների միջև էլ մշտական կապեր են հաստատվում, կազմվում են ընդհանուր համագումարներ տակտիկայի (այսինքն կռվի հնարների ու յեղանակների) խնդիրները քննելու, այլև առանձին միությունների գործողությունները համաձայնեցնելու համար: Վերջապես միևնույն նպատակով կազմակերպում են միությունների միջազգային համաժողովներ (կոնգրեսներ):

Միությունների հետապնդած նպատակներն ու խնդիրները ճիշտ նմանապես փոփոխվում էին այն չափով, ինչ չափով վոր աճում էր պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը և սրվում էին նրա՝ ձեռնարկուների հետ ունեցած հարաբերությունները: Սկզբնապես միությունները 18 րդ դարի Անգլիայում ու 19-րդ դարի առաջին կեսի Գերմանիայում վոչ այլ ինչ էին, բայց յեթե բացառապես կամ առավելապես փոխադարձ ոգնության ընկերություններ, վորոնք ոժանդակություն էին ցույց տալիս իրենց անդամներին հիվանդության, ինվալիդության, խեղանդամության, ծերության դեպքում, իսկ նրանց մեռնելուց հետո նպաստներ էին տալիս նրանց մերձավորներին: Սակայն միություններն արդեն շատ վաղ սկսում են ձեռնարկուների դեմ մղվող տնտեսական կռվի նպատակներին ծառայել, ընդվորում փոխոգնության խնդիրները հետին կարգն են մղվում: Միությունները գործադուլների ժամանակ ղեկավարում են բանվորներին և անդամավճարներից կազմվող միջոցներից ոժանդակություն տալիս գործադուլավորներին, այնուհետև նրանք աշխատում են գործազուրկների համար զբաղմունք գտնելով՝ թեթևացնել այն ճնշումը, վոր սպառնում է արդյունաբերական պահեստազորի կողմից. Նրանք լուսավորական գործ են վարում՝ այսպիսով նպաստելով այն բանին, վոր բանվոր դասակարգի ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրանա: Վերջապես վերջին ժամանակներս, շնորհիվ այն հանգամանքի, վոր դասակարգային հակասությունները սրվում են, արհեստակցական միությունների համար ավելի դժվար է լինում կաշկանդված, ամփոփված մնալ բացառապես տնտեսական կռվի շրջանակների մեջ, և նրանք ավելի ու ավելի յեն գրավվում, վոտք դնում քաղաքական յելույթների (выступление) ու քաղաքական գործունեյության ուղին:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՌՎԻ ՅԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ:—ԳՈՐԾԱԴՈՒԼԸ, ԲՈՅԿՈՏՆ ՈՒ ԼԵԲԵԼԸ:—ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ:

Վորքան ավելի յեն զարգանում և ամրապնդվում բանվորական արհեստակցական միություններն, այնքան ավելի հաճախ են նրանք առիթ ունենում ընդհարումներ ունենալու գործատերերի հետ, այնքան ավելի բազմազան են դառնում նաև այն հնարները, վոր բանվորները կիրարկում են տնտեսական կռվի ընթացքում: Յերբ առաջին անգամ մուծվեցին մեքենաները, վորոնք միանգամից բազմաթիվ բանվորների

զրկեցին օրական դաշումից (заработок) և մնացածների աշխատանքի վճարն էլ ցածացրին, այն ժամանակ բանվորներն իրենց նոր վերաբերմունքը դեպի արտադրության նոր յեղանակը ցույց եյին տալիս առանձին խռովություններով և հարձակումներ կատարելու, մեքենաները ջարդելու դեպքերով։

Յերբ կապիտալիստական կարգերն ամրապնդվում են, բանվորների տնտեսական կռվի սովորական գործիքը դառնում է գործադուլը, այսինքն՝ աշխատանքը դադարեցնելը մինչև այն ժամանակը, քանի բանվորների առաջադրած պահանջները չեն բավարարված։ Գործադուլների նպատակն է՝ ամենից հաճախ արդյունաբերական վերելքի տարիներում, յերբ աշխատանքի պահանջը (спрос) մեծանում է, կռվել այն բանի համար, վոր աշխատանքի պայմանները բարելավեն, ամենից առաջ աշխատավարձը բարձրացնեն և բանվորական որն էլ կարճացնեն, իսկ ճգնաժամերի ու լճացման (застой) տարիներում նրանց նպատակն է՝ դիմադրել գործատերերի այն փորձերին, վորոնցով ձգտում են աշխատավարձը քչացնելու և բանվորական որը յերկարացնելու։ Այս հիմնական պահանջների կողքին կարող են լինել ու առաջադրվել ուրիշ պահանջներն էլ, որինակ, վոր վարվեցողությունը մարդավարի լինի, վոր աշխատանքը վարձատրելու այն յեղանակները, վորոնք աննպաստ են բանվորների համար, փոխեն, վերացնեն, վոր աշխատանքի պայմաններն առողջապահական դարձնեն և բանվորների առողջությունը պաշտպանելու միջոցներ գործադրեն։

Սովորաբար գործադուլներն ընդգրկում են առանձին ձեռնարկությունների բանվորներին, սակայն հաճախ նրանք ավելի լայն չափեր էլ են ընդունում, տարածվելով տվյալ քաղաքի կամ վայրի բոլոր բանվորների մեջ կամ նույնիսկ յերկրի տվյալ պրոֆեսիայի բոլոր բանվորների մեջ՝ այսպիսի յեն, որինակ, յերկաթուղային գործադուլները, ածխահանների գործադուլները և այլն։ Բացառիկ դեպքերում, յերբ պահանջներ են առաջադրվում ամբողջ բանվոր դասակարգի անունից, հայտարարվում է ընդհանուր գործադուլ կամ հանրադուլ (генеральная стачка)։

Գործադուլի առանձին տեսակն է այսպես կոչված «իտալական» գործադուլը, վոր առաջին անգամ կիրառկեցին Իտալիայի յերկաթուղային բանվորներն ու ծառայողները 1905 թվականին։ Բանվորները գալիս են աշխատելու վայրը, բայց կամ ամենևին գործ չեն անում, կամ աշխատում են դանդաղ ու վատ՝ ասելով, վոր վատ վարձին վատ էլ աշխատանք կարող է լինել։

Բանվորների տնտեսական կռվի գործադուլից ավելի քիչ տարածված յեղանակներն են բոյկոտն ու լեբելը։ Բոյկոտն այն է, յերբ հրաժարվում են տվյալ անձի հետ վորևէ գործ կամ հարաբերություն

ունենալուց։ Բանվորները բոյկոտում են (բոյկոտի յեն յենթարկում— бойкотировать), որինակ, ապրանքներն այն գործարանատիրոջ, վորն իր բանվորների պահանջները չի բավարարել, հրաժարվում են նրա մոտ աշխատելուց, հայտարարելով, վոր նրա ձեռնարկության տեղերը, պաշտոնները բոյկոտի ներքո յեն, այսինքն՝ առաջարկում են, վոր մյուս բանվորներն էլ չմտնեն ու չգրավեն այն տեղերը, վերջապես բոյկոտում են (բոյկոտի յեն յենթարկում) ինչպես այն բանվորներին, վորոնք բռնում են այնպիսի տեղեր, այլև նմանապես այն մարդկանց, վորոնք վորևէ հարաբերություն ունեն բոյկոտված գործարանատիրոջ հետ։ Լեբելը գլխավորապես Հյուսիսային Ամերիկայում է տարածված։ Այսպես անվանում են այն հատուկ դրոշմներն ու կնիքները, վորոնցով կնքում են բանվորների պահանջներին բավարարություն տվող ձեռնարկության արդյունքները։ Այն արդյունքների նկատմամբ, վորոնք արտադրված են ամենից առաջ բանվորների սպառողական պահանջներն աչքի առաջ ունենալով, կամ թե այն վայրերում, վորտեղ բանվորները գնորդների գլխավոր մասսան են կազմում, լեբելը հաճախ հասնում է նպատակին և ձեռնարկուներին հարկադրում է զիջումներ անելու։ Թե այս միջոցն առանձին դեպքում վորքան ազդու յե լինում, ցույց են տալիս լեբելների այն կեղծիքները, վորոնց դիմելու հարկադրված են լինում շատ ֆիրմաներ, տեսնելով իրենց արդյունքների վաճառքի կրճատումը լեբելի շնորհիվ։

Ամենից ազդու միջոցներից մեկը, վորով բանվորները կարողանում են իրենց ապահովել գործատիրոջ կամայականություններից, հավաքական պայմանագիրն է։ Առաջ բանվորները վարձվում եյին միանձնյա պայմանագրով, և առանձին բանվորների ու ձեռնարկությունների միջև միանձնյա հարաբերություններ գոյություն ունեյին։ Իսկ վերջին ժամանակներս սրա փոխարեն ավելի գործածական է բոլոր բանվորների անունից հանրովին պայմաններ կնքելն ու գործատիրոջ հետ բանակցություններ վարելը։ Ընդսմին գործատերը զրկվում է ինչպես առանձին բանվորների հաշիվները փակելու և արտաքսելու, այնպես և նրանց նկատմամբ վորևէ ազատ ու կամ սաստիկ միջոցներ ձեռք առնելու հնարավորությունից։ Ամեն կարգի թյուրիմացությունների ժամանակ նա հարկադրված է իր ձեռնարկության մեջ աշխատող ամբողջ բանվորական մասսայի հետ գործ ունենալու։

3. ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ։—ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ։ Կոոպերացիան կամ բանվորական ընկերությունների կերպարանք ստացած միավորությունը վոչ այնքան կռվի միջոց է, վորքան անմիջական մի փորձ բանվորների կողմից, վորով վերջիններս աշխատում են ազատագրվել թե իբրև արտադրողներ ձեռնարկուների շահագործումից ու թե իբրև սպառող-

ներ մանր խանութպանների ու մյուս առևտրայի միջնորդների շահագործումից։ Այս յերկու նպատակների համապատասխան էլ տարբերվում են կոոպերացիայի յերկու տեսակները — արտադրողական կոոպերացիան, յերբ բանվորներն իրենց հավաքած կամ նվիրաբերած միջոցներով սեփական ձեռնարկություն են սկսում ու հանրովի գործ անում, և սպառողական կոոպերացիան, յերբ ընկերություններ են կազմում, վորպեսզի միասին արդյունքների մեծաքանակ գնումներ կատարեն ցածացրած գներով։ Սպառողական կոոպերացիայի ժամանակ արդյունքներ բաց են թողնվում վորոշ փայավճար տվող անդամներին կամ նմանապես ցածացրած գներով կամ թե շուկային գներով։ Վերջին դեպքում այս միջոցով ստացված վաստակը հետո բաշխվում է անդամների միջև։ Վաստակի մի մասը հաճախ չեն բաժանում անդամներին, այլ գործադրում են գործառնություններն ընդարձակելու, լուսավորական նպատակների և այլ նման բաների վրա։

Բանվորական շարժման սկզբից մինչև անցյալ դարի կեսը բանվորական կոոպերացիայի գերիշխող տիպն արտադրողական կոոպերացիան եր։ 19-րդ դարի առաջին կեսի շատ սոցիալիստներ ու ամենից առաջ այսպես կոչված ուտոպիստ-սոցիալիստները՝ Ռ. Օուենն Անգլիայում, Ֆուրիեն, Լ. Բլանը, Բյուշեն Ֆրանսիայում ծայրաստիճան չափազանցում եյին բանվորական արտադրողական կոոպերացիաների նշանակությունը՝ համարելով, վոր սրանք կարող են կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկությունները դուրս մղել և այդպիսով վերացնել բուն իսկ կապիտալիստական տնտեսակարգը։ Նույնիսկ Մարքսն իր ժամանակին գերադասում եր արտադրողական կոոպերացիան սպառողականից։ Դեռևս առաջին Ինտերնացիոնալը (Բանվորների Միջազգային Միությունը) 1865 թվականին Ժընևի կոնգրեսում ընդունած բանաձևի մեջ նույնպես ընդունում եր, վոր կոոպերատիվ շարժումը «մեկն է այն շարժումներից, վորոնք տանում են դեպի ժամանակակից հասարակության վերակազմությունը»։

Սակայն իրականությունը չարդարացրեց այս հույսերը։ Կոոպերատիվ ընկերությունները, իրենց աննշան չափերի շնորհիվ, ույժ չունեցան դիմադրելու արդյունաբերական աժդահաներին և մեծ մասամբ վոչնչացան կարճատև գոյություն ունենալուց հետո։ Հազվաթիվ դեպքերում, յերբ արտադրողական ընկերություններին աջողվում եր ավելի յերկարատև կյանք ունենալ, նրանք պետք եյին ունենում իրենց գործառնություններն ընդարձակելու, վորի համար իր հերթին հարկավոր եր լինում վարձել լրացուցիչ բանվորներ, վորոնց նկատմամբ ընկերության հիմնադիրները հանդես եյին գալիս իբրև արտոնյալ գործատերեր, և այսպիսով կոոպերատիվ ընկերությունն այլասերվելով դառնում եր տիպիկ ակցիոներական ձեռնարկություն։ Ահա թե ինչն

եր պատճառը, վոր արտադրողական նպատակներ ունեցող կոոպերատիվ շարժումը դարավերջին համարյա բոլորովին մեռավ, սակայն նրա փոխարեն լայն ծավալ ու նշանակություն ստացավ բանվորական միջավայրում սպառողական կոոպերացիան։

Թեև սպառողական միություններում շաղկապվում են վոչ միայն բանվորներն, այլև ընդհանրապես մանր սպառողները, և թեև այս միություններն այսպիսի հատուկ բանվորական կազմակերպություն չեն, սակայն նրանց անդամների գլխավոր մասսան հենց բանվորներն են կազմում։ Բացի սրանից բանվորները մեծ մասամբ իրենց առանձին սպառողական ընկերություններն են հիմնում, իսկ վերջիններս միևնույն ժամանակ ավելի սերտ հարաբերություններ են սկսում բանվորական կուսակցության ու արհեստակցական միությունների հետ։ Առաջին զուտ բանվորական սպառողական ընկերությունը, վոր հիմնվեց 1843 թվականին և այս տիպի հետագա ընկերություններին իբրև տիպար (образец) ծառայեց, ջուլհակների հռչակավոր Ռոչդելյան ընկերությունըն եր (Անգլիայի Ռոչդել քաղաքում)։ 19-րդ դարի յերկրորդ կեսում բանվորական սպառողական ընկերությունները տարածվեցին ամբողջ Յեվրոպայում։

Սպառողական ընկերություններն ասպարեզից վտարում են ամեն կարգի մանր միջնորդներին, խանութպաններին, առևտրականներին և այլն, և այս հանգամանքի շնորհիվ բանվորներին հնարավորություն են տալիս եժանացրած գներով լավորակ արդյունքներ ձեռք բերելու՝ ընդմին բարձրացնելով նրանց նյութական ու կուլտուրական գոյության ընդհանուր մակարդակը։ Կոոպերատիվները բանվորներին առանձնապես նյական ոգնություն են ցույց տալիս գործադուլների ժամանակ՝ ապահովելով գործադուլավորներին անհրաժեշտ կենսամիջոցներով։ Բանվորական ընկերությունների ստացած վաստակն, ինչպես արդեն ասել ենք, սովորաբար չեն բաշխում անդամների միջև, այլ գործադրում են հանրային ու ամենից առաջ լուսավորական նպատակների ու հիմնարկների վրա։

Արտադրողական կոոպերացիաների նման սպառողական միություններին էլ է մի վտանգ սպառնում — վտանգն այն բանի, վոր հասարակական նպատակներին կարող է փոխարինել անձնական ոգուտների ձգտումը, և այսպիսով սպառողական կոոպերատիվներն էլ դառնան սովորական վաճառամոլ (торгашеский) ձեռնարկություններ։ Սպառողական միություններին այս վտանգից փրկում է միայն բանվորների դասակարգային գիտակցության զարգացումն ու միությունների՝ կուսակցության հետ կապված լինելը։ Հենց այս վոգով էլ Կոպենհագենում Ինտերնացիոնալի կոնգրեսը 1910 թվականից բանաձև ընդունեց, վոր գիտակից սոցիալիստներին հանձնարարում եր կոոպե-

րատիվների մեջ մտնել այն նպատակով, «վոր նրանց մեջ գործեն սոցիալիստական վոգով և արգելք լինեն, վոր կոոպերատիվները բանվոր դասակարգի կազմակերպության ու դաստիարակության թանկարժեք միջոց լինելուց չդադարեն և չդառնան սոցիալիստական համերաշխությունն ու կարգապահությունը թուլացնելու միջոց։

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՌԻՎԸ.

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՌՎԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։—ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ։ Արհեստակցական կռիվն, այսինքն այն կռիվը, վոր բանվոր դասակարգը մղում է գոյություն ունեցող կապիտալիստական հասարակարգի պայմաններում՝ իր դրությունը բարելավելու համար, բնորոշում է բանվորական շարժման զարգացման առաջին շրջանը։ Բանվոր դասակարգը վորքան ավելի յե համոզվում, թե իր շահերն ու բուրժուազիայի շահերն անհաշտ հակադրության մեջ են, այնքան ավելի պարզ է դառնում նրա համար, վոր բավական չե միայն տնտեսական կռիվը, մի կռիվ, վոր նրա գոյության պայմանների մեջ աննշան բարելավումներ է մտցնում, բայց ընդունակ չե նույն այս պայմաններն արմատակի փոխելու։ Ընդսմին նա հետզհետե ավելի յե տոգորվում այն գիտակցությամբ, վոր նրան լիակատար ազատություն կբերե միայն այն հանգամանքը, յեթե կապիտալիստական հասարակարգը խորտակվի ու բոլոր հասարակական հարաբերությունները վերակազմվեն այնպիսի նոր սկզբունքների հիման վրա, վորոնք այլես տեղ չեն տալիս ուրիշի աշխատանքի շահագործմանը։ Սակայն հասարակական այսպիսի վերակազմության արգելք է լինում պետական իշխանությունը, վորն անհրաժեշտ է կամ գրավել՝ նրա միջոցով հեղաշրջում կատարելու նպատակով (համաձայն սոցիալիստական կուսակցությունների ծրագրերի), և կամ վերացնել (ինչպես պահանջում են անարխիստական հոսանքները)։ Յերկու դեպքում էլ բանվոր դասակարգն ընկնում է պետական իշխանության դեմ մղվող կռվի մեջ, ընդսմին և քաղաքական կռվի մեջ։ Նրան դեպի այս ճանապարհն է հրում հենց ինքը՝ պետական իշխանությունն էլ, վորը ձեռնարկուների հետ ընդհարվելու բոլոր դեպքերում հարդես է գալիս բանվորների դեմ։

Այսպիսով միայն դառը փորձն է բերում բանվոր դասակարգին այն գիտակցության, թե քաղաքական կռիվն անհրաժեշտ է։ Այն ժամանակ միայն, յերբ բանվորական մասսաների մեջ դասակարգային գիտակցությունն աճում է և սոցիալիստական իդեալները տարածվում

են բանվորների միջավայրում, տնտեսական կռիվն աստիճանաբար յետին կարգն է մղվում և առաջին տեղը գրավում են քաղաքական գործունեյությունն ու քաղաքական կռիվը։ Ընդսմին բանվոր դասակարգի հասարակական կյանքի մեջ գերիշխող դեր են սկսում կատարել քաղաքական կուսակցությունները. նույն ինքը բանվորական շարժումն այլ բնույթ է ստանում և կախումն է ունենում կուսակցությունից։

Արհեստակցական միությունների, տրեդ-յունիոնների դասական յերկիրն Անգլիան է։ Այստեղ է ծնունդ առել բանվորական շարժումը, այստեղ է կատարվել ու անց կացել այս շարժման ամբողջ առաջին, տնտեսական շրջանը, այստեղ է, վոր բանվորները զուտ տնտեսական հողի վրա կռիվ մղելով՝ կարողացել են ամենանշանավոր հետևանքների հասնել, այս պատճառով էլ նաև այստեղ է, վոր արհեստակցական շարժումն առանձնապես խոր արմատներ է ձգել բանվոր դասակարգի մեջ։ Ահա թե ինչն է պատճառը, վոր հետագայում, յերբ յեվրոպական մյուս յերկիրներում ամենուրեք արդեն բանվորական կուսակցություններ եյին առաջացել, Անգլիայում դեռ ելի արհեստակցական շարժումն եր բանվորական շարժման գլխավոր ձևը։ Սակայն անգլիական միություններն էլ վերջիվերջո պետք է վոտք դնեյին քաղաքական ուղին։ 70-ական թվականներին նրանք հատուկ պարլամենտական կոմիտե կազմեցին, վորի նպատակն եր նպաստել, վոր պարլամենտը վորոշ օրենսդրական միջոցներ ընդունե հոգուտ բանվոր դասակարգի։ 80-ական թվականներին, ինչպես արդեն գիտենք, ծնունդ է առնում այսպես կոչված նոր տրեդ-յունիոնիզմը, մի հոսանք, վորը վոչ միայն բանվորական լայն մասսաներ է ընդգրկում, այլև տարբերվում է հին տրեդ-յունիոնիզմից նրանով, վոր ունի զարգացած ու արմատական քաղաքական ծրագիր, մասամբ նույնիսկ սոցիալիստական վոգով խըմորված։ Վերջապես 1901 թվականից սկսած Անգլիայում էլ է կազմըվում բանվորական կուսակցություն, վոր հատուկ քաղաքական նըպատակներ է հետապնդում։ Այս կուսակցության արագ աճումը վկայում է, թե Անգլիայում բանվոր դասակարգի՝ քաղաքական կյանքին անմիջորեն մասնակցելը վորչափ անխուսափելի անհրաժեշտություն է դարձել։ Բանվորական կուսակցության ազդեցությունն ու նշանակությունը հատկապես մեծացել է հետպատերազմյան տարիներում։

Մյուս յեվրոպական յերկիրներում արհեստակցական միությունների գործունեյությունն էլ ավելի սերտ եր կապված քաղաքական կռվի հետ։ Ֆրանսիայում, վորտեղ գերակշռում են հեղափոխական ավանդություններն ու պարլամենտական կռվին բացասաբար վերաբերվելը, միություններն ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կռվի մեջ։ Բանվո-

րական խոշորագույն կուսակցություններից մեկը, սինդիկալիստականը, վոր խիստ բացասական աչքով է նայում բանվորության ներկայացուցիչների՝ պարլամենտական կռվին մասնակցելուն, հենց արհեստակցական միություններն (սինդիկատներն) է համարում քաղաքական «ուղղակի» (այսինքն՝ անմիջական և վոչ թե պարլամենտի միջոցով) գործունեյության գլխավոր զենքը կապիտալիստական հասարակակարգը տապալելու գործում։ Տեղական սինդիկատները միանալով կազմում են սինդիկատների տեղական միություններ կամ «աշխատանքի բորսաներ» (վորոնք այսպես են կոչվում բանվորների վարձելու տեղի անունով, վորտեղ նաև բանվորական ժողովներն են լինում և վորտեղ սովորաբար տեղավորվում են միությունների վարչություններն էլ)։ Աշխատանքի բորսաներն իրենց հերթին միանալով կազմում են աշխատանքի բորսաների դաշնակցություն (ֆեդերացիա) կամ աշխատանքի ընդհանուր համադաշնակցություն (կոնֆեդերացիա)։

Գերմանիայում բանվորների քաղաքական շարժումն սկսվեց դեռևս այն ժամանակ, յերբ նրանց տնտեսական կռիվը լայն չափեր չեր ընդունել։ Այս պատճառով էլ այստեղ տնտեսական ու քաղաքական կռվի զարգացումը կատարվում եր միաժամանակ ու զուգահեռ։ Այստեղ միությունները ծագումն եյին առնում գլխավորապես կուսակցության նախաձեռնությամբ և այս պատճառով էլ մեծ մասամբ սոցիալ-դեմոկրատական միություններն են, վորոնք այլապես կոչվում են «ազատ» միություններ։ Գերմանիայում միությունների մեջ կազմակերպված բանվորների 80 տոկոսը հենց այս սոցիալ-դեմոկրատական միություններին են պատկանում *)

Բանվորական կուսակցության հետ այսպիսի մոտիկ հարաբերություններ ունեն արհեստակցական միությունները յեվրոպական մնացած յերկիրներում էլ։ Այս կապակցությունը, ինչպես տեսանք, առանձնապես սերտ եր փոքրիկ Բելգիայում։ Արհեստակցական ու քաղաքական շարժումների համերաշխության անհրաժեշտությունն ըն-

*) Գերմանիայում, բացի սոցիալ-դեմոկրատական միություններից, կան նաև Հիրշ-Դունկերյան միություններ, վորոնք այսպես են կոչվում իրենց հիմնադիրների անունով, այլև քրիստոնեյական բանվորական միություններ։ Սրանցից առաջինները ծագել են անցյալ դարի 60-ական թվականներին յերկու լիբերալ պրոֆեսորների— Մաքս Հիրշի ու Դունկերի նախաձեռնությամբ. սրանց նպատակն է ամենից առաջ բանվորներին հեռու պահել վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կռվից, ուստի և իրենց գործունեյությունը սահմանափակում են համարյա բացառապես փոխօգնության դրամարկղներ կազմակերպելով։ Հիրշ-Դունկերյան միությունները վոչ մեծ ազդեցություն ունեն և վոչ էլ լայն տարածված են։ Բանվորական յետամնաց շրջաններում մինչև ավելի շատ են տարածված այսպես կոչված քրիստոնեյական բանվորական միությունները, վորոնք կազմակերպված են կենտրոնի կաթոլիկական կուսակցության ձեռքով։

գունել է Շտուտգարտի սոցիալիստական միջազգային կոնգրեսում էլ, վոր գումարվեց 1907 թվականին։

2. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Բանվոր դասակարգի քաղաքական շարժման տարբերիչ գիծը կազմում է նրա միջազգային բնույթը։ Առանձին յերկիրների բանվորները փոխադարձ թշնամական հարաբերությունների այնպիսի պատճառներ ու առիթներ չունեն, ինչպիսիք են համաշխարհային շուկայի մղած կռիվն ու մրցումը բուրժուազիայի քաղաքագետների համար։ Միևնույն ժամանակ բանվորական շարժման նպատակներն ու խնդիրներն ամենուրեք միևնույն են։ Այն ընդհանուր կռվի մեջ, վոր մղում են ձեռնարկուների դեմ, բանվորներն ամենուրեք դաշնակից են լինում իրար։ Ինչպես տեսանք, տնտեսական զարգացումը տանում է, հասցընում մի վիճակի, յերբ ազգային պատվարները խորտակվում են և միաձույլ համախարհային տնտեսություն են կազմում։ Ամենուրեք միատեսակ արտադրական յեղանակներ ու հարաբերություններ են հաստատվում։ Առանձին յերկիրներն ավելի սերտ են կապակցվում առևտրային շահերով ու մեծապես զարգացած հաղորդակցության ուղիներով։

Հենց այժմ էլ արդեն ամբողջ յերկրագունդը կարծես թե մի միաձույլ համաշխարահային շուկա յե, միաձույլ համաշխարհային տընտեսություն, իսկ ֆինանսական գործարարների (делец) ու կապիտալիստների ազգային աննշան խմբերի շահերն են միայն, վորոնք դեռ նպաստում են ազգային սահմանների ու պատվարների պաշտպանությանը։ Այսպիսով հիշյալ ֆինանսական խմբերի տապալումը պիտի վերացնի վերջին արգելքները, վորոնք խանգարում եյին իրապես միաձույլ համաշխարհային ու միջազգային, պլանաչափորեն կազմակերպված, տնտեսություն հաստատելուն։

Այսպիսով թե սեփական դասակարգային շահերն ու թե տնտեսական զարգացման ընդհանուր ուղղությունը միակերպ հրում են բանվորներին ինտերնացիոնալիզմի ուղին, այն ուղին, վոր կապիտալիստական հասարակարգի դեմ մղված ընդհանուր կռվում առանձին յերկիրների բանվորներին սերտ ու փոխադարձ գործակցությամբ է շաղկապում։ Ահա թե ինչն է պատճառը, վոր յերբ սկսվեց քաղաքական շարժումը բանվորների մեջ, բանվորական շարժման առաջավոր գործիչների մըտքում նախ և առաջ ծագեց այն գիտակցությունը, թե անհրաժեշտ է բանվորների միջազգային մերձավորություն, միություն հաստատել։ Դեռ 1847 թվականին հնչեց «Բոլոր յերկիրների պրոլետարներ, միացեք» կոչը (Կոմմունիստական Մանիֆեստ)։ Այս կոչի իրականացումն յեղավ բանվորների առաջին միջազգային ընկերության, առաջին Ինտերնացիոնալի հիմնադրությունը 1864 թվականին։ Ինտերնացիոնալը

հայտարարեց, վոր իր հիմնական նպատակը բանվոր դասակարգի տնտեսական ազատագրությունն է։ Միևնույն ժամանակ այն ընդունում եր, վոր այս ազատությունը պետք է լիներ հենց իրենց՝ բանվորների գործը, և վոր նրան կարելի յե հասնել միայն այն միջոցի շնորհիվ, յերբ առանձին յերկիրների պրոլետարների համար միասնական տակտիկա հաստատվի, և նրանց բոլոր գործողությունների ու յելույթների (выступление) ժամանակ լիակատար համերաշխություն լինի։ Ինտերնացիոնալի զարգացումը, վոր սկզբում հաջող եր ընթանում, շուտով, սակայն, կանգ առավ շնորհիվ այն հանգամանքի, վոր առանձին յերկիրների բանվորական շարժումը դեռ անչափ թույլ եր զարգացած։ Հաագայի կոնգրեսում, վոր գումարվեց 1874 թվականին, Ինտերնացիոնալը՝ ղեկավարների անհամաձայնությունների հետևանքով պառակտվեց, իսկ յերկու տարի անց, 12 տարի գոյություն ունենալուց հետո, հայտարարվեց, վոր այն վերջնականապես լուծված է։

Ինտերնացիոնալը վերածնվել կարողացավ այն բանից հետո միայն, յերբ բանվորական շարժումը տեղական ազգային սոցիալիստական կուսակցությունների ղեկավարությամբ կարողացավ ավելի խոր արմատներ ձգել առանձին յերկիրներում։ Գերմանիայում 60-ական թվականներին ծագումն առած ընդհանուր բանվորական միությունը, վոր Լասսալն եր հիմնել, և Բեբելի ու Լիբկնեխտի այսպես կոչված Եյզենախյան խումբը 1875 թվականին միացան ու կազմեցին միաձույլ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, վորն այն ժամանակվանից սկսեց արագ աճել։ Ֆրանսիայում 1871 թվականին՝ Պարիզի Կոմմունայի քարուքանդ լինելուց հետո, բանվորական շարժումը վերածնվեց 80-ական թվականներին միայն, ընդվորում այն տրոհվեց միքանի հոսանքների, վորոնց արտահայտիչն առանձին կուսակցություններ եյին։ Անգլիայում, ինչպես տեսանք, մյուս յեվրոպական յերկիրներից ավելի ուշ առաջ յեկավ աշխատանքի կուսակցությունը, վորը գլխավորապես տրեդ-յունիոնների անդամներին եր միացնում։ Սրան առընթեր այստեղ գոյություն ունեն անկախ բանվորական կուսակցությունն ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վոր անհամեմատ ավելի քիչ ազդեցություն ունի, և վորի ղեկավարը Հայնդմանն է։ 80-ական թվականներից վոչ առաջ սոցիալիստական շարժումն սկսեց ավելի հաստատուն ու իրական աջողություններ հայտաբերել ուրիշ յերկիրներում էլ—Իտալիայում, Սպանիայում, Սկանդինավյան պետություններում։ Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հիմնվեց 1898 թվականին միայն։

Այս բանից հետո, յերբ սոցիալիստական շարժումն ամրապնդվեց առանձին յերկիրներում, 1889 թվականին Պարիզում գումարվեց միջազգային բանվորական կոնգրեսը, և ընդմին առաջ յեկավ նոր, այս-

պես կոչված Յերկրորդ Ինտերնացիոնալը։ Պարիզի կոնգրեսը սահմանեց, վոր ի նշան բոլոր յերկիրների բանվորների համերաշխության, ամենուրեք պրոլետարիատը տոնե մայիսի մեկի օրը։ Ընդսմին վորոշվեց, վոր հետագայում ել նույնպիսի միջազգային կոնգրեսներ կազմակերպվեն զանազան տակտիկային խնդիրներ քննելու և առանձին յերկիրների բանվորական կուսակցությունների գործողությունները համերաշխ դարձնելու համար։ Յերկրորդ Ինտերնացիոնալն Առաջին Ինտերնացիոնալից տարբերվում եր նրանով, վոր արդեն այնպիսի միաձույլ ու միակուռ կազմակերպություն չեր։ Նա նպատակ չուներ ել միաձույլ կազմակերպություն ստեղծելու, այլ միայն կապ պահպանելու առանձին յերկիրների ինքնուրույն բանվորական կուսակցությունների ու կազմակերպությունների միջև։

Սակայն այս կապը խզվեց, կտրվեց, հենց վոր սկսվեց վերջին պատերազմը։ Թեև պատերազմից հետո Յերկրորդ Ինտերնացիոնալը վերականգնվեց ել, բայց այս հանգամանքը չվերականգնեց նրա նախկին նշանակությունը։ Մինչպատերազմյան շրջանում, պարլամենտական ընտրություններին ու ձայներ հավաքելիս ունեցած հաջողությունների ժամանակաշրջանում արդեն այն սոցիալիստական կուսակցությունները, վորոնք մտել եյին Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ, ավելի ու ավելի եյին հրապուրվում, քարշվում պարլամենտարիզմի ու ռեֆորմիզմի ուղին (վերջինս քարոզում եր, թե կապիտալիստական հասարակարգը խաղաղ զարգացումով կըփոխվի սոցիալիզմի), ավելի ու ավելի եյին տոգորվում մանր-բուրժուական հայացքներով ու տրամադրություններով, վոչ-բանվորական շրջաններից ծագող այն «ուղեկիցների» տրամադրություններով, վորոնք ձայն եյին տալիս սոցիալիստական կուսակցություններին։ Պարլամենտարիզմի ուղին եր հենց, վոր սրանց տարավ, հասցրեց սոցիալ-պատրիոտիզմին ու հայրենիքի պաշտպանության նշանաբանը հռչակելուն։ Յերբ վերականգնվեց Յերկրորդ Ինտերնացիոնալը, սրա մեջ նորից մտան բոլոր ռեֆորմիստական ու համաձայնողական կուսակցությունները։ Բանվորական շարժման հեղափոխական թևը, վոր պատերազմի ժամանակ կանգնած եր մնացել բանվորական միջազգային համերաշխության հողի վրա և հայրենիքի պաշտպանության նշանաբանին հակադրել եր բանվոր դասակարգի ձեռքով իշխանությունը նվաճելու նշանաբանը, յուր հարաբերությունները խզեց ռեֆորմիստական տարրերի հետ՝ հիմնելով Յերրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալը, վորի առաջին համաժողովը (կոնգրեսը) գումարվեց Մոսկվայում 1919 թվականի մարտին։

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՌՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ։—ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՌԻՎԸ։—ՀԱՆՐԱԴՈՒԼԸ։ Յեթե բանվորական շարժման նպատակը կապիտալիստական հասարակարգի տապալումն ե, յեթե շարժման միաձույլ լինելը

նրա աջողության (успешность) պայմանն ե, ապա քաղաքական կըռիվը պետք ե այս նպատակին հասնելու համար միջոցներ ընձեռե բանվոր դասակարգին։ Իսկ վորովհետև ներկայումս քաղաքական կյանքի մեջ կենտրոնական տեղը բռնում են ներկայացուցչական հաստատությունները, ապա հենց միայն այս հանգամանքի շնորհիվ արդեն բանվոր դասակարգի քաղաքական կռվի մեջ ել նշանավոր տեղ պետք ե գրավե ամենից առաջ բուն ինքը՝ պարլամենտական կռիվը, այսինքն այն կռիվը, վոր վարում ե մի կուսակցության մյուսների դեմ ընտրությունների ժամանակ ու պարլամենտում*)։ Ընդհանուր ընտրողական իրավունքի պահանջը բանվոր դասակարգի ամենավաղ ու ամենից ընդհանուր քաղաքական պահանջներից մեկն ե։ Պարլամենտական ընտրությունները հնարավորություն են տալիս հաշվի յենթարկելու ու պարզելու, թե յերկրում հասարակական ուժերի փոխհարաբերությունները ինչ դրության մեջ են։ Ընտրությունների հետևանքները ցույց են տալիս, վոր սոցիալիստական կուսակցություններն արագ աճում են։ Գերմանիայում 1871 թվականին ռայխստագի առաջին ընտրությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հազիվ 113 հազար ձայն ստացավ (տված ձայների ընդհանուր քանակի 3 տոկոսից ել քիչ) և կարողացավ յերկու պատգամավոր ընտրել, իսկ 1912 թվականին ստացավ 4,250,000 ձայն (ընտրողների ընդհանուր թվի մոտ 35 տոկոսը) և ձեռք բերեց 110 պատգամավորական տեղ, վոր ռայխստագի պատգամավորների ընդհանուր թվի մեկ յերրորդականից միքիչ պակաս ե։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության դեմ հանած այն հալածանքները, վոր տեղի յեյին ունենում սոցիալիստներին վերաբերող օրենքի հիման վրա 1879 թվականից մինչև 1890-ը, վերջիվերջո վոչ միայն չկարողացան կանգնեցնել կուսակցության աճումը, այլև լոկ նպաստեցին, վոր այն ավելի ու ավելի ամուր միանա։ Նույնպիսի աճումն եյին ցույց տալիս յեվրոպական մյուս պետությունների բանվորական կուսակցություններն ել։ Ֆրանսիայում սոցիալիստական կուսակցությունների ընտրական աջողությունները մեծապես թուլանում եյին շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանք յերկպառակությունների մեջ եյին։ Անգլիայում դեռևս 1900 թվականին պարլամենտում ընդամենը յերկու բանվորական ներկայացուցիչ կար։ 1906 թվականին, յերբ բանվորական կուսակցությու-

*) Պարլամենտական կռիվն ընդունում են բոլոր սոցիալիստական կուսակցություններն ել։ Ընդհակառակն, անարխիստական հոսանքները պարլամենտական կռվին բացասաբար են վերաբերվում։ Այս վերջիններից ամենաազդեցիկը ֆրանսական սինդիկալիզմն ե, վոր ժխտում ե պարլամենտական կռիվն, իբրև նպատակին չհասցնող մի կռիվ, և վորն, ինչպես ասել ենք, ընդունում ե, թե կռվի գլխավոր միջոցը պրոլետարիատի ուղղակի, այսինքն անմիջական գործողությունն ու քաղաքական յելույթներն են (выступление) սինդիկատների ղեկավարությամբ։

նը հանդես չեկավ ընտրություններին մասնակցելու, ընտրվեցին 29 բանվորական պատգամավոր, 1910 թվականին՝ 40 պատգամավոր (նույն թվականներին բանվորական կուսակցությանը տված ձայներն են 323 ու 505 հազար)*)։ Ավստրիայում ընդհանուր ընտրողական իրավունք մտցնելուց հետո հենց առաջին ընտրությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ստացավ մեկ միլիոն ձայնից ավելի (ընդհանուր քանակի մեկ քառորդը) և ընտրելով անցկացրեց 87 պատգամավոր։

Նախընտրական պայքարն ու թեկնածուների՝ նախընտրական ժողովներում հանդես գալը հնարավորություն են տալիս ամբողջ յերկրում ամենալայն ագիտացիա ծավալելու հօգուտ սոցիալիստական կուսակցությունների։ Իսկ քաղաքականապես յետամնաց յերկրներում, վորպիսին եր մոտիկ անցյալում Ռուսաստանը, նախընտրական պայքարը միակ պարագան ե, վոր հիշյալ հնարավորությունն ե ընձեռում սոցիալիստական կուսակցություններին։ Նույնպիսի ագիտացիոն միջոցներ են սոցիալիստ պատգամավորների յելույթները պարլամենտի հռետորական ամբիոնից, յերբ նրանք դուրս են գալիս քըննադատելու կառավարական օրինագծերը և նրանց առթիվ սեփական տեսակետն են արտահայտում ու զարգացնում։

Պարլամենտական գործունեությամբ չեն սպառվում քաղաքական կռվի այն միջոցները, վորոնք բանվոր դասակարգի տրամադրության տակ են գտնվում։ Պարլամենտական կռիվը նույնիսկ կռվի ամենակարևոր միջոցն ել չե, և մենք տեսանք, վոր պարլամենտարիզմով միակողմանիորեն գրավելն եր հենց, վոր սոցիալիստական շարժման աջ թևին քաշեց ռեֆորմիզմի ու բանվոր դասակարգին դավաճանելու ուղին։ Քաղաքական կռվում ել, ինչպես և տնտեսական կռվում, առաջնակարգ նշանակություն ունեն կազմակերպությունն ու գործադուլը։ Վորչափով պրոլետարիատը մտնում ե կռվի մեջ, նա կազմակերպվում և կազմում ե քաղաքական կուսակցություն։

Կուսակցությունը մի կարգապահ ու ամուր շաղկապված խումբ ե, վոր կազմվում ե համոզված համախոհներից։ Բացի սրանից, կուսակցության ազդեցությունը չի սահմանափակվում իր անմիջական անդամների նեղ, մերձավոր շրջանակով։ Բանվոր դասակարգի բոլոր

*) 1923 թվականի տարեվերջին Անգլիայում կատարված պարլամենտական ընտրությունների ժամանակ պահպանողականներն ստացան 5,500,000 ձայն, բանվորական կուսակցությունը՝ 4,500,000 ձայն և լիբերալները՝ 4,250,000 ձայն։ Պահպանողականներն անցկացրին 256 պատգամավոր, բանվորական կուսակցությունը՝ 192 և լիբերալները՝ 156։ 1924-ի հունվարին ստանալով նաև լիբերալների վստահությունը, բանվորական կուսակցությունը հանձն առավ անցնել Անգլիայի կառավարության գլուխ, կազմելով բանվորական կաբինետ՝ Մակդոնալդի նախագահությամբ։ Ծ. Թ.

մասսայական յելույթների ժամանակ սովորաբար բուն իսկ կուսակցությունն ե հանձն առնում նրա ղեկավարի դերը։ Այսպիսով կուսակցությունն ե բանվոր դասակարգի առաջապահն, այն կորիզը, վորի շուրջը խմբվում են պրոլետարական մասսաները կապիտալիստական հասարակարգի դեմ մղած կռվի միջոցին։

Հանրադուլն, ինչպես տեսանք, քաղաքական կռվի մի միջոց ե, վորին հաճախ եր դիմում պրակտիկայում պրոլետարիատը և այն էլ հառաջադիմությամբ։

Այսպիսի հանրադուլներ եյին 1893 ու 1903 թվականների գործադուլները Բելգիայում ու 1902-ինը Շվեդիայում՝ ընդհանուր ընտրողական իրավունք ձեռք բերելու նպատակով։ Այլ դեպքերում գործադուլները, վորոնք բռնկվում են իբրև բողոք բանվորների վրա բըռնություններ կատարելու դեմ, ծավալվում, դառնում են հանրադուլ և քաղաքական նշանակություն են ստանում, օրինակ, Իտալիայում՝ 1904 թվականի սեպտեմբերին, Ռուսաստանում՝ 1905 թվականին հունվարի 9-ից հետո ու 1912 թվականին Լենայի հանքերում բանվորներին մասսայորեն գնդակահարելուց հետո։

4. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.—ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ։ Քաղաքական գործունեության ու քաղաքական կռվի բազմազան տեսակները, վորոնց մասնակցում ե պրոլետարիատն անմիջորեն կամ հանձինս իր ներկայացուցիչ քաղաքական կուսակցությունների, նրա աչքում անկախ, ինքնուրույն նշանակություն չունեն, այլ միայն միջոցներ են հասնելու համար միակ հիմնական նպատակին, վոր ե կապիտալիստական հասարակարգի տապալումն ու տընտեսական ազատագրությունը։ Այս հիմնական նպատակին կըհասցնե սոցիալիստական հեղափոխությունը միայն։ Սոցիալիստական հեղափոխությունը պետական իշխանությունը գրավելու և քաղաքական հեղաշըրջման հետևանք ե (անարխիստների տեսակետով՝ սոցիալիստական հեղափոխությունը պետք ե լինի, ընդհակառակը, բուն իսկ պետության, իբրև բռնության օրգանի, վոչնչացման հետևանք)։ Այս հեղաշըրջումը կատարելու ուղին զանազան սոցիալիստական հոսանքներ տարբեր կերպով են պատկերացնում։ Սոցիալիզմի ամենից չափավոր թևի ներկայացուցիչները կարծում են, վոր սոցիալիզմին անցնելը կըկատարվի աստիճանաբար, իբրև հետևանք խաղաղ զարգացման, իբրև հետևանք մի շարք աստիճանական ձեռնարկումների (мероприятие) ու սոցիալիստական կուսակցությունների պարլամենտական հաջողությունների (Բրենշտեյն, Ժորես)։ Ընդհակառակն, արմատական սոցիալիստական հոսանքները սոցիալիստական հեղափոխությունը պատկերացնում են բացառապես իբրև իշխանության գրավումն ու պրոլետարիատի դիկտատուրա (Ռ. Լյուքսեմբուրգ, Կ. Լիբկնեխտ), պրոլետարի-

ատի դիկտատուրա, վոր հենվում է գյուղացիության հետ կնքած դաշինքի վրա (Լենին)։ Ֆրանսական սինդիկալիստներն, ինչպես արդեն տեսել ենք, բոլորովին ժխտում են պարլամենտական գործունեությունը և կապիտալիստական հասարակարգը տապալելու միակ միջոց համարում են հանրադուլը։

Պատերազմը, վորն, ինչպես տեսանք, յերևան հանեց կապիտալիստական հանրակարգի տնտեսական բոլոր հակասությունները, վոչ պակաս նպաստեց նույն հանրակարգի մեջ յեղած սոցիալական հակասությունների սրվելուն ել։ Արտադրության միջոցներն հանրայնացնելու և կապիտալիստական հանրակարգը կոմմունիզմով փոխարինելու անհրաժեշտությունը դեռ յերբեք այնպես պայծառ ու պարզորոշ հանդես չեր յեկել, ինչպես ներկայումս։ Մյուս կողմից կապիտալիստական հանրակարգի սոցիալական հակասություններն ել յերբեք չեյին հասել այս աստիճան սրման։ Պատերազմի ժամանակն ու հաջորդ տարիները սաստիկ ու սաստիկ արագացրին կապիտալիստական յերկրների ազգային հարստության՝ մի բուռ ֆինանսիստների ձեռքում համակենտրոնանալու ու կուտվելու պրոցեսը։ Միևնույն ժամանակ պատերազմի ու նրան հաջորդող ընդհանուր ճգնաժամի հետևանքն այն յեղավ, վոր մանր բուրժուազիայի միջնողակային (промежуточный) շերտը քայքայվեց։ Բանվոր մասսայի դրությունը նույնպես վատացավ սաստիկ։ Իրական, մասամբ նաև դրամական աշխատավարձն ընկավ, այնինչ միաժամանակ գները բարձրացան, վորի հետևանքով պրոլետարական մասսաները հարկադրված յեղան ամենից անհրաժեշտ բաներից հրաժարվելու։ Ընդսմին հետպատերազմյան ընդհանուր ճըգնաժամի ու արտադրության լճացման հետևանքով յեվրոպական յերկրների մեծամասնության մեջ խրոնիքական յերևույթ դարձավ գործազըրկությունը, վորն առանձին յերկրներում, որինակ, Անգլիայում սպառնալից չափեր ընդունեց։

Բանվոր մասսայի դրության այսպիսի ընդհանուր վատթարացման հետևանքով բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական կռիվը չեղած, չտեսնված լարման է հասնում։ Գործադուլային շարժման ալիքները յերբեք այնքան չեյին բարձրացել վեր, ինչպես ներկայումս։ Սրա հետևանքով սոցիալիստական հեղափոխության խնդիրն ել ավելի ու ավելի շոշափելի ձևեր է ընդունում և թեորիայի հողից փոխադրվում է գործնական հողի վրա։ Հեղափոխության բոպեյի մոտենալուն զուգընթաց սոցիալիզմի տարբեր հոսանքների հայացքների զանազանությունը հասնում է լիակատար խզման աստիճանին։ Մի կողմից՝ ոպպորտյունիստական հոսանքը վերջնականապես ձուլվում է բուրժուական կուսակցությունների հետ և ընդսմին կորցնում է բանվոր մասսաների վրա ունեցած յուր ազդեցությունը. մյուս կողմից՝

հեղափոխական կոմմունիստական կուսակցությունը վոչ միայն Ռուսաստանում, այլև Յեվրոպայում հարաճուն ազդեցություն է ձեռք բերում բանվոր մասսաների վրա։ Բնորոշ է, վոր հենց Անգլիայում, բանվորական ոպպորտյունիզմի դասական յերկրում, բանվոր մասսաների հեղափոխականացման պրոցեսսն ավելի լայնածավալ չափեր է ընդունում, քան Յեվրոպայի ցամաքում։

Նախկին Ռուսական կայսրության ամբողջ տերրիտորիայի վրա արդեն իրականացած է պրոլետարիատի դիկտատուրան, և այս դիկտատուրայի, իբրև կոմմունիստական հանրակարգին դիմելու անցումնային փուլի, անհրաժեշտության գիտակցությունն ավելի ու ավելի է սկսում թափանցել Արևմտյան-Յեվրոպական պրոլետարիատի միջավայրն ել։ Պրոլետարիատի դիկտատուրան մի անցումնային ժամանակաշրջան է, յերբ բանվոր դասակարգն, ինչպես արդեն ասել ենք, հենվելով գյուղացության հետ կնքած դաշինքի վրա՝ խլում է իշխանությունը—մի կողմից՝ բուրժուազիայի դիմադրությունը վերջնականորեն ճնշելու համար և մյուս կողմից՝ արտադրությունն ու ամբողջ հասարակարգը կոմմունիստական սկզբունքներով վերակերտելու համար։ Միաժամանակ կատարվում է բուն իսկ բանվոր դասակարգի վերակըրթությունն ել այն վոգով, վոր նրա մեջ զարգանում են հանրային կարգապահության ընտելությունները (навыки)։ Սակայն, բացի այս պատճառներից, պրոլետարիատի դիկտատուրան անհրաժեշտ է նաև, վորովհետև պրոլետարիատի հաղթությունը չի կարող միաժամանակ կատարվել ամբողջ աշխարհում, ուստի և քանի կոմմունիստական յերկրները գտնվեն կապիտալիստական ողակման մեջ, ինչպես ներկայումս գտնվում է ԽՍՀՄ-ը, կապիտալիստական յերկրների դեմ կռվելու համար պետք է պահպանվի պրոլետարիատի դիկտատուրայի ձևով պետական իշխանությունն ել։ Միայն այն ժամանակ, յերբ այս բոլոր խնդիրները գլուխ կըգան, պետությունն իբրև դասակարգային բռնության որգան կըվերանա, և զուտ կոմմունիզմի դարագլուխը կըգա։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ.

1. *ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ։* Կոմմունիստական արտադրությունը հանրային արտադրություն է հասարակության բոլոր անդամների կարիքները բավարարելու նպատակով։ Նրա նախնական անհրաժեշտ պայմանը պիտի լինի հանրայնացումը, այսինքն արտադրության ու հաղորդակցության բոլոր միջոցների (հողի, գործարանների, գործանոցների, հանքերի, յերկաթուղիների ու այլոց) մասնավոր սեփականատիրությունից հասարակականի անցնելը։ Միայն այս պարագայում հնարավոր կլինի արտադրության ու բաշխման այնպիսի պլանաչափ կազմակերպությունը, վոր հիմնվելու յե բոլոր հասարակական կարիքները նախապես հաշիվ առնելու վրա։ Պետությունը ներկայումս էլ արդեն տեր է հաղորդակցության ճանապարհների ու միջոցների մեծ մասի, պոստային ու հեռագրական բոլոր հիմնարկությունների, հաճախ նաև արդյունաբերական ձեռնարկությունների։ Սակայն ժամանակակից պետական իշխանությունն օգտագործում է այս բոլոր հիմնարկներն ու ձեռնարկություններն ամենից առաջ հասույթ կորզելու նպատակներով ու պետական գանձատան շահերը նկատի ունենալով։ Այս պատճառով էլ այժմյան պետական ձեռնարկությունները մտնում են սովորական կապիտալիստական ձեռնարկությունների տիպին։ Կոմմունիստական տնտեսության կազմակերպության նպատակը միանգամայն այլ է։ Ինչպես արդեն ասել ենք, նրա նպատակն է ամենից առաջ ինչպես բոլոր հասարակական կարիքների, այնպես և հասարակության յուրաքանչյուր առանձին անդամի կարիքների բավարարումը։

Հենց այս նոր նպատակների համապատասխան էլ ամբողջ հասարակական կազմակերպությունը պետք է կոմմունիզմի ժամանակ բոլորովին այլ կերպարանք ստանա։ Ներկայումս անշուշտ դժվար է նախատեսել, թե կոմմունիստական կազմակերպությունն ինչ ձևեր կընդունե։

Մի բան միայն կարելի յե համարել անկասկածելի, վոր կոմմու-

նիստական հասարակության մեջ գոյություն չի ունենալ այլևս ույժի ու բռնության վրա հիմնված դասակարգային պետական իշխանությունը, վորովհետև իրենք — հասարակական դասակարգերն էլ չեն լինիլ, և վոր ընդմին կըչքանա ինքնաբավ (самодовлеющий) պետական կազմակերպությունն էլ, վոր հասարակական նպատակներից տարբեր իր առանձնահատուկ նպատակներն եր հետապնդում։ Միաձույլ տնտեսական ամբողջության առանձին մասերի համերաշխումը (согласование), բոլոր հասարակական կարիքների ու արտադրող ույժերի վիճակագրական ճիշտ հաշվառք (учет), — ահա այս կլինի, ինչպես կարելի յե յենթադրել, կոմմունիստական հասարակությունների գլխավոր կոչումը։

Սակայն ինչ ձևեր էլ վոր ընդունի հասարակության կոմմունիստական կազմակերպությունը, նրա առջև դրվելիք խնդիրները հենց այժմ էլ արդեն կարելի յե ուրվագծել։ Այդ խնդիրներն են. 1) արտադրության պրոցեսը վերջնականապես վերածել իրոք հասարակական արտադրության՝ օգտագործելով բոլոր հանրային ույժերն ու 2) կազմակերպել բաշխումը պլանաչափորեն։

2. *ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, — ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՏԵՍՈՒՄՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ։* Վորպեսզի արտադրությունն իրոք հանրային լինի, նրան պիտի մասնակցեն հասարակության բոլոր անդամները։ Ժամանակակից հասարակական պայմաններում արտադրողական աշխատանքով պարապում է հասարակության մի մասը միայն, իսկ մյուս մասը կամ մակաբույծի կյանք է վարում և կամ իրեն գործ չի գտնում աշխատելու։ Իսկ սրա հակառակ, կոմմունիստական հասարակության մեջ աշխատանքը պետք է մի կողմից բոլորի ընդհանուր իրավունքը լինի, մյուս կողմից՝ բոլորի ընդհանուր պարտականությունը։

Ինքն՝ աշխատանքը պետք է բոլորովին այլ պայմանների մեջ դրվի, քան ժամանակակից բանվորի աշխատանքն է, մի աշխատանք, վոր նրան շղթայում է, կպցնում մի վորոշ տեղի ու մի վորոշ մեքենայի և նրան հաշմում է թե ֆիզիքապես ու թե հոգեպես։ Աշխատանքըն ըստ կարելվույն պետք է հեշտանա։ Զանազան հատուկ հարմարանքների (приспособление) միջոցով պետք է վերացվեն աշխատանքին ուղեկցող բոլոր վտանգները, պետք է վերացվեն նաև նրա բոլոր անդուրեկան ու ամենածանր կողմերը, մի պահանջ, վոր կարելի յե ներկայումս էլ իրագործել, բայց վորն ուշադրության առարկա չի դառնում սովորաբար, վորովհետև չի համապատասխանում ձեռնարկուների մասնավոր շահերին։ Վերջապես աշխատանքը պետք է բազմազան դառնա և այսպիսով զարգանալու հնարավորություն տա յուրաքանչյուր առանձին անհատի մեջ թաքնված ձիրքերին ու հակումներին։ Մարդը պետք է մեքենայի ստրուկ լինելուց դադարի և դառ-

նա բազմակողմանի զարգացած ազատ անհատ։ Յեվ այս բանի համար ճիշտ նմանապես լիակատար հնարավորություն է տալիս արտադրության ժամանակակից յեղանակը, վորի ժամանակ մեքենան ավելի ու ավելի յե փոխարինում մարդուն և ավելի ու ավելի յե վերացնում աշխատանքի մասնագիտացման անհրաժեշտությունը։ Բացի սրանից, ինքը՝ խոշոր արդյունաբերությունն իր մշտական տեխնիքական հեղաշրջումներով, արագ փոփոխող պահանջներով, արտադրության մի ճյուղից դեպի մյուսն անընդհատ կապիտալներ ու բանվորներ շպրտելով՝ մեծ բազմակողմանիություն է պահանջում բանվորներից։ Ինքը՝ նույն այդ արդյունաբերությունը «կյանքի ու մահվան խնդիր է դարձնում վերացումն այն հրեշավոր կարգերի, յերբ պահեստի վողորմելի բանվոր բնակչությունը պահվում է իբրև պահեստազոր, կապիտալի կատարած շահագործման փոփոխական կարիքներին բավարարություն տալու համար։ Նույն այդ արդյունաբերությունը պահանջում է, վոր կապիտալիստական կարգերը փոխարինվեն այնպիսի հասարակակարգով, վորի ժամանակ յուրաքանչյուր մարդ անպայման պիտանի յե լինում հասարակության՝ աշխատանքի նկատմամբ ունեցած զանազան փոփոխվող կարիքները գոհացնելու համար» (Մարքս)։

Սոցիալիստական հասարակակարգի ժամանակ արտադրության հանրային յեղանակն անհրաժեշտ բազմազանություն կըմտցնե աշխատանքային գործունեյության մեջ և միաժամանակ նրա տևողությունը կըհասցնե ըստ հնարավորության կարճ չափերի։ Բանվորական որվա կրճատումը հնարավոր կըլինի՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր կըտընտեսվեն բանվորական ուժերը, վորոնք անարտադրողաբար վատնըվում են ժամանակակից տնտեսական պայմանների միջոցին մանր ձեռնարկությունների մեջ, շնորհիվ այն պարագայի, վոր գործի կըկոչվեն այն բոլոր բանվորական ուժերը, վորոնք ներկայումս կամ բոլորովին չոգտագործված են մնում և կամ գործում են այնպիսի ձեռնարկությունների մեջ, վորոնք սոցիալիստական հասարակության մեջ ավելորդ են, և վերջապես շնորհիվ այն բանի, վոր էլ ավելի կըզարգանան տեխնիքական կատարելագործությունները, վորոնք կրճատում ու հեշտացնում են մարդկային աշխատանքը։

Վորքան էլ արագաքայլ ընթանա խոշոր ձեռնարկությունների կողմից մանրերին վտարելու պրոցեսսն, այնուամենայնիվ խոշոր արտադրության վերջնական հաղթանակը դեռ շատ հեռու յե լիակատար ավարտման կետից։ Փոքրաթիվ խոշոր ձեռնարկություններին կից, վորոնք իրենց մեջ կենտրոնացրել են արտադրության մեծ մասը, մանավանդ հին արդյունաբերական յերկիրներում խիստ մեծ քանակությամբ շարունակում են դեռևս իրենց գոյությունը մանր ու գաճաճային ձեռնարկություններ, վորոնց աշխատանքի արտադրողա-

կանությունը փոքր է։ 1907 թվականի վիճակագրության տվյալների համաձայն՝ Գերմանիայում այն ձեռնարկությունների մեջ, վորոնք 100-ից ավելի բանվոր ունեյին, Գերմանիայի բանվորների ընդհանուր թվի հազիվ մեկ տասներորդ մասն եր աշխատում, այնինչ նույն այդ ձեռնարկություններն իրենց ձեռքում ունեյին շոգու ու ելեքտրական ուժի ընդհանուր գումարի մեկ յերրորդ մասը։ Այսպիսով մանր ձեռնարկությունները վտարելուց հետո յերկրում գոյություն ունեցող ամբողջ եներգիան կարելի յեր ոգտագործել այժմ աշխատող բանվորների թվի միայն 0,3 մասի ոգնությամբ։ Բանվորական ուժերի 70 տոկոսն այս դեպքում բոլորովին պարապ կըմնար ու ավելորդ կըլիներ։ Մանր ու ավելորդ ձեռնարկություններն ասպարեզից վերացնելու քաղաքականությունը հենց այժմ էլ արդեն հաճախ գործադրում են տրեստները, վորոնք, հարկավոր չլինելու պատճառով, վտարում, վերջացնում են տրեստների մեջ մտած ձեռնարկությունների յերբեմն մինչև 75—80 տոկոսն, առանց ամենևին կրճատելու արտադրության ընդհանուր գումարը։

Միևնույնը կարելի յե ասել նաև գյուղատնտեսության մասին, չնայած վոր գյուղատնտեսական տեխնիկան արդյունաբերական տեխնիկայի համեմատությամբ յետ է մնացել։ Նույն Գերմանիայում մեծ կայքերի 100 հեկտար վարելահողին միջին թվով 12 բանվոր է ընկնում, այնինչ մանր գյուղացական տնտեսությունների 100 հեկտարին 60 բանվոր է ընկնում։ Այսպիսով բանից դուրս է գալիս, վոր գյուղատնտեսության մեջ էլ այնտեղ աշխատող մարդկանց չորս հինգերորդն ավելորդ է և վոր նրանք արտադրության ավելի նպատակահարմար կազմակերպության դեպքում կարող եյին ազատվել այս զբաղմունքից մի ուրիշ տեսակ գործունեյության համար։ Այնուհետև կազատվեն բազմաթիվ անհատներ, վորոնք զբաղվում են առևտրով, զանազան պետական պաշտոններ ունեն կամ աշխատում են զինվորական գործի մեջ, կազատվեն, վորովհետև այս բոլոր զբաղմունքները սոցիալիստական հասարակարգի մեջ ավելորդ կըլինեն։ Վերջապես, անարտադրող դասակարգերն էլ, ինչպես արդեն ասել ենք, պետք է մասնակցեն հանրային արտադրության։

Թե բանվորական ուժերի ու արտադրողական միջոցների լոկ ավելի լիակատար ու նպատակահարմար ոգտագործումը մենակ, առանց նույնիսկ արտադրության տեխնիկան ավելի բարձրացնելու, ինչքան կարող է մեծացնել ընդհանուր արտադրողականությունն ու կրճատել ամենորյա անհրաժեշտ աշխատանքը, կարելի յե տեսնել այն հաշվից, վոր Ավստրիայի նկատմամբ արել է Հերցկան՝ «Սոցիալիստական զարգացման որենքները» վերնագրով գրքում։ Ըստ այս հաշվի Ավստրիայի բնակչության բոլոր անհրաժեշտ պիտույքները մատակարարելու

համար յեթե օգտվենք 16-ից—50 տարեկան արական չափահաս բնակչության ույժերից միայն, հարկավոր կլինի մեկ ու կես ժամից ել ավելի պակաս տևողություն ունեցող բանվորական օր։ Իսկ յեթե, բացի սրանից, ուզենանք ամբողջ ազգաբնակության վորոշ պերճանքի ու կոմֆորտի առարկաներ ել մատակարարել, հարկավոր կլիներ մի նոր ժամ միայն ավելացնել նախկին մեկ ու կես ժամ տևողությամբ բանվորական օրվա վրա (այս հաշիվն արված է 30 տարուց ավելի առաջ, յերբ տեխնիքական միջոցները շատ ավելի ցած եյին այժմյան միջոցներից)։ Գերմանիային վերաբերող մի նման հաշվի համաձայն, վոր արել է Բալլոդն՝ «Ապագայի պետությունը» վերնագրով գրքում, Գերմանիայի բնակչության կարիքները հոգալու համար 17-ից մինչև 22 տարեկան յերիտասարդների ութժամյա բանվորական օրը բավական կլիներ, իսկ յեթե այդ յերկրի ամբողջ աշխատունակ բնակչությունն աշխատեր, այն ժամանակ նույն նպատակին հասնելու համար յուրաքանչյուրին 1—2 ժամ ամենօրյա աշխատանք բաժին կընկներ։

3. ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ։ Վերևում բերած հաշիվների մեջ նկատի չի առնված տեխնիկայի հետագա զարգացումը։ Այնինչ թե տեխնիկայի ավելի արագ զարգացման տեսակետից ու թե տեխնիքական առաջադիմությունները ավելի լիովին օգտագործելու տեսակետից սոցիալիստական արտադրության պայմաններն անհամեմատ ավելի բարեհաջող են, քան կապիտալիստական տնտեսության պայմանները։ Ներկայումս գործի տեխնիքական կողմով զբաղվում է մասնագետների մի փոքրիկ ու նեղ շրջան միայն։ Կոմմունիստական հասարակության մեջ, յերբ տեխնիքական կրթությունը բոլորին մատչելի յուրացման առարկա կլինի և յերբ, մյուս կողմից, աշխատանքի պրոցեսը կրճատելու ու պարզացնելու ընդհանուր շահագրգռությունը մի նոր դրդապատճառ կլինի ամեն կարգի գյուտարար գործունեության համար, տեխնիքական առաջադիմությունը պետք է շատ ավելի արագընթաց թափով կատարվի, քան լինում է ժամանակակից պայմաններում։ Ներկայումս բազմաթիվ տեխնիքական կատարելագործություններ ու մեքենաներ չեն կիրարկվում, յեթե սրանք քիչ են օգուտ տալիս կապիտալիստին, յեթե սրանք, օրինակ, ավելի եժան չեն նստում, քան այն բանվորական ույժը, վորին փոխարինելու յեն։ Կոմմունիստական հասարակության մեջ, ընդհակառակն, աշխատանքի քանակը կրճատող բոլոր կատարելագործությունններն ընդարձակ չափերով կօգտագործվեն։ Ներկայումս ձեռնարկուները բոլոր տեխնիքական կատարելագործություններն օգտագործում են բանվորների թիվը կրճատելու նպատակով, իսկ ապագայում տեխնիքական կատարելագործությունների նպատակը կլինի ամենից առաջ բանվորական օրը կարճացնել՝ պահելով արտադրության մեջ աշխատող անհատների միևնույն թիվը։

Հենց այժմ արդեն կարելի յե մասամբ նախատեսել այն ուղղությունը, վորով կընթանա ապագայի տեխնիքական զարգացումը։ Վերջինիս նպատակը պիտի լինի մի կողմից՝ վորոնել եներգիայի նոր աղբյուրներ, վորովհետև այն վառելիքի (փայտի ու քարածխի) համաշխարհային պաշարները, վորոնցով գործում են շոգեկան շարժիչները, սահմանափակ են, այլև միաժամանակ այն պատճառով, վոր շոգեկան շարժիչների ույժն իսկ, բանից դուրս է գալիս, ներկայումս ավելի ու ավելի անբավարար է։ Հենց այժմ արդեն շոգուն փոխարինելու յե շտապում ելեկտրականությունը, իսկ ապագայում նշմարվում են եներգիայի ուրիշ, ել ավելի լայնածավալ ու ել ավելի հզոր աղբյուրներ։ Ապագայի տեխնիքական առաջադիմության մյուս նպատակը պիտի լինի արտադրության մեջ մեքենաների դերն ընդարձակել ու մարդկային աշխատանքին բաժին ընկած մասը կրճատել, օրինակ, այնպիսի մեքենաներ շինելով, վորոնք բոլորովին յուրաշարժորեն (автоматически) աշխատեյին և մշտական հսկողություն չպահանջեյին, այլ միայն վորոշ րոպեներում ազդանշանի սուլիչներով կամ զանգակահարությամբ իմաց տային, վոր մարդու միջամտությունն անհրաժեշտ է։

Շատ ավելի դժվար ու բարդ խնդիր է լինելու գյուղատնտեսական տեխնիկայի զարգացումը, վորովհետև սրա զարգացումը դեռ նոր-նոր է սկսում, ընդվորում այն աջողություններն իսկ, վորոնց հասել են այս տեսակետից, դեռ շատ հեռու յեն իրականանալուց և, ինչպես տեսել ենք, անչափ դանդաղ են պատրաստվում ու կիրարկվում գործնական կյանքի մեջ։

4. ԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ։ Արտադրության ամենանպատակահարմար կազմակերպության ու տեխնիկայի հետա գազարգացման կողքին՝ ապագայի նույնքան կարևոր խնդիրն է լինելու բաշխման կազմակերպումը, վորը կապիտալիստական տնտեսության պայմաններում լիովին բացակայում է։ Կոմմունիստական հասարակության մեջ տեղ չունի այլևս մասնավոր արտադրությունը. բոլորը փոխադարձորեն իրար համար են աշխատում։ Կոմմունիստական արտադրությունն ամենից առաջ մի արտադրություն է, վոր հասարակությունը կատարում է հասարակության համար։ Հանրային արտադրության արդյունքների պաշարից, ի հարկե, առաջին հերթին պետք է բավարարվեն հասարակության բոլոր անդամների կարիքները։ Սակայն հասարակության անդամների անմիջական պահանջները գոհացնելուց հետո՝ գանալու հանրային կարիքները բավարարելու համար հարկավոր կլինի ելի հավելյալ աշխատանք կատարել ամբողջ հասարակության օգտին։ Լուսավորության գործ, հաղորդակցության ճանապարհներ, ծերունիներին, թույլերին, հաշմանդամներին, հիվանդներին ապահովելը

զանազան հանրային, այն է՝ կրթական, բուժական, զվարճական հաստատություններ հիմնել ու պահել,—այս բոլոր կարիքները լոկ հավաքական հանրային աշխատանքով կարելի յե բավարարել։ Նույնքան շատ աշխատանք կըգործադրվի արտադրության միջոցների վերարտադրության վրա։

Այսպիսով աշխատանքի մի մասը պետք է գործադրվի զանազան հասարակական կարիքներին բավարարություն տալու վրա։ Արդեն հենց մենակ այս պատճառով անհնարին է դառնում իրականացընել միքանի սոցիալիստների առաջադրած այն պահանջը, թե յուրաքանչյուր առանձին արտադրող պետք է իր աշխատանքի լրիվ արդյունքն ստանա։ Սակայն բացի վերոհիշյալից, հանրային արտադրության ու հասարակական տնտեսության սկզբունքի հետ չի կարելի հաշտեցնել աշխատանքի լրիվ արդյունքն ստանալու պահանջը, քանի վոր վերջինս բղխում է մասնավոր սեփականության, աշխատանքի արդյունքի մասնավոր յուրացման գաղափարից։ Կոմմունիստական սկզբունքին ավելի համապատասխանում է բաշխման մյուս բանաձևը, վոր պահանջում է տալ «յուրաքանչյուրին նրա կարիքների համեմատ»։ Այս բանաձևն ինքնըստինքյան հասկանալի յե։ Հասարակությունը, վորն իր անդամներից աշխատանք է պահանջում, պետք է պարտականություն հանձն առնե նրանց ապրուստն ապահովելու և կենսական—սննդի, հագուստի ու բնակարանի—կարիքները բավարարելու։ Վորքան ավելի կատարելագործվի արտադրության տեխնիկան, վորքան ավելի արտադրողական դառնա աշխատանքն, այնքան ավելի հեշտ ու այնքան ավելի լրիվ կիրագործվի յուրաքանչյուրի կարիքների բավարարություն տալն էլ։

«Յուրաքանչյուրն ըստ ունակությունների, յուրաքանչյուրին ըստ կարիքների» բանաձևի լիովին իրագործումը հնարավոր կըլինի «կոմմունիստական հասարակության բարձրագույն փուլի ժամանակ», յերբ «աշխատանքը կըդադարի միայն ապրուստի միջոց լինելուց, այլ կըդառնա կյանքի առաջի պահանջ. յերբ անհատների հանրակողմանի զարգացման հետ միասին կաճեն, կըզարգանան արտադրող ույժերը, և հանրային հարստության բոլոր ակունքները կըբղխեն, կըհոսեն ափնալից վարարած» (Մարքս)։ Իսկ կոմմունիստական հեղաշրջման ավարտումից անմիջապես հետո սկզբնական շրջանում, յերբ դեռևս բավականաչափ զարգացած չեն լինիլ արտադրող ույժերը՝ մի կողմից ու հանրային կարգապահությունը՝ մյուս կողմից, իբրև անցումնային ձև (переходная форма) բաշխումը պետք է համապատասխանի յուրաքանչյուրի աշխատանքի քանակին։

5. ՄԻԱՁՈՒՅԼ ՊԼԱՆԱՉԱՓ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Կոմմունիզմն արտադրության ու փոխանակության ամբողջ սիս-

տեմը վերափոխելով ու տնտեսության ապրանքային ձևը վերացնելով, ինչպես արդեն վերևում ցույց ենք տվել, հանդես է գալիս իբրև մի տնտեսակարգ, վորը վոչ միայն կապիտալիստական կարգերի ժխտումն է, այլև լրացումն, ավարտումն է զարգացման այն տենդենցների, վորոնք թագնված են կապիտալիստական տնտեսակարգի ծոցում։ Կապիտալիզմն արտադրողներին սակավաթիվ ձեռնարկությունների մեջ միացնելով՝ հենց սրանով ամբողջ արտադրությանը հասարակական բընույթ տվեց, սակայն սրա հակառակ, պահպանեց արտադրության արդյունքների յուրացման մասնավոր յեղանակը։ Աշխատանքի գործիքների ու արդյունքների մասնավոր սեփականությունը վոչնչացնելով՝ կոմմունիզմը հենց սրանով լոկ վերացնում է արտադրության ու յուրացման միջև յեղած հակասությունը և սրանից բղխող բոլոր կործանարար հետևանքները։ Կապիտալիստական տնտեսության հիմքը կազմող ապրանքային արտադրությունը քաոսային ու անիշխանական բնույթ ունի։ Արտադրության կապիտալիստական յեղանակը վերացընելով՝ կոմմունիզմը հանուր տնտեսության ամբողջության կազմակերպության մեջ պլանաչափություն է մտցնում, հնարավորություն է ստեղծում հասարակության արտադրող ույժերը նպատակահարմար կերպով ու ամենալայն չափով ոգտագործելու՝ միևնույն ժամանակ այս ույժերը գոյություն ունեցող հանրային կարիքներին համապատասխան դարձնելով։

Դեռ կապիտալիստական տնտեսության ժամանակ նկատելի յեր զարգացման մի տենդենց, վոր շաղկապում եր առանձին ազգային տնտեսությունները։ Սոցիալիզմի ժամանակ զարգացման այս տենդենցը կըհանգե նաև այն բանին, վոր ազգային տնտեսությունները միանալով կըկազմեն միաձույլ համաշխարհային տնտեսություն։ Հասկանալի յե, ի հարկե, վոր համաշխարհային տնտեսությունը չպետք է պատկերացնել իբրև մի տնտեսություն, վոր կառավարվում է մեկ հատիկ կենտրոնից։ Կարիքների նշանավոր մասը կարող է տեղն ու տեղը հենց տեղական միջոցներով էլ բավարարվել։ Ուստի և ամենայն հավանականությամբ համաշխարհային մասշտաբով գործերը վարելու պահանջ կըզգան տնտեսական այն ֆունկցիաները միայն, վորոնք վերաբերում են զանազան մարզերի ու յերկիրների տնտեսական փոխհարաբերությունները կանոնավորելուն, ինչպես է, որինակ՝ միջազգային հաղորդակցության ու փոխհարաբերության միջոցները կառավարելը, այնուհետև մի քանի յերկիրների՝ հում նյութ կամ հացահատիկ հասցընելը, մյուսներին՝ արտադրության միջոցներ մատակարարելը, մեկի ու մյուսների կարիքների հաշվառքն ու փոխադարձ համերաշխումը և այլն։

Գալիք կոմմունիստական հասարակարգի ուրվանկարը վորքան

ել աղոտ ու մշուշապատ լինի, նրա հիմնական սկզբունքները, նրա հիմնական տենդենցները ներկայումս լիապես վորոշ նկատելի յեն արդեն։ Այն կլինի միաձույլ, համաշխարհային ու պլանաչափորեն կազմակերպված տնտեսություն, մի տնտեսություն, վորը կլինի վերջնական լրացումն ու ավարտումն վոչ միայն զարգացման կապիտալիստական աստիճանի, այլև ընդհանրապես այն յերկար ճանապարհի, վորով անցել է մարդկությունը և նախնադարյան կոմմունիստական խըղճուկ ընտանիքից հասել կոմմունիստական հասարակարգին, մի հասարակարգ, վորը միաձույլ ամբողջություն է կազմում՝ միացնելով հանուր աշխարհը։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

1. *Կ. Մարքս ու Ֆ. Էնգելս. «Կոմմունիստական Մանիֆեստ».*
1. *Կ. Մարքս. «Վարձու աշխատանք ու կապիտալ».*
3. К. Маркс. «Нищета философии».
4. » «К критике политической экономии».
5. » «Капитал», т. I. II. III.
6. Ф. Энгельс. «Положение рабочего класса в Англии»
7. » «Развитие социализма от утопии к науке».
8. » «Происхождение семьи, собственности и государства».
9. » «Крестьянская война в Германии».
10. » «Анти—Дюринг».
11. К. Каутский «Возникновение брака и семьи».
12. » «Происхождение христианства».
13. » «Предшественники новейшего социализма», т. I. II.
14. » «Томас Мор».
15. » «Аграрный вопрос».
16. » «Экономическое учение К. Маркса».
17. » «Эрфуртская программа».
18. » «Анти—Бернштейн».
19. И. Зибер. «Очерки первобытной экономической культуры».
20. Р. Гильфердинг. «Финансовый капитал».
21. В. Ильин (Ленин). «Империализм, как новейший этап капитализма».
22. Р. Люксембург. «Накопление капитала»,
23. Ю. Борхардт. «Капитал. Критика политической экономии К. Маркса».
24. П. Маслов. «Аграрный вопрос».
25. А. Богданов и И. Степанов. «Курс политической экономии» т. I. II.
26. А. Богданов. «Краткий курс экономической науки».

---

27. Г. Морган. «Старое общество».
28. Г. Маурер. «Введение и историю общинного, подворного, сельского и городского устройства и общественной власти».
29. Э. Тэйлор. «Первобытная культура».
30. » «Антропология».
31. Ю Липерт. «История культуры».
32. Э. Гроссе. «Формы семьи и формы хозяйства».
33. Г. С. Мэн. «Деревенские общины на Востоке и на Западе».
34. М. Ковалевский. «Родовой быт».
35. » «Общинное землевладение».
36. » «Экономический рост Европы».
37. Э. Мейер. «Экономическое развитие древняго мира».
38. У. Дж. Эшли «Экономическая история Англии».
39. Гиббинс. «Промышленная история Англии».
40. Т. Роджерс. «Шесть веков труда и заработной платы».
41. В. Зомбарт. «Современный капитализм», т. I. II.
42. К. Бюхер. «Возникновение народного хозяйства».
43. Дж. К. Ингрэм. «История рабства».
44. I. М. Кулишер. «Эволюция прибыли с капитала».
45. » «Лекции по истории экономического быта Западной Европы».

ԲԱՌՏԵՏՐ*)

Автомат *յուրաշարժ* (автомобиль *ինքնաշարժ*)
автоматически *յուրաշարժորեն, յուրաշարժաբար*
аграрный *հողային, տես* территоряльный
аренда *վարձակալություն*
— испольная *կիսարարային կամ հարակաշային վարձակալություն*
— отработочная *աշխատավճար վարձակալություն*
— продовольственная *պարենարար վարձակալություն*
арендатор *վարձակալ*
арендная плата *կալութավարձ (հմմտ. բնութագիր, հասութահարկ)*
арендованный *վարձակալած*
арендовать *վարձակալել, տես* нанимать

Баланс *հաշվեկշիռ*
барщина *կոռ կամ բեգար*
барщинник *կոռվոր*
барщинный крестьянин *կոռվոր գյուղացի*
— труд *կոռային աշխատանք*
батрак *մշակ*
безсрочный *անժամկետ, տես* срок
бойкот *բոյկոտ*
бойкотировать *բոյկոտել*
бойкотироваться *բոյկոտվել*
бракованный *անպիտան*

*) *Չնայած Ա. Ի. Տյումենևի «Աշխատանքի պատմության» թարգմանությունն ավելի առաջ է կատարված, քան Հայկենտգործկոմի օրենսդրական հանձնաժողովի լույս ընծայած «Ռուս-հայ իրավաբանական բառարանի» հրատարակումը, սակայն ընթերցողը կընկատե, վոր այն «Բառարանն» ու մեր «Բառատետրը» վորոշ համերաշխություն ունեն։ Այս յերեվույթը բացատրվում է այն հանգամանքով, վոր «Աշխատանքի պատմության» թարգմանիչը հիշյալ «Ռուս-հայերեն իրավաբանական բառարանը» խմբագրող հանձնաժողովի մեջ լինելով (մյուս գործոն անդամներն եյին՝ բանաստեղծ Հ. Հովհաննիսյան ու լեզվաբան՝ Հ. Աճառյան), առաջարկել է մի շարք տնտեսագիտական ու այլ տերմիններ, վորոնց մի մասն ընդունելի լինելով խմբագրող հանձնաժողովի կողմից՝ տեղ են գտել «Իրավաբանական բառարանում»։* Թ. Ա.

браковать անպիտել
браковаться անպիտվել

Валюта արժույթ
валютный արժութային
ввозить ներմուծել
ввоз ներմուծություն
вводить, ввести մուծել
взнос մուծանք
вклад ավանդ
вкладчик ավանդատու
вложенный ներդրած
вольно наемный ազատավարձու
воспроизводство վերարտադրություն, տես производство ու перепроизводство
выгон արոտ, տես пастбище
выбор ընտրություն, տես отбор
выступление ելույթ
— политческое քաղաքական ելույթ
— классовое դասակարգային ելույթ
Ганза Հանզա
ганзеец հանզացի
ганзейский հանզային
гамак ճոճացանց
генеральная (всеобщая) стачка հանրադուլ
гончарь բրուտ
гончарный круг դուրգն (բրտի ճախրիկ)
грузопод'емность բեռնունակություն, տես емкость

Дарение շնորհում
— земельное հողաշնորհում, հողային շնորհում
двигатель շարժիչ
— паровой շոգեշարժիչ, շոգեկան շարժիչ, (паравоз շոգեշարժ)
— электрический ելեկտրաշարժիչ, ելեկտրական շարժիչ (трамвай ելեկտրաշարժ)
дворовые люди դարբասի մարդիկ («դարպասցիք», Ս. Գունդստապլ)
делец գործարար
деньги փող, դրամ, տես манета
— бумажные թղթադրամ
— кредитные վարկադրամ
денежный դրամական, փողային
— ная плата դրամավարձ

денежные издержки դրամական ծախքեր
дивиденд վաստակամաս, տես прибыль
держание իրակալություն
— земли հողի իրակալություն
свободное ազատ իրակալություն
держатель իրակալ
держатели свободные ազատ իրակալներ (libere tenentes)
доброкачественный լավորակ
доброкачественность լավորակություն
добывающий արդյունահանող, տես обрабатываций
— щая промышленность արդյունահանություն կամ արդյունահանող արդյունաբերություն
добыть արդյունահանել, հայթայթել
добыча արդյունահանում, հայթայթում
добавочный ավելադիր, տես дополнительный ու прибавочный
— капитал ավելադիր կապիտալ
— ная прибыль ավելադիր վաստակ
доверитель հավատարմատու
домодельный տնագործ
— предмет տնագործ առարկա
— продукт տնագործ արդյունք
дополнительный լրացուցիչ
доход հասույթ
доходный հասութաբեր, տես подоходный
доходность հասութաբերություն

Единый միաձույլ, տես совместный
емкость տարողություն

Жилище բնակարան
жилье կացարան

Забастовка գործադուլ, տես генеральная стачка ու саботаж
заведение գործատուն, տես завод ու фабрика
завершение ավարտում
зависимый կախյալ, տես земельно-зависимый
— мые отношения կախյալ հարաբերություններ
завод գործարան
закабалить ծառայագրել
заказчик պատվիրատու
закладной лист գրավաթուղթ
закладывать գրավադրել
закладываться գրավադրվել

замкнутый փակ, ինքնամփոփ, տես самодовлеющий
— тое хозяйство փակ տնտեսություն
запашка արտավար, հանդավար
заработная плата աշխատավարձ
— — номинальная անվանական աշխատավարձ
— — реальная իրական աշխատավարձ
— — относительная հարաբերական աշխատավարձ
заработок դատում
застой լճացում
застойное состояние լճացման վիճակ
застроенный բնակաշեն
затрата ծախսում, տես издержки ու расход
— рабочей силы բանվորական ույժի ծախսում
— капитала կապիտալի ծախսում
земельно-зависимый հողովին կախյալ
землевладелец հողատեր
землевладение հողատիրություն
злоупотреблять չարարկել (հմմտ. սակարկել)
злоупотребление չարարկություն

Издержки ծախքեր
— производства արտադրության ծախքեր
излишек ավելցուկ
имение կայք, տես имущество ու поместье
имущество գույք
имущественные отношения գույքային հարաբերություններ, տես собственновладельческий
инвентарь կահույք
индеец հնդկացի
индус հնդիկ
интерес շահ, տես прибыль
— капиталиста կապիտալիստի շահը
— рабочего բանվորի շահը
— класса դասակարգի շահը
искусственный արհեստական, տես ремесленный

Капитал կապիտալ
— постоянный կայուն, մշտական կապիտալ
— переменный փոփոխուն, փոփոխական կապիտալ
— основной հիմնական կապիտալ
— оборотный շրջանառու կապիտալ
— добавочный ավելադիր կապիտալ

капитал дополнительный լրացուցիչ կապիտալ
— денежный դրամական կապիտալ
— торговый առևտրային կապիտալ, տես купеческий
— промышленный արդյունաբերական կապիտալ
— финансовый ֆինանսական կապիտալ
— денежно-торговый դրամա-առևտրային կապիտալ
— товаро-торговый ապրանքառևտրային կապիտալ
— купеческий առևտրական կապիտալ
— ростовщический վաշխառուական կապիտալ
— скупщический մեծագնորդական կապիտալ
квалифицированный որակյալ
не — անորակյալ
класс դասակարգ, տես сословие
комбинация համակցում
кооперация համագործություն
конкурент մրցորդ
конкуренция մրցում, մրցություն, տես соперничество
концентрация համակենտրոնացում, տես централизация
конфедерация համադաշնակցություն, տես федерация
копить կուտել, տես накопление
кредит վարկ
кредитный վարկային
кредитные деньги վարկադրամ
кредитор վարկատու
кредитоспособность վարկունակություն
кредитовать վարկատրել
кредитоваться վարկատրվել
круговращательный շրջանադարձ
— ное направление շրջանադարձ ուղղություն
кругооборот շրջապտույտ, տես обращение ու оборот
— товара ապրանքի շրջապտույտ
— капитала կապիտալի շրջապտույտ
купля առք, տես покупка, скупка, продажа
купец վաճառական, առևտրական
купеческий առևտրական, տես торговый
купля-продажа առուծախ, առուծախս, տես торговля

Ленная система լենի սիստեմ

Малоимущий ընչապակաս (неимущий չքավոր)
материя նյութ
материал նյութեղեն

материальный *նյութական*
матриархат *մայրիշխանություն*
мастер *վարպետ, տես* подмастерье, ученик
мастерская *գործանոց, արհեստանոց*
машинной *մեքենային, տես* механический
мена *փոխանակություն*
меновой *փոխանակային*
мероприятие *ձեռնարկում, տես* пособие, предприятие
механический *մեքենական*
монета *ստակ*
— чеканенная *կտրած ստակ*
монетная система *ստակային սիստեմ*
монополия *մենաշնորհ*
монополизация *մենաշնորհացում*

Накоплять *կուտակել*
накопление *կուտակում*
— первоначальное *սկզբնական կուտակում*
налог *հարկ, տես* сбор
— подоходный *հասութահարկ*
— продовольственный *պարենհարկ*
народонаселение *ազգաբնակություն, տես* население
население *բնակչություն*
натура *բնեղեն, բնարդյունք*
плата натурой *բնավարձ*
натуральное хозяйство *բնատնտեսություն*
насидение *հարանստել*
недостаток *չկալություն*
неквалифицированный *անորակյալ*
неполноправный *իրավապակաս, թերիրավ*
новина, новь *կորդ*
норма *նորմա*
— средняя *միջին նորմա*
— прибавочной стоимости *հավելյալ արժեքի նորմա*
— прибыли *վաստակի նորմա*
наем *վարձում*
нанимать *վարձել*
наемный—*վարձու*
— ная плата *վարձավճար, տես* арендная плата
— ный труд *վարձու աշխատանք*

Область *մարզ, շրջան, ասպարեզ*

об'единение *միավորություն, տես* соединение, союз
обмен *փոխանակություն*
обобщение *ընդհանրացում*
обобществление *հանրայնացում*
оборот *պտույտ*
— капитала *կապիտալի պտույտ*
оброк *մյուլք, բահրա*
оброчный *մյուլքային, բահրային*
— крестьянин *մյուլքատու, բահրատու գյուղացի*
обрабатывать *արդյունագործել, մշակել, վերամշակել*
обрабатывающий *արդյունագործող*
— щая промышленность *արդյունագործություն, արդյունագործող արդյունաբերություն*
обращение *շրջանառություն*
общество *հասարակություն, տես* община
общественный *հանրային, հասարակական*
общественно-необходимый *հանրորեն անհրաժեշտ*
— — труд *հանրորեն անհրաժեշտ աշխատանք*
община *համայնք*
общинник *համայնիկ (հմմտ. վոստանիկ, դրանիկ)*
огневое земледелие *այրովի յերկրագործություն, տես* подсечное
огнеупорный *անկեզ*
огораживание *ցանկապատում*
— земель *հողերի ցանկապատումը*
орда *հրոսակույտ*
орудие *գործիք, տես* средство
— труда *աշխատանքի գործիք*
— производства *արտադրության գործիք*
осуществление *իրականացում, տես* реализация
осуществлять *իրականացնել*
отбор *ընտրանք*
— естественный *բնական ընտրանք*
отпускная *արձակաթուղթ*
отход в город *չու դեպի քաղաք*
отношение распределения *բաշխման հարաբերություն*

Пайок *բաժնեմաս*
пастбище *արոտավայր, արոտատեղ*
патриарх *նահապետ*
патриархат *հայրիշխանություն*
первобытный *նախնադարյան, տես* примитивный. первоначальный, предварительный

первобытный коммунизм նախնադարյան կոմմունիզմ

— ая культура նախնադարյան կուլտուրա

— ное хозяйство նախնադարյան տնտեսություն

первоначальный, первычный սկզբնական

— ное накопление սկզբնական կուտակում

переход անցում

переходный անցումային (հմմտ. ուսումնասեր, յերգմնագիր)

перенаселение գերբնակչություն

переполненный գերլցված

перепродажа վերավաճառք

перепроизводство գերարտադրություն

период պարբերաժամ, շրջան

периодизация պարբերացում

пират հեն, ծովահեն, տես ушкуйник

пиратство հենություն, ծովահենություն

планомерный պլանաչափ

плата վարձ, վճար

— заработная աշխատավարձ

— сдельная գործավարձ

— поштучная հատավարձ

— повременная ժամանակավարձ

— поденная որավարձ

— арендная կալութավարձ

— наемная վարձավճար

— натурой բնավարձ

— денежная դրամավարձ

племя ցեղ, տես род

поденщик որամշակ

подмастерье վարպետացու (հմմա. տիրացու)

подсечное земледелие կտրովի յերկրագործություն

покупка գնում

покупатель գնորդ, տես скупщик

покупательная способность գնողունակություն

поместье կալվածք

поместный կալվածային

пометка նկատ (замечание նկատողություն)

помещик կալվածատեր, տես землевладелец

помещение զետեղում

— производительное արտադրողական զետեղում (կապիտալի)

поселок շեն

поселение շենանոց, շինանիստ (շենլըղ, ավաղանլըղ)

— сельское գյուղական շենանոց

— городское քաղաքային շենանոց

— торговое առևտրային շենանոց

предварительный նախորյա (предварительно նախորոք)

предложение առաջարկ, մատուցում, տես спрос

предприятие ձեռնարկություն (пособие ձեռնարկ)

предприниматель ձեռնարկու, ձեռնարկող

предпринимательский ձեռնարկուական (հմմտ. վաշխառուական)

прибавочный հավելյալ

— труд հավելյալ աշխատանք

— продукт հավելյալ արդյունք

— ная стоимость հավելյալ արժեք

— — обсолютная բացարձակ հավելյալ արժեք

— — относительная հարաբերական հավելյալ արժեք

прибыль վաստակ, շահույթ, տես сверхприбыль

— средняя միջին վաստակ

— добовочная ավելադիր վաստակ

— тороговая առևտրային վաստակ

— предпринимательская ձեռնարկուական վաստակ

прибыльный վաստակաբեր, շահութաբեր

прибыльность վաստակաբերություն, շահաբերություն

приводный ремень շարժաբեր կաշեփոկ

придаток կցորդ

прием հնար, տես способ

примитивный նախնական

прирезка земли հողաճոթ

прирост աճ, աճեցողություն, տես рост

приспособление հարմարանք, հարմարում, հարմարացում

потребление սպառում

— индивидуальное անհատական սպառում

приозводительное արտադրողական սպառում

потребитель սպառող

потребность կարիք

провоз փոխադրածախս

продавец վաճառորդ

продажа ծախ, վաճառք

продукт արդյունք, արտադրանք

произведение արտադրանք, տես производство
производитель արտադրող
— непосредственный անմիջական արտադրող
производительность արտադրություն, արտադրողականություն
производительный արտադրողական
— ная сила արտադրող ույժ
производственный արտադրական
— ное отношение արտադրական հարաբերություն
производство արտադրություն
— мелкое մանր արտադրություն
— крупное խոշոր արտադրություն
— ремесленное արհեստային արտադրություն
— кустарное տնայնագործական արտադրություն
— мануфактурное մանուֆակտուրային արտադրություն
— машинное մեքենային արտադրություն
пролетаризация բանվորացում
промышленник արդյունաբերող
— ный արդյունաբերական
— ный рабочий արդյունաբերական բանվոր
промышленная резервная армия արդյունաբերական պահեստազոր
промышленность արդյունաբերություն
— добывающая արդյունահանող արդյունաբերություն կամ (մի բառով) արդյունահանություն
— обратывающая արդյունագործող արդյունահանություն կամ (մի բառով) արդյունագործություն
— бумагопрядильная բամբակամանածային արդյունաբերություն
— хлопчатобумажная բամբակեղենի արդյունաբերություն
— текстильная, ткацкая մանածագործական, մանածագործային արդյունաբերություն
— металлургическая մետաղագործական արդյունագործություն
прядильный մանածային, текстильный, ткацкий
пустошь, пустырь պարապուտ (пустыня անապատ)

Работа գործ, աշխատանք, տես труд
работодатель գործատու
работоспособность աշխատունակություն
работник գործավոր, տես рабочий
рабочий բանվոր
раздать տարաբաշխել, տես распределить

раздаточная кантора տարաբաշխման գրասենյակ
распадение տրոհումն, բաժանվելը
распадение прибыли վաստակի տրոհում
распределение բաշխում
распределить բաշխել
расход ծախս
расчет հաշվեհարդար, տես учет
реализация իրացում
реализавать իրացնել
резервная армия պահեստազոր
ремесло արհեստ
ремесленный արհեստային, տես ремесленнический
ремесленник արհեստավոր
ремесленический արհեստավորական
рента ռենտա
— абсолютная բացարձակ ռենտա
— дифференциальная դիֆֆերենցիալ, տարբերական ռենտա
— отработочная աշխատավճար ռենտա
— продуктами արդյունավճար ռենտա
— денежная դրամական ռենտա
род տոհմ
роскошь պերճանք
предмет роскоши պերճանքի առարկա
рост աճում, վաշխ
руда հանքանյութ
рудник հանքավայր, հանքարան, տես шахта
рынок շուկա, վաճառանոց
рынок-город շահաստան, շահաստան քաղաք
рыночный շուկային, վաճառանոցային
— ная цена շուկային գին

Саботаж նենգադուլ
самодовлеющий ինքնաբավ
сбор տուրք
— денежный դրամատուրք
— натурой բնատուրք
свайный ցցավոր
— ная постройка ցցավոր շենք
сделка գործարք
сверхприбыль գերվաստակ
сверхурочный արտակետյա

сверхурочные часы *արտակետյա ժամեր*
— ное время *արտակետյա ժամանակ*
— ный труд *արտակետյա աշխատանք*
себестоимость *ինքնարժեք*
синдицирование *սինդիկատացում*
скупка *մեծագնում (մեծաքանակ առք)*
скупщик *մեծագնորդ*
скупщический *մեծագնորդական*
скупщичество *մեծագնորդություն*
смена *հերթափոխություն*
сменить *հերթափոխել*
на смену *հերթափոխելու*
собственность *սեփականություն*
собственовладелец *սեփականատեր*
собственновладельческий *սեփականատիրական*
собственновладельчество *սեփականատիրություն*
совместный *միասնական, միատեղ*
согласие *համաձայնություն*
согласование *համերաշխում*
соединение *միացում*
соперничество *մրցակցություն*
сопоставление *առադրություն, տես* сравнение
сословие *դաս*
союз *միություն*
специальность *մասնագիտություն*
способ *յեղանակ*
— обмена *փոխանակության յեղանակ*
— производства *արտադրության յեղանակ*
— присвоения *յուրացման յեղանակ*
— распределения *բաշխման յեղանակ*
— сообщения *հաղորդակցության յեղանակ*
— передвижения *յերթեւեկության յեղանակ*
спрос *պահանջ, խնդրանք*
сравнение *համեմատություն*
средство *միջոց*
— труда *աշխատանքի միջոց*
— производства *արտադրության միջոց*
— обращения *շրջանառության միջոց*
— сообщения *հաղորդակցության միջոց*
— передвижения *յերթեւեկության միջոց*

средство перевозочное *փոխադրության միջոց*
— платежное *վճարամիջոց*
срок *ժամկետ, տես* урок
стойка *վաճառասեղան*
стоимость *արժեք*
— меновая *փոխանակային արժեք*
— потребительная *սպառողական արժեք*

Текстильный, ткацкий *մանագործական, մանագործային*
территориальный *յերկրային*
товарооборот *ապրանքապտույտ*
торгаш *վաճառամոլ*
торгашеский *վաճառամոլ, վաճառամոլային*
торговец *առեւտրական*
торговля *առուտուր, առեւտուր*
— людьми *մարդավաճառք*
торгобый *առեւտրային*
труд *աշխատանք*
— простой *հասարակ աշխատանք*
— квалифицированный *վորակյալ աշխատանք*
не — *անվորակյալ աշխատանք*
— средний *միջին աշխատանք*
— необходимый *անհրաժեշտ աշխատանք*
— конкретный *թանձրացյալ աշխատանք*
— абстрактный *վերացական աշխատանք*
— общественно-необходимый *հանրորեն անհրաժեշտ աշխատանք*
— сверхурочный *արտակետյա աշխատանք*
— производительный *արտադրողական աշխատանք*
не — *անարտադրողական աշխատանք*
— наемный *վարձու աշխատանք*
— вольно-наемный *ազատավարձու աշխատանք*
— принудительный *հարկադրական աշխատանք*
— обязательный *պարտադիր աշխատանք*

Угодье *հանդակ*
упаковка *փաթթոցել, փաթթոցում (համմտ. սղոցել)*
упаковочный *փաթթոցելու*
урожай *բերք*
урожайность *բերքատվություն*
урок *կետարք (գործիքի վորոշ քանակ. համմտ. գործարք, լուծարք)*
усадьба *դաստակերտ*

успех աջողություն
успешный աջողակ
успешность աջողակություն
утварь կահ ու սարք
ученик աշկերտ
ученичество աշկերտություն
учет հաշվառք
ушкуйник գետահեն

Фабрика ֆաբրիկա
фабричный ֆաբրիկային
федерация դաշնակցություն
— труда աշխատանքի դաշնակցություն
форма ձև
формация ֆորմացիա

Хозяйство տնտեսություն
— натуральное բնատնտեսություն
— денежное դրամատնտեսություն
— кредитное վարկատնտեսություն
— карликовое գաճաճային տնտեսություն
хозяйственник տնտեսարար
ходкий վարուն
— товар վարուն ապրանք
наиболее ходкий ամենավարուն

Цена գին
— рыночная շուկային գին
— средняя միջին գին
централизация կենտրոնացում
цех համքարություն
цеховой համքարային, համքարական

Челядь ընդոծին

Шахта հանքասրահ

Эквивалент համարժեք
эксплоатация շահագործում
величина эксплоатации շահագործման մեծություն
степень — շահագործման աստիճան։

Гос. Библиотека ССР Арм. им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երես

I. Թարգմանչի առաջաբանը I
II. Ներածություն.—Աշխատանքի պատմության առարկան . VII

Գլուխ

Ա. Նախնադարյան կոմմունիզմը. 9—17

1. Նախնադարյան մարդու կյանքը։—Արտադրության առաջին գործիքները 9
2. Առաջին հասարակական միավորությունները։—Առանձնացած տնտեսություն։—Հավելյալ աշխատանքի բացակայությունը 12
3. Պարզ աշխատակցությունը։—Նախնադարյան կոմմունիզմը 14
4. Աշխատանքի բաժանման սաղմերը . . . 15

Բ. Տոհմական համայնքը. 18—30

1. Նախնական յերկրագործությունն ու տնտեսական գործունեյության սկիզբը։—Մայրիշխանական համայնքը 18
2. Անասնապահության ծագումը 20
3. Արտադրության գործիքների ու տեխնիկայի զարգացումը։—Աշխատանքի բաժանումը . . . 22
4. Նահապետական տոհմային համայնքը։—Կազմակերպիչ նահապետը։—Շահագործման սկիզբը . . 24
5. Մասնավոր սեփականության զարգացումը։—Փոխանակության ծագումը 27

Գ. Նահապետական յերկրագործական համայնքը։—Հարևանային համայնքը. 31—38

1. Յերկրագործական տեխնիկայի առաջադիմությունները։—Նստակյացության սկիզբը . . . 31
2. Յերկրագործական տոհմային ու ընտանեկան համայնքը 33
3. Հարևանային գյուղական համայնքի ծագումը . 34

Երես

Դ. Կալվածքն ու կալվածային տնտեսությունը. 38—48

1. *Հողատեր դասակարգի ծագում . . . .* 38
2. *Հողային կախյալ հարաբերությունների զարգացումը* 41
3. *Կալվածքն ու գյուղական համայնքը։—Կալվածային տնտեսությունը. . . . . . .* 44

Ե. Քաղաքային վաճառականական առևտրի ու արհեստի ծագումը 49—55

1. *Պարբերական տոնավաճառի ծագումը . .* 49
2. *Քաղաքների կազմվելը։—Բերդաքաղաքն ու շահաստան քաղաքը . . . . . .* 52
3. *Փոխանակությունը քաղաքի ու գյուղի միջև։—Քաղաքային վաճառանոցային առևտուրը . .* 53

Զ. Ռայոնական քաղաքային տնտեսությունը. 56—68

1. *Քաղաքի ռայոնական տնտեսությունը . .* 56
2. *Քաղաքային ազգաբնակությունը։—Պատրիկությունն ու առևտրականների գիլդիան . . .* 58
3. *Արհեստավորների համքարությունները . .* 61
4. *Աշկերտությունը։—Աշկերտը։—Վարպետացուն։—Վարպետը։ . . . .* 65

Է. Դրամական փոխանակության զարգացումն ու նրա ազդեցությունը գյուղի կյանքի վրա. 69—76

1. *Փոխանակության դրամական ձևը։—Մետաղե դրամները . . . .* 69
2. *Փողն իբրև արժեչափ, իբրև շրջանառության միջոց ու իբրև կուտակման միջոց . . . .* 70
3. *Կալվածային տնտեսության քայքայումը . .* 72
4. *Ճորտային կախյալ վիճակի թուլանալը . .* 73

Ը. Միջկոմմունալ առևտուր ու ազգային տնտեսության ծագումը. 77—87

1. *Միջկոմմունալ (միջքաղաքային) առևտուրը միջին դարերում ու հնում . . . .* 77
2. *Առևտրական միությունները ու ընկերությունները* 80
3. *Քաղաքային առևտրական քաղաքականությունը .* 81
4. *Վաշխառուական կապիտալը։—Բանկերն ու փողի առևտուրը . . . .* 82

Երես

5. *Արտադրության մասնագիտացումն ըստ քաղաքների ու տեղական միջկոմմունալ առևտրի զարգացումը .* 84
6. *Ազգային տնտեսության ծագումը . . .* 86

Թ. Համքարային կարգերի քայքայումը. 88—93

1. *Արտադրության ընդարձակվելն ու համքարային վարպետների՝ ձեռնարկող դառնալը. . .* 88
2. *Արհեստի՝ կապիտալին յենթարկվելը . . .* 89
3. *Համքարությունների քայքայումը . . .* 91

Ժ. Կապիտալի սկզբնական կուտակման յեղանակները։—Գաղութային տնտեսությունը. 94—103

1. *Կապիտալի կուտակումն, իբրև անհրաժեշտ նախնական պայման խոշոր արտադրության զարգացման համար. . . . . . .* 94
2. *Առևտրական կապիտալի կուտակման պայմաններն ու հնարները . . . . . .* 95
3. *Նոր ժամանակի գաղութային տնտեսությունը .* 97
4. *Առևտրի կենդանանալը։—Յեվրոպական պետությունների առևտրային մրցակցությունը . .* 99
5. *Բաժնետիրական ընկերությունները։—Բորսաներ .* 101

ԺԱ. Կապիտալի սկզբնական կուտակման յեղանակները։—Տնայնագործական արդյունաբերությունը. 104—107

1. *Առևտրական կապիտալի՝ արհեստավորների հավելյալ աշխատանքը յուրացնելը . . . .* 104
2. *Գյուղական տնայնագործների շահագործումը .* 105
3. *Տնայնագործական արդյունաբերության տարածումը* 106

ԺԲ. Գյուղացության բանվորացումը (պրոլետարիզացիան) ու բանվոր դասակարգի գոյանալը. 108—114

1. *Գյուղական տնտեսության արդյունքների՝ ապրանքային փոխանակության մեջ քաշելը . .* 108
2. *Դրամահարկերի բարձրացումն ու գյուղացիների շահագործման սաստկանալը . . .* 109
3. *Գյուղատնտեսական առաջադիմությունն ու ճորտային կախման անկումը . . . .* 110
4. *Գյուղացության բանվորացումը (պրոլետարիզացիա)* 112

Երես

ԺԳ. Կապիտալը, իբրև շահագործման միջոց. *115—118*

1. *Կապիտալն իբրև արտադրության միջոց, որ շահագործման միջոց է դառնում . . . .* 115
2. *Արտադրողի անջատվելը շուկայից . . .* 116
3. *Գյուղական տնայնագործների ու քաղաքային արհեստավորների աշխատանքի շահագործումը .* 117

ԺԴ. Մանուֆակտուրային արդյունաբերությունը. *119—125*

1. *Մանուֆակտուրայի ծագումը. . . .* 119
2. *Արտադրության մանուֆակտուրային յեղանակի առավելությունները։—Աշխատանքի բաժանումը .* 120
3. *Մանուֆակտուրան ու արհեստը . . .* 123
4. *Մանուֆակտուրային բանվորների աշխատանքի շահագործումը։—Կանանց ու մանուկների աշխատանքը* 124

ԺԵ. Միջազգային առևտրի զարգացումն ու շուկայի ընդարձակումը. *126—129*

1. *Միջազգային առևտուրը 16—18-րդ դարերում։—Մերկանտիլիզմը. . . . . . .* 126
2. *Մերկանտիլիզմի սիստեմի թուլանալը։—Մասսայական արտադրության պահանջը . . .* 128

ԺԶ. Արտադրության մեքենայի յեղանակը։—Բանվորն ու մեքենան. *130—136*

1. *Արտադրության մեքենայի յեղանակի ծագումը .* 130
2. *Բանվորն ու մեքենան . . . . .* 131
2. *Հասարակ ու ընդլայնված վերարտադրությունը։—Հավելյալ արժեքն, իբրև կապիտալի կուտակման միջոց* 133
4. *Բանվորական պահեստի բանակը . . .* 134

ԺԷ. Արդյունաբերական կապիտալիզմը։—Ապրանքային արտադրությունը:—Բանվորական ույժը, իբրև ապրանք. *137—144*

1. *Ապրանքային տնտեսությունը . . .* 137
2. *Ապրանքի էությունը։—Սպառողական ու փոխանակային արժեքը . . . . .* 138
3. *Ապրանքային փոխանակության հասարակական ընույթը։—Ապրանքային ֆետիշիզմը . .* 139
4. *Աշխատանքն, իբրև արժեչափ . . . .* 140
5. *Բանվորական ույժն իբրև ապրանք . .* 142

Երես

ԺԸ. Արդյունաբերական կապիտալի կազմությունը։—Վաստակն ու աշխատավարձը. *145—152*

1. *Կապիտալի կազմությունը։—Կայուն ու փոփոխական կապիտալը։—Հավելյալ արժեքի նորման .* 145
2. *Վաստակն իբրև հավելյալ արժեքի իրացումն։—Վաստակի նորման . . . . . .* 146
3. *Կապիտալի բաժանումն ըստ նրա մասերի շրջանառության արագության։—Հիմնական կապիտալ ու շրջանառու կապիտալ . . . . . .* 149
4. *Աշխատավարձը։—Վարձատրության տեսակներն ու յեղանակները . . . .* 150

ԺԹ. Դրամական կապիտալը. Բանկերը. Բորսան. *153—158*

1. *Դրամական կապիտալը . . . . .* 153
2. *Բանկերը.—պասսիվ ու ակտիվ գործառնությունները* 154
3. *Բորսան . . . .* 157

Ի. Համաշխարհային տնտեսության ծագումը։ Արտադրության աճելն ու մրցումը. *159—163*

1. *Հաղորդակցության ճանապարհների ու յեղանակների զարգացումը . . . .* 159
2. *Համաշխարհային տնտեսության ծագումը . .* 160
3. *Արտադրության ընդարձակվելն ու մրցման զարգացումը* 161

ԻԱ. Կապիտալիստական արտադրության անկազմակերպ լինելը. Արդյունաբերական ճգնաժամերը. *164—171*

1. *Կապիտալիստական տնտեսակարգի հիմնական հակասությունը . . . .* 164
2. *Արտադրության անիշխանությունը . . .* 165
3. *Ճգնաժամերի ծագման պատճառները . . .* 166
4. *Արդյունաբերական ճգնաժամը . . . .* 168

ԻԲ. Գյուղական տնտեսության զարգացման պայմանները կապիտալիստական դարաշրջանում. Խոշոր ու մանր տնտեսությունը. Մրցումը *172—179*

1. *Գյուղական տնտեսությունն ու համաշխարհային շուկան . . . .* 172
2. *Ճորտային տնտեսության քայքայումը։—Կապիտալիստական վարձակալության ու հողային ռենտան .* 173

Երես

3. Գյուղատնտեսական առաջադիմությունը—Խոշոր ու մանր տնտեսությունը 176
4. Հացահատիկների մրցումը համաշխարհային շուկայում 179

ԻԳ. Գյուղացության շերտավորումն ու քաղաքների աճումը. 180—183

1. Հողի զորահավաքն ու գյուղացության շերտավորումը 180
2. Չուն դեպի քաղաք և քաղաքային ազգաբնակության աճումը 181

ԻԴ. Արտադրության համակենտրոնացում. Ֆինանսական կապիտալը. 184—194

1. Արտադրության համակենտրոնացումը . . . 184
2. Ակցիոներական ձեռնարկությունները . . . 185
3. Արդյունաբերական ձեռնարկությունների միանալու ձգտումը։—Միավորությունների զանազան ձևերը (կորներներն ու ռինգերը, սինդիկատները, տրեստները) 188
4. Սինդիկատային շարժման զարգացումը։—Միջազգային սինդիկատների ծագումը 189
5. Առևտրային միջնորդության վերացումը . . 191
6. Բանկային կապիտալի կենտրոնացումը . . . 192
7. Ֆինանսական կապիտալը 192

ԻԵ Իմպերիալիզմը. 195—202

1. Ֆինանսական կապիտալն ու պետական իշխանությունը 195
2. Ներքին շուկայի մենաշնորհումը. Մաքսային քաղաքականությունը 196
3. Իմպերիալիզմն ու համաշխարհային շրջանների համար մղվող կռիվը 198
4. Իմպերիալիստական ձգտումներն ու միլիտարիզմի աճումը։—Համաշխարհային պատերազմը . . . 201

ԻԶ. Կապիտալիստական սիստեմի քայքայումը. 203—208

1. Կապիտալիզմի հակասությունների սրումը . . 203
2. Ազգային մեկուսացման աճումն ու համաշխարհային տնտեսությունը 205
3. Կոմմունիզմն իբրև կապիտալիստական զարգացման անհրաժեշտ ավարտումն 206

ԻԷ Դասակարգային հակասությունների սրվելը. 209—212

ԻԸ Բանվոր դասակարգի տնտեսական կռիվը. 213—220

1. Բանվորական միությունները 213
2. Տնտեսական կռվի յեղանակներն ու միջոցները։—Գործադուլը, բոյկոտն ու լեբելը։—Հավաքական պայմանագրերը 215
3. Կոոպերատիվ շարժումը բանվորների միջև։—Արտադրողական ու սպառողական կոոպերացիա . . 217

ԻԹ. Բանվոր դասակարգի քաղաքական կռիվը. 221—231

1. Քաղաքական կռվի ծագման պայմանները։—Արհեստակցական շարժումը 221
2. Ինտերնացիոնալն ու բանվորական կուսակցությունները 224
3. Քաղաքական կռվի միջոցները։—Պառլամենտական կռիվը.—Հանրադուլը 226
4. Սոցիալիստական հեղափոխությունը։—Պրոլետարիատի դիկտատուրա 229

Լ. Կոմմունիզմը 232—240

1. Արտադրության միջոցների հանրայնացումն ու հասարակության կոմմունիստական կազմակերպությունը . 232
2. Հասարակական արտադրությունը։—Աշխատանքի տնտեսումն ու բանվորական ժամանակի կրճատումը . 233
3. Տեխնիքական առաջադիմությունը կոմմունիզմի ժամանակ 235
4. Բաշխման կազմակերպությունը 237
5. Միաձույլ պլանաչափ համաշխարհային տնտեսությունը 238

Բառտեր 241

ԳԻՆՆ Է 1 Ռ. 30 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0196696